

9 (56)

68

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԵՒ ՔԱՐՏԻՍԱԿՈՐ


ՕՍՄԱՆԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԴԱՍԸՆԹԱՑՔՆԵՐՈՒ

ԵՒ ԻՏԱՏԻՆԵՐՈՒ ՇՍՄԱՐ

ԱՇԽԱՏԱՍԻՐԵՑ

ԳՐԻԳՈՐ ՄԱՐԳԱՐԵԱՆ



Կ. ՊՈԼԻՍ

1912

Տպագր. Օսմ. Գործակցական Ընկերութիւն
Պապը Ալի Էպուստուուս հասէսի Նօ. 27

12517



110
40 р

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Անցեալ տարի հրատարակած «ՍԿԶԲՈՒՆՔ ՔԱՂԱ-
ՔԱՅԻԱԿԱՆ ԿԹՈՒԹԵԱՆ» անուն դասագրքիս Յառաջա-
բանին մեջ ըսած էի թէ, «Սահմանադրական Նոր Թուր-
քիան իր հետ բերաւ նաեւ՝ նորանոր պահանջներ ու
պարտականութիւններ՝ որոնց անհրաժեշտ էր զոհաբերու-
իլ»: Այս նշմարութեան վրայ հիմնուելով՝ կ'աւելցնեմ
թէ, իրօք, չորս տարիէ ի վեր, Թուրքիոյ ո՛չ-Իսլամ
հասարակութիւնները իրենց վարժարաններուն մեջ, ի-
րաւամբ, մեծ կարեւորութիւն եւ զարկ մը տուած են
Օսմաներէն լեզուի եւ Օսմ. Պատմութեան, նկատելով որ,
Պետական Բարձրագոյն վարժարաններու մուտքը իրենց
զաւակաց առջեւ դիւրացնելու համար՝ անհրաժեշտ են,
զլիաւորապէս Օսմաներէն լեզուն եւ Օսմ. պատմութիւնը:

Իրաւ է որ մեր Ազգ. վարժարանաց Բարձրագոյն
Դասընթացներուն եւ «Իսաի» կարգերուն մեջ կ'ա-
ւանդուի Օսմ. Պատմութիւն, իրաւ է որ, այս նիւղին
համար Օսմաներէն լեզուաւ բազմաթիւ դասագիրքեր
ալ հրատարակուած են վերջի տարիներս, սակայն, պաշ-
տօնիս բերմամբ եւ զործնական փորձառութիւնով
համոզուով գոյացուցած եմ որ, նոյն իսկ Թուրք ուսուց-
չի մը ձեռնով եւ Թուրքերէն լեզուաւ աւանդուած Օսմ.
պատմութեան դասախօսութեան, պէտք եղած չափով
չօգտուիր Հայ առակերտը, քանի որ, սակաւին տէրը չէ
այդ լեզուին եւ հետեւապէս՝ հարկադրուած է կ'ամ
Պատմութիւնը լեզուին զոհել եւ կ'ամ այս վերջինը՝
Պատմութեան: Ահա այս կարեւոր պարագան, եւ մանա-
ւանդ՝ Հայերէն լեզուաւ Օսմ. Պատմութեան շնորհակա-
յարմար դասագրքի մը բացարձակ չգոյութիւնը թելադ-

րեցին զիս ձեռնարկել ներկայ աշխատասիրութեանս, ինձ առաջնորդ ունենալով հին ու նոր, թուրք եւ օսարձանօք հեղինակներ, ինչպէս նաեւ՝ պատմական վաւերական աղբիւրներ:

Աւելորդ կը սեպեմ, դասագրքիս ընդհանուր ուղղութեան, պատմական դեպքերու շարայարութեան, Ամփոփումներու, Մասնաւոր Ընթերցումներու եւ Ժամանակակից Շրջանին տուած ընդարձակ բաժնին եւ կարեւորութեանք վրայ խօսիլ, բողոքով որ Պատ. պատճառնակիցներս գնահատեն զանոնք՝ իրենց գործնական կիրառութեան մէջ:

Գ. Մ.



ՕՍՄԱՆԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Մ Ա Ս Ն Ա .

Օսմանցիներուն ծագումէն
մինչև Գանունի Սուլթան Սիւլէման

«Քուակիան Հինդեթի» 699—918.— Քս.ի. 1229.—1520)

Միջին Դարու մէջ՝ Կեդր. Ասիայէն դէպի Արեւմուտք արշաւող բարբարոս ժողովրդոց հայրենիքը եղած է՝ Կասպից Ծովու և Ալթա լեռնաշղթային միջև տարածուած անապատային այն ընդարձակածաւալ երկիրը, որ հին ատեն կը կոչուէր ՍԿԻԻԹԻԱ, իսկ Միջին Դարու մէջ ծանօթ էր՝ ԹԱԹԱՐԻՍՏԱՆ կամ ԹՈՒՐԻՔԱՍՏԱՆ անունով :

Կեդր. Ասիոյ ամէնէն բազմաճիւղ ժողովուրդները իր մէջ պարունակող Թաթարական այս մեծ ընտանիքը կը բաժնուէր բազմաթիւ ցեղերու՝ որոնց գլխաւորներն էին՝ Հոնի կամ Քուշանի, Թաթար, Թուրք, Մոնղոլ, Նոդայ, Էօզպակի, Խրրիւրդ, Գըպչակ, Մաւնչու ևն. որոնք իրենք իրենց և դրացի ժողովրդոց հետ անընդհատ պատերազմի մէջ էին : Իրենց մղած այս յարատեւ պայքա-

րին և սասպատակութեան գլխաւոր պատճառներէն մէկն էր նաեւ՝ երկրին անջրդի և անապատային կազմութիւնը՝ որով ստիպուած էին՝ կէս մը՝ իրրել դաղթական և կէս մըն ալ՝ իրրել վայրագ ու բազդախնդիր հրոսակներ՝ իրենց կեանքի և ապրուստի միջոցները աւելի շէն ու արգաւանդ երկիրներու մէջ փնտռելու :

ԺԱ. և ԺԲ. դարերուն մէջ մեծ համբաւ ունեցան՝ Մաննուս Կազնեվի Խան, Տուդրիլ Պեկ, Ալր-Աւալան և Մեղի-Շանի նման Թաթար ահարկու աշխարհակալներ՝ որոնք իրենց յաղթական սուրին առջև բովանդակ ծանօթ Ասիան դողացնելով՝ հիմնեցին ընդարձակ պետութիւններ՝ որոնց կեանքը կարճատեւ պիտի ըլլար :

Իսկ ԺԳ. Դարուն սկիզբները, Մօնկօլ թաթարներու ցեղէն Ճինկիզ Խան (Ամենազօրաւորներու պետը) անուն մեծ աշխարհակալը, իր հօրը մահէն յետոյ, 40,000 ընտանիքէ բաղկացած ցեղի մը պետը դառնալով՝ հրաժարեցաւ Չինական կայսրութեան մէջ իրրել զինուորական ունեցած պաշտօնէն, և կէս մը բռնութեամբ, կէս մըն ալ փայլուն խոստումներով՝ յաջողեցաւ դրացի ցեղերն ալ իր իշխանութեան ներքև առնել և այսպէս՝ կազմել ընդարձակ ու զօրաւոր տէրութիւն մը :

Ճինկիզ Խան, ամբողջ 20 տարի իր անթիւ հրոսակներով պատերազմներ մղեց և աշխարհակալեց Չինաստանը, Հնդկաստանը, բովանդակ Թաթարիստանն ու Պարսկաստանը և ամենուրեք մահ ու աւեր սփռեց : Հարստահարուած բազմաթիւ ցեղեր՝ այս զարհուրելի պատուհասին ձեռքէն ազատելու նպատակաւ՝ թողուցին իրենց հայրենիքն ու գաղթեցին զանազան երկիրներ :

Ահաւասիկ այս գաղթողներէն մէկն էր նաեւ՝ Թուրքաստանի բնիկ իշխաններէն Սիւլէյման Շան, որ չկրնալով Ճինկիզ Խանի բռնութիւններուն հանդուրժել, 50 հազարի չափ թաթարական Թուրք ցեղին պատկանող իր

հայրենակիցներուն հետ ճամբայ ելաւ Խորասանի Մահաւն գաւառէն և դէպ ի արեւմուտք գաղթելով՝ եկաւ Հայաստան և բնակութիւն հաստատեց Եկեղեաց գաւառէն մինչև Ախլաք: Սակայն, երբ 1227ին Ճինզիզ Խան մուսուլման, Սիւլէյման Շահ, իր ցեղակիցներով հայրենիք վերադարձած միջոցին՝ զիպուածով Եփրատ գետն իյնալով խեղդուեցաւ (1231):

Անգլուխ մնացած թաթարներուն մէկ մասը դէպ ի հարաւ, Ասորիք գաղթեց, իսկ մնացեալները կրկին վերադարձան Հայաստան: Այս վերջին գաղթականութեան առաջնորդն էր՝ Սիւլէյման Շահի չորս որդիներէն մէկը, Էրթողուչ, որ քիչ մը յետոյ, իր Գայր Խան ցեղէն եզող հայրենակիցներով՝ Հայաստանէն ճամբայ ելաւ դէպ ի Փոքր Ասիա՝ ուր կը գտնուէր Սելճուգեան թաթարներու տէրութիւնը՝ իրեն մայրաքաղաք ունենալով Իկոնիոն կամ Գոնիա:

Ահա թէ ի՞նչ կ'ըսէ աւանդութիւնը՝ Օսմ. պետութեան հիմնարկութեան պարագաներու մասին:

«Օր մը, Իկոնիոյ մօտակայ դաշտերուն մէջ՝ երկու թշնամի բանակներ՝ կատաղի կերպով պատերազմի բռնուած էին: Նետերը կը թռչտէին օդին մէջ, սուրերը կը շողային արեւուն ճառագայթներուն ներքեւ, իսկ դետինը կը ցնցուէր հեծելազօրաց ոտքի հարուածներուն տակ:

Երկու բանակներէն մին՝ իր հեծելազօրքով պատերազմի դաշտին մեծագոյն մասը ծածկած էր, իսկ մյուսը՝ թէպէտ սակաւաթիւ, լայց իր քաջութիւնովը գերազանց, յուսահատ արիութեամբ մաքառելով ուժասպառ եղած՝ բոլորովին բնաջինջ բլլալու վտանգին ենթարկուած էր: Եւ ա՛հ, հորիզոնին ծայրէն կ'սկսի երեւալ հեծելազօրքերու գունարտակ մը, որ տակաւ յառաջանալով՝ կը հասնի բլուրի մը կատարը և իր պետին հրամանով՝ սպա-

սողական դիրք կը բռնէ՝ իրեն անձանօթ երկու թշնամի-
բանակներուն միջև մզուած պատերազմին ընթացքը
դիտելու համար :

Պայքարը կը շարունակուէր . և սակաւաթիւ կողմը .
յուսահատական վերջին միջոցներն ալ սպառած՝ մօտ էր
խապառ ջախջախուելու , երբ հեռուէն՝ անձանօթ հան-
սաստար «Ալլահ էքպէր» գոչելով՝ կը խոյանայ իրեննե-
րով զօրաւոր կողմին վրայ և ահալի ջարդ մը տալով՝
ցիր ու ցան կ'ընէ և կը պատրաստուի շարունակել իր
ճամբան : Այս անձանօթ ու երկնառաք բարերարն էր՝
նայն ինքն էրթօղրուլ , յաղթուողներն էին՝ Մօնկօլ թա-
թարները , իսկ այն՝ որու անգիտակցօրէն օգնութեան
փութացած էր . Իկոնիոյ Սեյճուղեան տէրութեան Աշա՝-
հսի՛ Սորքանն էր : Այս վերջինը իր մօտ հրաւիրելով
անձանօթը , կը հարցնէ — «Ո՞վ ես դուն՝ որու պարտական-
եմ , Աստուծմէ յետոյ , տարած իմ այս յաղթութիւնս» . —
«Իմ անունս է էրթօղրուլ , կը պատասխանէ օտարականը :
Մենք երկուքս ալ միեւնոյն ծագումն ունինք : Ես կը
սերիմ երկիրքի խանէն , ինչպէս դուն՝ Ծովերու Իշխա-
նէն : Հազիւ երկու ամիս առաջ , հայրս , Սիւլէյման-
Շահ , եփրափ ալիքներուն մէջ կորսուեցաւ , երբ դէպի
Խօրասան , իր հայրենիքը կ'առաջնորդէր՝ Ճինկիզ Խանի-
հալածանքներուն պատճառաւ ցիր ու ցան եղած իր
բազմաթիւ ցեղակիցները : Եզրայրներէս երկուքը իրենց
ճամբան շարունակեցին , իսկ ես , բռնեցի ա՛յն ուղին՝
ուր առաջնորդեց ինձ Աստուած , ջախջախելու համար-
քու թշնամիք» :

Սուլթան Ալաէտաին , այս անակնկալ յայանութե-
նէն չափազանց գո՛հ ու երախտագիտութեամբ լեցուած ,
ո՛չ միայն պատուոյ զգեստ հագցուց իր բարերարին ,
այլ և , իր բանակին զօրապետ կարգելով՝ Փարսնա-Տաղի
և Ռիլսպաի շրջակայ երկիրները իրր վարձատրութիւն՝
էրթօղրուլի նուիրեց :

Էրժօզրուլ, դրացի Յոյն իշխաններու ձեռքէն ալ
 քանի մը կարեւոր բերդեր ու քաղաքներ առնելով՝ իր
 երկիրներն ընդարձակեց և Սեօյլս աւանը մեռաւ 93
 տարեկան խորին ձերութեան մէջ :




ՍՈՒԼԹԱՆ ՕՍՄԱՆ Ա. (Ղազի)

(Հիւնէքի՛ 699—726. — Քս.ի 1299—1326)



1. Սուլթան Օսման՝ Բիւթանիոյ և անոր մայրաքաղաքին կը
 տիրէ. 2. Սէլճուգեան պետութեան ջնջուելէն օգտուելով՝ իր իշխա-
 նութիւնը կ'ընդարձակէ. 3. Սուլթան Օսման՝ կ'ըլլայ հիմնադիրը Օսմ.
 պետութեան :

1. Էրթօզրուլի յաջորդեց իր արիասիրտ ու փառասէր որդին ՕՍՄԱՆ Ա. որ Մարմարայի մերձակայ շատ մը քաղաքներ Յունաց ձեռքէն առնելով՝ իր նորահաստատ տէրութիւնն ընդարձակեց և իր իշխանութեան կեդրոնատեղի ըրաւ Գարանա Հիսար աւանը :



Գարանա Հիսար

2. Օսման ալ՝ իր հօրը նման, Յունաց և Թաթարներուն դէմ Ալաէտաին Բ. Սուլթանին օգնելով՝ իրր վարձաբութիւնն, ընդարձակ գաւառներ, ինչպէս նաեւ՝ Պէյ տիտղոսը, դրօշակ մը, սուր մը, երիվար մը և թմբուկ մը նուէր ստացաւ : Իսկ երբ 1278ին, Աէլճուգեան իշխանութիւնը բոլորովին ջնջուեցաւ, Սուլ. Օսման ալ այս առիթէն օգտուելով՝ հարուստ գաւառներ նուաճեց և միացուց իր նորակազմ պետութեան զորանկախ հոչակեց (1299) : Աէլճուգեան թաթարներու տէրութեան կործանումով, Փոքր Ասիոյ մէջ կազմուեցան տասնի չափ փոքր իշխանութիւններ՝ որոնց զլխաւորներն էին՝ Գարանանի, Այսընի, Սարուխանի, Կերմիանի, Մենքեշի ևն. պէյութիւնները :

3. Սուլթան Օսման, գրեթէ Բիւքրանիա գաւառին տիրած էր արդէն, կր մնար անոր մայրաքաղաքը Պրուսան՝ զոր 1326ին գնաց պաշարեց : Բայց նոյն պահուն իմանալով որ թաթարները իր տէրութեան սահմանները

կ'ասպատակեն . քաղաքին պաշարման գործը իր Օրխան որդիին յանձնելով , ինքը դնաց ասպատակները վանելու : Օրխան յաջողեցաւ առնել Պրուսա քաղաքը զոր Սուլթան Օսման իրեն թայրաքաղաք բրաւ : զօրացր թոշակ կապեց և իր նորահաստաա իշխանութիւնն ամրապնդելու համար ոգւով շափ աշխատեցաւ : Սուլթան Օսման իրեն խորհրդական և գլխաւոր գործակից ունէր Քhouk Միխալ անուն իսլամացած Յոյն մը :

Սուլթան Օսմանի անունով է որ իր ազգը ՕՍՄԱՆԾԻ և հիմնած պետութիւնն ալ ՕՍՄԱՆԵԱՆ կոչուեցաւ :

Օսմանեան պետութեան հիմնադիրը եղող այս Սուլթանը ա՛յնքան պարզ ու անսխառասէր կեանք մը վարած է որ , կ'ըսուի թէ , իրր անձնական հարստութիւն թողած է՝ մէկ վերարկու , մէկ սպորօշ , մէկ զգալ , մէկ աղաման , քանի մը ձի և ոչխարներ : Արեւելքի վեհապետաց համար եղական առաքինութիւն մը՝ որու հետեւողը գտնել անկարելի պիտի բլլայ Օսմանի յաջորդներուն մէջ :⁽¹⁾

(1) Օսմ. պետութեան հիմնարկութեանը առաջին շրջանին մէջ լազի Սուլթան Օսմանի աջ բազուկը եղած և անոր կրտսերած աշարհակալութիւններուն մէջ շատ կարեւոր դեր մը խաղացած է Քէօսէ Օղլու Միխալ անուն Յոյնը , որ սպա իսլամութիւնն ընդունեց :

Այս համբաւաւոր գերգաստանին գլխաւոր պաշտօնն էր հրամանատարութիւնը Ազրենքներու՝ որ պատերազմի ժամանակ նախաշարժակ եղող անկանոն զօրաց բանակն էր :

Քէօսէ Միխալզաւեները նշանուոր եղած են նաեւ՝ իրրեւ հիմնադիր՝ մէտրէսէներու , մզկիթներու , մատենադարաններու և աղբիւրներու նման հանրօգուտ բազմութիւ հաստատութեանց :

Քէօսէ Միխալի սերունդը մինչեւ այսօր գոյութիւն ունի և տակաւին իրր 15—16 ատրի առաջ . Քէօսէ Միխալաւէ՝ նիւզնէր փառսանուն անձը՝ Միխալըճի Գայմագամ եղած և իր գերգաստանին մանրամասն պատմութիւնը գրած է :

Սուլթան Օսմանի թոռնորդին՝ Աբլաբըրմ Սուլթան Պայպիտ , այս անուանի գերգաստանին՝ Օսմ. Պետութեան մատուցած թան-


կազին ծառայութիւններուն ի վարձ, շնորհած է հետեւեալ գնա
տական մէրմանը զոր կը գնենք հոս՝ իբր վեց դար առաջուան Օ.
Ներէն լեզուի և պաշտօնական գրութեանց ձեւին ու սճին նկատու
գաղափար մը տուած ըլլալու համար:

ՖԷՐՄԱՆԸ ՀԻՒՄԱՅՈՒՆ

«Թէ՛վքի թէ՛ֆի շիւմայունում հիւքմիւ ոլ արբ
Մէրնում վէ մողֆուրուն լէ՛ սապամ, Խիւ
վէնտիկեարրն շէ՛խ վազր օլաուղու ճէնկի ազիմ
իշպու էմիր իւլ քէպիր, մէֆիտար իւլ իւմէրա՛իլ ըզ
մէլիք իւլ կազաթի վէլ միւճանիախն, դանիր իւլ
ֆէրէթի վէլ միւշրիֆիյն Միխալ Պէք Օղլու Ալի՝
տամէ՛ ուլուվիու՛ու խրամէթլէրինին քիւլի էրվի
եօլաաշըղը գուճուրա կէլմէյին, էմր էյլէաիմ քի,
լաալարրնն էվլաալարրնա պաթնէն պա՛տէ պաթնին
գարնէն պատէ գարնին՝ սանճագ վէրիլիպ, մինպ
մա՛գուլ օլմամագ իշլուն պու պէթիյի վէրաիմ վէ պ
յուրասում քի, պէնիմ էվլաալմասն վէ էնսապրմ
հէ՛ր քիմէ Հագ ճանիպլինտէն աէօվլէթ միւեէստէր օլ
իտէ, պու պիթիյի մագպուլ թութուպ, Կաղի Ալի
էվլաալմն էվլաալարրնա սանճագ պէլիյի վէրիպ
մին պա՛տ մագուլ էյլմէլիպ՝ բի՛այէթ վէ հիմայէթ
տէլէր, պու պիթիյի մուգարրէր վէ մուճագ
պիլիպ՝ ի՛իթիմաս վէ ի՛թիգաս գրլալար»՝

ԷՏԻՐՆԷ

Թարիխ, 793



ՍՈՒԼԹԱՆ ՕՐԻԱՆ ՂԱԶԻ

(Հիմերեփի՝ 726—761.— Քս .ի 1326—1359)



1. Սուլթան Օրիան Նորանոր երկերներու կը տիրէ. 2. Ալաէտին փաշա՝ Ենիշէրիններու զորագունդը կը կազմէ. 3. Օսմանցիք Եւրոպա կ'անցնին և Քրիստոնէայ տէրութեանց կ'սպառնան. 4. Օրիանի բարեկարգութիւնները:

1. Սուլթան Օսման Ա .ի կրտսեր որդին էր ՕՐԻԱՆ . որ գահը եղածին պէս՝ իր երէց եղբայրը՝ Արսէսին փաշան⁽¹⁾ Մեծ Եպարքոս՝ Վեզիր⁽²⁾ անուանեց և ինքը օգուտ քաղելով Յունաց կայսրութեան տկարութիւնէն՝

(1) Շատ հին աստեղներէ ի վեր, Թուրքերը սովորութիւն ունին իրենցմէ մեծ եղբայրներուն Պէլկամ Սղա (Ազա Պէյ) անունը տալ իսկ ամէնէն երէցը կը կոչէին Պաւ Աղա՝ որ կրճատուելով և ազաւազուելով եզած է Փաւա:

(2) Վեզիր՝ արարերէն է և կը նշանակէ Կապարճակիր:

զնաց Իզմիսի և Իզմիկի բերդերուն, ինչպէս նաև՝ Գա-
րաաի և Պերկամա գաւառներուն տիրեց :

2. Ալաէտաին փաշա՝ ուսեալ ու զարգացած անձ
մըն էր, և կամովին հրաժարելով յաջորդութեան իրա-
ւունքէն, ինքզինքը նուիրեց նորանաստատ տէրութիւնը
զինուորական և քաղաքական բարեկարգութիւններով
ամրապնդելու և այս նպատակաւ՝ իր եզրօրը հզօր աջա-
կից մը կաւա :


Ալաէտաինի, նորանաստատ Օսմ. պետութեան մա-
տուցած իր բազմաթիւ օգտակար ծառայութիւններուն
մէջ՝ ամէնէն կարեւորն է իր օրէնսդրական կազմակեր-
պութիւնը :

Այս խոնական անձն էր որ, առաջին անգամ, Շե-
րիի օրէնքները դործնականացուց և զանոնք կիրառու-
թեան դրաւ, Գատրներու պաշտօնը, տեւողութիւնը և
անոնց իրաւասութեան սահմանը գծեց. դատավարական
քմահաճ զեղծումներու և անիրաւութեանց առաջքն ա-
ռաւ : Մէկ խօսքով, Ալաէտաին փաշա՝ իրրեւ օրէնսդ-
րի, ճիշդ այն դերը կատարած է, ինչ որ ունեցած էին
Լիկուրգոս՝ Սպարտայի, Սոլոն՝ Աթէնքի և Նուրա — Պոլ-
պիլիոս՝ Հռոմի մէջ :

3. Ալաէտաին փաշա՝ ինքը կղած է կազմող Ենի-
ջերի (Նոր Զօրք) անուն այն նշանաւոր զօրաբանակը,
որ թէպէտ ի սկզբան Օսմ. պետութեան մեծամեծ ծա-
ռայութիւններ մատայց, բայց ի վերջոյ, զինուորական
կարգն ու օրինապահութիւնը արձամարնելով՝ պարզա-
պէս պատուհաս մը կաւա պետութեան :

4. ՕՍՄԱՆՅԻՔ ԵՒՐՈՊԱ ԿԱՆՅՆԻՆ.— Սուլթան
Օրխանի անդրանիկ որդին Սիւլէյման փաշա, 1356
թուականին, սակաւաթիւ նաւերով և լասաներով՝ Չա-
նաք-Քալէէն անցաւ Եւրոպա և ճեղղնուէ հասած օգ-
նութեան շնորհիւ՝ Յունաց ձեռքէն յաջորդաբար առաւ

Տարսանիկ, Մալխարա, Հայրապօղոս և Թեֆիրադ քա-
ղաքները: Այսպէս, Քրիստոնեայ եւրոպայի կ'սպառնա-
լին Օսմանցիք՝ որոնց առաջին հարուածը պիտի կրէր-



Օսմանցիք եւրոպա կ'անցնին

Յունական վասթարացած կայսրութիւնը: Թէպէտ Յու-
նաց Կոստանդին Կանդակուզեմոս կայսրը՝ Օսմանեան
Սուլթանին բարեկամութիւնը շահելու նպատակաւ՝ իր
Թեոսոսա աղջիկը կնութեան տուաւ անոր, սակայն այս
խնամութիւնը արգելք մը չեղաւ որ Օսմանցիք՝ Յու-
նական կայսրութեան պատուարները մէկիկ մէկիկ քան-
դելով՝ Կ. Պոլսոյ դուռներուն չմտանային:

Սուլթան Օրխան՝ որքան աշխարհակալ, նոյնչափ
ալ օրէնսդիր ու բարեկարգող վեհապետ մը եղաւ: Իր
անունով դրամ կոխեց, ամէն տեղ դատաւորներ (Փատը)
կարգեց և վերջապէս՝ իր 33 տարուան իշխանու-
թիւնը նուիրեց՝ տէրութեան մեծութեան ու զօրութեան
և իր նպատակներուն բարօրութեանը:

ՊԱՏՄԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄ

ԵՆԻՉԷՐԻՔ.— Ի սկզբան, Ենիշէրիները պատերազմի մէջ գերի ինկած և սպա Իսլամութիւնն ընդունող Քրիստոնեայ պատանիներէ ու երիտասարդներէ կազմուեցաւ. Ի վերջոյ, Փոքր Ասիայ հպատակ Քրիստոնեայ ազգերն ալ պարտաւոր էին թուրքերուն հետ համահաւասար կերպով և 100 երիտասարդէն՝ 10ը զինուոր առաջ՝ որով կազմուեցաւ ցամաքային կանոնաւոր և ահարկու բանակ մը որ մեծ աւանակ պիտի թողուր պատմութեան մէջ՝ իրրեւ սահմանաւոր Օսմ. աշխարհակալութեանց: Այս զորագունդէն յետոյ՝ կազմուեցաւ Սիփանի անունով հեծելազուններ, նաեւ Ազապ անուն անկանոն զորաց գումարտակներ՝ որոնք իրրեւ կամրջածիք և պատերազմներու մէջ նախաշարժակ բլլալու կը ծառայէին:

Ճաթիհ Սուլթան Մեհմեթ Բ-ի Ժամանակ, Ենիշէրիներու թիւը մինչեւ 80.000ի կը հասնէր:

Կը պատմուի թէ, Սուլթան Օրխան, այս զորագունդին ցոյց տուած քաջութիւնէն շարփազանց գոհ թաւալով, անոնցմէ քանի մը զինուոր միասին առած, կ'երթայ Ամասիա՝ որու մտաւոր, Սուլու Գայա ըսուած անշուք գիւղը՝ խրճիթի մը մէջ կը բնակէր՝ զեւր ու պատկառելի Տէրփիշ մը՝ Հանի Պէրսե Ալի անուն: Սուլթան Օրխան, իր հետը բերած զինուորները Տէրփիշին ներկայացնելով՝ անոր օրհնութիւնը կը խնդրէ այս նորակազմ զորագունդին համար:

Պատկառելի ծերունին, ձեռքը զինուորներէ մէկուն գլխուն վրայ գնելով կ'ըսէ.

«Այս զորագունդը, թո՛ղ Ենիշէրի (նոր Զօրք) կոչուի, թո՛ղ սմենակարողն Ասաուած՝ սասնց երեսը միշտ ճերմակ հանէ, սուրբնին հասու, բազուկնին յաղթական և իրենց քաջութիւնը անսպառ ընէ:»



ՄՈՒԼԹԱՆ ՄՈՒՐԱՏ Ա. (խիւսապէնցիկեար)

(Հիմերքի՛ 726—691 .— Քս.ի 1359—1389)



Մուլթան Մուրատ Ա.

1. Քոստանյի ճակատամարտը.— 2. ժամանակակից երեւելի անձերը.— 3. Կարեւոր նորութիւններ:

Մուլթան Օրխանի կրտսեր որդին և պատերազմասէր Վեհապետ մըն էր Մուլթան ՄՈՒՐԱՏ Ա., որ իր իշխանութեան առաջին տարին ահազին բանակով մը Եւրոպա անցաւ և հազիւ ի՞նչ էտիրնէի մօտեցած էր, երբ լուր առաւ որ Քաղասիոյ Պէյը իր տէրութեան սահմանները ասպատակելով՝ քանի մը քաղաքներու ալ տիրած է: Մուլթան Մուրատ այս ասպտամբին դէմ երթալով՝ յաղթեց և Անգարա քաղաքն ալ առաւ և այսպէս բնաջինջ ըրաւ Քարանանի Պեյութիւնը:

ՔՐԻՍՏՈՎՈՍԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ (1389). — Ասիոյ կողմը խաղաղեցնելէ յետոյ. Սուլթան Մուրատ կըրկին անցաւ Եւրոպա և յաջորդօրաբար արեւոյ կէտից Էջիպէ, Ֆիլիպք, Կիւմիլիճիէ ու Ենիճիք քաղաքներուն, Սերպիոյ Լազար թագաւորը՝ Սամանցիներուն այս անգուլ յառաջխաղաղութենէն և մանաւանդ՝ Քրիստոնէայ Եւրոպայի սպառնացող վտանգէն սարսափաւոր. Հռոմայ Պապին յորդորունքով կը նիղակցի Վալաքիոյ, Տալմացիոյ, Պուլհարիոյ, Պոնայի և Մաճառիստանի իշխաններուն հետ և ստուար բանակով մը Օսմ. Սուլթանին դէմ կ'ելլէ, Ճակատամարտը տեղի կ'ունանայ Քոսովա (Քուշ Օվա) քաղաքին մօտ՝ ուր




Քոսովայի նակատամարտը

Քրիստոնէից դաշնակից բանակը սոսկալի պարտութեան մը մատնուելով ցիր ու ցան կ'ըլլայ և նոյն ինքն Լազար թագաւոր՝ անհամար Քրիստոնէից հետ իր մահը կը գտնէ (1389) :

Սուլթան Մուրատ, երբ այս փաստաւոր յաղթութենէն յետոյ՝ իր վէպիլին հետ պատերազմի դաշտին մէջ կը պարտէր, Միլոշ Բոպէլիովիչ անուն Սերպիացի մը, որ մեռած ձեւանալով զիտիւերու կոյտի մը քով պահուրած էր, յանկարծ Սուլթանին վրայ խոյանալով՝ դանի վատութեամբ դաշունահար կ'սպաննէ :

8939 A 34473



Handwritten Cyrillic text in a circular stamp-like format, possibly a library or archival mark.

2. Սուլթան Մուրաաի օրով ձեռք բերուած աշխարհակալութիւններուն մէջ կարեւոր դեր մը կատարած են՝ Հաճի Իլ Պէյ, Լալա Շահին փաշա, Չանսարլը Գարա Խալիլ, Էլբահնու և Թիսուր Թաշ Պէյ անուն երեւելի անձերը :


Սուլթան Մուրաաի օրով Օսմ. պետութեան Մայրաքաղաք եղաւ Էսթրնէ :

Նոյնպէս, Օսմ. գրոշին դոյնը և անոր պարունակութիւնը (Մահիկն ու Ատաղլ), ինչպէս նաև Թուրքան, այս Սուլթանին օրով հոստատուած և գործածուիչ սկսուած են :

Սուլթան Մուրաա Ա. իր ազնիւ նկարագրին և հայրախնամ ժողովրդասիրութեանն համար կոչուած է Խիւսափկենիկեար և իր օրով Օսմ. պետութեան Մայրաքաղաքը եղող Պրուսան և նոյն կուսակալութիւնն ալ մինչև հիմայ Խիւսափկենիկեար վիլայեթի անունը կը կրէ :

Կը պատմուի թէ, Սուլթան Մուրաա կարգալ գրել չգիտնալուն համար, որ և է պաշտօնագիր կամ ֆէրման և կամ դաշնագրութիւն ձեռքը ներկի մէջ թաթիւելով կ'ստորագրէ եղեր :

Ժամանակ անցնելով, իբր ստորագրութիւն կամ վաւերագիր ծառայող այս ձեռքի նշանը կը ձեռագործուի և կ'առնէ այսօրուան թուրքայի սիրուն ու գեղարուեստական ձևը, որ իր մէջ կը պայունակէ՝ օրուան Սուլթանին և իր հօրը անուններէն իզուա, նաև գահակալութեան թուականը :



ՍՈՒԼԹԱՆ ՊԱՅԱԶԻՏ Ա. (Երլսըրըմ)

(Հիմերեփի՝ 751—805 .— Քս.ի 1386—1402)



1. Փոքր Ասիոյ ապստամբ Պէյութիւնները կը նուաճուին.— 2. Թրակիա, Մակեդոնիա, Պուրկարիա և Մոլտավիա՝ Օսմ. Պետութեան մաս կը կազմեն.— 3. Նիկոսիոսոյ ճակատամարտը.— 4. Պայազիտ կ' Պոլիսը կը պաշարէ.— 5. Անկուրիոյ ճակատամարտը և Երլսըրըմ Պայազիտի մահը:

1. Սուլթան Մուրատե յաջորդեց իր անդրանիկ որդին Սուլթան ՊԱՅԱԶԻՏ Ա. որ իր արտաքոյ կարգի քաջութեան և աւարած մեծամեծ և արագ յաղթանակներուն շամար յոչուած է Երլսըրըմ (Կայծակ) :

Սուլթան Պայազիտ, նախ Փոքր Ասիոյ ինքնիշխան և Օսմ. պետութեան ուխտեալ թշնամի պէյութիւնները նուաճելով՝ արեւց Սարուխան, Մհերեքչէ, Այսըն և Գոնիա քաղաքներուն :

Պայտղիտ, յետոյ անցաւ Եւրոպա, և բոլորովին նուաճելով Թրակիան, Մօրան, Մակեդոնիան, Պուլկարիան և Մոլդավիան՝ յազթանակաւ մտաւ Պուքէշ:

2. ՆԻԿՈՊՈԼՍՈՅ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ (1396). — Մաճառիստանի Սիկիւստոնէս թագաւորը՝ իր տէրութեան սպառնացող վտանգը գուշակելով: զիմեց Հռոմի Ոնիֆակ Բ. Պապին, որու խորհուրդով՝ Եւրոպացի այլ և այլ ազգերէ բաղկացած ահաղին բանակ մը, Պուրկոննի դուքսին առաջնորդութեամբ՝ օգնութեան հասաւ Մաճառներուն: Ճակատամարտը տեղի ունեցաւ Պուլկարիոյ Նիկոպոլիս քաղաքին մօտ: Թէպէտ երկու կողմէն ալ արիարար պատերազմեցան, բայց վերջապէս յաղթութիւնը Օսմանցիք տարին՝ պատերազմի դաշտը ծածկելով ազնուական ընտանիքներու պատկանող Զիրանսացի և Գերմանացի զինուորներու զիակներովը (1396): Իսկ զերի ինկած 10000 զինուորներ ալ՝ Սուլթանին աչքին առջեւ գլխատուեցան:

Նիկոպոլսոյ յաղթութիւնը՝ բովանդակ Իսլամական աշխարհին համար՝ փառքի և հպարտութեան շարժատիւթ մը եղաւ: Եւ ահա այս աւթիւ է որ Եգիպտոսի Խալիֆան, իր շնորհաւորական նամակին մէջ, Սուլթան Պայտղիտը կ'անուանէր «Սուլթանը իզլիմի Բում» այսինքն՝ «Սուլթան՝ Յունական աշխարհին»: Կան պատմագիրներ ալ՝ որոնք կ'ըսեն թէ Օսմ. վեհապետներուն մէջ առաջին անգամ Սուլթան տիտղոսը կրողը Պայտղիտ եղած է⁽¹⁾:

3. Կ. ՊՈԼՍՈՅ ՊԱՇԱՐՈՒՄԸ. — Նիկոպոլսոյ մէջ տարած պատմական ու փառաւոր յաղթութենէն քաջալերուած, Երւրբըմ Պայտղիտ եկաւ պաշարել Արևելեան կայսրութեան Մայրաքաղաքը Կ. Պոլիս, և նախ Պոսֆօրի Ասիական եզերքին վրայ հիմնեց Կիլզիզէ Հիսար ա-

(1) Սուլթան բառը Աբաբերէն է և կը նշանակէ՝ Միսնեմոն Վենացիս:

նուն այն բերդը որ մինչև այսօր ծանօթ է՝ Անասորտ Հիւսար անունով: Սակայն քիչ յետոյ, Յունաց Մանուէլ կայսեր չեա 10 տարուան զինագուլ կնքեց, տարեկան 30000 սակի իրր հարկ ստանալու. Կ. Պոլսոյ մէջ մզկիթ մը. միւֆիթի մը, Իսլամական շառանձին թաղ մը ունենալու պայմաններով համաձայնեցաւ և պաշարումը վերցնելով փութաց Ասիա՝ ածարկու թշնամիի մը դէմ իր աէրութիւնը պաշտպանելու համար:

4. ԱՆԿՈՒՐԻՈՅ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ (1402).— Այս

թշնամին էր արիւնարբուն Լէնկիթիմուր. որ ճինկիզխանի հին և ընդարձակ աէրութիւնը վերականգնիլու նպատակով, Թաթարխասանէն անթիւ հրոսակներով դէպ ի Արեւմուտք ճամբայ ելած և բոլոր արչաւած տեղերը արիւնլուայ ընելէ յետոյ, կուգար Օսմ. երկիրներն ալ սուրի և կրակի մատնել:



Լէնկիթիմուր


Սուլթան Պայազիտ, Թաթարաշխարհակալին դէմ անհաւասար զօրութեամբ ճակատեցաւ Անկուրիա քաղաքին մօտ. և երեք օր ու երկու գիշեր տեւող արիւնալի պաշարքէ մը յետոյ, վերջապէս Օսմանցիք յաղթուեցան, պատերազմի դաշտին վրայ 20,000է աւելի մեռեալ և բազմաթիւ գերիներ ալ յաղթողին ձեռքը թողով: Նոյնիսկ Պայազիտ՝ ծանրապէս վիրաւորուած ըլլալով՝ չի կրցաւ խոյս տալ և գերի ինկաւ Թաթար աշխարհակալին ձեռքը որ, թէպէտ ի սկզբան մեծ պատուով և քաղցրութեամբ վարուեցաւ հետը. սակայն ի վերջոյ իմանալով որ, իր որդիները գեանափոր ճամբայ մը բաճալով՝ գտնուած վրանին մէջէն զանի փոխցնելու փորձեր կը կատարեն, սկսաւ խիստ հակողութեան մը ենթարկել իր թագակիր կալանաւորը:

Սուլթան Պայաղիտ երբ լսեց թէ Լէնկթիմուր զին-
քը միասին Սմրղանոս տանելու մտաք ունի, սրտին ցա-
ւէն և յուսահատութենէն մեռաւ՝ Ա. Գ. Շէշիրի մէջ։

ՊԱՏՄԱԿԱՆ ԸՆԹԵՐՅՈՒՄ

Քանի մը Յոյն պատմագիրներ կ'ըսեն թէ, Լէնկթիմուր շատ ա-
նարգանօք վարուեցաւ Սոմ. Սուլթանին հետ՝ Սրինակի համար, ձի
հեծած ատենը՝ զանի իրր պատուանդան կը դործածէր, իրրեւ սնունդ՝
չոր հացի կտորուանք միայն կուտար և թէ՛ զանի երկաթէ վանդակի
մը մէջ բանտարկած էր։ Սակայն այս աւանդութիւնները հաւանա-
կան չեն երեւիր, քանի որ Սուլթան Պայաղիտ Լէնկթիմուրի համար
անձնական թշնամի մը չէր և հետեւապէս՝ պատճառ մը չուներ իրեն
հետ դիւցազնաբար պատերազմող արժանաւոր հակառակորդի մը հետ
այս աստիճան նախատանօք վարուելու՝ որքան ալ ինքը արիւնկզակ
բռնաւոր և մարդապատկեր ճիւղ մը եղած ըլլար։ Լէնկթիմուրի
համար մեծ փառք էր՝ երլորրբմ Պայաղիտի նման անուանի աշխար-
խարհակալ մը իր մօտ գերի ունենայ։ Հետեւապէս՝ իր փառքին և իր
շահուն համար անհրաժեշտ էր որ՝ լաւ կերակրէր զանի, լաւ խնա-
մէր և վերջապէս՝ անոր գերութեան դառնութիւնը անզգայի ընէր։

Ասկից զատ, երբ նկատողութեան առնենք որ, Սելճուգեան տի-
րապետութեան բեկորները եզոզ Փոքր Ասիոյ թաթար Պէյերը, և մա-
նաւանդ Բիւզանդիոնի կայսրերն էին որ թաթար աշխարհակալը ի-
րենց օգնութեան կոչեցին թ'բաց գէմ, այն ատեն մարդ շատ դիւ-
րաւ կը համոզուի թէ՛ Յոյն պատմիչներուն նկարագրած ատնչանք-
ներն ու նախատինքները իրենց երեւակայութեանը մէջ միայն գո-
յութիւն ունին և կամաւ յերիւրուած են, աստնցմով, իրրեւ թէ վրէժ
լուծած ըլլալու համար իրենց քաղաքական գոյութեանն սպառնա-
ցող ահարկու Սուլթանէ մը, ճի'շտ ինչպէս որ Իտալացի Մեծ բանաս-
տեղծն ալ Տալիկ' իր անձին և իր հայրենիքին թշնամիները՝ երեւա-
կայական դարհուրելի դժոխքի մը լոցերուն և ահաւելի տանջանքնե-
րուն մտանած է։



ՍՈՒԼԹԱՆ ՄԷՀԷՄՍԷՏ Ա. (Չէլէպի)

(Հիմերի՛ 816—321.— Քս.ի 1413—1421)



1. Սուլթան Մէհէմէտի գահակալութիւնը.— 2. Ներքին ապրտամբութիւններ.— 3. Առաջին ծոգամարտը.— 4. Սուլթան Մէհէմէտի մեծաշինութիւնները:

1. Սուլթան Պայազիտի մահէն յետոյ, իր Սիւլէյման, Իսա, Մուսա և Մեհմեմէտ որդիները՝ արքայական գահը իրարու ձեռքէ խլելու նպատակաւ՝ շարունակ 11 տարի պատերազմ մղեցին՝ որու միջոցին աէրուիխնը մասնութեցաւ կատարեալ անիշխանութեան: Վերջապէս՝ Պայազիտի կրտսեր որդին, Մէհէմէտ Չէլէպի յաղթող հանդիսանալով՝ 1413ին, էաիրնէի մէջ գահակալեց:

Սուլթան Մէհէմէտ զինքը չորհաւորելու եկող օտար դեսպաններուն ըսաւ. «Յայտնեցէք ձեր Վեհաշեաններուն որ, իմ մեծադոյն փափաքս է խաղաղու-

թիւնը, և ո՛վ որ խաղաղութիւնը վրդովելու պատճառ
ըլլայ, թո՛ղ Մաղաղութեան Աստուածը տեսնէ անոր
դատաստանը» :

Սուլթան Մէ՛նէմէտ բացառիկ պատիւներով ըն-
դունեց զեսպանը Յունաց Մանուէլ կոչսեր՝ որու ըն-
ծայած օժանդակութենէն մեծապէս օգտուած էր իր
մղած յաջորդութեան պայքարին մէջ : Աւստի, ո՛չ միայն
բարեկամութեան դաշինք գրաւ, այլ և՛ անոր վերա-
դարձուց Սեւ Մովու, Մարմարայի և Թեսալիոյ բերդե-
րը : Սակայն, ինչպէս յաջորդական զէպքերէն պիտի
տեսնենք, Յունաց կոչսեր ուրախութիւնը երկար չի
պիտի տևէր :

2 Սուլթան Մէ՛նէմէտ, հակառակ իր ազնիւ ու
խաղաղասէր նկարագրին, սախաւեցոյ ներքին քանի
մը խռովութիւնները զսպելու համար զէնքի դիմել : Այս
խռովարարներէն մէկն էր Գորամանի իշխանը ձիւնէյս,
որու դէմ երկար ատրիներ մտքատելով զսպեց : Երկրորդն
էր Տիւզլեկ Մուսրաֆա անուն բախաբանդիր մը որ,
իրը թէ՛ Անկուրիոյ ճակատամարտին մէջ անյայտացած
և Սուլթան Պոսթիտի սրդին ըլլալու հաւանութեամբ՝
յաջորդութեան իրաւունքը պահանջելու ելած էր : Կար-
ծեցեալ զահաժառանգը՝ Գարամանի Պէյին և Վլահայ
Վոյվոսին⁽¹⁾ օգնութեամբ՝ պատերազմը ելաւ :

Սուլթան Մէ՛նէմէտ յապիւնջ այս բախաբանդիրին
և զօրքն ալ ցիրուցան բրաւ, մինչդեռ իր Մուսա զօ-
րապարն ալ՝ Մաճառաց Սիկիւստիս թագաւորին դէմ
Սիւնէսիոյ ճակատամարտը կը շահէր :

Ներքին խռովութեանց պատճառներէն մէկն էր
նաև, նախկին Գաղասիէր Պէսրէսիւն անուն Շէյխը, որ

(1) Վոյվոս՝ Լեհերէն է և կը նշանակէ պատերազմական պաշ-
տօնեայ : Այսպէս կը կոչուէին Մոլտաւիոյ հարկատու իշխանները ո-
րոնք ապա առին Հոյբոսաւր անունը :

բաղձաթիւ Տէրվիշներու զլուխն անցած՝ քաղաքէ քաղաք պատելով՝ ինքզինքը իրրեւ Մհնիսի (Մարգարէ) կը ներկայացնէր։ Այս խաբերային նետեւող միամիտներուն թիւը նեղհետէ ստուարացաւ և սկսան կրօնական պատուակին ներքեւ՝ ամուր քաղաքներու տիրել և Օսմ. զօրքը զարնել։ Սուլթան Մէնէմէտ այս ապրտամարներուն դէմ զրկեց իր գահաժառանգ որդին Մուրաճ Զեյնալին և Պայազիտ փաշա եպարքոսը, որոնք այս կարծեցեալ նորադանդներէն շատերը սպաննելով՝ մնացեալներն ալ ցիր ու ցան ըրին։ Իսկ Պէտրէտաին զերթ բռնուելով՝ Սէրէզի մէջ գլխատուեցաւ։

3. ԱՌԱՋԻՆ ԾՈՒՎԱՄԱՐՏԸ. — Օսմանցիք առաջին անգամ այս Սուլթանին օրով է որ ծովային պատերազմ մղած են՝ նետեւեալ տարօրինակ պարագաներու մէջ։

Վենետիկի նասարակապետութիւնը որ, այս դարուն Եւրոպայի ամէնէն նզօր ծովային պետութիւնն էր, և գրեթէ Արեւելքի նարուստ վաճառականութեան մենաշնորհը կը վայելէր, փափաքելով Օսմ. Սուլթանին ներարեկամութեան դաշինքը ամրապնդել՝ այս նպատակաւ դեսպանութիւն մը զրկեց Էտիրնէ՝ ուր լաւ ընդունելութիւն գտաւ։ Գործերն այս վիճակին մէջ էին, երբ Վենետիկեան վաճառական նաւեր Տրապիզոնէ Պոլիս վերադարձին՝ Մարմարայի մուտքին վրայ և Մայրաքաղաքին աչքին առջև՝ թուրքերու կողմանէ կը կողոպտուին և շարագործներն ալ կը մնան անպատիւ։

Այս լուրը Վենետիկ նասնելուն, Եւրակոյտին սրշուտով, 15 ցուկանաւէ բաղկացած նոր դեսպանութիւն մը ճամբայ կ'ելլէ Բիերո-Լոնկեսանօ ծովակալին նրամանասարութեամբ՝ Սուլթանին մօտ նոր դիմումներ ընելու պաշտօնով։ Սակայն Վենետիկցիք՝ Տարտանէլի նեղուցին մօտ կը նանդրուին 30 նաւէ բաղկացած և Չալլ Պիշ անուն նաւապետին առաջնորդութեան ներ-

քեւ աորմիդի մը, որ իրենց ընթացքն արդիւելով՝ կը սկսի նեակերու սարափ մը տեղացնել: Վենետիկցի ծովակալը ի դուր՝ սպիտակ դրօշ կը պարզէ՝ հասկցնելու համար որ իր նպատակը խաղաղասիրական է և պաշտօնական հանգամանք մը ունի: Բայց Օսմանցի հրամանատարը պաշտօնական այս ձեւակերպութեան լեզուէն բան մը չի հասկնար. մանաւանդ՝ զինեալ դեսպանութեան մը ներկայութիւնը դաւ մը կարծելով՝ կը հրամայէ յարձակումը շարունակել: Վենետիկցի ծովակալը կ'ստիպուի պատերազմի նշան տալ և հազիւ երեք ժամուան մէջ՝ Վենետիկցիք կատարեալ յաղթութիւն մը կը տանին, 20 թրքական նաւ գերի վարելով և 5000 նաւաստի սպաննելով:

Այս պարտութեան հետեւանօք, Վենետիկի և Թուրքիոյ միջեւ կը կնքուի նոր դաշնագրութիւն մը, որու զօրութեամբ՝ այս վերջինը յանձն կ'առնէր զինեալ նաւերով Կէլիֆօլուի նեղուցէն դուրս չելլել:

Անաւասիկ, առ երեւոյթս աննշան, բայց իրականին մէջ կարեւոր ու պատմական այս ծովամարտը պատճառ եղաւ, որպէս զի Սուլթան Մէհէմէտ ձեռնարկէ ուժեղ նաւատորմի մը կազմութեան, որ միանալով իր արդէն իսկ ունեցած ցամաքային կանոնաւոր ու պատկառելի զօրութեան, ա՛ն ու սարսափ պիտի ազդէր Եւրոպայի Մովային պետութիւններուն:

4. Սուլթան Մէհէմէտ 33 տարեկան էր տակաւին, երբ կաթուածաճար մեռաւ: Իր ամէն ազգէ հպատակներէն և օտարներէն իսկ հաւասարապէս սիրուած և յարգուած վեհապետ մըն էր Սուլթան Մէհէմէտ՝ իր ազնիւ նկարագրին ու արդարասիրութեանը պատճառաւ: Ութ տարուան իր կարճատեւ իշխանութեանը միջոցին, 11 տարի տեւող անիշխանութեան մը հետեւանք՝ ներքին սպառամբութիւնները զսպեց, զինուորական ու

քաղաքական նորանոր կարգ կանոններ դրաւ . աէրու-
թեան այլ և այլ մասերուն մէջ՝ հասարակաց բազմաթիւ
չէնքեր՝ կամուրջներ և ազրիւրներ հիմնեց : Ասոնց մէջ
ամէնէն երեւելիներն են՝ էտիրնէի Ուրու Ճամի և Պրու-
սայի Եկշիլ Իմարեք անուն հոյակապ մզկիթները : Նոյն-
պէս ինքը հիմնած է Եերկեօյի (Ճուրճօվա) և Իսազճայի
բերդերը :

Չէլէպի Սուլթան Մէհմէտ՝ Օսմանեան վեհապետ-
ներուն մէջ առաջինը եղած է՝ իբրև ուսեալ . զբասէր և
զբակաւուրթեան պաշտպան վեհապետ՝ որու գերագոյն և
հաճոյքն էր բանաստեղծներու և զբաղէտներու հետ ժա-
մանակ անցնել : Իր օրով Կ'ապրէր անուանի բանաս-
տեղծ Շեյխ Սիւան :

Դարձեալ , առաջին անգամ այս Սուլթանին օրով
է որ Օսմ . պետութիւնը Եւրոպայի աէրութիւններէն՝
Վենետիկ՝ դեսպան գրկած է :

Սուլթան Մէհմէտ Ա . իր վայելուչ կազմուած-
քին , շնորհալի ձևերուն և մանաւանդ՝ վեհանձն ու
ազնուական ձիրքերուն համար կոչուած է Չեղիպի :

ՊԱՏՄԱԿԱՆ ԸՆԹԵՐՅՈՒՄ

Ինչպէս տեսածք , Օսմ . պետութեան առաջին Մեծ Եպարքոսե-
րը՝ վեհապետական ընտանիքի անդամներէ ընտրուեցան : Ասոնք էին՝
Սուլթան Օրխանի երէց եղբայրը Ալահսսիև և ապա՝ Սիւլիման փա-
շաները :

Իս . ո՛չ արքայական ընտանիքէ , և միւրայն իրենց անհատա-
կան արժանիքին համար՝ պարզ անհատներէ՝ առաջին անգամ Եպար-
քոսութեան պաշտօնին կոչուած են՝ ձևաւարալը Դարա Խայրէսսիև և
իւր օրդին Ալի փաշաները :

Եպարքոսները , մինչև Սուլթան Սիւլէյման Գանուրի . Վեզիրը
էվիկի տիտղոսը կը կրէին , կային նաև՝ Վեզիրը Սանի , Վեզիրը
Սայիս , Վեզիրը Բասի և Վեզիրը Խամիսներ , որոնք Տիվանը Հիւմա-
յունի Արքայական Ատեանին մէջ հաւարուելով մասնաւոր գործիքի

Ճը ներքեւ խորհրդակցելուն համար՝ կը կոչուէին Գուպրի Վիզիրաւր։

Վէզիրը Ազամութիւնը՝ մինչեւ Ֆաթիհ Սուլթան Մէհմէտ, ձանաւարալըներու ընտանիքին վերապահուած էր՝ որմէ յետոյ՝ կարող անձերու կը փառահուէր։ Մեծ Եպարքոսները՝ իրենց պաշտօնին վերաբերեալ կարեւոր գործերը կը անօրինէին իրենց ապարանքներուն մէջ՝ որոնք այս պատճառաւ կը կոչուէին Փաշա Գարուսը. Պապը Ասաֆի և ի վերջոյ՝ Պապը Ալի։



Մեծ Եպարքոս

Իսկ այս վերջին անունով ծանօթ՝ պետական առանձին պաշտօնատուներ (Բարձրագոյն Դուռ) շատ ետքերը հաստատուած է։

Եպարքոսը, պաշտօնի ձեռնարկելէ առաջ, կ'ստանար Սուլթանին մատանին՝ որու վրայ փորագրուած կ'ըլլար իր անունը և զոր իբր կնիք կը գործածէր։ Ժամանակ անցնելով յատկապէս Սուլթաններու անձնական կնիքը կ'ստանային՝ իբրեւ անոր քաղաքական իշխանութեան փոխա-

նորդը։ Պատերազմի ժամանակ Եպարքոսները պարտաւոր էին ընկերանալ բանակին և Մայրաքաղաքէն իրենց բացակայութեանը միջոցին՝ կ'ունենային Փոխանորդ ճը, որ կը կոչուէր Գայմագաւ։



ՄՈՒԼԹԱՆ ՄՈՒՐԱՏ Բ. (Ղազի)

(Հիմերքի՝ 821—855. — Քս.ի 1421—1451)



1. Ներքին խռովութիւններ և Անիշխանութիւններ. — 2. Կ. Պոլսոյ երկրորդ պաշարումը. — 3. Պէլլրատի պաշարումը. — 4. Վասնայի ճախատամարտը. — 5. Քասովայի Բ. ճակատամարտը. — 6. Ալպանիոյ իւքէնտէր Պէյ իշխանը:

Մուլթան Մէհէմէտ Ա. ի յաջորդեց 18 տարեկան իր անդրանիկ որդին ՄՈՒՐԱՏ Բ., որ Օսմանցի ամէնէն անուանի վեհապետներէն մէկը կոչուած է:

1. ՆԵՐՔԻՆ ԽՌՈՎՈՒԹԻՒՆՆԵՐ. — Մուրատ Բ. պատանեկան շատակէն սկսեալ իր հօրը մղած պատերազմներուն գործակից, և փորձառու զինուորականներու ձեռքին տակ մարտուած ըլլալով՝ բնական էր որ իր նախասիրութիւնն ըլլար զինուորական ու պատերազմական կեանքը: Սա ճշմարիտ է որ, ներքին և արտաքին

քաղաքական բազմաթիւ պատճառներ ալ՝ մեծապէս նպաստեցին ետիտասարդ ու փառասէր Սուլթանին փափաքանացը յազուրդ տալով՝ նորանոր աշխարհակալութիւններ ձեռք բերելու :

2. Բիւզանդիոնի կայսրերը՝ իրենց վաթճարացած տէրութիւնը զինու զօրութեամբ անկարող ըլլալով Օսմանցիներուն դէմ պաշտպանել, կամ Հոսմի պապերուն պաշտպանութեան կը դիմէին, կամ զօրաւոր թշնամիներ կը նրաւիրէին, և կամ, Յունական խորամանկութեամբ, ներքին խռովութիւններ և ապստամբութիւններ կը գրգռէին :

Այսպէս, հազիւ դահը ելած Սուլթան Մուրատ, Բիւզանդիոնի նենգամիտ կայսրը Մանուէլ՝ Ելլալըբմ Պայազխտի կարծեցեալ Մուսրափա որդին և անոր համախոհները — որոնք իր քով պատանդ կը գանուէին — կարեւոր փոխարինութիւններով Սուլթանին վերադարձրնելու պայմանաւ՝ դեսպաններ զրկեց : Սուլթան Մուրատ արհամարհանօք ետ դարձուց յոյն դեսպանները : Այն սանն, Մանուէլ, ո՛չ միայն Մուսթաֆան ազատ կ'արձակէ բանաէն, այլ և զօրք ու նաւատորմ կը յանձնէ անոր, որ քիչ ատենէն Բումէլին կ'ապստամբեցնէ Սուլթանին դէմ, կը միանայ կատաղի Ճիւնէյաի, կը զարնէ Օսմ. բանակները և վերջապէս՝ Էտիրնէի տիրելով՝ ինքզինքը կը հռչակէ Սուլթան :

Օսմ. պետութիւնը երկրորդ անգամ ըլլալով կը մատնուէր անիշխանութեան :

Սակայն խաբերայ Մուսթաֆայի սյս յաղթանակը տեւականութիւն չպիտի ունենար, որովհետեւ Սուլթան Մուրատ ոչ միայն յաջողեցաւ ապստամբին գրաւած բոլոր քաղաքները ետ առնել, այլ և զինքն ալ ձերբակալելով՝ Էտիրնէի աշտարակներէն մէկուն վրայէն կախել տուաւ (1422) :

2. 4. ՊՈՒՍՈՅ Բ. ՊԱՇԱՐՈՒՄԸ .— Յունաց կայս-
րը իր լարած այս վերջին դաւին անյաջողութենէն յու-
սահաա և Օսմ. Սուլթանին վրէժինդրութենէն ահա-
բեկ, իսկոյն դեսպաններ զրկեց՝ բարեկամութեան դա-
շինք հաստատելու համար: Սակայն Սուլթան Մուրատ
պատասխանեց անոնց. «Փացէք ձեր տիրոջն ըսէք որ,
այդ բարեկամութեան դաշինքը ես անձամբ պիտի գամ
կնքել իրեն հետ»:

Եւ իրօք, Սուլթան Մուրատ 200,000 զօրքով
գնաց պաշարեց 4. Պոլիսը և անտարակոյս պիտի հաս-
նէր իր նպատակին, եթէ զօրաւոր պատճառներ զինքը
չ'ստիպէին պաշարումը վերցնելու՝ պայմանաւ որ Յու-
նաց կայսրը իր Մայրաքաղաքին չըջանակէն դուրս՝ որ և
է ստացուածք չունենար, և տարին 30,000 վենետիկ-
եան ոսկի վճարէր Օսմ. գանձին:

Սուլթան Մուրատ հարկադրուած էր Յունաց կայ-
սեր հետ իր հաշիւն «յս կերպով կարգադրելու. որով-
հետեւ Ասիական բաժնին մէջ. իր Քիւլխի Մուսրաֆա
Չէլիպի եղբայրը, Գարամանի իշխանին թելադրութեամբ
ապստամբելով՝ երկիրը կը խռովէր: Սուլթան Մուրատ
թէ՛ իր ապստամբ եղբայրը, թէ՛ Գարամանի և Ահնոպայ
պէյերը, և մանաւանդ՝ 20 տարիէ ի վեր Օսմ. Պետու-
թեան պատուհաս եզոզ Գարա Ճիւնէյա կատաղի խռ-
վարարը թուր ընտանեօք բնաջինջ ընելէ յետոյ, վերա-
դարձաւ իր Եւրոպական երկիրները պաշտպանելու՝ մէ-
կէ աւելի զօրաւոր թշնամիներու դէմ:

3. ԵՒՐՈՊԱԿԱՆ ՊՈՏԵՐԱԶՄ .— Երկարրմ Պայա-
զիտի մահէն և անոր յաջորդող Ղ1 տարուան անիշխա-
նութենէն օգուտ քաղելով՝ վենետկեցիք, Եպիրոսի ու
Թեսաղոնիկէի տիրեր էին: Սուլթան Մուրատ, Փոքր
Ասիոյ մէջ ծագած ապստամբութիւնները զսպելէ յետոյ,
անցաւ Եւրոպա ու վենետկեցիներուն զբաւած մասերը:

ևետ առնելէ ի զատ, գնաց Պէկրաս քաղաքն ալ պաշարեց:

Այս միջոցին է որ, Մաճառաց Վլասխարա թագաւորը, և մանաւանդ՝ Թրանսիլվանիոյ ժան-Հունիաս իշխանը մէկ կողմէն, Իսկինէք Պէկ)՝ Ալպանիոյ աշարկու իշխանը միւս կողմէն՝ Օսմ. երկիրներն արշաւելով՝ մեծամեծ չարիքներ կը հասցնէին: Եւրոպական այս իշխաններուն մէջ ամէնէն երեւելին էր ժան-Հունիատ, իրրեւ իր դարուն առաջնակարգ ռազմագէտներէն մէկը, որ Օսմանցիներուն արժանաւոր հակառակորդ մը եղաւ: Սա, ո՛չ միայն ստիպեց Սուլթանը որպէսզի Պէլկրասի պաշարումը վերցնէ, այլ և յազմանակաւ դէպ ի հարաւ (Թրակիա) յառաջանալով՝ Սուլթանին յաջորդարար զրկած զօրապետները զարկաւ ու 30,000է աւելի զինուոր սպաննեց և վերադարձաւ Պուտա՝ իր հետ տանելով տասն երեք փաշա, 9 դրոշ և 4000 պատերազմական զերի: Սուլթան Մուրատ հարկադրուեցաւ Սերպիան ետ աալով 10 ասորուան խաղաղութեան դաշինք մը կնքել իր թշնամիներուն հետ: Ինքը՝ Ղուրանին, իսկ Քրիստոնեայ իշխանները՝ Աւետարանին վրայ երդում ըրին՝ իրենց խոստումները հաւատարիմ մնալու համար: Այս կարգադրութենէն յետոյ, Սուլթան Մուրատ, իշխանութիւնը յանձնելով իր գահաժառանգ Մէհէմէտ որդիին (ապագայ Յաթիհ), ինքը առանձնացաւ Մանիսա քաղաքը՝ ուր բարեպաշտ Տէրվիշներու հետ ճգնաւորական կեանք մը կը փութէր:

4. ՎԱՌՆԱՅԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ (1444).— Սակայն Սուլթան Մուրատ քիչ յետոյ իմանալով որ Վլատիսլաւ և Հունիատ՝ Եզդիկոս Դ. Պապին թելադրութեամբ իրենց ուխտը դրժելով՝ նորէն պատերազմի ձեռնարկեին, արդար բարկութիւնով բորբոքած, կրկին գահը վերադարձաւ և 60,000 զօրքով փութաց Եւրոպա՝ ուր դաշնակից թշնամի բանակը գտաւ Պուլկարիոյ Վառնա

քաղաքին մօտ : Կը պատմեն թէ Սուլ . Մուրատ , պատերազմի սկսելէ առաջ , Քրիստոնեայ իշխաններուն ստորագրած դաշնագիրը նիզակի մը ծայրն անցուցած և իր զօրացը դառնալով գոչած է , «Մզ Քրիստոնէից Աստուածը , քու անունովդ եղած այս նախատինքին՝ դո՛ւն վրէժխնդիր եղիր» :

Եւ իրօք , դաշնակիցները շարաշար յաղթուելով՝ 10,000էն աւելի մարդ կորուսին . Վլատիալաւ իր մահը գտաւ , Պապին նուիրակը՝ Ժիլլիեն-Չեզառլինի բազմաթիւ եկեղեցականներու ճեռ գերի ինկաւ , իսկ Հունիատ՝ հալածական վերադարձաւ իր երկիրը (1444) :

Յիշատակելի այս յաղթութենէն յետոյ , Սուլ . Մուրատ , Մօրա թերակղզին Յունաց ձեռքէն առաւ և ինք երկրորդ անգամ իշխանութենէ հրամարելով՝ առանձնացաւ իր սիրական Մանիսա քաղաքը՝ ուր ծաղկեմշակութեամբ կը պարապէր :

Սակայն Ենիշէրիններուն ստիպումին ու Եւրոպայի կողմէն սպառնացող լուրջ վտանգներուն պատճառաւ՝ Սուլթան Մուրատ սրբառաւորեցաւ կրկին ձեռք առնել իշխանութեան զէկը :

ՔՈՍՏՈՎԱՅԻ Բ . ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ (1448) . — Վառնայի նշանաւոր ճակատամարտէն յետոյ , Հունիատ՝ Մաճառիստանի գահը կըսմ ըլլալով՝ իր կրած պարտութեան վրէժը լուծելու նպատակաւ՝ մեծամեծ պատրաստութիւններ տեսաւ և կրկին արշաւեց Օսմ . երկիրները : Սուլթան Մուրատ իր թշնամին գտաւ՝ Քոստովայի պատմական այն դաշտին մէջ՝ ուր իր անուանակիցը Մուրատ Ա . Եւրոպական դաշնակից ստորարաթիւ բանակը ջախջախած էր և ուր ինքն ալ 62 տարի յետոյ՝ նմանօրինակ փառաւոր յաղթութիւն մը տարաւ իր կատաղի հակառակորդին զէմ :

ԻՍԿէՆՏԷՐ ՊԷՅ . — Ալպանիոյ հարկատու իշխան

ժան-Քասթոլիօ, իբր հաւատարմութեան հաւատարմք, Սուլթան Մուրատի պատանդ զրկած էր իր չորս զաւակները՝ որոնց երեքը մնում էին: Ամէնէն երէցը, իր մարմնական գեղեցկութիւնով, բնական աշխուժութեամբ և արիական գործերով՝ Սուլթանին սիրելի եղաւ և մասնաւոր խնամքով մը կրթուեցաւ զինուորական արուեստին մէջ: Պաշտականաց և Սուլթանին շփացած տղան դարձած էր այս երիտասարդը՝ որու տուած էին *Իսկէնսէր պէյ* (*Ալեքսանդր*) պատուոյ տիտղոսը: Մեծին Ալեքսանդրի անուանակից այս Ալպանիացին, որքան արի զինուորական, նոյնքան ալ խորամանկ ու փառասէր էր և զլիաւոր նպատակ ունէր՝ իր հայրենիքին անկախութիւնը ձեռք բերել: Իսկէնսէր պէյ կը յաջողի, մահուան սպառնալիքով՝ Սուլթանին քարտուղարէն հրամանագիր մը ստանալ՝ ուղղեալ Ալպանիոյ կուսակալին՝ որպէս զի նոյն երկրին մայրաքաղաքը եղող *Բրօյա* յաղաքը իրեն յանձնէ:

Այս նենգութեամբ կը վերադառնայ հայրենիք, կը տիրանայ Մայրաքաղաքին ու շրջականներուն, կը վանէ Թուրք զինուորները, կը նիզակակցի դրացի իշխաններուն և այսպէս կը դառնայ իր նախկին *Տիրոջ* ամէնէն անհաշտ և ամէնէն ահարկու թշնամին:

Սուլթան Մուրատ քանիցս բանակներ զրկեց այս ապստամբին դէմ և ինքն ալ անձամբ գնաց պաշարեց *Բրօյա* բերդաքաղաքը՝ զոր անկարող ըլլալով առնել՝ յուսահատ վերադարձաւ Էտիրնէ՝ ուր սրտին ցաւէն մեռաւ 49 տարեկան, ու 30 տարի թագաւորելէ յետոյ:



ՍՈՒԼԹԱՆ ՄԷՀԷՄՄԷՏ Բ. (էլ Ֆարիհ)

(Հինրէքի՝ 855—886.— Քս. ի 1451—1481)



Ֆարիհ Սուլթան Մեհեմէտ

1. 4. Պոլսոյ պաշարումը.— 2. Յունաց կայսրութեան վիճակը.—
3. Հին Պոլիս.— 4. Երկու պատերազմիկներուն ոյժը.— 5. 4. Պոլ-
սոյ առումէն յետոյ, Յոյն և Հայ Պատրիարքութիւնները.— 6. Ֆա-
թիհի աշխարհակալութիւնները.— 7. 4. Պոլսոյ առման հետեւանք-
ները:

1. Սուլթան Մուրատ Բ. ի որդին էր ՍՈՒԼԹԱՆ
ՄԷՀԷՄՄԷՏ Բ. որ ո՛չ միայն Օսմանեան, այլ և՛ մարդ-
կային ազգի պատմութեան մէջ անմոռաց անուն մը

թողած է՝ իբրև առաջնակարգ ռազմազէտ. հաստատա-
միտ և իբրև մեծ աշխարհակալ վեհագետ: Մէհէմէտ, իր
այս յատկութիւններուն կը միացնէր նաև անողոք և
կատաղի բնաւորութիւն մը, որ սաստիճան մը, իր փառքն
ու անունը նսեմացուցած է:

2. 4. ՊՈԼՍՈՅ ՊԱՇՏՄԱՆՈՒՄԸ ՈՒ ԱՌՈՒՄԸ. —

Սուլթան Մէհէմէտի միակ և գլխաւոր նպատակն էր՝ իր
նախորդներուն քանիցս փորձած և ի դերև ևլած մեծ
ծրագիրը, այսինքն՝ 4. Պոլսոյ տիրելու փառքը իրեն
վերապահելով՝ ապահովել իր տէրութեան Եւրոպական
երկիրներու գոյութիւնը:

Պիշեր մը, յանկարծ, իր Խալիվ փաշա վէզիրը
կանչել տալով՝ կ'ըսէ անոր «Ե՛ս 4. Պոլսը կ'ուզեմ,
այս բարձիս վրայ քուեա չի տանիր. Աստուած կ'ուզէ
այդ քաղաքը ինծի տալ»: Մինչդեռ Սուլթան Մէհէմէտ
իր այս հսկայ ծրագիրը գործադրելու պատրաստութիւն-
ներով զբաղած էր, Յոյները՝ իրենց Մայրաքաղաքին
սպառնացող ահաւոր վտանգին հանգէպ անտարբեր,
կրօնական ծթրած ու ծիծաղելի խնդիրներու համար
իրարու գլուխ կը պատուէին և իրենց կրօնամոլութեանը
մէջ այնպէս կը հաւատային թէ՛ հակումով ու ծոմապա-
հութեամբ պիտի կարողանային դիմադրել Օսմ. Սուլ-
թանին ահել բանակներուն: Նոյն իսկ, այս ահաւոր
ճգնաժամուն մէջ՝ իրենք իրենց մէջ միարան չէին: Մէկ
մասը կը փափաքէր Լատինական եկեղեցին բնդունելով՝
Քրիստոնեայ Եւրոպայի պաշտպանութիւնը վայելել, իսկ
մեծ մասը, որու մէջ էր նաև եկեղեցական դասակարգը,
այս գաղափարին բոլոր ոյժով կ'ընդդիմանար՝ բսելով.
«Մեզի համար նախապատիւ է 4. Պոլսոյ մէջ Մէհէմէտի
ապարջը տեսնել՝ քան թէ Պապին խոյրը»:

3. Մինչդեռ Յոյները այս փոյուն վիճարանութիւն-
ներով պարապ ժամանակ անցնելու վրայ էին, Սուլթան

Մէհէմմէտ մեծամեծ պարսաստութիւններով էտիրնէէն կ'ուգայ Պոլիս, և նախ, Պոսֆորի Եւրոպական եզերքին վրայ, Անատոլու Հիսարիի դիմացը կը կանգնէ Բումէլի Հիսարը ամուր բերդը: Յունաց վերջին կայսրը, ԿՈՍՏԱՆԴԻՆ ՊԱԼԷՈԼՈԿՈՍ, արի ու ազնիւ այս վեհապետը,



Կոստանդին Պալէոլոկոս

որ մահամերձ կայսրութեան մը ամէնէն ցաւալի և արիւնտա օրերը տեսնելու տխուր ճակատագիրը պիտի ունենար, սրտառաջ նամակով մը փորձեց Սուլթան Մէ-


հէմմէտի գուլթը շարժել : Սակայն Սուլթան Մէհմէտ անողոքելի մնաց և վերջապէս՝ 1453 Ապրիլ 6ին, 300000 զօրքով ու 250ի չափ նաւերով՝ եկաւ պաշարեց Կ. Պոլիսը : Կոստանդին՝ վերջին փորձ մըն ալ ըրաւ, դիմելով Արեւմտեան տէրութեանց և անոնցմէ օգնութիւն խնդրել : Բայց ամէնքն ալ դատապարտելի անտարբերութեամբ մը պատասխանեցին այս նայրենասէր վեհապետին յուսահատական դիմումին : Միայն Ճէնովացիք, իրենց Ղաչարիս արուարձանն ու նիւթական շահերնին պաշտպանելու նպատակաւ՝ սակաւաթիւ նաւերով օգնութեան եկան՝ Ճիռադիսիանի երեսելի ծովակալին առաջնորդութեամբ :

Կ. ՊՈԼԻՍ՝ ՊԱՇՏՆԱՐԱՆ, ԺԱՄԱՆԱԿ.— Բուն Կ. Պոլիս, Ոսկեղջիւրի ներսերէն, այսինքն՝ Էյուպէն սկսելով մինչեւ Սարայ Պուրնու, և անկեց դէպ ի օջ դառնալով մինչ Սան-Սրիֆանոյի խորըը, եռանկիւնի ձեւ մը ունի՝ որով մէկ կողմը կ'ունենայ քաղաքին նաւահանգիստը և միւս կողմը՝ Մարմարան Երբորդ կէտը՝ քաղաքին ետեւի մասն էր՝ ցամաքին կողմէն : Այս եռանկիւնին մէջ կը գտնուէր քաղաքին միջնաբերդը : Կ. Պոլիս, նաւահանգիստի կողմէն պարիսպով մը պաշտպանուած էր, իսկ ցամաքի վրայ ունէր երկու բարձր աշտարակ՝ լայն խրամատներով : Մարմարայի վրայ, Սարայ Պուրնիէն սկսեալ՝ դէպ ի հարաւ կը գտնուէր ծովեզերեայ պարիսպը, որ կը վերջանար Էփրափիրկիոն (Եէտի Գուլէ) ամրոցով : Իսկ ցամաքային պարիսպը՝ Եէտի-Գուլէէն մինչեւ այժմու Թիֆլիս Սարայ՝ հետեւեալ գլխաւոր դուռներն ունէր՝ Ա. Էյրի Գափու, Բ. Էսիրնի Գափու, Գ. Ս. Ռումանուսի Գուռ, Դ. Սիլիփի Գափու, Ե. Ոսկիդէն Գուռ : Նաւահանգիստին ներսը, հոն՝ ուր պարիսպը կը վերջանայ, կը գտնուէր Բսիլո-Փօրթա (Օտուն Գափու) դուռը՝ ուսկից Օսմանցիք ներս մտնելով քաղաքին տիրացան : Ահա այս վեց դուռներուն առջեւ տեղի ունեցան Կ. Պոլսոյ պաշարման և առման գլխաւոր գործողութիւնները :

² Սուլթան Մէհմէտ, բազմաթիւ թնդանօթներէ ի զատ, Էտիրնէ մէջ Օրպան անուն Մաճառի մը ձեռքով ձուլել տուած էր աննախընթաց մեծութեամբ այնպիսի ահադին թնդանօթ մը, որու համար աւանդութեամբ կ'ըսեն թէ 12 կենդինար ծանրութեամբ քարէ ուսմբեր կ'արձակէր : Այս վիթխարի հրազէնը 80 զոյգ եզով ու 700 հօգիտի հակողութեան ներքեւ հազիւ կարելի եղած էր երկու ամսուան

մէջ Էտերնէէն փոխադրել Պոլիս և զետեզել Ս. Ռոմանոսի Դրան զի-
մացը որ այս պատճառաւ՝ նոյն թնուականէն սկսեալ յիշեալ Դուռը
կոչուած է Թօփ Դափու:

Այսպէս, Կ. Պոլիս ցամաքին ամբողջ զիծերուն
վրայ պաշարուած էր, երբ Ապրիլ 15ին, Օսմ. նաւա-
տորմը Պոսֆորէն ճամբայ ելլելով՝ Պաշքա Օղլու ծովա-
կալին հրամանատարութեամբ՝ եկաւ նաւահանգստին
մուտքը բռնեց⁽¹⁾: Հոս վրայ հասաւ Ճիուսդինիանի և
սկսաւ սոսկալի ծովամարտ մը: Մէկ կողմանէ պաշա-
րուած քաղաքացիք Յունական հուրով Օսմ. նաւերը
կ'այրէին, միւս կողմանէ՝ Ճէնովացիք, իրրե վարժ ծո-
վամարտիկներ, Օսմ. զօրաց մեծ շեաս հասցնելով՝ ցիր



. Հսկայ բնդանօրը

ու ցան բրին անոնց նաւերը և յաջողեցան մանեկ Ռսկեզ-
Ջիւր և թնամի նաւատորմին զէպի նաւահանգիստ մուտքն
արգիլելու համար, Ղուկաս Նօսարաս Յոյն ծովակալը՝
Ղալաթիական զինաց, զէպի Պաղչէ Բափուջի կողմը՝ ա-
հագին չղթայ մը ձգեց:

(1) Իսլամացած Պուզկար մըն էր Պաշքա Օղլու Ծովակալը՝ որու
անուամբ Օսմ. նաւատորմին նախապէս խորտխած տեղը մինչեւ այսօր
կը կոչուի Պաշքա Կիմանի, Բուսէլի Հիսարի և Պօյաճը Բէռլի միջեւ:

Սուլթան Մէհէմէտ, ծովեզրէն իր զօրաց կոտորածը և նաւերուն հրկիզումը տեսնելով ա՛յնքան զայրացաւ, կ'ըսեն, որ ձին դէպ ի ծով քշեց, որպէս զի օգնութեան փութայ իրեններուն:

Այս ձոխողումին վրայ, Խալիլ փաշա Վէզիրը խորհուրդ տուաւ Սուլթանին որպէս զի պաշարումը վերցնէ: Սակայն Սուլթան Մէհէմէտ այս առաջարկը խաբառ մերժելով՝ նախ Պալթա Օզլու ծովակալը գլխատել տուաւ և ապա, իր աւագանին ժողովի հրաւիրելով՝ անոնց կարծիքն հարցուց: Ժողովականները, Իւլէմա,



Սուլթան Յաքիմի մէկ ուրիշ պատկերը:

նախարար և զինուորական, միահամուռ մերժեցին առաջարկուած խորհուրդը և անոր հեղինակն ամբաստանեցին իրրե մատնիչ, իրրե Յոյնի արիւն կրող և Յոյներէն կաշառուած դաւաճան մը, և որոշեցին ամենայն սաստկութեամբ պատերազմը շարունակել: Սակայն, երբ Սուլթանը հարցուց թէ՛ նաւահանգստին բերանը ձգուած շղթան ինչպէ՞ս պէտք է խզել և ներս մտնել—ո՛չ մէկը կրցաւ միջոց մը ցոյց տալ:

Ահա այն ատեն է որ հնարագէտն Սուլթան Մէհմէտ մէտ ինքն անձամբ կը լուծէ Բիւզանդական հանգոյցը, որ պատմական տարեգրութեանց մէջ իր նմանը չունի:

Կը հրամայէ որ, այժմեան Տօրնա Պաղքի կամ Սալը Փազարիի ծովեզրէն մինչև Օզ—Մեյնսանի բլուրը և անկից վար՝ մինչև Գասըս Փաշայի ծովախորշը, ճարտարով օծուած տախտակէ սահուն ճամբայ մը շինուի՝ որու վրայէն մէկ գիշերուան մէջ՝ 80ի շափ նաւեր Ոսկեզջիւր, այսինքն բուն քաղաքին դիմացը ծով կ'իջեցնէ: Առաւօտուն, Յոյները այս անփկնկալ տեսարանին առջև սարսափածար՝ յուսահատական աղաղակներ կ'արձակեն, երբ կ'ստուգեն մանաւանդ թէ՛ նախնանգստին բերանը ձգուած չղթան իր տեղն է:

Իրաւ է որ միևնայն գիշերը ճիւղադիւրիանի կը փորձէ Օսմ. նաւերը հրդեհել, բայց չի յաջողելով՝ Օսմ. նաւէ մը արձակուած թէրզանօթի մը զոհ կերթան 150 ձէնուփայտներ, իսկ ինքը, լողալով հագլու կը յաջողի մթնութենէն օգտուելով խոյս տալ:

Սուլթան Մէհմէտ, վստահ իր նպատակին յաջողութեան, վերջին փորձ մըն ալ կ'ընէ իր Իւսփէկնիար Օղլու աները զրկելով Կոստանդին կայսեր, որպէս զի համոզէ զանի, առանց արիւնահեղութեան անձնատուր ըլլալ: Խոստանալով խնայել իր և քաղաքացիներուն կենաց և զինքը Պելրպոնէսի մէջ թագաւոր կարգել: Սակայն Կոստանդին կը պատասխանէ պատգամաւորին, «Կա՛մ Մայրաքաղաքս պիտի ազատեմ, կա՛մ անոր աւերակներուն տակ պիտի թաղուիմ»: Իսկ Սուլթան Մէհմէտ ալ իր զօրաց սուջև ուխտաց՝ հրապարակաւ յայտարարելով. թէ՛ «Կ. Պոլիս կա՛մ ամուս կամ գերեզմանս պիտի ըլլայ: Կա՛մ ես այս քաղաքը պիտի առնեմ և կամ ես անոր զոհ պիտի ըլլամ»:

Ուրեմն, սուրը պիտի վճռէր երկու հաստատամիտ վեհապետներուն բախդը:

Կոստանդին՝ թէպէտ հազիւ 5-6000 զօրք և սակաւաթիւ նաւերէ բաղկացած տորմիզ մը և օտարական կամաւորներու գումարտակ մը միայն ունէր . պատրաստուեցաւ յուսահատ պատերազմի մը . իր զիւցաղնական մահովը փրկելու համար կայսերական թագին պատիւը :

Օսմանցիք, 1453 Մայիս 29ին, քաղաքը ծովէն ուցամաքէն պաշարելով՝ հրեղէն շղթայի մը մէջ առին զայն՝ 150,000 Ենիշէրիներ, աներեւակայելի կատաղութեամբ և իրենց Սուլթանին աչքին առջև կը յարձակին ամրոցներուն վրայ : Յոյները, յուսահատական արիութեամբ զիմադրելով՝ պարիսպներու վրայէն նետերու և քարերու տարափ մը կը տեղացնէին պաշարողներուն վրայ : Իսկ Յունական հօւրը՝ Օսմանեան նաւերն ու շարժական ամրոցները լափելով՝ մոխիր կը դարձնէր : Այս մօլեղին պայքարը սոսկալի կատաղութեամբ շարունակուեցաւ երկու կողմէն՝ ամբողջ երեք ժամ, երբ Ճիուսդինիանի ծանր վէրք մը ստանալով, քաջուեցաւ Ղալաթիա : Իր բացակայութիւնը թէպէտ վնասութիւն ազդեց Յոյներուն, սակայն պատերազմը միևնոյն կատաղութեամբ շարունակուեցաւ : Մինչդեռ Թօփ Գափուի կողմը այս հերոսական պայքարը տեղի կ'ունենար, յանկարծ գոյժ հասաւ որ, Օսմանցիք Քալիօլիօրթա դուռնէն ներս մտած և սկսած են Յունական զօրքը կռնակէն ալ զարնելով դէպ ի քաղաքին սիրտը խուժել : Այս լուրը աննոարին յուսահատութեան մտանեց պաշարեալները : Իսկ Կոստանդին, որ տակալին պարիսպներուն վրայէն իր զօրաց հետ կուշտ կուշտի արիաբար կը պայքարէր Օսմանցիներուն դէմ, համոզուելով թէ իր Մայրաքաղաքն առնուած և փրկութեան ամէն յոյս կորսուած է, դէպ ի քաղաքին սիրտը խուժող Ենիշէրիներուն վրայ խոյսացաւ գունդ մը զօրքով և անհաստալի քաջութիւններ գործելէ յետոյ, բաղմաթիւ վէրքերու ներքև

ծածկուած՝ ինկաւ ողեսպառ : Այսպէս մեռաւ Մեծին
Կոստանդիանոսի հիմնած Արեւելեան կայսրութեան վեր-
ջին գիւղազն ու հայրենասէր կայսրը ԿՈՍՏԱՆԴԻՆ ՊԱ-
ԼԷՈՂՈԿՈՍ :

Սուլթան Մէհմէտ Կ. Պոլսոյ վերջնապէս առ-
նուած ըլլալու աւետիսն ստանալով՝ նրորդ օրը յաղ-
թանակաւ մտաւ քաղաք և ուղղակի գնաց Այխա-Սօֆիա
(Սուրբ Իմաստութիւն) Մայր Եկեղեցին՝ ուր այր, կին,



Այա-Սօֆիայի մզկիթը

ձեր ու մանուկ, կղեր ու աշխարհական՝ ապաստանած
էին : Ենիշերիք, այս անգէն ու հալածական բնակիչներէն
հազարաւորներ անխնայ ջարդեցին : Իսկ Սուլթան Մէ-
հմէտ հիացաւ, զմայլեցաւ Մեծին Յուսիսիանոսի կա-
ռուցած այս հրաշակերտ եկեղեցին վրայ և հրամայեց,
անունը անփոփոխ պահելով, մզկիթի վերածել զայն և
ինքն ալ ցորեկուան Նաւազը իր աւագանիովը միասին
հոն կատարեց⁽¹⁾ :

Կ. ՊԱԼՍՈՅ ԱՌՈՒՄԷՆ ՅԵՏՈՅ. — Սուլթան Մէ-

(1) Կ. Պոլսոյ առման կարեւոր թուականը (1453), ընդունուած
է իբրև վախճան Միջին Դարու, և սկզբնաւորութիւն նոր Պատմու-
թեան : Բայ ի Այա-Սօֆիայէ, Ֆաթիհ Յունական ուրիշ վեց հռչակերտ
եկեղեցիներ ալ մզկիթի վերածել տուաւ :

հէմմէտ Կ . Պոլիսն առնելով՝ զայն իր Մայրաքաղաքն
ըրաւ և ինք կոչուեցաւ Ֆաթիհ (Աշխարհակալ) և կոտորածին ու թալանին վերջ տալով՝ հրամայեց անմիջապէս
քաղաքին աւերակ մասերը վերանորոգել և բնակչաց
գաղթումն արգիլելով՝ անոնց կեանքն ու ստացուածքը
ապահովել :

Ճէնովայիք ալ . Ղալաթիոյ իրենց արուարձանին
բանալիները՝ յաղթական Սուլթանին յանձնելով՝ անոր
գթութեանն ապսւինեցան :

Սուլթան Ֆաթիհ . Գեորգ Գեկնուաղիոս վանականը
Յունաց Պատրիարք կարգելով՝ մեծամեծ պատիւներ
ընծայեց անոր և Սուլթանական Ֆերմանով՝ ազգային
ու կրօնական առանձնաշնորհումներ տուաւ : Նոյնպէս ,
Պրուսայի Հայոց Յովակիմ եպիսկոպոսը , ոտ իր մտերիմ
բարեկամն էր . Պոլիս հրաւիրելով , Հայոց Պատրիարք
կարգեց՝ Յունականին յար և նման առանձնաշնորհում-
ներով և Ասիական դաւառներէն ալ բազմաթիւ Հայ
ընտանիքներ բերել տալով՝ զանոնք բնակեցուց Պոլսոյ այլ
և այլ արուարձաններուն մէջ , որոնք կոչուեցան Ալթը
Օսարար⁽¹⁾ :

Կ . Պոլսոյ առման լուրը ահ ու սարսափ ազդեց
բոլոր Եւրոպայի : Իրաւ է թէ Պապը՝ այս առթիւ խա-
շակրութիւն մըն ալ քարոզելու փորձ ըրաւ , բայց ըն-
դունայն :

Ֆաթիհ՝ Պարսկաստան , Եգիպտոս ու Մէքքէ դես-
պաններ զրկելով՝ իր այս փառաւոր աշխարհակալու-
թիւնն աւետեց և իր Մալիկ փաշա վէզիրն ալ , որու
Յոյներէն կաշառուած և դաւաճանութիւններ գործած

(1) Այդ Հայարնակ Օտալարները հետեւեալներն էին . Ա . Գարա
Կոմրիս Օսարար , Բ . Մարա Օսարար , Գ . Չարչամպա Օսարար , Դ .
Թեֆիկ Օսարար , Ե . Ալթը Գարու Օսարար , Զ . Կոմրիսի Օսարար ,
Է . Հեհեփ Օսարար ևն .:

ըլլալը ապացուցուած էր, իր աչքին առջև զլիսատել
առւաւ :

Սակայն, եթէ Եւրոպայի արեւմտեան տէրութիւն-
ները անտարբեր զանուած էին Բիւզանդիոսնի կայսրու-
թեան դժբախդ օրերուն, գրացի պետութիւնները շու-
տով զգացին թէ՛ Ասիոյ ու Եւրոպայի սահմաններուն
վրայ հաստատուած և Կ. Պոլիսը իրև: մայրաքաղաք
ունեցող Օսմանեան աճեղ զօրութիւնը ինչ սոսկալի
վտանգ պիտի սպառնար իրենց գոյութեան: Եւ իրօք,
Մաճառներն ու Ալպանայիք մէկ կողմէ, Վենետկեցիք
և Հոգոսի ապետները միւս կողմանէ՝ կը նեղէին Օս-
մանեան պետութիւնը: Փաթի՛ն, նախ զնայ Մաճառիս-
տանի պատուարը եզող Պեղրասը գրաւելու: Սակայն
Հունիստ վրայ հասնելով՝ 150,000 Օսմանցիներու կա-
տաղի յարձակումներուն զիմադրելով՝ սախպեց Սուլթա-
նը որպէս զի մնացած զօրքովը ևտ քաշուի: Այս ճակա-
տամարտին մէջ էր որ Մաճառ զիւցաղնը մահացու վէրք
մը սասնալով մեռաւ:

Վենետկեցիներն ալ ծանր վնասներ կրեցին, որով-
հետև Օսմանցիք, Սկրափօնիան, Սդրիան և Կառնիօրան
նուաճելու կը պատրաստուէին, երբ Վենետկեցիք իրենց
հայրենիքը փրկելու և Արևելքի մէջ իրենց մեծահա-
րուստ վաճառականութիւնը ձեռքէ չի հանելու նպա-
տակաւ՝ սախպուեցան Սուլթանին նետ հաշտութիւն
կնքել՝ տարեկան մեծագումար տուրք մը վճարել յանձն
առնելով: Այս միջոցին մեռաւ՝ 20 տարիէ ի վեր Օս-
մանցիներուն անհաշտ ու կատաղի հակառակորդ և միշտ
յաղթող հանդիսացող Ալպանիոյ իշխան հռչակաւորն Իս-
կենտր Պեյ և Ալպանիա եղաւ Օսմի, նահանգ մը, բաց
ի իր Բրոյա Մայրաքաղաքէն՝ որ տասը տարի զիմա-
դրեց⁽¹⁾: Այնուհետև, Փաթի՛ն իր զէնքը դարձուց Հոռ-

(1) Կը պատմեն թէ Օսմանցիք, Իսքէնտէր Պէյի քաջութեան

դասի դէմ: Այս կղզին Ս. Օհաննուս կարգին Ասպետաց ձեռքն էր և որոնց մեծաւորը, Պետրոս Օպուսով՝ Թրքաց դէմ երկար ատեն պայքարեցաւ: Յաթի՛ն՝ Իտալիա ացնելով՝ Օդրանք քաղաքը պաշարմամբ առաւ և բնակիչները սուրէ անցուց: Իտալացի իշխանները ա՛ն ու սարսափի մատնուելով՝ վերջ տուին իրենց երկպառակութիւններուն և միանալով՝ վերստին գրաւեցին Օդրանք քաղաքը: Այս ձախորդութեան վրայ, Սուլթան Մէհմէտ մէտ զայրանալով՝ կը պատրաստուէր Արեւմտեան տէրութեանց դէմ մեծ արշաւանքի մը ձեռնարկել, երբ մեռաւ 1481, Մայիս 2ին:

Սուլթան Մէհմէտ մէտ, իր Յաթի՛ն պատուանունը լիուլի արդարացուց, ո՛չ միայն Կ. Պոլսոյ տիրելով՝ այլ և իր 30 տարուան իշխանութեան միջոցին աշխարհակալելով և նուաճելով 2 կայսրութիւն, եօթը թագաւորութիւն ու Եւրոպայի և Ասիոյ մէջ ալ 200 է աւելի քաղաքներ:

Յաթի՛ն, որքան աշխարհակալ, նոյնքան ալ մեծաշէն վեհապետ մըն էր: Ինքը շինել տուաւ Մարմարայի բերդերը, Եէտի Գուլէի ամրոցը, Սարայ Պուրնուլի արքունիական հոյակապ պալատը՝ (Հայ վարպետներու ձեռքով), էյուլպ Սուլթանի մզկիթը՝ ուր թաղուած է՝ Էպու-էյուպ-Անսարիւն, որ ինքը եղած է Իսլամաց Մարգարէն առաջին անգամ Մէտինէի մէջ հիւրընկալողը: Նոյնպէս՝ իր անունով փառաւոր մզկիթի մը (Յաթի՛ն Ճամիսի) հիմը դրաւ և ուր կը գտնուի իր գերեզմանը: Ասոնցմէ ի զատ, Յաթի՛ն, Մէտրէսէներ, խաներ, հիւանդանոցներ, գրատուններ ազրիւրներ, բազնիքներ և նմանօրինակ բազմաթիւ շինութիւններով իր նոր Մայրաքաղաքը զարդարեց:

վրայ այնքան կը հիանային որ, անոր մահէն յետոյ՝ ոսկերտիքը իրենց մէջ բաժնելով՝ իրեւ բժժանք (նուսխա) իրենց վիզէն կը կաթէին, կարծելով թէ այս միջոցաւ անյաղթելի կը դառնան:

Կ'րսուի թէ Սուլթան Ֆաթիհ, Արեւելեան ու Եւրոպական քանի մը լեզուներ սահուն կերպով խօսելէ իզատ, բանաստեղծութեան և մանաւանդ նկարչութեան ալ մեծ փափաք և ընդունակութիւն ունէր :

Կ'աւանդուի թէ, երբ Իկոնիոյ Սէլճուզեան Թուրք հարստութեան վերջին թագաւորը՝ Սուլթան Ալա'էտաին, Թաթարներու ձեռքով զահրնկէց ըլլալով մեռաւ և Սէլճուզեանց տիրապետութիւնը վերջացաւ, «Մէսնէ-վէի Շէրիֆ» անուն Պարսկերէն կրեւելի գիրքին ներկնակ՝ Մեվլանա Ճեղախսինի Բումիլի որդին՝ Սուլթան Վեղես՝ Ալա'էտաինի սուրբ Օսման Կազիին մէջքը կապեց :



Թրակապուքեան հանդէս՝ Էյուպի մզկիթին մէջ

Ֆաթիի յաջորդ Սուլթանները, իրենց զահակալութենէն քիչ յետոյ, Էյուպի մզկիթը երթալով՝ Ղազի Սուլթան Օսմանի այդ աւանդական սուրբ մէջքերնին կը կապեն և փառաւոր հանդիսաւորութեամբ թափօր կազմելով՝ կը մանեն Քսիլօփորքա անուն պատմական դուռնէն դէպի քաղաք, և ուղղակի Այա-Սօֆիայի մզկիթը երթալով՝ իրենց ցորեկուան Նամազը հօն կը կատարեն :

Թրակապուքեան հանդէսը (Գըլլան ալայը), Օսմ. Սուլթաններուն համար՝ կերպով մը թագադրութիւն կը նշանակէ :

ՊԱՏՄԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄ

Օտմ. պետութեան Ատիական բաժնին մէջ՝ Ֆաթիհի սխերիմ հա-
կառակորդներէն մէկն էր նաեւ՝ Պարսից Ազ-Գոյունլու հարստութենէն
համբաւաւորն Ուզուն Հասան, որ նախ իր եզրայրն սպաննեց և ապա
Գարսա Գոյունլուներու իշխանութիւնը և Վրաստանն ալ նուաճելէ յե-
տոյ, Վենետիկցիներուն գրգամամբ, սկսաւ Օտմ. երկիրներն ալ արշա-
ւելլ Ֆաթիհ, Դերջանի մէջ 1473ին շախմախեց այս բախդախնդիր սա-
պատակին բանակը և զինքն ալ հալածական վարեց:

Սակայն, այս վճռական ճակատամարտէն առաջ, Ֆաթիհ Սուլ-
թան Մէհմէտ, Ուզուն Հասանի գրած է սպառնական հետեւեալ
նամակը, զոր կը զեռեղենք հոս, իրր շահեկան նմոյշ մը Ֆաթիհի դա-
րուն գրական սճին, և գաղափար մը տուած ըլլալու համար թէ
այս անուանի աշխարհակալը ինչ տեսակ լեզու կը գործածէր իր հա-
կառակորդներուն նկատմամբ:

Պիսամ իլլահիբ բահմանիբ բահիմ, վէպի՛նի նէսիմ'ին ,
հազա քիթապունահ , եանիթըզու ալէյքիււմ պիլ հագգ . . .
Խալիպ իւլ քէֆէնյն վէ բաղլիզ իւս սագալէնյն , ճէլլէթ
գուտրէթուհու վէ 'ալէթ քէլիմէթուհու հագրէթլէրինին ,
պէն գուլլ քի , վահիլ պիլսա , համրլ ըպատ , մուհ-
եի սիւննէթի Բէսուլիլլահ , վէ միւհրի շէրիաթի նէպի-
յէիլլահ , ալէյնի վէ ալէա 'ալի՛նի սալալաթուլլահ , շահը
սէրվէրան Սուլթան Մուհամմէտ իւպնիւ Պայէպիտ Խան
ըմ , սանահ քի սէրտարը Աճէմ , Խանը ա'զամ Բէյ-Խուս-
րէվի եէկեանէ , ֆէրիտունի զէմանէ Հասան Խան սըն ,
միսալը շէրիֆիմիմսէ շէօյլէ ըսրար պույուրտըմ քի՛ ա-
կեահ՛օյասըն :

Քիչի տէվլէթէ մազսուր օլուպ , հատարնտան թէ-
ճավիւղ իսուպ , պի ինսաֆիւար հարէքեաթլըն գըլլմազ ա'-
լամէթի ինթիզալը տէվլէթու էմարէթ վէ զէվալի
մէմլէքէթ տիր , Փէս , շօլ վէսապիսի շէյթանիյէ քիմ ,
տիմաղըն ճէվֆինի մագարր իսինմիշ տիր , իսթինշագի
մա'ի ինապէթ պիրլէ՛ անը դա'իլ ազըլ իմամընը փիշվա
իտէսին քի , պիրլիմ մէմլէքէթիմիզ տար-իւլ-Իսլամ տըր ,
էպէն 'ան ճէսաֆին՝ տէվլէթիմիզ շիրաղը քիւֆիւր է՛լի-

նին եկեղեցի հազար ըլա բուշէն տիր : Իսլամ էնլինէ էկէր
 հազուզ գաստըն վար իտէ , առայի տէվլէթ վէ շէրթաթ-
 տան պաղի սէն սին վէ սանա միւթապէ'աթ իտուպ
 մուսալէնէթ իտէնլէր տիր :

Փէ'ս , պիղիմ տախի օլ թայիֆէնին գամը գաստը-
 նա աթրմըզ էյէրլէնմիշ տիր , վէ գըլըճըմըզ գուշանմըշ
 տրր : «Պիլմէ'մ , վէ եա դաֆիլ իաթիմ» տէմէյէտին : Շիշ
 սէն պէրու կէլմէք նաճէթ տէյիլ տիր : Շէվվալը միւ-
 պարէքտէ ամմէթ մէքեամինուհու ֆէթթա՛րի գուլմինէն
 տէսթուրի իլէ' լէշքէրի մէնսուրըմ պիրլէ , գալէի Գա-
 բահիսարըն իւզէրինէ վարըրըն , շօլ գաստէ քի գահարը
 ճէպապիրէ թէքատտէսէթ էամասուհու . պէն գուլուհու
 սէպէպ գըլուպ , սէնին գուլմուհու մաղլումլար իւզէ-
 րինտէն կէօթիւրէմ , վէ նամ ու նիշանընը նապէաթիմ գը-
 լամ : Ֆիլ ճիւմլէ թաթվիլի քէլամ լազըմ տէյիլ տիր :
 Միսալի մէյմումընա ճէվապ կէօնտէրէսին : Վէստէ-
 լամուհու ալէա մէն էրատէնի պիլ իսայր վէլ նամաիւլ-
 իլլահիլ վահիպին նուսրէթէ ալէա իսայր իլ իսալզ վէ ա-
 զիմ իլ իսալզ Մուհամմէտին վէ ալի'ի վէ սահպի'ի էճ-
 մա'ին իլա կէվմիտ տին :

Կ. ՊՈՒՈՈՅ ԱՌՄԱՆ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐԸ

7. Եւրոպական ցամաքին վրայ Օսմ. պետութեան հաստատու-
 թիւնը և մանաւանդ՝ Կ. Պոլսոյ առումը, քիչ առեճէն իրենց մեծ
 ազդեցութիւնն ունեցան նոր Պատմութեան շրջանի քաղաքակրթու-
 թեան վրայ՝ սկսեալ ԺԶ, գարէն, երբ առաջին տեղամ, Ֆրանսայի
 թագաւորը Ֆրանսուա Ա. կը գաշնակցէր Գանունի Սիւլէյման Ա.ի
 հետ՝ ընդդէմ Գերմանիոյ Նաթլ Ե. (Նաթլ Քէն) կայսեր :

Միւս կողմանէ, Յունական կայսրութեան անկումին հետեւա-
 նօք, բազմաթիւ Յոյն դիտումներ ու մատենագիրներ, իրենց հետ առ-
 նելով հնադարեան թանկագին ձևագիրներ՝ գաղթեցին Իտալիա՝ ուր
 մեծ մղում տուին գեղեցիկ դպրութեանց և մատենագրութեան, ու-
 բոնք արդէն սկսած էին ծագկիլ՝ մասնաւորապէս Մէտօչեան համբա-
 ւասոր ընտանիքին և Իտալացի իշխաններու մեկենասութիւնը շնորհիւ,
 և որով յառաջ պիտի գար Վերամշտիթեան փառաւոր շրջանը :

ՍՈՒԼԹԱՆ ՊԱՅԱԶԻՏ Բ.

(Հիմերեքի՝ 886—916. — Քս.ի 1451—1512.)



1. Ճեմի ապստամբութիւնն ու մահը. — 2. Մէմլուքներու ապրտամբութեան զսպուիլը. — 3. Վենետիկեցիներուն դէմ պատերազմ. — 4. Այս Սուլթանին օրով Օսմ. պետութեան վիճակը. — 5. Երկրաշարժ. — 6. Պայազիտի գահէն հրտարիլը:

1. Յաթիհի յաջորդեց իր անդրանիկ որդին ՊԱՅԱԶԻՏ Բ. որ չափազանց կրօնասէր ու բարեպաշտ, և մանաւանդ՝ զինուորական ու քաղաքական գործերէ աւելի՝ կրօնական խնդիրներով զբաղելուն պատճառաւ՝ իր մամուակահիցներէն Վէլի (Մուրր) կոչուած է: Մինչդեռ իր եղբայրը Ճեմ, աւելի աշխոյժ, քաջ զինուորական և մանաւանդ՝ Ենիշէրիներուն սիրելի ըլլալով՝ փորձեց հօրը գահուն սիրանալ և այս նպատակաւ, ապստամբեցաւ:

Սակայ՛ն Ենիշէնիքի և Էնկիւրիի մէջ յաջողաբար յաղթուելով՝ նախ Եգիպտոս, ապա Հռոդոս կղզին, անկից Նաբոլի և վերջապէս ասորասանեցաւ Հոսմ՝ ուր Աղեմսանդր Զ. (Պորճիա) Պապը, 3000000 ոսկի տուքա կաշառքի փոխարէն զանի թուճաւորելով՝ մարմինն ալ յատուկ դեսպանութեան մը միջոցաւ՝ Սուլթան Պայազիտի զրկեց, կ'ըսեն :



Սուլթան ձեմ

Պապին այս ոճրագործութեան նպատակն էր՝ արգիլել Ֆրանսայի Կարոլոս Ը. Թագաւորը որ մտադիր էր ձէմը ձեռք անցնելով՝ Կ. Պոլսոյ վրայ քալել և զայն գահը բարձրացնել :

2. Սուլթան Պայազիտ ուզելով նուաճել Սուրիան, որ Եգիպտոսի Մհմդլիսներուն ձեռքն էր, ինքն անձամբ 60000 զօրքէ բաղկացած բանակի մը զլուխն անցնելով՝ յառաջացաւ դէպ ի Փոքր Ասիա՝ ուր Գարամանիոյ սահմաններուն մօտ հանդիպեցաւ Չէրքէզներէ կազմուած Մէմլուք ահարկու հեծելազօրքին, որ երկու յարձա-

կուսով՝ թուրքերէն 30000 հողի ջարդեց և մնացեալը
ցիր ու ցան բրաւ :

3. ՎԵՆԵՏԿԵՑԻՆԵՐՈՒՆ ԴԷՄ ՊԱՏԵՐԱԶՄ — Սուլ .
Պայազիտ աւելի յաջողութիւն գտաւ ծովու վրայ : Եւ-
րոպական բաժնին մէջ՝ Ալպանիան . Պոսնան և Հէրսէքը
բոլորովին նուաճելէ յետոյ , 1499ին պատերազմ բացաւ
Վենետիկցիներուն դէմ . որոնք Հումայ Պապին , Ֆր-
րանսայի և Մաճառներուն հետ դաշնակցելով՝ Եւրոպա-
կան թուրքոյ ծովեզերեաց երկիրները կ'աւերէին :
Սուլթանը . իր Քեմալ Բեյիս անուանի ծովակալին միջո-
ցաւ յաղթեց դաշնակից նաւատորմին և Վենետիկցիներուն
ձեռքէն առաւ Լեպանոյ , Գորոն , Տուրացցոյ , Մեհոն և
Նապլարին քաղաքները : Սակայն երբ յաղթուողները
երեք տարի յետոյ՝ Եզինե ու Քեփալոնիս կղզիներուն
տիրեցին , Սուլթանը սրբաւորեցաւ հաշտութիւն կնքել
և արածնել որ , Վենետիկցիք ազատ ըլլան Սև ծովու
մէջ վաճառականութիւն ընել և Կ . Պոլսոյ մէջ ունենալ
դեսպան մը , որ կը կոչուէր Պալլ կամ Պալեօզ :

4. Սուլթան Պայազիտի ժամանակ . Օսմ . պետու-
թեան տարեկան եկամուան էր 5,000,000 ոսկի : Ասիոյ
մէջ ունէր 24 . խկ Եւրոպայի մէջ 34 կուսակալութիւն :
Կանոնաւոր զօրաց թիւն էր 50000 և 70000 ալ Ենի-
շէրի . Իսկ ծովային զօրութիւնը կը բաղկանար 170ի
չափ մեծ ու փոքր պատերազմական նաւերէ :

5. Այս Սուլթանին իշխանութեան օրով , 1509ին
էր որ , զարհուրելի երկրաշարժ մը մեծ աւեր գործեց
Մայրաքաղաքին մէջ , 1070 տուն , 110 մղկիթ , բազմա-
թիւ խաներ ու պետական շէնքեր , Եէտի Գուլէի և ար-
քունական պալատին պարիսպները՝ մինչեւ Պաղչէ Գա-
փու կոչուած դուռը կործանեցան և փլատակներուն
ներքեւ հազարաւոր հողիներ կորան : Նոյնպէս՝ Էտիրնէ ,
Տիմէթօքա ու Կէլիպօլու . գրեթէ աւերակ դարձան :

6. Սուլթան Պայազխա իր հինգ որդիները Փոքր Ասիոյ այլ և այլ գաւառներու կուսակալ կարգած էր: Սակայն երրորդ որդին Աէլիմ, որ իր աշխոյժ և զինուորական նկարագրին սրտաճառաւ մեծ ժողովրդականութիւն շահած էր, գանձառանդ Ահմէտ կորորը ձեռքէն յաջորդութեան իրաւունքը յափշտակելու նպատակաւ՝ Խրիմու Թաթար Խաներէն օգնութիւն առնելով՝ Կ. Պոլսոյ վրայ քալեց և Ենիշերիներուն պաշտպանութեամբ՝ Սուլթան հռչակուեցաւ: Աէլիմ, ձեռի համար խնդրեց հօրմէն, որպէս զի իր մօտ ապրելով ձերութեան օրերը հանգիստ անցունէ: Սակայն հայրը պատասխանեց թէ «Մէկ պատեանը երկու սուր չի կրնար պարունակել»: Ուստի զահէն հրաժարելով Տիմէթօքա քաղաքը առանձնանալու գացած ատեն, ձամբան, իր որդւոյն զրկած Յոյն բժիշկի մը ձեռքով թունաւորուելով մեռաւ:

ԸՆԳՂԱՆՈՒՐ ՏԵՍՈՒԹԻՒՆ

~~~~~

Ձէլէպի Սուլթան Մէհմէտէն սկսեալ՝ մինչև Պայազխ Բ. տեւոզ այս գարուն մէջ իրբև յիշատակութեան արժանի երեւելի, օրէնքողէտներ ու զրազէտներ էին Եսզրմը Օղլու, որ Մուհամմէտ և Մօնրա-Միկարի գործերը զրած է: Ձէլէպի Սուլթան Մէհմէտէի ուսուցիչը եղած է՝ հռչակաւոր Մօնրա-Կիւսանի: Նաև, իրբև զրազէտ մեծ անուն թողած են՝ Խիւսրիվ, Շէյխ Վեֆա, Շէյխ Շեմս-հո-սիմ և ուրիշ բանաստեղծներ:

Օսմ. պետութեան այլ և այլ մասերը ճարտարապետական հռչակապ շէնքերով և ամրութիւններով զարգարեցին՝ իրարու յաջորդող հետեւեալ Սուլթանները:


Սուլթան Ձէլէպի, Պրուսայի մէջ կառոյց Եհշիլ Իւստէր անուն հռչակապ մզկիթն ու շիրմը, ինչպէս նաև Էտիրնէի մէջ Ուլու անմի անուն համբաւաւոր մզկիթը: Նոյնպէս՝ այլ և այլ քաղաքներու մէջ բազմաթիւ Մեհրեքուկներ (կրօնական վարժարաններ), բաղնիքներ, աղբիւրներ շինել տուաւ:

Սուլթան Մուրաա Ա. Աէլմնիկ, Էտիրնէ և Պրուսա քաղաքները

հասարակաց փառաւոր շէնքերով զարդարեց: Մասնաւորապէս Պրուսայի մէջ Մուրաշիյի անուն թաղը իր գործն է:

Սուլթան Ֆաթիհ, Կ. Պոլսոյ մէջ՝ տասը մզկիթ և բազմաթիւ մէտրէսէներէ ի զատ՝ շինել տուաւ նաեւ Էսկի-Սարայ ու Ենի-Սարայ անուն արքունական պալատները, քաղաքին ներքին պարիսպը և Մեծ Եռակային մէկ մասը:

Սուլթան Պալադիս Բ. ալ, զանազան գաւառներու մէջ կառուցած կամուրջներէ, զպրոցներէ և մզկիթներէ ի զատ, մասնաւորապէս Պոլսոյ մէջ ալ շինել տուած է հոյակապ մզկիթ, մէտրէսէ և Իմարէթ մը, որոնք մինչեւ այսօր իր անունով կը կոչուին:



## ՍՈՒԼԹԱՆ ՍԷԼԻՄ Ա. (Եալուզ)

(Հիմերիի՝ 916—926.— Քս.ի 1512—1520)



1. Սուլթան Ալիիի նկարագիրը.— 2. ճալտըրանի ճակատամարտը.— 3. Սուրիոյ ու Եգիպտոսի նուաճումը.— 4. Թալիֆալթեան փոխանցումը և անոր հետեւանք՝ Օսմ. Սուլթաններուն ստացած գերակշիռ ազդեցութիւնը:

1. Ինչպէս տեսանք, Սուլթան Սէլիմ Ա. իր գահը կը պարտէր Յնիչէրիներու պաշտպանութեան՝ որոնք իրենց մտաուցած ծառայութեան իրր վարձ՝ դրամական մեծամեծ պարգևներ, խաղեր ու զուարճութիւններ պահանջեցին: Սուլթան Սէլիմ պարտաւորեցաւ տեղի տալ, և սակայն ժամանակ անցնելով, այս վատթար սկըզբնաւորութիւնը տեսակ մը օրէնքի կարգ անցաւ, այնպէս որ, Յնիչէրիք, ամէն Սուլթանի գահակալութեան ժամանակ, սոսկալի խառվութիւններով՝ նախ և առաջ իրենց դրամական պարգևները կը պահանջէին:

Զարմանալի է որ, Յէնիչէրիներուն ըմբոստացումը և ղինուորական օրէնքի ու կարգապահութեան անսաստումը՝ պարագաներու բերմամբ, ամէնէն անողոք, ամէնէն աւելի արիւնի նեա խաղացող այս Սուլթանին օրով սկսած է:

Սուլթան Սէլիմի առաջին դորժը եղաւ՝ Ահմէտ ու Գօրգուտ եղբայրները, ինչպէս նաև Նինգ եղբորորդիները սպաննել տալ՝ իր գահը ապահովելու նպատակաւ: Սուլթան Սէլիմ, իր անողոք և արիւնոտչա նկարագրին համար կոչուած է Յափուզ, որ միանգամայն կը նշանակէ՝ ընափր, գերազանց:

Եւ իրօք, ժամանակակից պատմագիրներ կ'ըսեն թէ, այս Սուլթանին 8 տարուան իշխանութեան ամբողջ շրջանին մէջ՝ իրմէ անբաժան եղող բաղմաթիւ դահիճներու ետքաղաններուն վրայէն՝ մարդկային արեան նեաքը չի դամբեցաւ բնաւ: Գարձեալ, 8 տարուան միջոցին, աննշան թերութիւններու համար, իրարու ետեւ գլխատուած 27 Վէզիրներու եղբրական վախճանը ա՛յնքան սարսափ ազդած էր ժողովուրդին վրայ, որ իբրև ամենատեսակալի անկէժք, սովորութիւն դարձած էր բսել՝ «Սէլիմին Վէզիրը ըլլաւ. — Ինչպա՛հ, Սէլիմէ Վէզիր օլտարն»:

2. ՊԱՐՍԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ .— Սուլթան Սէլիմ իր մզած երկու նշանաւոր յաղթութիւններով թէ՛ Օսմ. պետութեան տանձաններն ընդարձակեց և թէ՛ անոր բարոյական և քաղաքական ազդեցութեանը մեծապէս նըպաստեց՝ ի մասնաւորի Իսլամական աշխարհին մէջ :

Առաջին անգամ դատերազմի ելաւ Պարսից Շահ Իււնայիլ թագաւորին դէմ, որ իր սպաննած Ահմէտ եղբորը փոխտտական զաւկին ասպնջականութիւն ընծայած և անոր թելադրութեամբը սկսած էր Օսմ. երկիրներն արշաւել :

Սուլթան Սէլիմ 180000 զօրքով անցաւ Ասիա և ճաշքրտան ըսուած դաշտին մէջ իր հակառակորդը ջախջախիչ պարտութեան մը մասնելով՝ զանի հալածեց մինչև Գաւրիւս և նուաճեց Վրաստանն ու Ասրպատականի մէկ մասը : Վայրագ Եափուզ, վիրաւոր ու զերի ինկած հազարաւոր Պարսիկները աչքին առջև գլխատելէ և մեծաքանակ կողոպուտ ալ ծովու ճամբով Պոլիս փոխադրել ապէ յետոյ, ինք, այս արշաւանքէն վերադարձին տիրեց Քիւրթիստանի և Միջագետաց՝ որով բազմամարդ ու հարուստ նահանգներ Օսմ. պետութեան մաս կազմեցին (1514) :

3. ՍՈՒՐԻՈՅ ՈՒ ԵՂԻՊՏՈՍԻ ՆՈՒԱՃՈՒՄԸ .— Սուլթան Սէլիմի երկրորդ կարեւոր պատերազմն է Սուրիոյ մէջ մզածը ուր՝ Մէմլուքներուն յաղթելով՝ տիրեց Գաւաւստի, Հալեպի, Բագտի և Պաղեստինի : Այս ճակատամարտին մէջ սեռաւ Մէմլուքներու առիւծասիր կանաւու-կալի ութսունամեայ Սուլթանը : Քողայի վրձնական յաղթութիւնը Եափուզ Սուլթանին առջև կը բանար Եգիպտոսի ճամբան՝ ուր անարգել յաւաջացաւ և Գահիրէէն վեց մզոն հեռու հանդիպեցաւ Մէմլուքներու ստուարութիւ բանակին : Սուլթան Սէլիմ իր նախորդէն խրատուելով և թշնամիին կատաղի հեծելազօրքին դի-

մաղբերու անկարող, Սուրբոյ մէջ մղած պատերազմին ատեն բանակին առջև՝ ուղարու, սալերու և ծառի կոծղերու շարժական պատնէշներ կանգնած և անոնց ետեւ զետեղած էր հրետանին: Ետուզ, միւսնոյն դրութիւնն ի գործ դրաւ Եգիպտոսի մէջ, և հակառակ Մէմլուքներու կատաղի դիմագրութեան, յաղթութիւնը մնաց Օսմանցիներուն: Սուլթան Սէլիմ մեծ, հանդիսաւորութեամբ մտաւ Գահիրէ՝ որու դուռնէն Մէմլուքներու թուրման Պէյ գլխաւորը կախել տալէ յետոյ, 20,000 է աւելի բնակիչ ալ սուրէ անցնելով՝ Նեղոս գետը նետել տուաւ (1517):

Սուլթան Սէլիմ, քաղաքական շատ դժնահատելի հեռատեսութեամբ մը՝ Եգիպտոսի կառավարութեան ձեռք չի փոխեց և չօն իշխող Մէմլուք Պէյերը իրենց պաշտօնին մէջ վերահաստատելով՝ միայն ձեւակերպութեան համար՝ փաշա մը անուանական կերպով կուսակալ կարգեց և ինքը գարձեալ՝ Սուրբոյ և Փոքր Աօրոյ ճամբով վերադարձաւ Կ. Պոլիս:

### ՊԱՏՄԱԿԱՆ ԸՆԹԵՐՅՈՒՄ

Կը պատմեն թէ, երբ Սուլթան Սէլիմ իր Մեծ Վեզիր Եուսուս փաշային և հռչակաւոր իւլեմա Իպնի-Բեմալ էֆէնտիի ընկերակցութեամբ Գահիրէէն կը վերադառնար, իր վեզիրին դժգոհ կերպարանքը դիտելով՝ հետաքրքրութեամբ պատճառը կը հարցնէ. «Վեհափառ Տէր, կը պատասխանէ վեզիրը, եթէ Ձեր Գուլբըր — Եէնիշերիները — կանխաւ գիտցած ըլլային որ իրենց արեանը գինով նուաճելիք Եգիպտոսը՝ կրկին Մէմլուքներու իշխանութեան պիտի յանձնէք, բնաւ յանձն չի պիտի առնէին իրենց արիւնը թափելու: Իպնի-Բեմալ իւլեման սարսափահար կը մնայ Վեզիրին այս յանդուգն դիտողութեան վրայ: Իսկ Ետուզ, կատաղութենէն կրակ կտրած, վայրկենապէս Վեզիրին կուրբղէն բռնելով կը տապալէ գետին և աչքին առջև իսկոյն զխառակ կուտայ:»

Իսկ զազափար մը տալու համար թէ՛ Սուլթան Սէլիմ ինչ աս-

տիճան մեծարող մըն էր տաղանդի և բարձր արժանիքի տէր ան-  
ձերու, կ'արժէ հետեւեալ օրինակը մէջ բերել:

Այն պահուն, երբ Եսանուս փաշա Վէդիրը՝ դահճին տապարին  
տակ թաւադարող գետին կը փռուէր, Եսովոյ՝ անտարբեր և անզգած՝  
կը շարունակէր իր ճամբան: Սակայն յանկարծ, իրեն ընկերացող Իւ-  
լէմային ձին, պատահմամբ, ջուր լեցուած փոսի մը մէջ կոխելով՝  
Սուլթանին խափրակը (վերարկուն) ամբողջապէս կը ցեխոտէ: Արդէն  
քիչ մը առաջ տեղի ունեցած արիւնայի տեսարանէն յուզուած ու  
զողահար պեղաբող Ելէմային լեզուն բոլորովին կը դամբի, կ'այլալի  
և անկարող կ'ըլլայ արգարացումի և կամ ներողութեան բառ մը զբա-  
նելու: Եսովոյ յը նշարէ խեղճ ձերունիին հոգեկան այս տագնապալից  
գիճակը և անմիջապէս ետին կը դառնայ ու թիկնապահ մը կանչելով  
կը հանէ անոր կը յանձնէ ցեխոտած վերարկուն և ինք յարգալիբ  
ձեւով մը խօսքը Իպիր-Քէմայի ուղղելով կ'ըսէ.


Ելէմա աթը այսղընտան իւզէրիսէ սըչըրացան շամուր, պահար  
Ֆախրը միւպահաթըմ տըրու Պատ էլ վէֆաթ, պու գաֆթանըմ, սան-  
տըղըմըն իւզէրինէ էօրթիւլսինն: Այսինքն Իլէմայի մը ձիուն ոտ-  
քէն՝ արքայական պատմութեան վրայ ցատքած ցեխը՝ ինծի համար  
պարծանք մը կը նկատեմ և կը փափաքիմ որ մահուանէս յետոյ, այս  
վերարկուս դամբանիս վրայ փռուի:

4. ԽԱԼԻՖԱՅՈՒԹԵԱՆ ՓՈԽԱՆՑՈՒՄԸ. — Երբ Սուլ-  
թան Սէլիմ Նզիպտոսի տիրելով յաղթանակաւ Գահիրէ  
մտաւ, Ֆաթիմեան Ամիրապետութեան վերջին ներկա-  
յացուցիչը՝ Միսթիֆիֆիլը-Ալ-Ալլահ իր Խալիֆայութեան  
տիրադատին նկատ, Մեֆթե ու Մեհմէկ՝ Իսլամական երկու  
նուիրական քաղաքացի բանալիները յանձնեց յաղթական  
Եսովուզի, և այս թուականէն սկսեալ՝ Օսմանեան Սուլ-  
թանները Եզան Խալիֆէ համօրէն Իսլամական աշխարհին  
(Խատիմ-Իւլ-Հարէմէյն Իւլ-Շէրիֆէյն):

Սուլթան Սէլիմ, թէպէտ վայրագ ու արիւնուշտ,  
սակայն իր գինուորական տաղանդով, նեառանս քաղա-  
քականութեամբ և մանաւանդ՝ իրեն զբաղանութեան  
սիրող և մեկնաստ՝ Օսմանեան ամէնէն անուանի Սուլ-  
թաններէն մէկը կը լիցնէ: Ինք, Մեծին Ալեքսանդրի նի-  
ացող մը, կը փափաքէր անոր արժանաւոր նետաւոր և  
համահաւասար համբաւ մը թուղուլ:

Այս գառճառաւ, նորա կենսադրութիւնը իր ամէնէն  
 շահելի ու սոխորական ընթերցումն էր: Գահիրէի ճակա-  
 տամարտի միջոցին, իր վարժ ու սիրական ձին վիրաւոր-  
 ուելով մեռաւ: Ետևուզ, Մակեդոնացի աճխարճակալին  
 օրինակին նեանեամ ըլլալու նամար, փառաւոր յուզար-  
 կաւորութիւն մը կ'ստարել տաւ և նրամայեց որ անոր  
 մարմինը առանձին դամբարանի մը մէջ ամփոփուի:

Սուլթան Սէլիմ նամուզուամ ըլլալով որ, իրարմէ  
 զորաւոր ու բազմաթիւ Քրիստոնեայ տէրութեանց դէմ  
 շարունակ մաքաւելով՝ զժուար պիտի ըլլայ Եւրոպայի  
 մէջ երկրակալութիւններ ընել, ուզեց Դանուբը իբր  
 բնական սահման զծել Օսմ. Եւրոպայի, և արդէն զբա-



Գահիրէի մէջ Խալիֆաներու դամբարանը

ւում երկիրներուն պահպանութեանը նոյ տանիլ: Այս  
 ծրագրին նեանեւելով՝ իր գլխաւոր նպատակն էր՝ Օսմ.  
 պետութեան արեւլ. և նար. սահմաններն ընդարձակել:  
 Մէմ խօսքով, կ'ուզէր Պարսկական տէրութիւնը բնա-  
 ջինջ ընելով՝ Բալամական նոյր ու միտնեման կայսրու-  
 թիւն մը նիմնել՝ Օսմանեան Խալիֆայութեան ներքե՝  
 իբրև աւելի բնական, աւելի ապահով և աւելի տեւական  
 տիրապետութիւն մը, զոր մասամբ միտնէ կրցաւ իրագոր-

ծել : Սա ճշմարիտ է որ , Սուլթան Սէլիմ , ո՛չ միայն Օսմ . պետութեան քառագաթիկ ընդարձակութեամբը նորանոր և հարուստ երկիրներ աշխարհակալեց , այլ և Խալիֆայութեան ալ տիրանալով՝ Իսլամական աշխարհին վրայ՝ Օսմ . պետութեան քաղաքական և բարոյական ազդեցութիւնը անձամեծատ կերպով բազմապատկեց :

Իր իշխանութեան վերջի տարին , Սուլթան Սէլիմ հրամայեց իր Վէզիրին՝ որպէս զի ամբողջ կայսրութեան մէջ զանուած և Իսլամութիւնն ընդունել յանձն չառնող բոլոր Քրիստոնեաները սրէ անցունին : Ահաւոր Եափուզի այս անազորոյն հրամանը ո՞վ պիտի համարձակէր մերժել : Կը մնար սակայն այս իմաստով Ֆէրիս մը ձեռք բերել : Բայց օրուան անուանի Շէյխ-Իւլ-Իսլամ Ջեմալիյի Ալի Էֆէնտի , մա՛ր արհամարելով՝ սղւով չափ ընդդիմացաւ այս անօրէն հրամանին գործադրութեան՝ Սուլթանին ներկայացնելով Դուրանի այն պատուէրը՝ որով Մարգարէն կ'ըսէր . «Ո՛չ ոք պէտք է բռնադատել իմ կրօնքիս հետեւելու համար» : Առաջին անգամն էր որ Եափուզ՝ ուրիշի մը առջև գլուխ կը ծռէր , և սակայն իր այս համակերպութեամբ՝ միլիոնաւոր անմեղներու կեանքը պիտի փրկուէր :

Սուլթան Սէլիմ կը կը պատրաստուէր Պարսից դէմ նոր արշաւանքի մը և Հռոդոս կղզին պաշտպելու , երբ մահացու հիւանդութիւն մը վերջ տուաւ իր ազմկալից կեանքին և քաղաքական հսկայ ծրագիրներուն :

### ՊԱՏՄԱԿԱՆ ԸՆԹԵՐՅՈՒՄ

Որքան խիստ ու վայրագ նկարագրի տէր , նոյնքան ալ ուղղամիտ և արդարատէր էր Սուլթան Սէլիմ , ինչ որ կ'ապացուցանէ հետեւեալ շատ գեղեցիկ օրինակը :

Սուլթան Սէլիմ , դէպ ի Արարիս ու Եդիպոսս իր արշաւանքին առնն , զբամի պէտք ունենալով կը դիմէ Քրիստոնեայ վաճառականի մը և քանի մը տասնեակ հազար սկւայ փոխառութիւն մը կ'ընէ :



Մայրաքաղաք վերագործին, օրուան Տէֆթերտարը (Համարակալ), իր Վեհապետին դործունէութիւն մը ցոյց տուած ըլլալու ծանծաղամտութեամբ՝ ժուռնալոյ մը կը փութայ աւետել որ, փոխատու փաճառականը մեռած ըլլալով երկու դասակ և ահագին հարստութիւն թողած էր։ Ուստի կ'առաջարկէր որ, ո՛չ միայն պետական գանձը այդ փաճառականին պարտական եղած դուժարը չվճարէ, այլև՝ անոր թողած մեծագումար հարստութենէն մաս մըն ալ յարքունիս գրուէ։

Սուլթան Աէլիմ, իրեն մատուցուած այս գիրին իրբև պատասխան, անոր վերէը իր ձեռքով հետեւեալը կը գրէ.

«Միւթէվէֆայա՝ բահմէթ, մայինէ՝ պերէքէթ, էվլապարընա՝ աֆիլէթ, դամագու տա՝ լանէթ»։ Այսինքն՝ «Հանգուցերոյն հոգիին՝ հանգստութիւն, Հարստութեանը՝ օրհնութիւն, Զատկացը՝ սոսողջութիւն, իսկ Մատնիլին՝ Անէ՛ճք»։

Թէպէտ պատմութիւնը չըսեր թէ ի՞նչ եղաւ փախճանը այս անարգ դաւաճանին, սակայն դատելով Սափուղի նման խտարարոյ Սուլթանի մը նկարագրէն. Տէֆթերտար էֆէնտին ապահովարար գէպի հանդերձեալ անմիջապէս կեանք ճամբայ ելած ըլլալու է։



## Մ Ա Ս Ն Բ.

Պանունի Սուլթան Սիւլէյմանէն  
մինչև Սուլթան Մահմուտ Ա.

(Հիմնեթի՝ 926—1143 .— Քս.ի 1520—1730).

ՍՈՒԼԹԱՆ ՍԻԻԼԷՅՄԱՆ Ա. (Պանունի)

(Հիմնեթի՝ 751—805 . — Քս.ի 1386—1402).



1. Պէլկրատի և Հոսդոսի առումը.— Եւրոպական պատերազմներ.— 3. Վիեննայի պաշարումը.— 4. Ֆրանսուա Ա.— 5. Պարսկական պատերազմ.— 6. Խայրէտաին Պարզարուտ.— 7. Մովսէսի պատերազմներ.— 8. Մաճառաց և Պարսիցղէժ պատերազմ.— 9. Սուլթան Սիւլէյմանի մահը և իր դարը:

Ետպուզ Սուլթան Սէլիմի յաջորդեց Սուլթան Սիւ-  
լէթիմ Ա. որու օրով Օսմ. պետութիւնը իր փառքին  
և զօրութեան գագաթնակէտը հասաւ .

Սուլթան Սիւլէյման՝ իր հօրը երկարատեւ բացա-  
կայութեանը միջոցին, ինքն էր երկրին վարչական գոր-  
ծերը անօրինոզ, այնպէս որ իր գահակալած պահուն՝  
կառավարելու փորձառութիւնը միասին կր բերէր :

1. Պէլկիմ Ա.ՍԻ ԱՌՈՒՄԸ (1521). — Ետպուզ Սուլ-  
թան Սէլիմը մղած երկարատեւ պատերազմներուն հե-  
տեւանօք, բոնակը՝ հանգիստի, երկիրը՝ խաղաղութեան  
և կառավարութիւնը՝ ներքին հանդարտութեան և կազ-  
մակերպութեան պէտք ունէր : Սակայն պարագաներն



Պէլկիմի առումը

այնպէս մը բերին որ, Սուլթան Սիւլէյմանի 46 տարե-  
ուան երկարատեւ իշխանութիւնը՝ ցամաքային ու ծովա-  
յին պատերազմներու, ինչպէս նաև՝ Ասիոյ ու Եւրոպայի  
մէջ նորանոր աշխարհակալութեանց շրջան մ'ըլլայ :

Սուլթան Սիւլէյմանի ժամանակակից էր Մաճա-  
ռիստանի թագաւորը Լորի Բ. որ աէր էր նաև հարա-  
ւային Լեհաստանի, Պոնտիոյ, Թրանսիլվանիոյ և Սեր-  
պիոյ՝ որու մայրաքաղաքը Պէլկիմս՝ Թրքաց զէմ «Քրիս-  
տոնէութեան Պատուարը» կը կոչուէր :

Հուլի, ո՛չ միայն մերժած էր տարեկան հարկը վճարել Օսմ. պետութեան, այլ և՛ վատարար սպաննած էր Սուլթանին դեսպանը: Սուլթան Սուլէյման, այս նախատինքն իմանալով՝ գնաց պաշարեց Պէլկրատ ամուր բերդաքաղաքը և քսան կատաղի յարձակումներէ յետոյ, վերջապէս յաջողեցաւ տիրել անոր (1521): Այսպէս, Քրիստոնէութեան պատուարը քանդուած էր:

2. Սակայն Սուլթան Սուլէյման, փոխանակ աւելի յառաջ քալելու, բաւականացաւ այս յաղթութեամբ և յաջորդ տարին գնաց պաշարեց Հոռոս կղզին, որ Երուսաղէմի Ս. Օհաննոս կարգի ասպետաց ձեռքն էր: Պաշարումը տեւեց վեց ամիս և Օսմանցիք ի սկզբան մեծամեծ կորուստներ սենեցան:

Կղզեցիք, թէպէտ երկար տանն հիանալի քաջութեամբ դիմադրեցին, բայց վերջապէս՝ ուտեստի և ռազմանիւթի բացարձակ չզոյութեան պատճառաւ և 80,000է աւելի կեանքեր զո՛ւ տալէ յետոյ, ստիպուեցան անձնատուր ըլլալ: Ասպետները իրենց Վիլիհ-Տըլի-Ասաւ ութսունամեայ քաջարի գլխաւորին առաջնորդութեամբ և յաղթական Սուլթանին խորին հիացումին մէջ, մեկնեցան Հոռոսէն և 1630ին հաստատուեցան Մաքրա կղզին զոր իրենց կը նուիրէր Շարլ Ե. Գերմանիոյ կայսրը:



Կը պատմեն թէ, երբ Ասպետաց ձերուհի հրամանատարը բերդին դուռնէն դուրս կ'ելէր նաւ նստելու և Իտալիա քաջուելու համար, մեծանձն Սուլթանը անոր այս նկուռն վիճակը տեսնելով խզճաց և ըսաւ քովը կեցող վէզիրներուն. «Սա ձերուհին իր այսչափ տարուան տունէն ու տեղէն հանելով անհանգիստ ընելս, հաւատացէք որ խզճիս կը դպչի: Բայց ի՞նչ ընենք, պետական քաղաքականութեան պահանջումն է այս»:

Սուլթան Սիւլէյման՝ Եւրոպայէ վերագարձին, ի-  
քեն Մեծ Եպարքոս ընտրեց Իպրահիմ փաշան, որ իր  
վաղեմի բարեկամը և վարչական կարողութիւնով օժ-  
տուած անձ մըն էր: Նորընտիր Վէզիրին առաջին գործը  
եղաւ Փրքը Ասիա ու Եգիպտոս ճամբորդելով՝ անձամբ  
տեսնել երկրին վիճակն ու պէտքերը և ըստ այնմ դար-  
ման տանիլ: Նոյնպէս՝ խեղդեց Մայրաքաղաքին մէջ Եէ-  
նիչէրիներուն յարուցած մէկ խռովութիւնը՝ որու շարժա-  
ռիթն էր՝ Պօսթանձի անուն անձնապահ՝ նոր զօրագունդի  
մը կազմութիւնը: Այս զօրագունդին պետը — Պօսթան-  
ձի Պաշը — ի վերջոյ Ոստիկանական և Հանրային Ապա-  
հովութեան նախարարի վերածուեցաւ:



Պօսթանձի Պաշը

3. ԵՒՐՈՊԱԿԱՆ ՊԱՏԵՐԵԶՄԵՐ.— Սուլթան  
Սիւլէյման, 1526ին արշաւեց Մաճառխտան՝ ուր Իպրա-  
հիմ փաշա վեզիրը նախ Բեքեքվարեկն ամուր քաղաքին  
տիրելէ յետոյ՝ յաղթանակաւ յառաջացաւ դէպ ի Մօհաքի  
գաշար՝ ուր նամասմըուած էր Մաճառական բանակը:  
Պատերազմը երկուստեք շատ կատաղի եղաւ ու երկար  
ատեն անորոշ մնաց, բայց վերջապէս Պսմանցիք իրենց

գրուած սագմական նոյաատուոր դիրքին և հրետանիին գերակշռութեանը հնորհու՝ յազմութիւնը շահեցան : Այս պատերազմին մէջ՝ Լուի Բ. արի թագաւորը՝ 2500 կարիճներու հետ, իր կեանքը և իր հայրենիքին անկախութիւնը վրայ կուտար և որմէ պիտի օգտուէր Գերմանական կայսրութիւնը :

Այս յազմութիւնը՝ Սուլթանին առջեւ կը բանար Պուշա մայրաքաղաքին դուռները՝ ուսկից բնակչաց մեծ մասը խոյս տուած էր Լէհաստան և Վիէննա և քաղաքը գրեթէ ամայի էր : Սուլթան Սուլէյման՝ գունդ մը պահապան զօրք ձգելով՝ վերադարձաւ Պոլիս, իր հետ բերելով Տիանայի, Հերակուսի ու Ապոլոնի հրաշակերտարձանները՝ զորս Իիոսոսմի հրապարակին մէջ կանդնել տուաւ :

4. ՎԻԷՆՆԱՅԻ ՊԱՇԱՐՈՒՄԸ (1529). — Մաճա-



Վիէննայի պաշարումը

սիտանի դժբախդ թագաւորին մահը պատճառ կղաքաղաքային նոր խռովութեան : Մաճառները երկու կուսակցութեանց բաժնուած էին, մին կ'ուզէր թագաւորընդունիլ Գերմանիոյ կայսեր Ֆերսինանէ կորայրը, իսկ

միւսը՝ այս բնարութեան մէջ քաղաքական վտանգ մը նշմարելով՝ թագաւոր բնարած էր թրանսիլվանիոյ Վոյվոտ՝ Ժան Զափօղի անուն Մաճառ աղնուսական իշխանը : Սակայն այս վերջինը իր մրցակից Ֆէրաֆնանտէն յաղթուելով՝ Օսմ. Սուլթանին պաշտպանութիւնը խնդրեց : Սուլթան Սիւլէյմանի համար առիթը նպաստաւոր էր Գերմանիոյ հարուած մը տալու համար : Ուստի 200,000 զօրքով վսօղեց Պուտայի վրայ՝ ուսկից խոյս տուած էր Ֆէրաֆնանտ , և Զափօղին հանգիստաւորապէս թագաւոր պսակելէ յետոյ՝ ուղղակի քալեց Վիէննայի վրայ և զայն պաշարեց : Քսան օրուան մէջ՝ քսան յարձակում գործեցին Օսմանցիք և 80,000ի շտի մարդ կորսնցնելէ յետոյ , Սուլթանը պարտաւորեցաւ պաշարու մը ակամայ վերցնելով վերադառնալ Պոլլս : Սակայն , Եւրոպայի մէջ՝ Օսմ. Սուլթանին ձեռք բերած քաղաքական ազդեցութիւնը՝ Գերմանիոյ կայսեր թագուն ծրագրիներուն դէմ մեծ արգելք մըն էր : Ուստի նորէն սկսաւ Մաճառախտանի վրայ սանձգութիւններ ընել՝ քաղաքական կռիւներ հրահրելով : Զափօղի՝ օգնութիւն խնդրեց Սուլթանէն որ ահազին բանակով մը նորէն արշաւեց Մաճառախտան : Սակայն Գերմանիոյ կայսրը չհամարձակելով Սուլթանին ահարկու զօրութեան հետ շփուիլ , իր Ֆէրաֆնանտ եղբօրը միջոցաւ կնքեց , իրրեւ թէ Տերակալն իսպաղարեան դաշնադիր մը , որով կ'ընդունէր՝ Մաճառախտանի վրայ Օսմ. պետութեան զերիշխանութիւնը (1533) :

5. ՖՐԱՆՍԱՅԻ ՀԵՏ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ. — Շարլ , Ե . որ բացի Գերմանիայէ , աէր էր նաեւ Եւրոպայի և Ամերիկայի մէջ շատ մը հարուստ աշխարհներու , կը մտադրէր հիմնել ընդարձակածաւալ կայսրութիւն մը , ինքն ըլլալով անոր միահեծան վեհապետ : Իր այս փառասիրական խորհուրդին դէմ միակ հակառակորդ մը

ունեցաւ, այն է՝ Թրանսայի թագաւորը Ծրանսուա Ա. որ, Եւրոպայի քաղաքական հաւասարակշռութիւնը պահպանելու նպատակաւ և անհաւասար ոյժերով երկարատեւ պայքարեցաւ Աւստրիոյ տան փառասիրական



Ծրանսուա Ա.

ճգտումներուն դէմ: Եւ որպէս զի իր այս կարեւոր ձեռնարկին յաջողութիւնը երաշխաւորէ, 1526ին, մասնաւոր դեսպանութեամբ մը ղրմեց Օսմ. մեծազօր Սուլթանին և անոր դաշնակցութիւնը խրնդրեց: Սուլթան Սիւլէյման սիրայօժար ընդունեց Թրանսայի այս առաջարկը, իր անուանի վէզիր Իպրահիմ փաշայի խորհրդով, որ կրկնակի շահեր կ'ակնկալէր քաղաքակրթեալ Տէրութեան մը այս նիզակցութենէն: Պաշտպանողական և յարձակողական այս դաշնակցութեան շնորհիւ Թրանսա. Պոլսոյ իր ճարպիկ դեսպան Լա Ծորկսի միջոցաւ՝ անտեսական և քաղաքական մեծամեծ առանձնաշնորհումներ ձեռք կը բերէր:

6. ՊԱՐՍԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ. — Ինչպէս տեսանք, Սուլթան Եովուզի և Շահ Իսմայիլի օրով տեղի ունեցած պատերազմները վերջնական արդիւնքի մը չէին յանգած և Պարսիկները՝ յարմար առթիւ նորէն զէնքի պիտի դիմէին: Այս պատահեցաւ՝ Շահ Թահմազ փառասէր թագաւորին օրով, որ սկսած էր Օսմ. Ասիոյ արեւելեան սահմաններուն սպառնալ: Աւստի, վէզիր Իպրահիմ փաշայի խորհրդով, Սուլթան Սիւլէյման անձամբ բանակին գլուխն անցնելով՝ երեք ամիսէն հասաւ Դաւրեժ, զարկաւ Պարսկական բանակը և անկից իջնելով դէպ ի հարաւ, արեւմտեայ Պարսկաստանի, Արարիոյ, Սուրիոյ ու Եգիպտոսի հարուստ վաճառականութեան կեդրոնատեղին: Սակայն Շահ-Թահմազ,



Պաղտատի կորուստին վրէժը լուծեց՝ յանկարծ յարձակելով Դաւրէժի պաշտպան Օսմ. զօրաց վրայ զորս գրեթէ ամբողջութեամբ սուրէ անցուց։ Այս ձախողուածին պատճառ նկատուեցաւ վէզիր Իպրահիմ փաշան որ, Սուլթանին վրայ ունեցած անսահման աղքեցութեամբ և պետութեան ճակատագիրը վարելու իր բացարձակ իշխանութիւնովը՝ սկսած էր թէ՛ պալատականաց և թէ՛ աւագանիին մէջ մահացու հակառակորդներ ունենալ։ Այս դաւաղիրներուն մէջ ամէնէն վտանգաւորն էր Սուլթանին Չէրքէս մէկ հարճը — Բոխանաորուն նենդամիտ թելադրութիւններուն ակամայ տեղի տալով, Սուլթան Սիւլէյման տկարութիւնն ունեցաւ զոնկ իր Մեծ Վէզիրը, որ իր իշխանութեան ամենափայլուն ճարտարապեան ու փառքը եղած էր<sup>(1)</sup>։

7. ԽԱՅՐԷՏՏԻՆ ՊԱՐՊԱՐՈՍԱ. — Սուլթան Սիւլէյմանի օրով, Օսմ. պետութեան համար մեծ կարեւորութիւն ունեցող հետեւեալ դէպքը տեղի ունեցած է։

Ճէզայիրի իշխան՝ հոչակաւորն Խայրէսսին Պարպարուսա, պատկառելի տորմիզ մը և թանկագին ընծաներ առած, Կ. Պոլիս գալով, իր երկիրն ու իր անձնուէր ծառայութիւնը մեծանուն Սուլթանին նուիրեց։ Սուլ-

(1) Ծագումով Քրիստոնեաց Յոյն մըն էր Իպրահիմ փաշա, որու ծանօթացած էր Սուլթան Սիւլէյման՝ Սարուխանի մէջ՝ իր գահաժառանգ եղած ատեն։ Ուշիմ, քաղցրասւայն ու շնորհալի այս պատանին ու ապագայ Սուլթանը՝ խորին համակրութեամբ մը կապուած էին իրարու։ Իպրահիմ, երեւելի ուսուցիչներու խնամք դաստիարակուեցաւ և սորվեցաւ, բաց ի Պարսկերէն ու Արաբերէնէ՝ նաեւ Եւրոպական քանի մը լեզուներ՝ զորս շատ սահուն կերպով կը խօսէր ու կը գրէր։ Օսմ. պետութեան մինչեւ այս շրջանին մէջ, Իպրահիմ փաշա՝ առաջինը եղած է՝ իրրեւ ընդարձակ կայսրութեան մը ճակատագիրը վարելու կարող ճարտար քաղաքագէտ որ, փայլած է Եւրոպական համրաւ, ըլլալով միանգամայն՝ Եւրոպական քաղաքակրթութեան անկեղծ հիացող մը։

Թան Սիւլէյման՝ անհուն խնդութիւնով ընդունեց Եւրոպայի ծովային պետութեանց սարսափ ազդող այս հռչակաւոր ծովասպատակ — ծովակալը և ինքն ալ՝ փոխադարձ մեծամեծ պատիւներով՝ զանի անուանեց Վերին Հրամանատար Օսլ. նաւասորմին (Քափուտանի Տէրեա)։ Օսմանեան պետութիւնը այս համբաւաւոր ծովակալին կը պարտի ո՛չ միայն Թունուզի և Թարապուլուսի տիրապետութիւնը, այլ և իր նաւատորմին աննախընթաց զօրութեան հետ՝ տարած ծովային մեծամեծ յաղթանակները։



Խայրէսին Պարպարոսս

Պարպարոսսայի աշակերան էր Թարկուս Բեյիս՝ որու յաջորդ և ձեռնասուն Սեյի-Ալի, Մուրաթ-Բեյիս և Փիալի փաշա ծովակալներուն օրով։ Օսմ. նաւատորմը Եւրոպան կը դողայնէր։

8. ԾՈՎԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐ .— Պարպարոսս իրեն արժանի հակառակորդ մը ունեցաւ՝ յանձին Վենետիկի Տօմ՝ համբաւաւոր Անտոն-Տօնիսի՝ որու քանիցս յաղթեց Իտալիոյ ծովափանցք մօտ։ Առաւ՝ Թունուզ և Պիզերա քաղաքները։ Բայ, 1535ին. Շարլ Ե. չն յաղ-

թուելով՝ թունուզը վրայ տուաւ : Այս պարտութեան արատը մաքրելու նպատակաւ, Պարպարոսա՝ Իտալոյ ծովեզերեայ շատ մը քաղաքները զարկաւ ու կողոպտեց, Վենետիկցիներուն ձեռքէն Արչիպեղագոսի կղզիները գրաւեց, Կրետէի Քանճիա քաղաքին մօտ դաշնակից Քրիստոնէից հսկայ նաւատորմը ջախջախեց, և անկից Մարսիլիա անցնելով՝ Ֆրանսայի թագաւոր և իր Սուլթանին դաշնակից Ֆրանսուա Ա. ի օգնութեան փութաց և միանալով անոր սորմիդին — որու նրամանատարն էր Անկիլեհի դուքսը — գնաց նիս քաղաքը սըմրակոծելով տաւա (1543) : Իսկ երկու տարի յետոյ, թարապուլուսի մօտ շահեցաւ այն նշանաւոր ծովամարտը՝ ուր 14,000 Քրիստոնեայ իրենց մօտ գտան : Այս աւթիւ՝ Խայրէասին, հաղարտւոր դերիներու հետ, թշնամիէն գրաւած 28 ցահանաւերը նուէր դրկեց Սուլթան Մուլէյմանր :



Մովակալ Անրէ-Տոխա

Այս փառաւոր յաջողութիւններէն քաջալերուած, Պարպարոսա՝ Մալքա կղզին ալ պաշարեց : Սակայն Ս. Օհաննու կարգի կարիճ ասպետները, իրենց կապիպք անուանի պետին առաջնորդութեամբ դիւցազնաբար դիմադրելով՝ Օսմ. ահարկաւ ծովակապին բոլոր ջանքերն ի դերու հանեցին :

Այս դէպքէն քիչ յետոյ, 1545ին մեռաւ Խայրէասին Պոլսոյ մէջ և թաղուեցաւ Պէշիքթաշի այն մզկիթը, որ մինչև այսօր իր անուանովը կը կոչուի Խայրիյէ ճամիսի :

Իր յաջորդն ու արժանաւոր աշակերտը թօրկոս

Բոյնս ալ, մեծ համբաւ չանցաւ իր տարած ծովային յաղթանակներով: Քանի մը անգամներ՝ Ետալիոյ, Սիկիլիոյ և Սպանիոյ ծովեզերքներուն վրայ Եւրոպացւոց յաղթեց, Թարապուլուսը վերջնապէս նուաճեց և Մալթա կղզին ալ պաշարելով՝ ասպետները անձնատուութեան պարտաւորելու վրայ էր, երբ արուած սխալ նշանէ մը խարուելով՝ պաշարումը վերցուցած պահուն վիրաւորուելով սպաննուեցաւ:



Խայրէսիմի ծովային յաղթանակը՝ Անրէ-Տօրիայի դէմ

9. Մինչդեռ Օսմ. նուաժարմը երկու համբաւաւոր ծովակալներու շնորհիւ՝ ծովու վրայ յաջորդական յաղթանակներ կը տանէր, Մաճառները՝ Աւստրիոյ դրդմամբ նորէն զլուխ կը քաշէին: Սուլթան Սիւլէյման ստիպուեցաւ նորէն Եւրոպա անցնիլ և Աւստրիացիները իր տէրութեան սահմաններէն զանելէ յետոյ, Մաճառիստանը բոլորովին նուաճեց և զայն Օսմ. նահանգ մ'ըրաւ և Պուտայի մէջ ալ՝ Սիւլէյման փաշա անունով նախարար մը կուսակալ կարգեց: Սուլթան Սիւլէյման հազիւ Եւրոպայէ վերադարձած էր, երբ պարտաւորեցաւ անցնիլ Ասիա և Պարսից Շահն Քահնուազ թագաւորին վերջին դաս մըն ալ տալ: Սուլթանը կրկին յաղթեց իր դրացի հակառակորդին և Հայաստանի մնացած մասին հետ՝ արեւ. Վանի, Պաղսասի և Միջագետաց:

10. ԵՒՐՈՊԱԿԱՆ ՎԵՐՋԻՆ ԱՐՇԱՒԱՆՔ .— Սուլթան Սիւլէյման, տարիներու բեռան և յուզումնալից կեանքի մը յարատիւ Մարչարանքներուն հետեւանօք թէպէտ պարտասած և բնկծուած, սակայն տեղեկանալով որ, Գերմանիոյ Ֆերշինանիս Բ. կայսեր թելադրութեամբ՝ Մաճառները դարձեալ ապստամբեր են, սկամայ պարտաւորեցաւ վերջին անգամ մըն ալ անցնիլ Եւրո-



Մալթայի պաշարումը եւ թուրքոս ռէյսի մահը

պա և Սիկեք կամ Սիկեքիւտ բերդաքաղաքը պաշարեց : Քաղաքացիք իրենց Նիսոլա-Չրինի գլխաւորին առաջնորդութեամբ՝ ամբողջ չորս ամիս աննման քաջութեամբ դիմադրելով՝ սպառողներէն 200000 է աւելի զինուոր և նշանաւոր հրամանատարներ սպաննեցին : Սուլթան Սիւլէյման այս ձախողութեամբէն սաստիկ յուզուելով՝ կաթուածահար մեռաւ 72 տարեկան հասակին մէջ :

1560 Օգոստոս 30ին, 46 տարուան երկարաան իշխա-  
նութենէ մը յետոյ :

Միայն թէ՛ յազթութեան բախդը իր մահէն ետքն  
ալ ժպտեցաւ իրեն, որովհետեւ՝ նոյն իրիկունն իսկ, պա-  
շարեալները, յետին շուսահատութեան մասնուած, բեր-  
դաքաղաքին բանալիները կը յանձնէին մեծանուն Եպար-  
քոս Սօֆորու Մեհեմէտ փաշայի : Գարձեալ՝ միւսնոյն օրը,  
Փիալի փաշա ծովակալն ալ՝ Քիոս կղզին կը նուաճէր :

### ՊԱՏՄԱԿԱՆ ԸՆԹԵՐՅՈՒՄ

#### ՍՈՒԼԹԱՆ ՍԻԻԼԷՅՄԱՆ Ա.Ի ԳԱՐՐ

Ինչպէս որ տեսնեք, Ֆրանսայի թագաւորը՝ Ֆրանսուա Ա. Օս-  
մանեան այս մեծագոր Սուլթանին դաշնակցութիւնը խնդրած էր  
ընդգէժ Կերմանիոյ Կարօսու Ե. (Նարի Քէն) կայսեր, որ Եւրոպայի  
քաղաքական գերակշիռ ազդեցութիւնը ձեռք ձգելու նպատակաւ՝  
Ֆրանսայի թագաւորին գէժ ահաւոր պայքար մը կը մղէր : Սուլթան  
Սիւլէյման հօրապէս աշակցեցաւ իր դաշնակցին և քանի՛ քանի՛ ան-  
գամներ թէ՛ ծովու և թէ՛ ցամաքի վրայ ջախջախեց Կերմանիոյ զօ-  
րութիւնը : Նոյնպէս՝ երկու վեհապետներու այս փոխադարձ բարե-  
կամութեան շնորհիւ՝ Ֆրանսա, Թուրքիոյ հետ կնքեց այնպիսի ան-  
նախընթաց գաշնադրութիւն մը որով անտեսական և քաղաքական  
բացառիկ առանձնաշնորհումներու կը տիրանար :

Սուլթան Սիւլէյման, Սամ. պետութեան փառքին, աշխարհա-  
գրական ընդարձակութեան և զինուորական զօրութեան սանդուխին  
ամէնէն վերին սասիճանին վրայ գանուոյ վեհապետը եղած է՝ շնոր-  
հիւ իր զինուորական տաղանդին, բարեկարգիչ ոգոյն, օրէնդրական  
հմտութեան, և զխաւթեանց ու մասննազրութեան ընծայած իր  
վեհանձն մեկենասութեան, ինչպէս նաեւ՝ զինքը շրջապատող և իրեն  
ժամանակակից մեծ անձնաւորութիւններու :

Սուլթան Սիւլէյման, ինքն ալ, իր հօրը, Եսփուզ Սուլթան Ալ-  
լիսի պէս, բանաստեղծ և միանգամայն՝ Պարսկերէն լեզուաւ ա-  
ռաջնակարգ բանաստեղծութիւն գրողներու հաղուաղիւսա շարքին  
մէջ կը գանուի և իր քանի՛ մը ստուար գործերն ալ հրատարակուած  
են արդէն :

Ահաւաստիկ նմոյշ մը՝ իր բանաստեղծական գրուածք-ներէն .

Սալգ իչինստէ միւթէպէր պիր նէսնէ կօ՛գ տէ՛վլէ՛թ կիպի ,  
Օլմայա տէ՛վլէ՛թ ճիհանտա՛ պիր նէ՛ֆէս սըհէթ կիպի :

Սալթանաթ տէափքլէրի՛ անճագ ճիհան կավկասը արր ,  
Օլմայա թախթը սա՛ատէթ ախնետաա վահտէթ կիպի :

Գօ՛յ պու այշ ու իշրէթի , շիւնքիմ ֆէնա արր ազրպէթ ,  
Եարի պագը իսթէր իսէն՝ օլմայա թա՛աթ կիպի :

Օլսա գու՛մլար սաղըշընճա էօմրիւնէ նատա ու ատէա ,  
Կէլմէյէ պու շիլէի շարիս իշրէ պիր սա՛աթ կիպի :

Կէր նուզուր իթմէք աիլէրսէն , է՛յ Մուհիպպի , ֆարիզ օլ ,  
Օլմայա վահտէթ մագամը՝ քուշէյի ուզլէթ կիպի :

Սուլթան Սիւլէյմանի գրական ծածկանունը ՄՈՒ-  
ՀԻՊՊԻ ըլլալով , իր բանաստեղծական գրուածոց վերջին  
տուները այս անունով վերջացած են :

Գանունի օրով փայլեցան Պագը Էֆէնտի, Ֆիզուլի, Բամի և  
Բեկամի անուն բանաստեղծները :

Սուլթան Սիւլէյման, մանաւորապէս սո՛յնքան սքանչացած էր  
Ապա-խլ-Պագը Էֆէնտի բանաստեղծական հանճարին վրայ որ, սո-  
փորական լիաւատ փարձատրութիւններէ ի զատ, անգամ մը, առ-  
ինքն մատուցած և Գասիտէի Պահարիյէ անուն՝ երկու հարիւր տո-  
ղէն աւելի մէկ ուղերձին խրաքանչիւր տողին՝ հազարական բուպիյի  
ոսկի պարգև տուած և զանի Բուսիկի Գազակերուքեան բարձր պաշ-  
տօնով պատուած է :

Իսկ իբրև արձակագիր՝ երեսելի եղան վանիսա և Ֆերիսուն Պէյ  
Սուլթան Սիւլէյմանի օրով է որ Սամաներէն լեզուն, շնորհիւ Աբա-  
րերէնի և Պարսկերէնի, կոկուեցաւ, յղկուեցաւ և ստացաւ ինքնա-  
յատուկ գրոյմ ու կազմակերպութիւն, Այս լեզուա գրուեցան ոչոք  
շարուն կրօնական, իմաստասիրական, քերթողական և օրէնադրա-  
կան լաւագոյն գործերը Սակայն Սուլթան Սիւլէյմանի զարուն  
գրական փառքին ամենափայլուն աստղը եղած է Ֆիզուլի՝ օրու գլուխ

գործոցն է «Լէյլա և Մէճնուն» սիրավէպր: Ունի նաև բազմաթիւ կազիներ, Բասիսէներ և զանազան սիրերգներ:

Պէտք է աւելցնել նաև որ, Սուլթան Գանունի ինք առաջինը եղած է Պոսոյ մէջ ժողովրդական Մասնակաւորան մը հաստատողը: Եւ արդէն իր օրով, Մհարկաները ուրիշ բան չէին, բայց եթէ իւրաքանչիւրը՝ աստուածաբանական, գրական ու գիտական մէկ մէկ բարձրագոյն հաստատութիւններ: Ինչպէս բացայայտ կ'երեւի, գրական այս մեծ յեղաշրջումին հեղինակը և վարիչ ոգին եղած է նոյնինքն Մեծն Սիւլեյման և Օսմ. պատմագիրներէ սմանք՝ Իրաւեք ունին՝ երբ այդ դարը կը կոչեն Սիւլեյմանի Սուլ. Գրականութեան և



Պազր



Ֆիզուլի

զՍուլթան Սիւլեյման կը դասեն Պերիկլէսի, Օգոստոսի, Լեւոն Ժ. և Լուի Ժ. Ի պանծալի անուններու շարքին մէջ:

«Եթէ մէկգի թողով Սուլթան Սիւլեյմանի մարդկային ինչ ինչ թերութիւնները, ուշագիր ըլլանք իր բարձր յատկութիւններուն, իր ընդարձակ խորհուրդներուն, իր ստեղծող հանձարին, անտեսագիտական հայեացքներուն՝ միացած իր դիրքին արժանավայել պերճութեան, գիտութեանց և դպրութեան համար իր ունեցած ճաշակին և այն վեհանձն պաշտպանութիւնը զոր ընծայեց անուանի գիտնոց և մատենագիրներու, երբ նկատողութեան տանենք անձամբ՝ անձին իր վարած 13 մեծ արշաւանքները, Հոսոսի, Պէլլրասի, Պուտափէլշի և Պագտասի նուաճումը, Օսմ. գրոջին Վիէննայի մէջ ծածանումը, Ալճէրիոյ, Թաւուզի և Թարապուսի աշխարհակալումը, Օսմ. նանատորմին՝ Պարսկային ծոցէն մինչեւ ձիպրովթար և ամբողջ





## ՍՈՒԼԹԱՆ ՍԷԼԻՄ Բ.

(Հինգերկրի՝ 974—982.— Քս .ի 1566—1574)



1. Սելիմ Բ.ի նկարագիրը.— 2. Սօքոլու վեզիրին գործունեութիւնը.— 3. Կիպրոսի նուաճումը.— 4. Լէրանթի ծովամարտը.— 5. Վենետիկցիներուն հետ խաղաղութեան:

1. Սօքոլու Մէհեմէտ փաշա մեծանուն վեզիրը՝ խոհեմութիւն սեպեց՝ Սուլթան Սիւլէյմանի յանկարծական մահը գաղտնի պահել բանակէն, մինչեւ որ Սելիմ արքայորդին Քէօթահնայէն Պոլիս գալով՝ հանդիսաւորապէս գահ բարձրաձաւ:

ՍՈՒԼԹԱՆ ՍԷԼԻՄ Բ.ի օրէն կ'սկսի Օսմ. պետութեան համար բարոյական անկումի այնպիսի շրջան մը՝ ուր իրարու յաջորդող Օսմանցի Սուլթաններէն շատերը՝ փոխանակ իրենց բանակին գլուխը գանուելու և կամ պետական կարեւոր գործերով զբաղելու, ընդհակառակը՝

Հարեւակաւ մեղկ կեանքի և և ազականարար ու վատ-  
թարացուցիչ զուարճութեանց անձնատուր կ'ըլլան: Սէ-  
լիմ Բ. ինքը եղաւ այս անկումի շրջանն սկսող առա-  
ջին վեհագեար՝ իր վայրագ նկարագրով, տարապայման  
զուարճասիրութեամբ և մանաւանդ՝ զինեմուրութեամբը,  
որ իբրեւ ինչիփէ, ահագին դայթակղութեանց տեղի տուաւ:

Իրաւ է որ իր իշխանութիւնը բոլորովին ապար-  
դիւն չեղաւ և թէ՛ Օսմ. պետութիւնը ունեցաւ քանի  
մը յաջողութիւններ, սակայն սասոնք՝ աւելի արդիւնք-



Հարէմ Ազատի

էին իր անուանի վէղիրներուն. քան թէ իր անձնական  
արժանիքին ու գործունէութեան:

Մեծանուն Սուլթան Սիւլէյման, իր անարժան  
որդւոյն իբր թանկադին ժառանգութիւն թողած էր՝  
կանոնաւոր վարչութեան մը չեա՛ն նախանձնելի համ-  
բաւ մը, քաջամարդ բանակ ու պատկառելի ծովային  
ծովային զորութիւն մը և մանաւանդ՝ քաղաքական ու

զինուորական գործերու փորձառու վարիչներ, որոնցմէ  
դժբախտաբար՝ օգտուելու խմաստութենէն զուրկ կը  
գանուէր իր կնամարդի յաջորդը :

2. ՍՕՔՕԼԼՈՒ հայրենասէր ու հեռատես վէզիրը  
կը փափաքէր՝ կործանարար ծախքերու և շռայլութեանց  
սահման մը դնելով՝ երկրին մէջ անտեսական և վարչա-  
կան բարենորոգումներ ի գործ դնել : Սակայն իր այս  
չինիչ խորհուրդները ահագին ընդդիմութեան բաղխե-  
ցան թէ՛ զուարճամուլ Սուլթանին և թէ՛ անոր ազդեցիկ  
հացկատակներուն կողմանէ :



Սօքոլու Մէհեմէտ փաշա

Սօքոլու Մէհեմէտ փաշա՝ առաջինը ևզած է զու-  
շակող՝ ապագայ զօրաւոր Ռուսական կայսրութեան մը  
իր հայրենիքին սպառնացող վտանգը, և ճիշտ այս հե-  
ռատեսութեամբ, փորձեց Կասպից, Ազախ ու Սև. ծա-  
վերը, և յետոյ՝ Տօն ու Վօլկա գետերը Զրանց-  
քով մը միացնելով՝ զինուորական և առեւտրական ըն-  
դարձակ ճամբայ մը յարդարել, ուր ամփոփուած պիտի

ըլլային՝ Թրիմու, Կովկասի և Պարսկաստանի Իսլամ ժողովուրդները՝ Օսմ. կայսրութեան հիւս. և արեւել. սահմաններուն վրայ, և այսպէս՝ զօրաւոր պատուար մը պիտի կանգնէին՝ Ռուսական հակայ կայսրութեան մը ապագայ յարձակումներուն դէմ: Սակայն մէկ կողմանէ Ռուսաց բուսն ընդդիմութիւնը, միւս կողմանէ՝ անխառնութեան դժուարութիւնները, բայց մանաւանդ՝ Սուլթանին և իր համախոհներուն սպառնալից դժգոհութիւնը, որոնք բան մը չէին հասկնար ջուրի և ցամաքի վրայ թափուած այս անվերջ աշխատութիւններէն, արգելք եղան մեծանուն վէզիրին՝ իր այս կարեւոր ձեռնարկն ի կատար հանելու: Ասկից զատ, Սուլթան Սէլիմ, որ մը պատահմամբ, Կիպրոսի գինի ճաշակած և զմայլած ըլլալով անոր գերազանց յակութեանը վրայ, միաքը դրաւ նուաճել գինեոյ այդ զմայլելի հայրենիքը: Ուստի, Ռուսաց Իվան Վասիլիևիչ և Գերմանիոյ Մաքսիմիլիանոս կայսրերուն հետ խաղաղութեան դաշինքը նորոգելով՝ 300 պատերազմական նաւերէ բազկացած տորմիդ մը յանձնեց Մուրաօ Բեյլու և Փիալի փաշա ծովակալներուն և սպարապետ Լալա Մուսրաֆա փաշային, որոնք դասին Կիպրոս կղզին պաշարելու:

3. ԿԻՊՐՈՍԻ ՆՈՒԱՃՈՒՄԸ.— Ամբողջ տարի մը տեւեց այս պաշարումը և կղզեցիք, հակառակ իրենց դիպչանական զինադրութեան, ստիպուեցան, պաշարի և ռազմանիւթի շղոյութեան պատճառաւ՝ յաջորդաբար անձնատուր ըլլալ: Միայն Զանալուքա քաղաքը, զոր կը պաշտպանէր Պապիսիանո իշխանը, իրրեւ արժանաւոր հայրենակից՝ Օպուսոնի և Վիլիե-Տը-Ղի-Ասամի նման քաջարի սասկոսներու, երկար ատեն իր 7000 կարիճներով յուսահատ պայքար մը մղելէ յետոյ, 1571, Օգոստ. 1ին, քաղաքը յանձնեց Օսմանցիներուն, որոնք հակառակ նախապէս իրենց տուած խոստման, հազարաւոր անդէն բնակիչներ սուրէ անցուցին:

4. ԼԷԲԱՆԹԻ ԵՐՈՎԱՄԱՐՏԸ.— Վենետկեցիներուն այս ծանր կորուստը, կիպրոսի մէջ տեղի ունեցած խժողովութիւնները, բայց մանաւանդ՝ Թրքաց ծովային զօրութեան տակաւ սպառնական յառաջդիմութիւնը՝ յուզեցին Քրիստոնեայ Եւրոպան: Պիտս Ե. Պապը ան միջապէս խաչակրութիւն մը քարոզեց՝ որու պատաս-



Գրըն Այի փառս

և Միլեզզիէն Չասկ ծովակալները:

Երկու թշնամի տորմըները իրարու հանդիպեցան՝ Մօրայի հիւս. արեւմտ. կողմը, Լեքանդի (Այնէպախիթ) ձոցին մօտ: Թովամարտը երկար տեւեց ու երկուստեք կատաղօրէն կռուցան. սակայն երբ Միլեզզիէն Չասկ ծովակալը նոյն իսկ Տօն-Փուանի ձեռօք սպաննուեցաւ, Օսմանցիք շփոթած և անդուխ միւլով, սոսկալի պարտութիւն մը կրեցին, հակառակ իրենց ոյժի անհամեմատ գերազանցութեան (1571, Հոկտ. 10): Պատմական այս աղետալի օրուան մէջ, Օսմանցիք կորուսին 30000 զին-

խանեցին Սպանիոյ Փիլիպպոս Բ. թագաւորը, Մալթայի ասպետները, Ճենովացիք, և վերջապէս Վենետկեցիք՝ իրենց 140 նաւերով: Դաշնակից այս նաւատորմին վերին հրամանատարն էր՝ Շառլ Ե. կայսեր ընական որդին Տօն-Փուան (Յովհաննէս), իսկ Օսմ. 300 նաւէ բաղկացած տորմիդին կը հրամայէին Ուլուհ-Ալի<sup>(1)</sup>:

(1) Իսլամացած Ալպանացի մըն էր Ուլուհ-Ալի, որ իր ինզաբնկարագրին և գործած քաջութիւններուն համար, ժամանակակից պատմագիրներ զանի յորջորջած են Գրըն-Ալի:

ուոր, 200 նաւ և 600 թնդանօթ : Ասկից զատ, յազ-  
թողները՝ թշնամի նաւերուն մէջ գանուած 15000է ա-  
ւելի Քրիստոնեայ զերիններ ազատեցին : Երբ Քրիստոնե-  
այ աշխարհի համար յիշատակելի այս մեծ յազթանակին  
աւետար Եւրոպա հասաւ, ամէն կողմ սկսան ցնծու-  
թեան հանդէսներով պանծացնել օրուան մեծագոյն դիւ-  
ցազնը եղող Տօն Ժուանը : Իսկ Պիոս Ե. Պապը, Լէ-  
բանթի յազթականին նուէր զրկեց ոսկեղէն պսակ մը՝ ո-  
րու վրայ թանկագին քարերով զրուած էր՝ Յովհաննու  
Աւետարանի Ա. գլխուն հետեւեալ իմաստալից և պա-  
րագային խիստ յարմար խօսքը՝

«Եւ եղև այր մի առաքեալ յ'Ասատւծոյ, անուն  
նմա Յովհաննէս :»

5. Սակայն եթէ Օսմ. դա՛ուն վրայ մեղկ ու հա-  
ճոյասէր Սուլթան մը կը գտնուէր, տէրութեան ճակա-  
տագիրն ալ, բարեբախդարար յանձնուած էր Սօֆոլոս հրու-  
չակաւոր վէզիրի մը ձեռքը, որ տեղի ունեցած այս վեր-  
ջին աղետէն փոխանակ վճատելու, նոր և աւելի զօրա-  
ւոր սորմիլի մը պատրաստութեան ձեռնարկեց : Օր մը,  
Վենետիկի դեսպանը, պաշտօնական այցելութեան եկած  
ատեն, Սօքօլու վէզիրը ըսաւ անոր, «Մենք, ձեր մէկ  
բազուկը կտրեցինք, իսկ դուք՝ մեր մօրուքը : Արդ,  
մօրուքը նորէն կը բուսնի և աւելի առատօրէն» : Այ-  
սինքն՝ ըսել կ'ուզէր վէզիրը թէ, Վենետիկ, իր մէկ բա-  
զուկը եղող մեծահարուստ Կիպրոս կղզին վրայ տուած  
էր, մյնչդեռ Օսմանցիք՝ իրենց նաւատորմը, որ կրնար  
վերակազմուիլ՝ աւելի զօրաւոր և աւելի կատարելագործ-  
ուած պայմաններու մէջ : Եւ իրօք, երբ այս նպա-  
տակաւ՝ Մայրաքաղաքին մէջ ահագին պատրաստու-  
թիւններ կը տեսնուէին, երբ 30,000 անձինք ցորեկ  
ու զիշեր աշխատելով՝ Տարտանէլի մուտքին վրայ ա-  
նառիկ բերդ մը կը կանգնէին 25 օրուան մէջ, երբ մրդ-

կիթներու մեծաքանակ գանձերը նոր նաւատորմի մը կազմութեան ի սպաս կը դրուէին, միւս կողմանէ՝ դաշնակից աէրութիւններն ալ իրենց մէջ երկդասակ և անհամաձայն գանուելով, վենետկեցիք պարտաւորեցան Յամանցուց հետ խաղաղութեան դաշինք կնքել, նախապէս իրենց գրաւած զէրքերէն հրաժարելէ ի դաս, 300,000 սկի տուքաղ՝ տարեկան հարկ մը վճարելու պայմանաւ:

Սուլթան Ալէլմի, իշխանութեան վերջի տարին, Լէրանդի յաղթականը, Տոն-ժուան, Սպանիական տորմիզով մը դաջած Թունուզի սիրած էր: Գրլըճ Ալի փա-



Մեծ եպարեոս եւ իր նետաւորները

շա ծովակալը, իր նորակազմ տորմիզով գնաց պաշարեց Թունուզը և յաջողեցաւ մէկ ամբողջ անձնատուութեան պարտաւորել գայն:

Ահաւասիկ ծովային այս յաղթութեամբ կ'արդարանար Սօքոլու վէզիրին վերոյիշեալ խօսքը և այս թուականէն սկսեալ՝ Օսմանցիք վերջնապէս աէր կ'ըլլային Հիւս, Ափրիկի, Սուէզէն սկսեալ մինչև Մարօք:


Տեղի ունեցած այս ամէն կարեւոր դէպքերուն բո-



լորովին անտեղեակ ու անասարբեր . Սուլթան Սէլիմ , իր պալատականն զուարծու թեանց և հիւժող ու մաշող ծայրայեղութեանց անձնատուր , օր մին ալ , իր նոր շինել տուած մէկ բաղնիքը այցելած ատեն , ոտքը սահնուով ինկաւ և այս դէպքէն քանի մը օր յետոյ մեռաւ . ութր տարի անուանական իշխանութիւն մը վարելէ յետոյ :

### ՊԱՏՄԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄ

Սուլթան Սէլիմ Բ-ի ութր տարուան իշխանութիւնը՝ պարզապէս նախատինք մը եղաւ Օսմ . զահուն խառնական կրօնի արգելքին հակառակ , իրրեւ թալիֆէ՝ իր անպատկառ և հրապարակային զինարքուքը , պալատական մեղկութեանց մէջ թաթխուած իր ամօթալի կեանքը , պետական ու զինուորական գործերէ բոլորովին ձեռնթափ ու անտարբեր ընթացքը՝ քստմենի հակապատկեր մը կը կազմեն իր հոյակապ նախորդներուն վարած արդիւնալից կեանքին և յարատեւ գործունէութեան հետ Նրբ աչքի առջեւ բերնէք այն փառաւոր ժամանակները ուր , օրինակի համար , Ֆաթիհ երկու կայսրութիւն , 7 թագաւորութիւն և 200է աւելի քաղաքներ կը նուաճէր , երբ Սափուղ Սուլթան Սէլիմ չորս տարուան մէջ՝ Մէճլուքներու նման վայրագ սերունդ մը բնաշինջ կ'ընէր , երբ՝ կաշխարհակալէր Սուրիոյ , Պաղեստինի , Արարիոյ ու Եգիպտոսի նման ընդարձակածուալ ու հարուստ երկիրներ , և մանաւանդ՝ թալիֆայալթիւնը կը փոխանցէր Օսմ . վեհապետութեան , երբ Մեծն Սիւլէյման իր զինուորական ու քաղաքական տաղանդով պատկառանք և ահ ու սարսափ կ'ազդէր համօրէն Սուրույի , ընդհակառակը՝ իր անարժան արդին և անոր յաջորդներէն շատերը՝ իրենց անհեռատես քաղաքականութեամբ , զուարծամոլ կեանքով և անխորհուրդ պատերազմներովը՝ տակաւ պիտի քանդեն այն հսկայ շէնքը զոր անդրանիկ աշխարհակալ Սուլթաննեբու յաղթական սուրբ կանգնած էր :



## ՍՈՒԼԹԱՆ ՄՈՒՐԱՏ Գ.

(Հիմերեփի՝ 982—1003 .— Քս.ի 1574—1595)



1. Պարսկական պատերազմ. — 2. Եւրոպական պատերազմ. —  
3. Ներքին վիճակ:

1. Սուլթանն Սէլիմ Բ .ի յաջորդեց իր երէց որդին ՄՈՒՐԱՏ Գ . որու առաջին գործը եղաւ հինգ եզրայր-  
ները խեղդամահ սպաննելէ ի զատ՝ տէրութեան ազդե-  
ցիկ նախարարներն ալ մէկիկ մէկիկ մէջտեղէն վերցնե-  
լով՝ իրեն կամակատար ողորմելի անձերով սկսար կառա-  
վարութիւն մը կազմելու Կը մնար միայն Սօքոլլու վէզիրը՝  
Սակայն օր մը Տիվանը նստած միջոցին Տէրվիշ մը՝  
իրեն ազերսագիր մատուցանելու ձևին ներքեւ կը մօ-  
տենայ և վատութեամբ դաշուճահար կ'սպաննէ այն եզա-  
կան անձը որ իր ճշմարիտ հայրենասիրութեամբն ու խո-

քին դիւանագրութեամբ՝ Յամ. հայրենիքին թանկագին ծառայութիւններ մատուցած և իր նախորդ երկու Սուլթաններուն իշխանութեանը փառաց սրակը հիւսած էր :

**ՊԱՐՍԻՑ ԴԷՄ ՊԱՏԵՐԱԶՄ.** — Սուլթան Մուրաա, Աւստրիոյ Մախմաթիանոս կայսեր հետ 1577ին խաղաղութեան դաշինք դնելով՝ պատերազմ հրատարակեց Պարսից Շահ Թահմազ թագաւորին դէմ՝ որու յաղթեց Չալնըրանի դաշտին մէջ սպարապետ Մուսրաֆա փաշա և Տփսիսի տիրեց : Միայն թէ՛ 13 տարի տեւող Թրքո-Պարսկական այս պատերազմին մէջ՝ երկու կողմերն ալ իրենց պարտութեան և յաղթանակի շրջաններն ունեցան, մինչև որ Օսմանցիք տարին վերջնական յաղթանակը և 1590ին, երկու տէրութեանց միջև կնքուած դաշնագրութեան ոյժով, Օսմանցիք աէր կ'ըլլային բովանդակ Վրասանի, Շիրվանի, Երևանի, և Ասրպասականի մէկ մասին : Դարձեալ, այս երկարատեւ պատերազմին մէջ՝ իրենց սաղմագիտական քաջութեամբք անուանի եղան Մուսրաֆա, Ֆերհաս, Ճաֆեր և մանաւանդ Էօզշեմիւր Օսման փաշաները՝ Թրքոց, իսկ, Թօզմազ երան և Հաւզեկ Միւղա զօրավարները՝ Պարսից կողմանէ :



Ֆերհաս փաշա

2. **ԵՒՐՈՊԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ.** — Օսմ. բանակին Ասիոյ մէջ զբաղած վիճակէն օգուտ քաղելով՝ Մուլտափիա, Վալաքիա և Թրանսիլվանիա՝ Աւստրիոյ դրդուեմով՝ նորէն տապաւամբած էին : Սուլթան Մուրաա թէպէտ քանի մը անգամ զօրք զըրկեց, սակայն և կարատեւ պատերազմներու մէջ ոյժաս-

պառ բանակը պարտութենէ պարտութիւն մասնուելով՝ Խրուաթիոյ Քուչքա քաղաքին մօտ մկուած ճակատամարտին մէջ 20,000 հոգի կորսնցնելով՝ ցիր ու ցան վերադարձաւ Պոլիս (1594) :

Այս միջոցին, Եէնիչէրիները — որոնք իրենց Վեհապետին դրամական մեծաուստ նուէրներուն շնորհիւ՝ շուայլ ու փարթամ կեանք մը վարելու վարժուած էին — դրամի չգոյութեան պատճառաւ, ստակալի խռովութիւն մը հանեցին Մայրաքաղաքին մէջ : Սուլթան Մուրատ, այս շփոթած ապստամբները սիրաշահելու նպատակաւ՝ պարտաւորեցաւ դրամական մեծագումար նուէրներու հետ, քանի մը վէզիրներու գլուխներն ալ վրայ տալ :



Մահալեֆիո բնեւցող Գասաուր ու Գաննապէս

Յա. ալի և անխորհուրդ զիչոզութիւն մը, որ վայրագ Եէնիչէրիներուն քաջալեր՝ և ապաղային համբար աջ չա՛տ կործանարար նախրնիթաց մ'ըլլալու սահմանուած էր :

3. ՆԵՐՔԻՆ ՎԻՃԱԿ. — Այս Սուլթանին օրով է որ Օսմ. պետութիւնը հասաւ իր աշխարհագրական մեծագոյն ընդարձակութեան, այնպէս որ, բացի մեծ ու փոքր բազմաթիւ նահանգներէ և ինքնօրէն իշխանութիւններէ, կր պարունակէր ՔՍԱՆ թագաւորութիւնն :

Սուլթան Մուրատ Գ. ալ իր հօրը պէս՝ պալատին


OUR SPECIAL LINES

UNUSUAL

— 1877 — 1880 —

— 1880 — 1885 —  
— 1885 — 1890 —  
— 1890 — 1895 —  
— 1895 — 1900 —

18



մէջ փակուած , մեղկ ու շոայլ կեանք մը վարեց , երկ-  
րին հարստութիւնը իր կամքին համեմատ գործածելով և  
տէրութեան գործերը յանձնելով՝ Սօքրատ , Սինան , Օս-  
ման և Ֆէրհատ փաշաներու նման երեւելի վէզիրներու :  
Պատմագիրները , Դեպքաններու Շրջան կոչած են  
այս Սուլթանին իշխանութիւնը , որովհետեւ . Կ . Պոլսոյ  
մէջ մնայուն դեսպաններ ունէին Ծրանա , Անգլիա ,  
Ռուսիա , Լեհաստան , Թարսիստան , Աւստրիա . Պարսիաս-  
տան , Սպանիա , Իտալիա և Վենետիկի Հաստիստիայեան  
քիւրը :



Եւրոպական դեսպան մը՝ Սուլթանին ներկայութեանը

Առաջին երկու քր մանուաւանդ , շարունակ կը ճգնէ-  
ին Թուրքիոյ մէջ քաղաքական գերակշիռ ազդեցութիւնը  
իրարու ձեռքէ խլել :

Այս Սուլթանին որով է որ , Անգլիոյ Եղիսաբեթ  
հռչակաւոր թագուհին , Թուրքիոյ հետ առեւտրական  
դաշնագիր կնքած է :

Սուլթան Մուրատ Գ . շատ հարուստ եղած է զա-  
ւակաղ մասին , որոնց թիւը 1154ն աւելի կը հաշուեն :

# ՍՈՒԼԹԱՆ ՄԷՀԷՄՍԷՏ Գ. (Ֆարիհի էկրի)

(Հիմնեթի՝ 1003—1012. — Քս.ի 1595—1603)



1. Եւրոպական պատերազմներ. — 2. Թուրքերուն առաջին յաջողութիւնները. — 3. Փոքր Ասիոյ ապստամբները և Շահ-Ապագաս

1. Սուլթան Մուրատ Գ. ի յաջորդեց իր անդրանիկ որդին Սուլթան ՄէՀէՄՄԷՏ Գ. որ ըստ սովորութեան, առաջին պարտականութիւն սեպեց 19 կղբայրները իր աչքին առջև սպաննել տալ :

Սուլթան ՄէՀէմէտ ալ, իր նախորդին պէս, պաշտան մէջ փակուած, զեղիս և զրօսալի կեանք մը կը վարէր՝ «մինչև իսկ, հացկատակ սափրիչներու, մատաւճառներու և մրգավաճառներու պէս ստորին անձերու՝ փաշայութեան և վէզիրութեան աստիճաններ չապիւլով»<sup>(1)</sup> : Եւ ճի՛շտ այսպիսի անտարբեր Սուլթանի մը կը

(1) Եւսու Ք.Ֆէհմի

վիճակուէր դարման տանիլ անիշխանական վիճակի մը՝ որու մասնուած էին Օսմ. պետութեան Եւրոպական և Ասիական գաւառները :

ՄԱՃԱՌԱՅ ԵՒ ԱՒՍՏՐԻԱՅԻՈՅ ԴԷՄ ՊԱՏԵՐԱԶՄ.— Սուլթան Մէհմէմէտի գահակալութեան ատեն, Եւրոպական Թուրքիա տակաւին խռովութեան մէջ էր : իսկ Մաճառիստան, Թրանսիլվանիա, Մոլտավիա և Վալաքիա ապստամբած էին :

Սուլթան Մէհմէմէտ այս ապստամբներուն դէմ զրկեց Սինան ու Ֆէրհաա փաշները՝ որոնք Վլախաց Քաջն



Սինան փաշա

Նոչակաւոր պատմագիր և օրուան Շէյխ-իւլ-Իսլամ Սաքեշին էֆէնտի, խորհուրդ սուլա Սուլթանին, որպէս զիր գահն ու կեանքը չվտանգելու համար, թօթափէ իր թմբութիւնը և ինքն անձամբ երթայ թշնամիներուն դէմ : Սուլթան Մէհմէմէտ, յանձն առաւ համաժակերպիլ իրեն համար կարի դժուարին այս առաջարկին և բանակին վերին հրամանատարութիւնն ստանձնելով՝ Մեծ Եղարքոս և Սպարապետ Իպրահիմ փաշայի հետ՝ գնաց Էրջաւ բերդաքաղաքն առաւ : Ապա, Քերեշքու ըսուած դաշտին մէջ գտաւ Մաճառաց, Գերմաններու, Վալաքիոյ և Թրանսիլվանիոյ դաշնակից սուլաթաթիւ բանակը՝ որմէ զարհուրած, Սուլթան Մուրատ

Միխայել (Michel le Brave) իշխանէն չորաչար յաղթուելով՝ կորուսին Նիս, Թիոկոպիցա և Նիկոպոլիս աաղմական քաղաքները : Այս ձախողուածին լուրը մեծ յուզում պատճառեց Մայրաքաղաքին մէջ և խռովութեան մը մօտալուտ նշաններն սկսած էին երեւան գալ, երբ,



կ'ուզէ խելոյն մեկնել պատերազմի դաշտէն : Սակայն Յէնրիչէրիք կ'արդիւնն անոր բնթացքը և կ'սկսի սոսկալի ճակատամարտ մը՝ որու մէջ Եւրոպական դաշնակից բանակը 50,000 հոգի և 90 թնդանօթ կորսնցնելով ցիր ու ցան կ'ըլլայ (1596 Հոկտ. 26) :

Այս առթիւ՝ Սուլթան Մէհմեմէտ կոչուեցաւ «Ճաթի'նի էկրի» և Պոլիս վերադարձին . Եւրոպական դեսպանները անձամբ շնորհատրելու եկան իր չտարած փայլուն յաղթանակը : Իսկ Մէքքէի Շէրիֆը, մասնաւոր զեսպանութեան մը միջոցաւ, Սուլթան Մէհմեմէտի



### Էյրիի պատերազմը եւ առումը

Նուէր գրկեց նուիրական հին ծածկոյցնր՝ զոր մեծ յարգանօք էյուսպի մղկիթի դանձարանին մէջ պանել աււտու, և նոր ու թանկագին ծածկոյթներ շինել աւլով՝ Արարիոյ նուիրական քաղաքները գրկեց :

Իսլամաց Մարգարէին սերունդէն էլիւր կոչուող կրօնաւորներուն կանաչ փաթիկոց (սարրզ) դնելու սովորութիւնը այս առննէն սկսած է :

Սակայն Օսմանցիներուն տարած այս յաղթանակը՝ վերջնական յաջողութեան հանգամանքէ զուրկ էր, որովհետեւ, Մահառները քիչ յետոյ նորէն գրաւեցին իրենց կորստած դիրքերուն մեծ մասը և իրերը մնացին իրենց նախկին վիճակին մէջ : Միայն թէ՛ Իպրահիմի յաջորդ Եհմիշնի Հասան փաշա նորընտիր Մեծ Եպարքոսը յաջողեցաւ գրաւել Գանիժէ բերդաքաղաքը զոր

Թիւրքաւի Հասան փաշա յամառ արիութեամբ և շարունակ երկու ամիս պաշտպանած էր պաշարող բազմաթիւ թշնամիներու դէմ :

**ԱՍԻՈՅ ՄԷՋ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆՆԵՐ .** — Մինչդեռ Եւրոպական մասին մէջ զինուորական այս կարեւոր գործողութիւնները տեղի կ'ունենային , Ասիոյ մէջ ալ Գարա Եազըճը Օղլու անուն փոխաստական Եէնիչէրի մը 20,000 Քիւրտ և Թիւրքմէններ զլուխն հաւաքելով՝ Օսմ. զօրաց հետ զարնուելով , ինքզինքը Եգեսիոյ մէջ անկախ



Թիւրքաւի Հասան փաշա

Շահ Ապպաս

իշխան կը հռչակէր : Պարսից Շահ Ապպաս թագաւորը , որ ինքն էր թեւ թիկունքը այս ապստամբին , առիթէն օգուտ քաղելով՝ Դարեճ . վան ու Նախիջեւան քաղաքներն առնելով՝ Երեւանն ալ պաշարեց : Այս միջոցին մնաւ Սուլթան Մէհէմէտ Գ . 37 տարեկան Հասուկին մէջ , երբ արդէն ցոփութեան և ծայրայեղութեան մէջ անցուցած կեանքովր՝ զառամեալ ձերուների մը վիճակն էր ստացած , և իր Ահմէտ որդւոյն ժառանգութիւն թողլով՝ անիշխանութեան մասնուած խռովեալ տէրութիւն մը :

Իր օրով կ'ապրէր երեւելի քերթող-պատմադիր Ալի էֆէնտի :

## ՍՈՒԼՔԱՆ ԱԶՄԷՏ Ա.

(Հիմերքի՛ 1016—1026 . — Քս.ի 1603—1627).



1. Տէրութեան ներքին վիճակը. — 2. Արթուրոսի գաղնա-  
գրութիւնը. — 3. Պարսկական Պատերազմ. — 4. Ներքին խռովու-  
թիւններ. — 5. Սուլթան Ահմէտ Ա.ի որով աեղի ունեցած կարեւոր  
նորութիւններ:

1. Սուլթան Մէհմէտի յաջորդեց 14 տարեկան իր  
ԱՀՄԷՏ որդին, որ բացառութիւն բլլալով չսպաննեց իր  
Մուսրաֆա եղբայրը, որովհետև ի ծնէ խեղանդամ և  
ապուշ էր:

Սուլթան Ահմէտ Ա.ի գահակալութեան ժամանակ,  
աէրութեան Եւրոպական և Ասիական գաւառները ա-  
հագին շիրթութեան և սպստամբութեան մէջ էին:

Սուլթան Ահմէտ, նախ Աւստրիոյ դէմ զրկեց Լաշա-  
Մենկեմեք փաշա սպարապետը, որ միանալով Մաճառ  
բանակին հետ, Գերմանիոյ Ռոտտլօֆ կայսեր դէմ վճառ-

կան յաղթութիւն մը տարաւ և զանի պարտաւորեց կնքել Սիբիլաթորօֆի դաշնագրութիւնը (1606), որով Մաճառիստան՝ Աւսարիոյ լուծէն ազատելով, Սամ. պետութեան գերիշխանութեանը ներքեւ՝ պիտի ունենար իր առանձին թագաւորը: Միւս կողմանէ, Աւսարիա՝ դադրեցնելով Մաճառիստանի համար Սամ. գանձին վճարած տարեկան հարկը, միանուազ պիտի վճարէր 200,000 ոսկի և տէր պիտի ըլլար՝ միայն Վերին Հունդարիոյ և Թրանսիլվանիոյ (11 նոյ. 1606):

Այսպէս, Մաճառները, Քրիստոնեայ Գերման կայսրութեան լուծէն ազատելով՝ սիրայօժար կը նախընտրէին Սամ. պետութեան գերիշխանութիւնը: Այս առթիւ՝ իր հայրենակիցներուն կողմանէ թագաւոր ընտրուած Պօսխայ Մաճառ ազնուականը, Պէլկրատի մէջ յանուն Սամ. Սուլթանին, վէզիրին ձեռքէն արքայական թագ ու մական կ'ընդունէր:

3. ՊՍԸՄԿԱՎԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ. — Սուլթան Ահմէտ, Աւսարիոյ ճեա իր գործը կարգադրելէ յետոյ, Պարսից դէմ զրկեց Ճիլալի Զասե Սիւլան փաշան, որ Շահ-Ապպաս թագաւորին դէմ ութը տարուան ապստղին պայքարէ մը յետոյ — որու միջոցին ըստաւոր Շահը Երեւանն՝ առած, Զուղան՝ կործանած և հաղարաւոր Հայ ընտանիքներ Արարատէն բռնի Իսպահան գաղթել տուած էր — ստիպուեցաւ հաշտութիւն կնքել Պարսից ճեա, անոնց թողլով այն քաղաքները, որոնք Գանուրի Սուլթան Սիւլէյմանէն առաջ՝ իրենց ձեռքը կը գանուէին:

4. ՓՈՔՐ ԱՍԻՈՅ ԱՊՍՏԱՄԲՆԵՐԸ. — Պարսկական պատերազմին անյաջողութենէն քաջալերուած, Սիփահի ու Ճիլալի անուն Փոքր Ասիոյ ապստամբ ցեղերը իրենց յանգրութիւնը ծայր աստիճանի հասուցեր էին: Սուլթան Ահմէտ, այս ապստամբներուն դէմ զրկեց խրատարարոյ և կատարի զինուորական մը, այն է՝ սպո-

բապեա Մուրաճ փաշան, որ երկու տարու ան մէջ՝ Փոքր Ասիոյ, Հայաստանի և Սուրիոյ խաղաղ ժողովրդոց պատուհասը եղող այս ապստամբները դարկաւ ցրուեց, անոնց փայրազ պեաերուն գլուխները Պոլիս գրկեց Սուլթանին, իսկ շատերն ալ ողջ ողջ՝ հորերու մէջ խեղդամահ բրաւ: Մահացնելու իր այս վերջին ձեւին համար, Մուրաճ փաշա կոչուած է Գոյունը:

5. Սուլթան Ա.Ն. մէտ Ա. փ. օրով. կարեւոր նորութիւններ տեղի ունեցած են Թուրքիոյ մէջ:

Ճրանաս, հակառակ Անգլիոյ բուռն ընդգիմութեան, 1604ին կնքած իր դաշնագրով, Թուրքիոյ մէջ քաղաքական ու անասական մեծամեծ առանձնա-



Գոյունը Մուրաճ փաշա

չնորձումներու կը տիրանար, չնորձիւ իր Սափադի-սը-Պոկլիք դեսպանին գործունէութեան:

Նոյնպէս, սուաջին անգամ, Եւրոպական այս դեսպանը եղած է՝ կայս. սրբաաան մէջ Սուլթանին կողմանէ ընդունելութեան պատիւին արժանացող, և այս առթիւ է որ Սուլթան Ա.Ն.մէտ Ա. շատ սիրալիր նամակ մը գրած է Ճրանասայի ամենարարի ու վեհանձն թագաւոր՝ Հեկորի Գ. փ.:

Միտախոտի մշակութիւնն ու գործածութիւնը՝ այս Սուլթանին օրով մուտ գտած է Թուրքիոյ մէջ:

Սուլթան Ա.Ն.մէտ մինչև իր օրը ընդունուած յա-

Ջորդաթեան իրաւունքը՝ Խանեսանի-Ալ-Օսմանի մէջ ա-  
մէնէն մեծին սահմանեց, ինչ որ մինչև ցարդ անխափան  
կը շարունակուի :

Սուլթան Ահմէտ, բաց ի Մէքքէի ու Մէտինէի մէջ  
կառուցած Նոյակապ շէնքերէն, Կ. Պոլսոյ մէջ ալ շինել  
տուած է իր անունով ծանօթ մեծակառոյց և փառաւոր  
մզկիթը և Թօյինանիի Նրսոպրակին վրայ գեղակերտ  
աղբիւր մը, որոնց ճարտարագետը Հայ մը եղած է :



Մեծ եպարեոսին՝ Եւրոպական գեապան մը բնդունիլը

Սուլթան Ահմէտի օրով Պոլսոյ մէջ պատահած ժան-  
տախտ մը ստեղծի կոտորած կ'ընէր՝ նոյն խակ արքու-  
նական պալատին մէջէն ալ բաւական դռներ տանելով :  
Ուստի, Սուլթանը ի ժողով կը Նրաւիրէ տէրութեան ա-  
ւագանին ու Մայրաքաղաքին մէջ գանուած ամէն ազգէ  
բժիշկները : Այս վերջինները կը պահանջեն որ, Նամաճա-  
րակին տարածման զլիսաւոր պատճառ եզող փողոցի չու-  
ները պէտք է անմիջապէս բնաջինջ ըլլան : Օրուան Միւս-  
քին, Նամամիտ կը գանուի բժիշկներու այս խորհուրդին և  
ինքն ալ այս խմատով Ֆերիս կուտայ : Սակայն Սուլ-  
թան Ահմէտ կը խզահօրի և կը մեղացնէ տրուած այս

ծայրայեղ վճիռը, և կը հրամայէ որ, խեղճ կենդանիները փոխանակ սպաննելու, մտաակայ Իշխանաց կղզիներէ մէկուն մէջ չէզոքացուին, ինչ որ խեղճն կը զործադրուի:

Զարմանալի է որ, մեր օրերն ալ անզի ունեցած նմանօրինակ սթարագայ մը, սակից 300 տարի առաջ-ուանէն շատ աւելի նախապաշարուններու և դժուա-



Սուլթան Ամէթի Մզկիթն ու Հրապարակը

բութեանց կը բաղխի՝ զոնէ՝ սուանց արմատական կար-  
դադրութեան մը յանդելու:

Զարմանալի դուզողխաբութեամբ մը, Սուլթան Ահմէտ Ա. Օսմ. Սուլթաններուն 14րդ.ը եղած է, 14 տարեկան էր՝ երբ զահր ելաւ, 14 տարի թագաւորեց, և Այա-Սֆիայի մօտ իր շինել տուած հոյակապ մզկիթին 6 սինարէները՝ 14 Շերիֆի ունին:

Սուլթան Ահմէտի որով կ'անցրէր ծագումով Հայ ու բնիկ Չէյ-թունցի իդամացած թալի փաշան, որ նախ Մովսէսի էր և սպա ելաւ Մեծ եպարքոս:

## ՍՈՒԼԹԱՆ ՕՍՄԱՆ Բ.

(Հինգերի՛ 1027—1031 .— Քս.ի 1617—1622)



1. Լէհաց դէմ պատերազմ, Սուլթան Օսման և Սղանխուս.—
2. Եկեղեցիներուն ապստամբութիւնը և Սուլթան Օսմանի մահը:

Սուլթան Ահմէտ Ա. թէպէտ իրեն յաջորդ նշանակած էր Մուսթաֆա Կորայրը, սակայն իր պակասամտութեանը պատճառաւ երեք ամիսէն զահրնկէց ըլլալով՝ Սուլթան Ահմէտի 14 տարեկան ՕՍՄԱՆ որդին զահրարացաւ:

1. ԼԷՀԱՅ ԴԷՄ ՊԱՏԵՐԱԶՄ.— Նորասի փառասէր Սուլթանին առաջին դործը եղաւ 300,000 զօրքով պատերազմի երթալ Լէհերուն դէմ, որոնք Մոլտավիան ու Վալաքիան ալ ոտք հանելով՝ Օսմ. երկիրները կ'արշաւէին:

Սուլթան Օսման Ա. ի նախարարութիւնը նպատակ ունէր՝ Լէհաստանը բոլորովին նուաճելով՝ զայն ամուր




պատուար մ'ընել Ռուսական կայսրութեան դէմ, որ թէպէտ տակաւին անգոր ու հեռաւոր, սակայն սկսած էր մասնագութիւն պատճառել Օսմ. պետութեան: Լէհաց Սիկիւմոնիս թագաւորը, բանակին եւանդը վառելու նպատակաւ, իր 14 տարեկան Սիլանիւրաւ որդին պատերազմի դաշտը զրկած էր: Ռւբնին, երկու տարեկից այս դեռատի իշխաններուն միջեւ տեղի ունենալիք պայքարէն կախում պիտի ունենար դատերազմին բախուը:

Սակայն Սուլթան Օսման չի կրցաւ յաղթել իր թըշնամիներուն և խաղաղութեան աննպաստ դաշնագիր մը կնքելով՝ վերադարձաւ Կ. Պոլիս (1626):

2. Սուլթան Օսման, իր զինուց այս անյաջողութիւնը Եէնիչէրիներուն անկարգ և ըմբոստ ընթացքին վերագրելով՝ սկսաւ սոսկալի խտտութեամբ վարուիլ անոնց հետ և շատերն ալ անխնայ սպաննեց: Սուլթանին արս բուռն ընթացքը տեղի տուաւ բնդհանուր ապստամբութեան մը և Մայրաքաղաքը մասնուեցաւ կատարեալ անիշխանութեան: Սուլթան Օսման, իր կեանքը անվրիպելի մահէ մը տղատելու համար՝ Մէքքէ ուխտի երթալ պատրուակեց և նոյն խոկ հրաման րբաւ որ Ասիոյ մէջ զորաժողով կատարուի: Սակայն կատաղի Եէնիչէրիք, առաջուց կռահած ըլլալով Սուլթանին թագուն նպատակը, խուժեցին պալատ և հրապարակային նախաաինքներով զանի տարին Եէսի Գուլէի սմբոյր ուր՝ իրեն համախոհ վէլիրներուն և իւլէմաններուն հետ զլխատեցին զանի:

Այսպէս, Օսմ. պետութիւնը Եէնիչէրիներու բռնակալութենէն սպատելու նախանձախնդիր Սուլթաններուն մէջ՝ առաջին զոհը եղած է Սուլթան Օսման Բ. որ ապագային ալ իր ազնուալի վախճանին շատ մը բախուակիցներ պիտի ունենար:



## ՍՈՒԼԹԱՆ ՄՈՒՍՏՒՖԱՅԱ Ա.

(Հիմնեթի՛ 1031—1032. — Քս.ի 1622 - 1623)



1. Մուսթաֆայի երկրորդ անգամ գահակալութիւնը. — 2. Քաղաքային պառակազմ. — 3. Ներքին խռովութիւններ. — 4. Մուսթան Մուսթաֆայի երկրորդ գահընկէցութիւնը:

1. Եէնիչէրիք, Մուսթան Օսմանն սպաննելէ յետոյ, երկրորդ անգամ թագաւոր հռչակեցին աւոր ՄՈՒՍՏՒՄԱՅԱ, եղբայրը, որ եր քայքայածակ անկարողութեանը պատճառաւ՝ հազիւ չորս ամիս անուանական իշխանութիւն մը վարելով գահընկէց, և իր մօրը հետ՝ պալատան մէկ յարկարամնին մէջ բանտարկուեցաւ:

2. ԱՆԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ. — Այսքան կարճ ժամանակամիջոցի մը մէջ՝ երկու Մուսթաններու գահընկէցութիւնը մէկ կողմանէ, Եէնիչէրիներու սանձարջակ ստահակութիւնը մյուս կողմանէ՝ իրենց աննպաստ ազգեցու-

թիւնն ունեցան դաւառներու վրայ, որոնց կուսակալները՝ իրենց յանձնուած երկիրներուն մէջ բանանալով՝ ամէն իշխանութիւն և օրէնք սաքի սակ առած, շարաշար կը կեղեքէին թշուառ ժողովուրդը: Այս ընդհանուր անիշխանութեան մէջ՝ Պարսիկներն ալ օգուտ քաղելով՝ Պաղտատ քաղաքին և քանի մը դաւառներու տիրած էին:

Ահաւասիկ, տէրութեան ենթարկուած այս դժուարին կացութեան մէջ է որ, հայրենատէր նախարար մը, Քեւանիշ Ալի վաչա, Մեծ Ենթաբնասութեան պաշտօնն ստանձնելով՝ բոլոր իւր լեւոյնք և բարձրաստիճան նախարարաց նետ համախորհուրդ, գահընկէց կ'ընէ Մուլթան Մուսթաֆան, և Ահմէտ Ա. ի ՄԱԻՐԱՏ որդին գահը կը բարձրացնէ:



# ՍՈՒԼԹԱՆ ՄՈՒՐԱՏ Դ. (Ֆուսիհի Պաղսաւ)

(Հիւրեքի՛ 1032—1049 .— Քս.ի. 1623—1639).



1. Սուլթան Մուրատի անչափահասութեան շքանք.— 2. Բարեկարգութեան զերահաստատութիւնք.— 3. Սուլթան Մուրատի անգթութիւնները.— 4. Պաղսաւի նուաճումը:

1. Տասն երեք տարեկան էր ՍՈՒԼԹԱՆ ՄՈՒՐԱՏ Դ. երբ իր Օսման եղբորը յաջորդեց և մինչև չափահասութիւնը՝ երկիրը կառավարեց իր մօրը՝ Մանլիկյֆեր Սուլթանուհին խնամակալութեան ներքեւ :

Բնութեամբ՝ արիասիրտ, խիզախ և անզուխ էր Մուրատ Դ. : Սակայն իր իշխանութեան առաջին ութը տարիները խաղալիկ դարձաւ իր փոռասէր մօրը և պալատական պաշտօնէից՝ որոնց քմահաճոյքին և վրէժխրնդրութեանը զսնեց կարսղ և հայրենասէր բազմաթիւ պաշտօնատարներ :

2. Երբ կառավարութեան ղեկը ձեռք տաւ Սուլթան Մուրատ, նախ և ուրաջ պալատան մէջ սրջացած գաւազիրներու խումբը սրուեց, երկրին վարչութիւնը արժանաւոր անձերու յանձնեց, ազատամբ կուսակալները պաշտօնանկ ըրաւ ու պատուհասեց, և մանաւանդ՝ բանակին վրայ Սուլթաններու գրեթէ ոչնչացած ազդեցութիւնը վերահաստատելու նպատակաւ, սոսկալիանց թուիթեամբ մտնողուց Եէնիչէրիներուն և խոսովարարներուն սկսեցր: և անոնց գլուխները ամբողջ շա-



Պաղսասի առումը

բախներ հրապարակաւ ցուցադրելով՝ ժողովուրդին ամէն գասակարգերուն աճ ու սարսափ ազդեց: Եէնիչէրիք համոզուելով որ այս անկ Սուլթանին հետ գլուխ չպիտի կրնան ելլել, սախուրեցան հնազանդիլ և հաւատարմութեամբ ծառայելու երդում բնել (1633):

3. ՊԱՐՍԻՑ ԴԷՄ ՊԱՏԵՐԱԶՄ. — Սուլթան Մու-

րատ, աէրութիւնը ներքնապէս խազադելէ յետոյ, ան-  
ձամբ Ասիա անցաւ ու Երեւանի նեա՝ Պարսից զբաւած  
քանի մը քաղաքներն ալ ետ առաւ (1636): Սակայն  
Սուլթան Մուրատ չազիւ թէ յաղթանակաւ Պոլիս վե-  
րադարձած էր երբ լուր տուաւ որ Պարսիկները նորէն  
գրաւեր են Երեւանը: Սուլթան Մուրատ, փոխանակ  
վնասելու, երկրորդ անգամ անցաւ Ասիա և ուղղակի  
գնաց Պաղտատ քաղաքը պաշարեց և 40 օր անդնդհաս  
յարձակումներէ յետոյ, արեւց անօր (24 Դեկտ. 1638):

Այս յաղթութիւնէն յետոյ, Սուլթան Մուրատ, գե-  
րի ինկած 30,000 Պարսիկ, իր աշխին առջեւը գլխատել  
տուաւ:

Սակայն յաջորդ տարին, երկու պատերազմոց աէ-  
րութեանց մէջ հաշտութիւն կնքուելով՝ Օսմանցիք Պաղ-  
տատը միայն իրենց վերադառնցին, Պարսից թողլով Երե-  
ւանն ու Դաւրէժը:

Սուլթան Մուրատ, Լիբանանի ապստամբ Տիւրքի-  
ներն ալ զսպելէ յետոյ, մեռաւ 1640ին, երբ տակաւին  
չազիւ 30 տարեկան էր:

Սուլթան Մուրատ Գ. թէպէտ կտրիճ, հաստատա-  
միտ և արի գինուորական, սակայն Իսլամ լուրջ դա-  
սակարգին արձամարեկի դարձած էր իր ծայրայեղ գի-  
ւեմուլութեանն համար՝ որու զո՛ն գոյց երիտասարդ հա-  
սակի մէջ: Եւ ճիշտ արեւոյութեան իր այդ նուպաներու  
միջոցին է որ զո՛ն գացին իր Պայազխա, Սիւլէյման և  
Փասրմ եղբայրները. Իպրահիմ փաշա մեծ վէզիրը և բաղ-  
մաթիւ նախարարներ:

Սուլթան Մուրատ, Եւրոպական մէկ քանի լեզու-  
ներու ալ հմուտ և իր նախասիրած ընթերցումն էր  
Մաֆիալիկ՝ զոր Թուրքերէնի թարգմանել տուած էր:

## ՍՈՒԼԹԱՆ ԻՊՐԱՀԻՄ

(Հինգերկրի՝ 1049—1058 .— Քս .ի 1640—1648)



1. Սուլթան Իպրահիմի նկարագիրը.— 2. Ռուսոյ գէմ առաջին պատերազմը.— 3. Կրեաէի գէմ առաջին արշաւանքը.— 4. Ներքին խռովութիւն և Սուլթան Իպրահիմի գահընկէցութիւնը:

1. Սուլթան Մուրատ Դ. անդաւակ մեռնելով՝ իրեն յաջորդեց Եղբայրը Իպրահիմ որ բնութեամբ տկարակազմ, արտաքին տեսքով անհրապոյր, ծաղկաւեր ու ճղճիմ բլլալով, սովորաբար յարմնեղ, պատկառելի և բնական կորովով օժտուած Սուլթաններու հետ ապրող ու գործակցող Եղնիշէրիներուն վրայ աննպաստ ազդեցութիւն մը գործեց:

Այս բաւական չէր. Սուլթան Իպրահիմ, իր թոյլ նկարագրով, պաշտատկանաց ձեռքը խաղալիկ և Ծտարուան իր իշխանութիւնը՝ մեղկութեան, ծայրայեղ ապա-

կանուխեան և կործանարար ծախքերու և շոտյութեան վատթար շրջան մը եղաւ :<sup>(1)</sup>

Բարերախղարար, իր օրով կ'ապրէր Բէօփրիւլիւնե-րու համրաւաւոր ընտանիքէն Գարա Մուսրափա փաշա-տաղանդաւոր վէզիրը, որ տէրութեան միակ վաճանք-եղաւ :

ՌՈՒՍՒՅ ՊԵՏԵՐԱԶՄԸ :— Սուլ-թան Մուրափ իշխանութեան վերջին ասրինները, Ռուսք :

### ՊԱՏՄԱԿԱՆ ԸՆԹԵՐՅՈՒՄ

(1) Թուրք պատմագիր մը, (Նուսուֆ-Ֆէհմի), այս Սուլթանը կը նմանցնէ՝ անհաւատալի ցոփութեան և ծայրայեղ շոտյութեան տիպար մը եզոզ Հասմայեցի Նիղոզարալ կայսեր, որ շորս տարեկան եղած տտենը՝ Ասարոց երկրին մէջ արեգական քրմապետ եղած էր : Կայսր ըլլալէ յետոյ, իր ձին Հիւսպասու անուանեց և իր մայրն այ՝ դերձակուհիներէ կազմուած մեղադրոյթի մը նախագահ յարգեց :

Սուլթան Իպրահիմ այ, իր հազար ու մէկ արտառնցութիւններէն ի գատ, հինգ տարեկան մէկ ազջիկը Մեծ Եպարքոսին հետ ա-մուսնացուց և Տ տարեկան մէկ մանչ տղան այ Ախոյ մէջ կուսակալ կարգեց :

Սակայն Սուլթան Իպրահիմի օրով տեղի ունեցած ամէնէն ար-տակարգ և աննախընթաց դէպքը հետեւեալն է :

Կ. Պորոյ մէջ բնակող Անգլիացի փաճառականներ՝ պայտասն հաշւոյն թանկարժէք սպրանքներ տուած և հակառակ իրենց կրքի-նակի գիմուսներուն, անկարող եղած էին պահանջքներն զանձել : Այն տտեն, ճարահատ կը գիմեն իրենց գեապաններուն միջնորդութեան : Անգլիոյ, Ֆրանսոյի և Հոլանտայի գեապաններուն տուած հրահան-գին համաձայն, նաւահանգստին մէջ զանուած Եւրոպական բոլոր նաւերը կը համաթմբուին պայտասն առջեւ, և կ'սկսին իրենց մեծ կոյտներուն զազաթը ջահեր փռել, ճիշտ ինչպէս որ, ժամանակին սոփորութեան համաձայն, մասնաւոր անհատներ այ՝ Սուլթանին ան-ձամբ խնդրազիր մատուցած տտեններն, գլուխներուն վրայ ջահ մը կը բռնէին : Սուլթանին ուշադրութիւնը զէպ ի իրենց կողմը հրաւիրելու համար : Սուլթան Իպրահիմ կուտակով այս անօրինակ և տնարկու տեսարանին նպատակը, իսկոյն հրաման կ'ընէ գահացում տալ գեապա-նաց պահանջումին և արքունեաց պարտական եղած գումարը ան-միջապէս վճարել :



Տօնի Խաղախններուն օգնութեամբ՝ Ազախու բերդին տիրած էին :

Գարա Մուսթաֆա փաշա անձամբ գնաց Ռուսաց դէմ և քանի մը յարձակումներէ յետոյ՝ յաջողեցաւ Ազախն ու Կէրմանը ետ առնելով՝ Ռուսաց յառաջխաղացումն արգիլել :

3. ԿՐԵՏԷԻ ԴԷՄ ԱՌԱՋԻՆ ԱՐՇԱԽԱՆՔԸ .— Մայր թագուհին և պալատական Սուլթանուհիները — որոնց անմիջական ազդեցութեան ներքեւ կը գործէր այս ապիկար Սուլթանը — զօրաց ու ժողովրդեան ուշադրութիւնը հեռի պահելու համար իրենց պալատական ուճիրներէն և ակերթեան ոյժերը քանդող կործանարար շապուղթիւններէն, սախպեցին զանի, որպէս զի փայլուն յաղթանակով մը ժողովուրդին համակրութիւնը չա՛նի Այս նպատակաւ, Եուսուֆ փաշա ծովակալը, 1645ին, 350 նաւով գնաց Կրետէ, (որ երեք դարէ ի վեր Վեներեակեցոց ձեռքն էր), և անոր Քանիա քաղաքը առաւ, երկու ամիս պաշարելէ յետոյ :

Սակայն պատմութեան շարունակութեանը մէջ պիտի տեսնենք թէ, Օսմանցիք նիւթական ինչ աճողին զոճողութիւններով և մէկ քառորդ դարու ինչ արիւնասէղ պատերազմներէ յետոյ է որ պիտի յաջողին այս նշանաւոր կղզին վերջնականապէս ակը բլլալ :

4. Միայն թէ՛ այս աննշան յաջողութիւնը բաւական չէր պարտակելու Սուլթան Իպրահիմի գայթակղութից կեանքը, քանի որ, ներքին անխառնութիւնը օրէ օր ծաւալ կը գտնէր, քանի որ, Վենետիկցիք՝ Տալմացիան կ'աւերէին և իրենց նաւատորմը մինչեւ Տարտուսնէլ հասած էր, Խազսխները՝ Տօնը կը կողոպտէին և Ռուսք՝ դէպ ի՛Մոլտավիա կը յառաջանային Տէրութիւնը այս տաղնապալից վիճակին մասնուած էր, երբ օր մ'ալ՝ հանրային բողոքի մը մէջէն՝ Շէյխ-Իւլ-Իսլամին գեղա-

նի ազջիկը առեւանգելով՝ պալատ բերել տուաւ : Այս եղբերակի արարքը ընդհանուր զայրոյթ պատճառեց իւլէմա դասակարգին մէջ, որոնք միանալով արդէն իսկ զժգո՛ս ու վրէժխնդիր Եէնիշէրփնեբունն հեա, խուժեցին պալատ, և Սուլթանը իր բազմաթիւ սարսուղներուն հեա խեղդամահ ըրին՝ Գուշնէին մէջ (ՏՕգոստ. 1648) : Սուլթան Իպրահիմի օրով՝ սոսկալի հրդեհ մը պատահեցաւ Գուժ Գալուլի մէջ՝ ուր հազարաւոր շէնքերու հեա, այրեցաւ նաև Հայոց Պատրիքարանը :

Նոյնպէս, այս Սուլթանին օրով է որ Եւրոպական դեսպանները արտօնուեցան՝ Կ. Պոլսոյ Չէմպէրլի թաշի էլչիլէր խանէն իրենց բնակութիւնը Բերա փոխադրելու :

Սուլթան Իպրահիմի օրով կ'ապրէր ձիւննի Հօճա անուն Իւփիւրիւնի համբաւաւոր կախարգը :

## ՕՍՄ. ՊԵՏՈՒԹԵԱՆ ՎԻՃԱԿԸ՝ ԺԷ. ԴԱՐՈՒՆ

Սուլթան Իպրահիմի իշխանութեան ժամանակ, Օսմ կայսրութիւնը կը պարունակէր.

1. Եւրոպայի մէջ՝ Պալսնիան Յաւսալիդիւն, Յունաստանը, Մանախասանի մէկ մասը, Մոչսալիան, Վարսիան, Թրակիլիսիան, Պեսարսալիան, Խրիմ Թերակիդիւն, այժմեան Ռուսաստանի հար. և Արշիպեղազոսի մեծագոյն մասը :

2. Ասիական մասը կը պարունակէր՝ Փոքր Ասիան, Հայաստանը, Կովկասը, Միջագետք, Մուրիա, Պաղեստին և Արարիա :

3. Աֆրիկէի մէջ ունէր՝ Եգիպտոս, Թարսսուրուս, Թունուզ և ձեզայիտ :

Երբորբմ Սուլթան Պայազիտի, Ֆաթիհի, Եսփուզ Սուլթան Ալիմի և Մեծն Սիւլէյմանի յաղթական սուրին արդիւնքը եղող այս ընդարձակածաւալ և մեծահարուստ երկիրները, զժբախդարար, իրենց շատ մը անարժան յաջորդներուն ապկարութեանը և իրարմէ զօրաւոր թշնամիներու անվերջ արշաւանքներուն պատճառաւ՝ հետզհետէ ձեռքէ պիտի ելլէին :

Իբրև է որ Օսմանցիք մեծամեծ երկիրներու հեա՝ զանազան

ցեղէ բազմութիւ ժողովուրդներ այ նուաճեցին, սակայն զանոնք կառավարելու, շէնցնելու և սիրաշահելու մասին անտարբեր գտնուեցան: Գտնունի Սուլթան Սիւլէյմանէն յետոյ՝ իրարու յաջորդող Սուլթաններու մեծ մասին անչափահասութիւնը, պայտասն մէջ՝ մինչև իրենց գահակալութեան օրը բանտարկուած կեանքը, արտաքին աշխարհի հետ անհազորդ և պետական գործերու բոյբոյլին անգիտակ և անփորձ մնալին, Հարէմական մթնոլորտին հիւժող ու մաշեցնող սպականութեանց մէջ իրենց վարած կեանքը, վարիչ և հայրենասէր անձերու պակասը, անվերջ ապրատամբութիւններ և ներքին անխլխանութիւններ, ժամանակին հետ ընթանալու և կատարելագործուելու աննախատեսութիւնը, և վերջապէս՝ անխորհուրդ պատերազմներու և աննպատակ արշաւանքներու պատճառաւ՝ տէրութեան կենսական սլօքերուն սպառումը՝ յառաջ բերին բարոյական և նիւթական ա՛յնպիսի տկարութիւն մը՝ որով Օսմ. պետութիւնը անկարող պիտի ըլլար Հին Աշխարհի երեք ցամաքներուն վրայ տարածուած ընդարձակ կայսրութիւն մը զինուորական զօրութեամբ պահպանել:

Այս ամէնուն վրայ պէտք է աւելցնել նաև՝ կառավարութեան չտիէն աւելի կեդրոնացական գրութեանն ի զատ, ծովու վրայ վեներտեցեաց և ձէնովացիներուն, իսկ ցամաքի վրայ՝ մասնաւորապէս Գերմանական կայսրութեան դէմ մղուած կատաղի և անվերջ պայքարը՝ որու վրայ քիչ ասունէն պիտի աւելնար՝ նոր և աւելի զօրաւոր Ռուսական կայսրութեան փառասիրական սպառնալից ընթացքը, որոցմով Օսմ. պետութեան Եւրոպայի մէջ ունեցած քաղաքական ու զինուորական դիրքն ու ազդեցութիւնը մեծապէս պիտի ջլատուէր:

Եւ այս այ՛ ընական էր, քանի որ Օսմանցիք, իրրև գերագանցապէս պատերազմիկ ազգ, և իրարմէ զօրաւոր թշնամի տէրութիւններէ շրջապատուած ըլլալով հանդերձ, չի հետեւեցան, չորդեզբեցին հետզհետէ կատարելագործուող Եւրոպայի զինուորական արուեստին գաղտնիքներն ու նորութիւնները, և հետեւապէս՝ իրենց նիւթական բիրտ ոյժը տեղի պիտի տար՝ արուեստին, հաշիւին և գիտութեան հրաշալի գերազանցութիւններուն:



## ՊԱՏՄԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ՝



|                  |                                                                                                 |
|------------------|-------------------------------------------------------------------------------------------------|
| Աւիկսի           | Մեծ Եղարքոսին և Սուլ-<br>թանին ներկայացուելիք<br>զբուխիւնները ընդունող<br>սրաշանեայ             |
| Ասաս Պաշր        | Գահճապետ                                                                                        |
| Ասաս Պաշր Աղասը  | Մահալճիա բնակեցող դա-<br>տուոր                                                                  |
| Աճճի Օղլանը      | Նորազիր զինուորներ՝ որոնք<br>բանակը մանելէ առաջ,<br>Եկնիչէրիներու ձեռքով կը<br>մարզուէին        |
| Ազապ             | Ամուրի ծախային զինուոր                                                                          |
| Աղսեանը Պեքաչեան | Եկնիչէրիներու բանակին<br>սպայ                                                                   |
| Աղա Գախուսը      | Եկնիչէրիներու սեփան սրա-<br>շանատուներ (որ էր Նի-<br>մակուան Շէյխ-իւլ-Իսլա-<br>մախեան սպարանքը) |
| Ազրեճը           | Փոփ. բանակին նազոյն ան-<br>կանան նեմեղազօրքը                                                    |
| Գասրդա           | Պատերազմական նաւ                                                                                |
| Գայօն            | Պատերազմական նաւու թի-<br>ավոր                                                                  |
| Գայրեճը          | Թիւակաւոր պատերազմական<br>նաւու ծով. զինուոր                                                    |
| Գարա Գուլուգճը   | Որսող գինուոր                                                                                   |
| Գալաֆաթ          | Եկնիչէրի Ազասիին գլխա-<br>նոցը                                                                  |
| Գուլ Բեքսիւսասը  | Եկնիչէրի Ազասիին երկրորդ զք                                                                     |

- Գօրուճը  
 Գուչ Օղլու  
 Եանա  
 Եանագ  
 Եօլ Հասկիսի  
 Եկնիչերի Բեարիսի  
 Զադարաճը  
 Էշֆինճի  
 Էսկի Սարայ  
 Թայիսնսնեկճի  
 Թիւնարլը Սիսիանի  
 Թուրնաճը  
 Թօփճը Պաշը  
 Իչ Ադասը  
 Իսրաւսոլ Ադասը  
 Լալա
- Անտառներու և ջրուղիներու  
 չակոզ Եէնիչէրի  
 Գաղանի ոստիկան  
 Օսմ. բանակին հնազոյն հե-  
 տեւակագօրքը  
 Եէնիչէրիներու Աղային թիկ-  
 նապահ և բերդապահ զի-  
 նուոր  
 Տեսակ մը թաղապետական  
 քննիչ  
 Արտաքին գործոց խորհրդ-  
 դական  
 Սուլթանին որսի շուներուն  
 պահապան  
 Սչթոչակաւոր զինուորական  
 Արդի Պատերազմական պաշ-  
 տօնատունը  
 Եէնիչէրիներու Ծճրդ վաշտը  
 որ մարզիչի դեր կը կա-  
 տարէր  
 Գաւառային զինուոր, Ժան-  
 տարմա  
 Աօրոյ ու Եւրոպայի գաւառ-  
 ներէն՝ Քրիստոնեայ պա-  
 տանիներ հաւաքելով՝ բա-  
 նակը մայնոզ պաշտօնեայ  
 Թնդանօթարանի վերատե-  
 սուչ  
 Բ. Դրան բարանապետ  
 Աճէմի Օղլաններու Հրամա-  
 նատար  
 Սուլթանին Միւսահիպը . որ

Հասկի Աղասը  
Ճեպնանկ Զօրպանըսը  
Միւնար Պաշը

Ուրուփհի  
Չաշըզ  
Չափուշ  
Չափուշ Պաշը  
Չըզնու  
Չուհասար

Չափուշ Պաշը Աղասը

Չօրպանը

Չըպրագ Չափուշ Վիաշա

Պաշ Չափուշ

Պոհնիք Պաշը

Պօսրանը

անոր մանկութեանը խնամատար կ'ըլլար

Պալատական լրարեր  
Վառօղարանի Վերասեսուշ  
Նաֆա'ա Նազըրը, Պինա է-  
մինի

Թռչակարաշխ Եէնիշէրի  
Չինուորութենէ վտարուած  
Հիւրամեծար  
Արքունեաց Սենեկապետ  
Պալատէն չըրախ ելած  
Սպասաւոր, թիկնապահ,  
բարապան

Սուլթանին անձնական բանակին հրամանատար  
Նախապէս՝ զինուորական  
խոհանոցի պաշտօնեայ, ապա,  
Եէնիշէրիներու սպայ,  
Չինուորական հրամանատար,  
որ ունէր գնդապետի աստիճան

Մովալլին նախարարին թիկնապահ

Մապէյն միւշիրի, Արքունեաց հրամանատար

Գողեր, հրձիգներ հետապընդող ոստիկան

Պոլսոյ և Էտիրնէի արքունական պարտէզներուն պարտիզպան, որ միանգամայն դահճի պաշտօնալ կը կատարէին

Պօսթանճը Պաշը

Պեյլիֆճի Աղա

Պեյլիֆ Թեզեթեհճի եփեհեհի

Պաշ Չուհասուր

Պեյլիֆ Աղասը

Պողազ Մուհաֆըզը

Սահիպի Տեփեթ

Սագաղը Օղու

Սեյիտ Աղասը

Սեկյան

Սեկյան Պաշը

Սեյիտ

Սեհաս Գոյու

Վեթիկի էմինի

Տաշ Գըլըճ

Տիվանը Հիւսայուն Հօնասը

Տեփեթսար

Տեփեթ Բեթիլսասը կամ

Գայնագանը

Բեյիս-իւլ-Բիթթայ

Ոսթիկանապետ

Դիւանապետ

Սուլթանին անձնական երկ-  
րորդ քարտուղար

Սուլթանին Սենեկապետ

Գումարտակի հրամանատար

Սեւ Մովու նեղուցին բեր-  
դապահ զինուորներ

Մեծ Եպարքոս

Հիւրամեծար

Վէզիրները բարեւոյ պաշ-  
տօնեայՇուներու պահապան և դար-  
մանող, և Որսորդ գուն-  
դի սպայՆախ՝ Եէնիչէրիներու Աղա-  
յին օգնական, ապա, ոս-  
թիկանապետՍէկյաններու հետ աստի-  
ճանակից էին, յետոյ այս  
անունը տրուեցաւ ոստի-  
կան զինուորներու

Սահմանապահ զինուոր

Տէֆթէրանէի վրեհատեսուչ

Խիզախ, աներկիւղ հերոս

Բանակի Քարտուղար-Հա-  
մարակալ

Ելմտական նախարար

Եպարքոսական Տեղակալ

Արտաքին Գործոց նախա-  
րար

Քիյի Քուկսարը

Քերխիւսա ֆաքիպի


Օրքա

Օրուրագ . Օրուրագը

Օնագ

Քաղաքական Դիւանի քար-  
տուղարԵզարքոսական Տեղակալի  
քարտուղար .

Եէնիչէրիներու վաչա

Հանգստեան կոչուած ղին-  
ուորԵէնիչէրիներու խումբ . կա-  
յան



## ՍՈՒԼՔԱՆ ՄԷՀԷՄՍԷՏ Դ. (Ա.վեր)

(Հիմերեթի՝ 1058—1099.— Քս.ի 1649—1687)



1. Ներքին խռովութիւններ.— 2. Քեօփուլիւ Մէհմէտ փաշայի գործունէութիւնը.— 3. Ֆաղլը Ահմէտ փաշա.— Աւստրիական պատերազմ.— 4. Կրեաէի պաշարումն ու վերջնական առումը.— 5. Աւստրիական երկրորդ պատերազմ.— 6. Գարա-Մուսթաֆա փաշա.— Վիեննայի պաշարումը:

1. Սուլթան Իպրահիմ իր բոլոր եղբայրներն ալ սպաննած ըլլալով՝ միակ ժառանգորդ կը մնար իր 7 տարեկան Մեհմէտին որ մինչեւ իր չափահասութիւնը՝ մեծ մօրը, Մանսիկյեք Սուլթանունուն խնամակալութեան ներքեւ գտնուեցաւ:

Այս Սուլթանունունն և նորասի թագաւորին բուն մօրը միջեւ տեղի ունեցած նախանձը՝ պատճառ եղաւ քաղաքային նոր խռովութեան մը՝ որու մէջ Մահմէտ-

քէր և իր համախոհ պալատականները ձերբակալուելով՝ գլխատուեցան :

Միայն թէ՛ ներքին և արտաքին անիշխանութեան մատնուած անբուխըն մը կարող չէին վարել ո՛չ անփորձ մայր թագուհին և ոչ ալ անչափահաս թագաւոր մը : Ահա այն ատեն է որ, Մայր Սուլթանուհին՝ Մեծ Եպարքոսութեան պաշտօնը կը յանձնէ Քէօփրիլիւններու ցեղէն 72 տարեկան Մեհեմեթ փաշայի, որ անկախօրէն գործելու և իր որոշումները անգառնալի կերպով գործադրելու համար՝ օրուան Միւֆթիէն նախապէս զերկա մը պահանջեց և ստացաւ :



Քէօփրիլիւ Մեհեմեթ փաշա քին վրայ՝ նորանոր ամբուլթիւններով և մնայուն բանակներով՝ Ռուսիոյ, Աւստրիոյ և Վենետիկի դէմ՝ Օսմ. անբուլթեան սահմանները պաշտպանեց :

Սուլթան Մէհեմեթի իշխանութեան այս [առաջին շրջանին մէջ է որ Օսմանցիք՝ Կրէտէի Քանկիա մայրաքաղաքին, Ռուսական՝ Ուֆրանիա, Փոսալիա և Վոլնիկիա գաւառներուն կը տիրեն, Լէհաստանը կը խոնարհեցնեն և Աւստրիոյ հետ կը կնքեն պատուաւոր հաշտութիւն մը :

1. Նորընտիր Վէզիրին առաջին գործը եղաւ՝ երկրին կարգն ու անգորրութիւնը խանգարող գլխաւոր պարագլուխները մէջտեղէն բնաջինջ ընել : Ապա զօրաւոր տորմիզով մը գնաց Վենետիկեցիներուն դէմ և Չանաք Քալէի նեղուցին բերանը անոնց յաղթելով՝ զրաւուած Լեւնոս և Թեհեսոս կղզիները ետ առաւ :

Վերջապէս, Սուլթան Մէհմէտ, Մուսուլիոյ, Քրանսիւլվանիոյ և Վերին Հունգարիոյ Քրիստոնէայ իշխաններուն թագեր կը բաշխէ :

Քէօփրիւլի վէզիրը՝ տէրութեան վարչական մեքենան կանոնաւորելու նպատակաւ՝ կարող և արժանաւոր անձեր պաշտօնի գլուխ դրաւ, երկրին ելմտական վիճակը կանոնաւորեց, պետական, նա մանաւանդ՝ պալատական շնայլ և անհաշիւ ծախքերուն մէջ վերջին ծայր ինայոզութիւն մտցուց, գաւառներու մէջ ապստամբութեան բոյները քանդեց և, թէ՛ Մայրաքաղաքին ու թէ՛ գաւառաց մէջ նասարակաց օգտակար շէնքեր հիմնեց :

Մէկ խօսքով, ալեւոր վէզիրը իր հինգ տարուան պաշտօնավարութեան անձուկ շրջանին մէջ՝ իր բեղմնաւոր գործունէութեամբը՝ տէրութիւնը անիշխանական վիճակէ մը ազատելէ յետոյ, որպէս զի իր արդիւնաւորած գործը իրեն նեա չմեռնի, իր կենդանութեանն իսկ իրեն յաջորդ կարգեց Ֆազլը Անսէ փաշա 26 տարեկան որդին՝ առանց իր Վեհապետին հաւանութեանը պէտք տեսնելու : Այս վերջին պարագան բացորոշ կերպով ցոյց կուտայ թէ՛ Քէօփրիւլիները ո՛ր աստիճանսահման վստահութիւն կը վայելէին իրենց ժամանակակից Սուլթաններէն և թէ՛ որքան գնահատուած էին՝ ազգին ու տէրութեան իրենց մատուցած թանկագին ծառայութիւններով (1661) :



Քէօփրիւլի Զաք  
Ֆազլը Անսէ փաշա

Մէհէմէտ փաշա շատ նպատաւոր կարգադրութիւն մ'ըրած էր իրեն յաջորդ կարգելով իր Ահմէտ որդին, իրրեւ միակ անձը՝ իր սկսած գործը շարունակելու կարող :

Աւստրիոյ Լէոօրլտ Ա. կայսրը, թրանսիլվանիոյ վրայ իր գերիշխանութիւնը վերստին ձեռք ձգելու նպատակաւ՝ պատերազմի ելաւ : Երիտասարդ Վէզիրը իսկոյն 200,000 զօրքով անցաւ Եւրոպա և Մօրավիան, Սիլէզիան ու Մաճառիստանը իր զինուոց : առջեւ խոնարհեցուց : Սակայն յաջորդ տարին, վէզիր Ահմէտ փաշա, Մաճառիստանի Ռանապ քաղաքին Սեն-Կօթառ աւանին մէջ՝ ճակատեցաւ Քրիստոնէից դաշնակից բանակին դէմ՝ որու կը հրամայէր Մօնրեֆուրոյի համբաււոր զօրապետը՝ իրեն օգնական ունենալով նաեւ 6000 Ֆրանսացիներու բանակ մը : Երկու կողմէն ալ հիանալի քաջութեամբ պատերազմեցան թէեւ, բայց վերջապէս՝ Քրիստոնէից բանակը՝ իր կարգապահութեան ոգիին և զինուորական կատարելութեանը շնորհիւ՝ յաղթանակը շահեցաւ : Այս ճակատամարտին մէջ՝ Օսմանցիք 25,000է աւելի մարդ կորուսին, որով Վէզիրը ստիպուեցաւ Աւստրիոյ կայսեր հետ 20 տարուան անուանական խաղաղութեան դաշնագիր մը կնքել Վասլարի մէջ և Աւստրիոյ փոխանցել Մաճառիստանի գերիշխանութիւնը (1664) :

4. ԿՐԵՏԷԻ ԱՌՈՒՄԸ. — Օսմ. զինուոց այս անյաջողութիւնը դարմանելու և 20 տարիէ ի վեր շարունակեող Կրետէի պաշարման վախճան մը տալու նպատակաւ, Քէօփրիւլիւ վէզիրը 100,000 զօրքով և Գարջան փաշա ծովակալին հետ ահագին տորմիզով մը գնաց Կրետէ : Պատմութեան մէջ չէ տեսնուած կղզիի մը այնքան երկար ատեն պաշարում և այնքան մարդկային արեան հոսում, ինչ որ եղած է Կրետէի համար : Պաշարողներն ու պաշարեալք սոսկալի յամառութեամբ և գերմարդկային քաջութեամբ կռուեցան երկու կողմէն : Սակայն

Օսմանեան հրետանին գերազանցութիւնը, կղզիին ամրոցներուն հիմն ի վեր կործանումը ա՛յ եւս անկարելի կը դարձնէին պաշարեալներուն բոլոր յուսահատական ճիգերը, այնպէս որ, Վենետիկեցիք, իրենց քաջարի հրամանատար Մօրօսինիյի միջոցաւ յանձն առին Քանտիան Օսմանցւոց յանձնել, ու երեք շաբաթուան մէջ իրենց զոյքերն ու թանկագին իրեղէնները միասին առնելով՝ կղզիէն մեկնիլ։ Այս պայմանը վեհանձնութեամբ յարգեց Ամէտ փաշա Վէզիրը և մեծարանքներով ընդունեց հայրենասէր և իրեն արժանաւոր հակառակորդ Մօրօսինի զօրապետը։

Այսպէս, 1669ին, Օսմանցիներուն ձեռքը կ'անցնէր այս նշանաւոր ու փորձանաւոր կղզին՝ որու ծովափանցը վրայ քառորդ դարէ մը ի վեր՝ 150,000է աւելի մարդկային կեանքեր զոհուած էին։

Կը պատմեն թէ երբ Օսմանցիք առաջին անգամ Քանտիա քաղաքը ոտք կոխեցին, բնակիչ ըլլալով՝ գտան միայն երեք Յոյն և երեք Հրեայ, իսկ քաղաքը կը ներկայացնէր մարդկային դիակներու և աւերակաց լեռնակոյտերու անծայրածիր և տխուր տեսարան մը։ Եսպարժոսը ամբողջ երկու տարի մնաց այս նորստաց կղզին և աւերակ դարձած քաղաքներուն վերաշինութեանը ինքնանձամբ հսկեց։

5. ԵՒՐՈՊԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐ.— Ուրբանիա գաւառին Սաղախ բնակիչները, որոնք միշտ Ռուսաց դէմ թշնամական ընթացք մը ունեցած էին, Լէհերուն հարստահարութեանց դէմ Օսմ. Սուլթանին պաշտպանութիւնը լանլրեցին։ Արդէն վէզիրը, Լէհաստանի մէջ Օսմ. ազդեցութիւնը վտանգուած տեսնելով՝ այս պարագան յարմար առիթ սեպեց և 1672ին պատերազմի ձեռնարկելով՝ տիրեց Կամենից բերդաքաղաքին ու յաջորդական յաղթութիւններով առաջ քաշելու վրայ

էր, երբ ժան-Սօպիէսի Լե՛ն անուանի դիւցազնը կասեցուց թրքաց յառաջխաղացումը և 1676ին կնքուած դաշնագրութեան ոյժով՝ Ուքրանիա և Բօտոլիա գաւառները կը մտնէին ուղղակի Օսմ. պաշտպանութեան ներքեւ :

Այս դէպքէն քիչ յետոյ, 41 տարեկան հասակին մէջ մնաւ Ֆաղլը Ա՛նէա փաշան, 15 տարի մեծ Եպարքոսութեան պաշտօնը արդիւնաւոր կերպով վարելէ յետոյ : Իր վազահաս մահը ճշմարիտ աղէտ մը եղաւ Օսմ. պետութեան համար, ճի՛շտ այնպիսի ժամանակ մը, երբ



Գարա Մուսրաբա փաշա



Սօպիէսի

նման հայրենասէր, անշահախնդիր և փորձառու վարչագէտներու անհրաժեշտ պէտք ունէր տէրութիւնը :

ՎԻԷՆՆԱՅԻ ՊԱՇԱՐՈՒՄԸ .— Սուլթան Մէհէմմէա Դ. որ տէրութեան գործերէն աւելի իր անձնական հաճոյքով և մասնաւորապէս որսորդութեամբ կ'զբաղէր, առանց անդրադառնալու այն անդարմանելի կորուստին զոր Օսմ. պետութիւնը կրած էր Ֆաղլը փաշայի մահով, և փոխանակ անոր զարգացած Մուսթաֆա եղբորը, Մեծ Եպարքոսութեան պաշտօնը յանձնեց՝ բացարձակա-

պէս տգէտ, կոպիտ, յանձապատան և միայն իր վաշխառութեամբը դիրք ու անուն շինած Գարա-Մուսրաֆա փաշա անուն արարածի մը :

Այս միջոցին, Մաճառխատանի Թեֆեղի իշխանը՝ Աւրստրիոյ Լէոօրցոյ կայսեր սանձգութիւններուն դէմ իր հայրենիքը պաշտպանելու համար, դիմեց Օսմ. Սուլթանին և անոր օժանդակութիւնը խնդրեց : Մնափառ Վէզիրը, Սուլթանին հետ համախորհուրդ, արհամարհելով 1004ին կնքուած խաղաղութեան դաշնագիրը, 200,000 զօրքով ճամբայ ելաւ՝ ուղղակի երթալ Վիէննան պաշարելու համար : Փորձ զօրականներ խորհուրդ



#### Վիեննայի երկրորդ պաշարումը

տուին՝ Քէօփրիւլիւի այս անարժան յաջորդին, որպէս զի քաղ առ քաղ յառաջանայ և իր ետեւը թշնամի չը թողու, բայց ընդունայն : Օսմ. բանակը 1683 Յուլիս 14ին վերջապէս պաշարեց Վիէննան՝ ուսկից կայսրը իր աւագանիին հետ խոյս տուած էր արդէն : Օսմանցիք, քաղաքը հրեղէն շղթայի մը մէջ առած, արտաքին պարիսպները քանդած և տասնհազար կատաղի յարձակումներով՝ հազիւ 10,000 հոգի մնացած պաշարեալները ծայրագոյն յուսահատութեան մասնած էին : Կը մնար վերջին

ու վճռական յարձակում մըն ալ գործելով՝ քաղաքին տիրանալ, ինչ որ խորհուրդ կուտային վէզիրին՝ որպէս զի անմիջապէս գործադրէ: Սակայն յանձնապատաստան վէզիրը, հակառակ իր հսկայ ոյժին, հակառակ՝ դիմադրելու անկարողութեան մտանուած Մայրաքաղաքի մը հանդէպ՝ ա՛յնքան դանդաղ վարուեցաւ, զինուորական արուեստին դէմ ա՛յնքան շարաշար մեղանչեց՝ որոցմէ փութաց օգտուիլ Լէոբոլտ և անմիջապէս՝ Լէհաց անուանի թագաւոր Սօպիէսի օգնութիւնը խնդրեց: Այս վերջինը (հակառակ Յրանսայի թագաւոր Լուի ԺԴ-ի խորհուրդին, որ կ՛ուզէր Աւստրիոյ տունը և ազդեցութիւնը տկարացնել), օգնութեան փութաց, Լօրէնի դուքսին ընկերակցութեամբ: Լէհ զիւցազնը սոսկալի կատաղութեամբ մը յանկարծակիի բերաւ թուրքերը, նախ՝ ճակատ առ ճակատ զարկաւ, յետոյ ցրուած ու քայքայուած բանակը պաշարելով՝ ահուկի կոտորած մը տուաւ: Այս միջոցին՝ առաջին խոյս տուողը եղաւ նոյն ինքն Գարա Մուսթաֆա փաշա, անգլուխ ձգելով բանակը: Սօպիէսքի, երկրորդ անգամ մըն ալ Դանուբի մօտ զարկաւ թուրքերը և տիրեց Կրան քաղաքին: Չախաւեր վէզիրը այս ամէն դժբախտութեանց իրրեւ պատճառ իր զօրավարներն ամբաստանելով՝ անոնցմէ շատին գլուխը կերաւ:

Օսմանցիք թշնամիին ձեռքը թողուցին 300 թնդանօթ, բազմաթիւ դրօշ և ահագին քանակութեամբ պաշար և ռազմամթերք: Այսպէս, շնորհիւ Լէհաստանի և անոր զիւցազն թագաւորին, Աւստրիական կայսրութիւնը փրկուած էր:

Սակայն, նշանակալից այս դէպքէն դար մը յետոյ, զարմանքով ու զայրոյթով պիտի տեսնենք թէ, Աւրստրիական կայսրութիւնը ո՛րքան անլուր ապերախտութեամբ մը վարուեցաւ՝ իր պատիւն ու հայրենիքը՝ իր արեան գինովը փրկող Ժան-Սօպիէսքիի հայրենակից Լէ-



հերուն հետ, և թէ ինչպէս՝ Ռուսիոյ և Բրուսիոյ հետ միարանելով՝ պատան պատան բրաւ անբախդ Լէհաստանը և անոր քաղաքական գոյութիւնը սրբեց, բնաջինջ բրաւ Եւրոպայի քարտէսէն:

Օսմ. զինուց այս անյաջողութենէն քաջալերուած, Վենետիկեցիք կ'արշաւեն Տալմացիա և ապա՝ Թուրքերը Պելոպոնեսէն կը վանեն: 1686ին, Աւստրիա վերջնապէս կը փրէր Պուտա Մայրաքաղաքին: Իսկ յաջորդ տարին, կայսերականները՝ Օսմանցիներուն դէմ Մոհացի պատմական դաշտին մէջ կը շահին վճռական յաղթութիւն մը (1 Օգոստ. 1687) և կը նուաճեն մեծ մասը այն գաւառներուն՝ զորս Մաճառները կորուսեր էին 1526ին՝ Փանուռի Սուլթան Սիւլէյման Ա. ի օրով:

Գարա Սուլթանֆա փաշա վէզիրը, Վիէնայէ Պոլիս վերադարձին, արդէն գործած իր ձախուերութիւնը քաւած էր՝ գլուխը վրայ տալով: Իսկ անոր անդամանելի սխալներուն իբր բնական հետեւանք եզող այս վերջին մեծամեծ կորուստները՝ տեղի տուին քաղաքային սոսկալի խռովութեան մը, որով Սուլթան Մէհէմէտ Իւլէմաներու որոշմամբ ու Եէնիչերիներու ձեռքով զահրնկէց եղաւ (1687):

### ՊԱՏՄԱԿԱՆ ԸՆԹԵՐՅՈՒՄ

Պոլսոյ ամենամեծ հրդեհներէն մէկը՝ այս Սուլթանին օրով պատահած է: 1659ին հրդեհ ծագեցաւ Այազմա Գափուսիէն՝ և տարածուեցաւ մինչեւ Սամարիա, պետական և հասարակաց անթիւ անհամար շէնքեր, մզկիթներ, եկեղեցիներ, պալատներ ևն. լսփելով և մոխրակոյտի վերածելով քաղաքին ամենէն շէն ու բազմամարդ առարձանները: Այս ազէտին զոհ գացին նաեւ, 40,000է աւելի անձինք:

Նոյնպէս, այս Սուլթանին օրով կ'ապրէր Քեսարիս Զեյհայի Համի Խալիֆի անուն հռչակաւոր Պատմագիր ու Աշխարհագիրը որ բազմահատոր և հմտակց աշխատասիրութիւններ թողած է:

Սուլթան Մէհէմէտ Գ. ի բազմաթիւ վեզիրներուն մէջ պէտք է յիշել նաեւ Էրմեկի Սիւլէյման փաշա անուն Հայագրի վեզիրը:

## ՍՈՒԼԹԱՆ ՍԻԻԼԷՅՍԱՆ Բ.

(Հիմերեփի՝ 1099—1102.— Քս.ի 1876—1691)



1. Ներքին խռովութիւններ.— 2. Եւրոպական պատերազմներ.—  
3. Քէօփրիւլի Մուսթաֆա փաշա.— 4. Աւստրիոյ դէմ կրկին պատերազմներ.— 5. Թէքէլի Մաճառ իշխանը:

Սուլթան Մէհմէտ Դ-ի յաջորդեց իր եղբայրը ՍիիլէյսՍԱՆ Բ. որ պալատին մէջ 46 տարի շարունակ կրօնական և իրաւարանական ուսումներու հետեւած ըլլալով՝ խաղաղ կեանք մը վարած և բոլորովին անկարող և անընդունակ էր տէրութեան մը ղէկը ստանձնելու: Արդէն ինքն ալ այս ճշմարտութեան համոզուած ըլլալով՝ գրեթէ բոնի յանձն առաւ ելլել այն գահը՝ զոր Տանջանարան կ'անուանէր:

Ինչպէս տեսանք, նախորդ Սուլթանին օրով տեղի ունեցած քաղաքային վերջին պատերազմը տակաւին կը

շարունակուէր: Ե՛կնիչէրիներն ու Սիփահիփ<sup>(1)</sup> իրենց անլուր վայրագութիւններով, ո՛չ հասարակ ժողովուրդին և ոչ ալ տէրութեան մեծամեծներուն խնայելով՝ 20000 անմեղներու արիւնով ամբողջ թաղեր ներհնցին: Վերջապէս, Իւլէմա դասակարգը, միանալով ժողովուրդին հետ, Սանճագը Շերիփը պարզեցին և կատաղի-



Ե՛կնիչէի Աղասի

Ե՛կնիչէրիներուն փառաւոր ջարդ մը տալով՝ ստիպեցին հնազանդութիւն յայտնելու:

2. ԱՐՏԱՒԻՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐ. — Օսմ. պետութեան դարաւոր և ուխտեալ հակառակորդը՝ Աւստրիա, Կ. Պոլսոյ և գաւառներու մէջ տիրող անիշխանութիւնը նպաստաւոր առիթ մը սեպելով՝ կը գրաւէ Պոսնան:

(1) Սիփահիփ՝ Պարսկերէն էսպ բառէն ելած է և կը նշանակէ Զի, որով շինուած են՝ Սպայ, Սպարապիտ, Ասպարիզ, Ասպասակ ևն.: Ե՛կնիչէրիներուն հեծեկազօրքն ալ՝ այս իմաստով կը կոչուէր Սիփահիփ:


Հէրսէքը, Սերպիան, Հունգարիոյ մէկ մասը և մինչև Իւսկիււպ յառաջանալով՝ Մայրաքաղաքին կ'սպառնայ, Իսկ Վենետկեցիք, Կրետէի կորուստը դարձանելու համար՝ Սէլանիկն ու Նեկորոսնա կղզին պաշարելով՝ Պելուպոնէսի ծովնդերեայ քանի մը քաղաքներուն կը տիրեն: Սակայն, Թուրքերուն դաշնակից Թաթարներն ալ՝ միւս կողմանէ՝ Բերեխոքի պարանոցին վրայ՝ 200,000 Ռուսաց՝ դէպ ի Խրիմ արշաւանքը ետ կը մղէին: Սուլթան Սիւլէյման ուզեց Լէոքուա կայսեր հետ հաշտութիւն կնքել, բայց մերժուելով՝ պատերազմը ա'լ աւելի սաստկութեամբ շարունակեց: Օսմանցիք՝ Բհէկպ փաշա անուն ականաւոր հրամանատարի մը պատճառաւ՝ նորանոր պարտութիւններու կը մատնուին և կայսերականք կը տիրեն Նիշի և Պէլկրասի:

3. Քէթֆրիիլէի ՄՈՒՍԹԱՅԱ ՓԱՇԱ. — Ահաւասիկ, իրարմէ ազնտալի և իրարմէ անդարձանելի այս կորուստներուն առջև ճարահատ, Սուլթան Սիւլէյման կ'ստիպուի աքսորէ ետ կանչել Քէօփրիւլիւ Ազատարար Մեծ Գերդաստանին շառաւիղը, նախորդ Ֆազլը Ահմէտ փաշայի եղբայրը Մուսքափա փաշան՝ որու կը յանձնէ Մեծ Եպարքոսութեան պաշտօնը: Այս նշանաւոր անձին առաջին գործը կ'ըլլայ՝ ներքին խռովութիւններուն վերջ տալ, վարչական ու տնտեսական վերանորոգումներ ի գործ դնել, երկրին վաճառականութեան զարգացման համար՝ աննախընթաց դիւրութիւններ ընծայել, բռնուսը նախարարներու յափշտակած պետական կալուածներն ու դրամները յարքունիս գրաւել, զօրաց յեանեալ թոշակները վճարել, մասնաւորապէս՝ հպատակ Քրիստոնէից վիճակը բարելաւելով՝ բռնաբարուած սուսնձնաշնորհումները վերահաստատել և վերջապէս՝ ապօրէն տուրքերը ջնջելով՝ բարեկարգութեան նոր թուական մը կը բանայ:

#### 4. ԱԻՍՏՐԻՈՅ ԴԷՄ ԵՐԿՐՈՐԴ ՊԱՏԵՐԱԶՄ .—

Մուսթաֆա փաշա քիչ ժամանակի մէջ այս ամէն կարգադրութիւններն ի գլուխ հանելէ, երկիրը ներքնապէս ապահովելէ և բանակը աղէկ մը կազմակերպելէ յետոյ, ճամբայ կ'ելլէ դէպ ի Մաճառխատան և միանալով Թէֆէլի Մաճառ գիւցազնին հետ, (որ Թրքաց հետ դաշնակից և իր հայրենիքին անկախութեանը համար կը պայքարէր Աւստրիոյ տան դէմ), մէկ ամուսն մէջ կայսերականներէն ետ կ'ստանէ Նիշ, Վիտին, Սէմէնտրիա և Պելկրատ քաղաքները: Ապա օգնութեան կը փութայ Թմշվարի մէջ պաշարուած իր հայրենակից Թուրքերուն զորս ազատելով՝ հալածական կը վարէ պաշարող թշնամին: Իսկ Թէֆէլի, Թրանսիլվանիոյ մէջ Աւստրիական ստուար բանակ մը ջախջախելով՝ անոր Հօսիւր զօրապետն ալ դերի կը բռնէր:

Այս փայլուն յաղթութիւններէ յետոյ, մեծանուն վէզիրը վերադարձաւ 'Պոլիս' ուր դէպ ի Եւրոպա մեծ արշաւանքի մը սպարաստութիւններով զբաղելու վրայ էր, կրր Սուլթանին մահը ամէն հաշիւ վեր ի վայր յեղաշրջեց:



## ՍՈՒԼԹԱՆ ԱԶՄԷՏ Բ.

(Հիմնրէքի՝ 1102—1106 .— Քս .ի 1691—1695)



1. Սարանջամէնի ճակատամարտը.— 2. Քէօփրիւլի վեզիրին-  
մահը.— Ներքին վիճակ:

Սուլթան Սիւլէյման Բ .ի յաջորդեց Ա.ՀՄԷՏ Բ . որ  
իր նախորդին նման ապրիկար՝ և ազդեցիկ պալատա-  
կաններու ձեռքը խաղալիկ դարձաւ: Քէօփրիւլի վե-  
զիրին վարած բացարձակ իշխանութիւնը և ստացած  
անսահման ազդեցութիւնը՝ նախանձը շարժած էին խել-  
մը զեղծարար ու բռնաւոր փաշաներու՝ որոնք զանի-  
իրբեւ Սուլթանին կեանքին դաւադիր ամբաստանելով՝  
յաջողեցան մահուան վճիռ ձեռք բերել: Մերունի վե-  
զիրը գրեթէ հրաշքով ազատեցաւ այս ոճրագործներուն  
ձեռքէն և դարձեալ իր գործը շարունակեց:

1. ՍՍ.Ա.Ն.ՔԱՄԷՆԻ ՃԱԿԱՍՏԱՄԱՐՏԸ .— Մուսթա-

Ֆա փաշա, 1691ին, կրկին, մեծ բանակով մը էտիրնէէն ճամբայ ելաւ դէպ ի Աւստրիա և թշնամին գտաւ Քարլովից քաղաքին մօտ Սալսնիֆալեկն աւանին մէջ: Աւստրիական բանակին կը նրամայէր՝ անուանի ռազմազէտ եւզինեոս իշխան, որ իր դէմ ունէր արժանաւոր հօկաւակորդ մը: Սակայն Քէօփրիւլիւ, որ հոգին էր իր բանակին և պարտաւոր էր աւելի զգոյշ ընթացք մը բռնել, անձամբ կը խիզախէ թշնամին դէմ և ճի՛շտ պատերազմի բախդը վճռուելու ճգնաժամին մէջ՝ գնդակահար կ'սպաննուի:

2. Իր անակնկալ մահը վհատութիւն կ'ազդէ բովանդակ բանակին, որով Օսմանցիք՝ անգլուխ և հալածական, 28,000 զինուոր, 150 թէնդանօթ, բազմաթիւ դրօշ և ահագին պաշար վրայ տալով՝ ցիր ու ցան կը վերադառնան Պոլիս (1691 Օգոստ. 18): Վենետկեցիներն ալ այս առիթէն օգուտ քաղելով՝ Քիոպի կը տիրեն:

Այս նշանաւոր վէզիրին անակնկալ մահը ամէնէն աւելի ողբացին Քրիստոնեայ հպատակները՝ որոց մասին իր ցոյց տուած ազատամիտ ոգին և վեհանձն պաշտպանութիւնը երկար տարիներ անմոռաց մնացին իրենց սրտերուն մէջ:

3. Քէօփրիւլիւի յաջորդող Հանի Ալի և Սիւրեկլի Ալի փաշա ապիկար վէզիրները՝ բացարձակապէս անկարող եղան տէրութեան ենթարկուած վիճակին դարման մը տանիլ: Սուլթան Ահմէտ Բ. ալ, թէպէտ ուշ, բայց վերջապէս զգաց թէ Քէօփրիւլիւի մահով տէրութիւնը ինչ անփոխարինելի ոյժէ մը զրկուած էր: Այս տխուր գաղափարով, շարունակ երեք տարի ցաւագին կեանք մը քաշքշեց և մեռաւ 4 տարի թաղաւորելէ յետոյ:

Իր սրով, 1693ին պատահած է Ճիպաղլի մեծ նրդեհը, որ քանի մը թեւերու բաժնուելով՝ Ուն Գարան, Սիւլէյմանիէ և Աթ Փազար ընդարձակ ու բազմամարդ թաղերը ամբողջովին մոխիր դարձուց:

## ՍՈՒԼԹԱՆ ՄՈՒՍԹԱՅԱ Բ.

(Հիմնեքի՝ 1106—1115 .— Քս.ի 1695—1703)



1. Քիոսի վերստին գրաւումը.— 2. Սուլթանին առաջին յաղթութիւնը Աւստրիոյ դէմ.— 3. Վարսափնի ճակատամարտը.— 4. Քարլովիցի գաշնագրութիւնը.— 5. Ամուճա Զատե՛՛՛ ֆէօփրիւլիւ Հիւսէյն փաշա վեզիրը.— 6. Սուլթան Մուսթաֆայի գահընկէցութիւնը

1. Սուլթան Աւմէա Բ. ի յաջորդեց՝ Մէհէմմէտ Դ. ի որդին ՄՈՒՍԹԱՅԱ Բ. որու իշխանութեան առաջին երկու տարիները Օսմ. զինուց յաջողութեան նպաստաւոր եղան :

Սուլթան Մուսթաֆա՝ Սիւրմէլի Ալի փաշայի տեղ էրնաւ Մեհմէմէտէ փաշան Մեծ Եպարքոս և իր ուսուցիչ Ֆիյզուլլան էֆէնային ալ Շէյխ-իւլ-Իսլամ անուանեց՝ որոնք որ և է արժանիքէ զուրկ, այլ միմիայն իր պալատական



զուարճութիւններուն նախկին ընկերներն եղած ըլլալու առաւելութիւնն ունէին :

Մէջ 20-ՄՕՌԹՕ .— Սուլթան Մուսթաֆայի զահակալութենէն քիչ մը յետոյ, Թունուզցի նախկին ծովահէն և խլամացած Մեհմետ-Մոսթո Հիւսէյին փաշա ծովակալը՝ Արշիպեղազոսի մէջ Վենետիկեցիներուն նաւատորմը երկու անգամ զարնելէ յետոյ, դնաց պաշարմամբ ետ առաւ Քիոս կղզին՝ որու Յոյն բնակիչները՝ Վենետիկեցիներուն կրօնական հալածանքներէն ձանձրացած ըլլալով՝ սիրայօժար օգնեցին Օսմանցոց և ընդունեցին անոնց հոգատակիլ : Տի՛շդ ինչպէս որ միեւնոյն ընթացքին հետեւած էին Պելոպոնէսի Յոյները՝ միեւնոյն պատճառներով և Քէօփրիւլիւ Փաղըր Մուսթաֆա փաշա Եպարքոսին լայնախո՛ք քաղաքականութեանը շնորհիւ :

2. Սուլթան Մուսթաֆա այս առաջին յաջողութենէն քաջալերուած, յաջորդ տարին ինքն անձամբ 50,000 զօրքով անցաւ Դանուբը և նախ՝ Լիքրա ու Թիրբալ բերդերուն սիրելով՝ կայսերականաց դէմ մեծ յաղթութիւն մը տարաւ և իրենց Վեքերանի զօրապետն ալ գերի բռնելով զլխատեց : Հակառակ իրեն արուած խորհուրդներուն, որպէս զի միեւնոյն թափով թշնամի երկրին ներսերը յառաջանայ, Սուլթան Մուսթաֆա փութաց Կ. Պոլիս՝ իր տարած այս աննշան յաղթութիւնը մեծամեծ հանդէսներով ու ցնծութուններով սօնելու համար, մինչդեռ միեւնոյն ատեն Ռուսիոյ նորածին և սպարնալից կայսրութեան հիմնադիր Մեծն Պետրոս՝ Ազով քաղաքը պաշարած էր :

3. ՎԱՐՍՍԻՆԻԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ .— Սուլթան Մուսթաֆա յաղթութեան նորանոր թափնիներ խլելու, և մանաւանդ՝ Թրքոց մահացու թշնամի Սօլիէսքիի մահով՝ Լէհաստանի մէջ ծագած խռովութիւններէն օգտուելու նպատակաւ՝ նոր արշաւանք մը պատրաստեց

ու ճամբայ ելաւ դէպ ի Մաճառիստան և Թնջվար քաղաքն առաւ : Սուլթան Մուսթաֆա այս անգամ ալ , փոխանակ Քէօփրիւլիւներու գերդաստանէն և Պէլկրատի կառավարիչ Ամուճագասկ Հիւսէյին փաշայի անսալու , որ խորհուրդ կուտար անմիջապէս Բէթէրլարտէնը պաշարմամբ առնել , անհամոզելի մնաց և ընդհակառակը՝ Թէխ գետին երկայնքը բռնելով՝ սկսաւ կամուրջ մը շինել տալ : Ընչտ այս միջոցին՝ վրայ հասաւ Աւստրիական բանակին վերին հրամանատար և իր դարուն ամենամեծ ռազմագէտ՝ Սալօեացի իշխան Երզնէկոս (Էօթէն տը Սալուա) և հաղիւ թէ Օսմանցիք Թէխ գետն անց-



Մեծն Պետրոս



Էօթէն Սալուացի

նելով յարդարուելու վրայ էին , յանկարծակի խուժեց անոնց վրայ և ամէն կողմէ պաշարելով՝ սոսկալի կոտորած ըրաւ : Սուլթանին անհեռատեսութեան զոհուեցան 20,000 արի զինուորներ և իր վեհապետին անխոհեմութեանը մեղսակից էլմաս Մէհմէտ փաշա վէզիրը (1697) :

4. ՔԱՐԼՈՎԻՑԻ ԴԱՇՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ .— Սուլթան Մուսթաֆայի փառասիրութեան համար ջախջախիչ հարուած մըն էր իր կրամ այս պարտութիւնը : Ուստի , Պէլկրատի նախկին հրամանատար Քէօփրիւլիւ Ամուճագատէ Հիւսէյին փաշան Մեծ Եպարքոս կարգելով՝ հրամայեց որ պատերազմը վերսկսելու համար հարկ եղած

պատրաստութիւնները տեսնէ : Սակայն հեռատես վէզի-  
րը համոզեց Սուլթանը որ ետ կենայ իր այս անխոր-  
հուրդ նպատակէն և Անգլիոյ ու Հոլանտայի միջնորդու-  
թեամբ, 1699ին, Մաճառխտանի Բարդալից քաղաքին  
մէջ կնքեց խաղաղութեան այն նշանաւոր դաշնագիրը՝  
որու տրամադրութեամբ՝ 1. Աւստրիա կը տիրանար Մա-  
ճառխտանի և Թրանսիլվանիոյ . 2. Վենետկեցիներուն  
կ'անցնէին՝ Մորայի մէկ մասը, Տարնացիան և Արչիպե-  
ղագոսի կղզիները : 3. Ռուսաց կը մնար Ազով քաղաքը .  
4. Լէհերուն բաժին կ'իյնար Ուրալիս և Փոսոլիս գա-  
ւառները (1699 Յունուար 26) :

5. Սակայն պարագաներու ստիպողական բերումով՝  
խաղաղութեան այս դաշնագիրն ստորագրող Քէօփրիւ-  
լիւ վէզիրը, բայց մանաւանդ Սուլթան Մուսթաֆա,  
յաչս ժողովրդեան սկսան դաւաճաններ նկատուիլ, այն-  
պէս որ, Սուլթանը ստիպուեցաւ պաշտօնանկ ընել իր  
Մեծ վէզիրը և անոր պաշտօնը յանձնել՝ Տալթապան ա-  
նուն մուխեանդ և պատերազմի հրուսակից անձի մը՝ ո-  
րու օրով դարձեալ քաղաքային սոսկալի խնդութիւն  
մը տեղի ունենալով՝ Սուլթան Մուսթաֆա ստիպուե-  
ցաւ գահէն հրաժարիլ և իրեն յաջորդեց եղբայրը Ահմէտ  
Գ. (1703 Օգոստ. 22) :

6. Սուլթան Մուսթաֆայի օրով, Թուրքիոյ տեղա-  
կան արհեստներն ու ձեռագործները կատարելութ հասան :  
Իր օրով է որ Պրուսայի, Հալէպի, Դամասկոսի և Պաղ-  
տատի նուրբ և արեւելեան ճաշակով ձեռակերաններ  
սկսան Եւրոպա փոխադրուիլ :

Սուլթան Մուսթաֆա Բ. ի ժամանակ Կ. Պոլսոյ  
Ֆրանսական դեսպանն էր Յրիալ, որ Հայոց Աւեսիֆ  
Պատրիարքը, լսաին կրօնաւորներու թշնամական խելա-  
գրութեամբ և խորէական միջոցներով ձեռք անցուցած-  
և Յրանսա զրկելով՝ հոն Պասրիլի բերդին մէջ բանտար-  
կել տուած է, կ'ըսեն :

Այս Սուլթանին օրով, Թուրքիոյ մէջ՝ Յրանասյի-  
ուհեցած անտեսական ու քաղաքական գերակշիռ ազ-  
դեցութիւնը կը փոխանձուէր Անգլիոյ :

### ՊԱՏՄԱԿԱՆ ԸՆԹԵՐՅՈՒՄ

Վարտինի Ճակատամարտին մէջ՝ ուր Օսմ. բանակէն 20,000՝ հոգի թշնամիին սուրին և Դանուբի հոսանքներուն զոհուեցան, Օսմանցիք, պատերազմի դաշտին վրայ թողուցին նաեւ՝ 423 դրօշ, ահա-  
գին քանակութեամբ պաշար և ռազմանիւթ, 7000 ձի, 500 թմբուկ, 300,000 սակի դրամ, 18 ձիով լծուած արքայական կառքը, 10 պա-  
լատական Սուլթանուհիներ, հազարաւոր ուղտ, եղ ևն. : Իսկ այս ամէնուն մէջ ամէնէն գերազանցն էր արքունական կօփքը՝ զոր Աւստրիա-  
ցիք մեծ խնամով տարին պահեցին Վիեննայի կայսերական գան-  
ձարանին մէջ :

Քարլովիցի նշանաւոր գաշնագրութիւնն ստորագրող լիազօր-  
ներն էին՝ Աւստրիոյ կողմէն, Կոմս Էօթինկէն Վոլֆկան և կոմս Շլիք, Վենետիկցիներուն կողմէն՝ ասպետ Ռուծօինի, Ռուսերուն կողմէն՝ Պրոկոպիոս Վոցնիցնօֆ, Լէհերուն կողմէն՝ կոմս Մայլախովսքի Իսկ Օսմանեան լիազօրներն էին՝ հռչակաւոր Բէյիս Բամի Էֆէնտի և ար-  
քունի Յոյն թարգման Մալբօքսրտաթօ, որ միանգամայն նախորդ Քէօփրիլի Ահմէտ փաշա ծերունի վեզիրին անձնական բժիշկն էր :

Օսմ. տարեգրութեանց մէջ նշանաւոր է Քարլովիցի գաշնա-  
գրութիւնը՝ սա գերազանց պատճառաւ որ, այդ թուականէն սկսեալ, Օսմ. պետութիւնը ո՛չ միայն Եւրոպայի մէջ ընդարձակ երկիրներ կը կորսնցներ, հապա նաեւ կը դադրէր Եւրոպայի սարտափ ազդելէ և ընդհակառակը, ինքը կ'ըլլար՝ դրացի երկու հօգր կայսրութեանց — Աւստրիոյ և Մանուանդ Ռուսիոյ — շարունակական սպառնալիքներուն ենթակայ :

Նիւթական և բարոյական այս անկումին պատճառներն էին՝ զօրաւոր դրացիներու թշնամութենէն ի դատ՝ անընդհատ պատե-  
րազմներ ու աննպատակ արշաւանքներ՝ որոնցմով սպառեցաւ, ջլա-  
տեցաւ տէրութեան զինուորական ոյժը : Միւս կողմանէ, ասուպի պէս երեւցող ու անհետացող հայրենասէր պետական հազուադէպ անձինք՝ հազիւ թէ միջոց կ'ունենային՝ ժողովուրդին ցաւերը քննել ու դարձան տանելու, հազիւ թէ կը ձեռնարկէին տէրութեան անտեսական ու վարչական վիճակը բարւոքելու, և ահա, կո՛մ փառասէր Սուլթանի մը ախմար մէկ պահանջումը զոհացնելու և կամ նորանոր ապստամ-

բութեանց տեղի շատու համար, կ'ստիպուէին Եկեղեցիները պատե-  
րազմի առաջնորդել: Այս կերպով, կը խանգարէր երկրին ներքին ա-  
պահովութիւնը, կ'սպառէր գանձը և զինուորական սյփը, զանաա-  
կանութիւնը կը դադրէր և վերջապէս՝ արդէն գտնուածներուն զբայ-  
կ'աւելնային արտաքին նորանոր կնճիռներ, իրրեւ թէ՛ ներքինները  
բաւական եղած շրջային տէրութիւնը չափէն աւելի զբաղեցնելու՝ իր-  
ընդարձակածաւալ սահմաններուն մէջ:

Իսկ Քէօփրիւլիներու նախաինամական գերդաստանին շիջումը՝  
ճշմարիտ սողէտ մը կ'ըլլայ Սմ. պետութեան քաղաքական ու զին-  
ուորական շահերուն կրկին տեսակէտներով:



## ՍՈՒԼԹԱՆ ԱԶՄԷՏ Գ.

(Հիմերթի՝ 1115—1143.— Քս.ի 1703—1730)



1. Ներքին ապստամբութիւն.— 2. Բրութի գաշնագրութիւնը.—  
3. Մորայի նուաճումը.— 4. Բէթէրֆարտէնի ճակատամարտը և Բա-  
սարովչի գաշնագրութիւնը.— 5. Պարսկական պատերազմ.— 6. Սուլ-  
թան Ահմէտի գաշնակէցութիւնը:

1. Ինչպէս տեսանք. Սուլթան Ա. ԱԶՄԷՏ Գ. իր գա-  
նը կը պարտէր Եէնիչէրիներուն՝ որոց ամէն պահանջում-  
ներուն և ծայրայեղութեանց՝ ի սկզբան անտարբեր ձե-  
ւացաւ՝ յարմար առնելին սպասելով զանոնք պատուա-  
սել: Իսկ իր գանն ապահովելէ յետոյ, սկսաւ տէրութեան  
ներքին բարեկարգութեան և ժողովուրդին անդորրու-  
թեան վերաբերեալ խնդիրներու ձեռնարկել: Ծի՛շտ այս  
բանն էր որ անդուսպ ու կատաղի Եէնիչէրիներուն գոր-  
ծին չի գալով՝ սոսկալի խռովութիւն մը հանեցին: Սա-

կայն Սուլթանը, որ ամէն բան նախատեսելով՝ հարկ եղած միջոցները ձեռք առած էր, ո՛չ միայն Եէնիչէրիներուն, այլ և անոնց համախոս ու գործակից զինուորական և Իւլէմա դասակարգերուն ահռելի ջարդ մը տալով՝ պարագլուխներէն ալ 1500 հողի մէկ օրուան մէջ Սարայ Պուրնույի հոսանքներուն մէջ խեղդամահ ըրաւ :

2. ԲՐՈՒԹԻ և ԲԱՍԱՐՈՎԻՉԻ ԴԱՇՆԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ. — Սուլթան Ահմէտ, այս ներքին ապստամբութիւնը զսպելէ յետոյ, ձեռնարկեց՝ հրդեհներու ու երկրաշարժներու պատճառաւ՝ Մայրաքաղաքին աւերակ դարձած մասերը վերանորոգելով՝ նորանոր յիշատակարաններ կանգնել :

Այս Սուլթանին օրով է որ, Օսմ. պետութեան Եւրոպական բաժնին մէջ գտնուած հակառակորդներու թիւին վրայ կ'աւելնար՝ նոր և աւելի սպառնալից թշնամի մը, այն է՝ Ռուսական հսկայ կայսրութիւնը՝ որու զահուն վրայ նոյն միջոցին կը գտնուէր Մեծն Պետրոս, այսինքն՝ Ռուսական պետութեան բո՛ւն հիմնադիրը : Այս երեւելի ինքնակալին և իր յաջորդներուն միակ նպատակն ու զլխաւոր քաղաքականութիւնը եղաւ «Դէպ ի հարա՛ւ, մի՛շտ դէպ ի հարա՛ւ» տարածուել և ընդարձակել Ռուսիոյ սահմանները՝ ի վնաս Օսմ. պետութեան :



Շարլ Փ.Բ.

Շուէտի Շարլ Փ.Բ. զիւրցազն ու հայրենասէր թագաւորը, 1719ին, Բոլքապա քաղաքին մօտ Ռուսերէն

յազմութեանով՝ ապաստանեցաւ Թուրքիոյ Պակսկր քաղաքը, և նոյն իսկ Օսմ. պետութեան ապագայ քաղաքական շահուն համար, համոզեց Սուլթանը, որպէս զի օգնէ իրեն և պատերազմ հրատարակէ Ռուսիոյ դէմ: Սուլթան Ահմէտ՝ Պալքաճը Մեհմեմէտ փաշա վէզիրը զրկեց Ռուսերուն դէմ, որ Մեծին Պետրոսի բանակը Ռուսի գետին մօտ պաշարելով զարկաւ և մինչև իսկ կայսրն ալ գերի բռնելու վրայ էր, երբ անոր կնոջ, Կատարինէ Ա. կայսրուհւոյն խորամանկութեամբ և շտապեցիչ խոստումներով՝ յանձն առաւ հաշտութիւն կնքել: Այս դաշնադրութեամբ, որ կոչուած է Ռուսի Դաշնադրութիւն, Օսմանցիներուն ձեռքը պիտի մնար Աղօֆ քաղաքը, Ռուսերը՝ Սրիմու Թաթարաց ներքին գործերուն չպիտի միջամտէին և Շուէտի թագաւորը ազատ պիտի ըլար իր հայրենիքը վերագառնալ (1711):

Պալթաճի անխորհուրդ վէզիրին յանձն առած այս ձախող համակերպութիւնը մէկ կողմէ, Շուէտի տկարութիւնը միւս կողմանէ, Ռուսիոյ թագուն ծրագիրներուն համար ամենամեծ քաջակերպութիւն մը եղան: Շատ ուշ տեղեկացաւ Սուլթան Ահմէտ այս ամօթալի և աննպաստ դաշնադրութեան պայմաններուն և անոր հեղինակը եզոզ դաւաճան Փայսահար վէզիրը պաշտօնանկ ընելով՝ նախ Լիմասո կղզին աքսորեց և ապա գլխատել տուաւ: Պալթաճիի յաջորդ կարգուած Տախտ Ալի փաշայի օրով է որ, Շուէտի թագաւորը՝ Թուրքիան կրկին Ռուսիոյ դէմ հանելու փորձելէն յուսահատ, ու երկու տարի արեւելեան ասպնջականութիւն մը վայելելէ յետոյ, ակամայ կը մեկնի իր հայրենիքը:

3. Նորընտիր վէզիր Տամատ Ֆէրիտ փաշայի առաջին գործը կ'ըլլայ, պատժել Վենետկեցիները որոնք Արշիպեղապոսի մէջ Օսմ. դրօշ կրող նաւ մը կողոպտած էին: Ուստի, Մորա թերակղզին ծովէն ու ցամաքէն պա-



շարեւոյժ տիրեց անոր և Վենետիկեցիներն ալ դուրս վանեց : Այս ասթիւ՝ Վենետիկեցիք կրեաէի մէջ ունեցած իրենց մէկ քանի բերդերն ալ կը կորսնցնէին (1715) :

4. Սակայն Աւստրիա, որ գաղանապէս դաշնակցած էր Ռուսիոյ հետ, Վենետիկեցիները պաշտպանելու և անոնց կրած վերջին պարտութեան վրէժը լուծելու նպատակաւ, կրկին պատերազմ հրատարակեց : Այս անգամ ալ Աւստրիական բանակին հրամանատարն էր Սաւոյայի իշխան (Էօմէն տը Սոլուա) : Իսկ Թրքաց սպարապետն էր Մօրսն նուաճող Տամատ Ալի վաչա վէզիրը :



Պայրագսարներ և Զօրպանիներ

Առաջինը հազիւ 80,000, իսկ Օսմանցիք ունէին 150,000 հոգի : Սակայն հաշիւը և զինուորական արուեստին կատարելութիւնը յաղթող պիտի ըլլային թիւի առաւելութեան :

Երկու բանակները ճակատեցան Մաճառխտանի Բեքերվարսկն քաղաքին մօտ : Եէնիշէրիք, որոնք բանակին յառաջապահ ժասը կը կազմէին, յախուռն կերպով յարձակեցան կայսերականաց վրայ և քանի մը թեւերու քաժնուելով՝ սկսան դէպ ի առաջ խիզախել : Աւստրիա-

ցի հրամանատարը այս առիթէն օգտուելով՝ յառաջ կը մղէ իր հեծելազօրքը և Օսմ. բանակը երկուքի ճեղքելով՝ սոսկալի ջարդ մը կուտայ և նահանջի կը պարտաւորէ : Այս խառնուրդին մէջ կը մեռնի նաև Տամատ Ալի փաշա : Օսմանցիք պատերազմի դաշտին վրայ կը թողուն 10,000 մեռեալ, 120 թնդանօթ և 140 դրօշ :

Վճռական այս յաղթութեան վրայ, Անգլիոյ միջնորդութեամբ, երկու տէրութեանց միջև, 1718 Յուլիս 21ին, Սերպիոյ Բաւարովիչ քաղաքին մէջ կնքուեցաւ հաշտութեան դաշնագիր մը, որով Աւստրիա կը տիրանար Թմշվար ու Պելկրատ բերդաքաղաքներէն իզատ, Վալաքիոյ ու Սերպիոյ մէկ մէկ մասերուն : Իսկ Վենետիկցիք, Ալպանիոյ մէջ իրենց ունեցած բերդաքաղաքները վերստանալով, Մօրան դարձեալ պիտի մնար Օսմանցիներուն ձեռքը 1717) :

5. ՊԱՐՍՅԱԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ ԵՒ ՆԵՐՔԻՆ ԱՊԸՍՏԱՄԲՈՒԹԻՒՆ.— Եւրոպական մասին մէջ հազիւ թէ խաղաղութիւնը վերահաստատուած էր, և ա՛նա, Պարսից Շահ-Թահմազ թագաւորը, Թուսիոյ թելադրութեամբ, որու նպատակն էր երկու Իսլամ տէրութիւններն իրարու դէմ հանելով սկարացնել, սկսած էր Օսմ. երկիրներն արշաւելով՝ յաջորդաբար տիրել Համասան, Դաւրեմ ու Կիրմանշահ կարեւոր քաղաքներուն : Թահմազ, քաղաքային պատերազմի մը մէջ, իր գահուն թեկնածու Էշրեֆ անուն բախդախնդիրին յաղթելէ յետոյ, սկսաւ՝ Իրանի սահմաններէն Օսմ. պետութեան անցած քաղաքները պահանջել : Տամատ Ալի և Խալիլ փաշա վէզիրներուն յաջորդող Իպրահիմ փաշա նշանաւոր Մեծ Եպարքոսը, թէպէտ պարագաները նպաստաւոր չէր տեսնէր ա՛յնքան հեռաւոր արշաւանքի մը, սակայն ժողովուրդին և Իւլէմա դասակարգին սպառնական պահանջումներուն հանդէպ՝ պարտաւորեցաւ պատերազմի պատրաստութեանց ձեռնարկել :

6. Բայց, ճիշտ այս միջոցին սոսկալի հրդեհ մը՝ Մայրաքաղաքին մէկ քառորդ մասը մոխրակոյտի մը կը վերածէր։ Բէթէրվարաէնի ջախջախիչ պարտութիւնը, Պարսից գործած արշաւանքները՝ միանալով այս վերջին պատուհասին հետ, յառաջ բերին ահուկի ապստամբութիւն մը ժողովուրդին ստորին դասակարգին և մանաւանդ Եէնիչէրիներուն մէջ՝ որոնք Բաքրօնա-Խալիլ անուն կատաղի Արնավուտի մը գլխաւորութեամբ պալատ խուժելով՝ պաշարեցին զայն։ Սուլթան Ահմէտ, շատ մը վէզիրներու գլուխը, նոյն իսկ անուանի Մեծ Եպարքոս Իպրահիմ փաշան ալ զոնց կատաղի խուժանին վրէժխնդրութեան, բայց անոնք՝ ասով ալ չգոհացան և նոյն իսկ իր գահընկէցութիւնը պահանջեցին։ Սուլթան Ահմէտ, ճարահատ, ստիպուեցաւ տեղի տալ և հրաժարիլ այն գահէն՝ որ ա՛լ ևս խաղալիկ մը պիտի դառնար Եէնիչէրիներուն ձեռքը։

Քէօփրիւլիւներու շրջանէն յետոյ, Օսմանեան պատմութեան մէջ մեծ անուն թողած Իպրահիմ փաշա Մեծ Եպարքոսը, որ ո՛չ միայն հանրային ու պետական հոյակապ շէնքեր կանգնեց, այլ և հակառակ ժամանակին տգիտութեան և արմատացած նախապաշարումներուն, ինքը եղած է Թուրքիոյ մայրաքաղաքին մէջ՝ Հունգարացիի մը տեսչութեան ներքեւ առաջին անգամ մամուլ հաստատողը։ Իպրահիմ փաշա, հիմնեց նաեւ մատենադարաններ, պետութեան և պալատական ծայրայեղ շուայլութիւններն և կործանարար ծախքերը չափաւորեց ու սահմանափակեց, ինչպէս նաեւ՝ Նիշ, Վիտին, Նիկոպոլիս ու Սօֆիա քաղաքներն ալ ամրացուց՝ իրրեւ պատուար Ադրիանուպոլսոյ և Մայրաքաղաքին։

1717ին, Կ. Պոլսոյ Անգլիական դեսպանին կինը, ծաղկի պատուաստին շիճուկը՝ առաջին անգամ իր ձեռօք և իր միակ զաւակին վրայ պատուաստելով, Քրիս-


տոնեայ և Իսլամ ժողովուրդներն ալ քաջալերուեցան, իր օրինակին հետեւելով՝ մահացու հիւանդութեան մը վտանգներէն զերծ մնալ:

### ՊԱՍՄԱԿԱՆ ԸՆԹԵՐՅՈՒՄ

Սուլթան Ահմէտ Գ. հակառակ անոր որ, ներքին խաղաղութեան սիրոյն համար երբեմն բուռն միջոցներու գիծել ստիպուեցաւ և քանի մը ըմբոստ վեզիրներու հետ՝ պատուհաս գարձած բազմաթիւ Եկեղեցիներն ալ մահուամբ պատժեց, սակայն պէտք է գիտնալ որ ինքը՝ Օսմանեան ամէնէն նշանաւոր Սուլթաններէն մէկը եղած է՝ իրբեւ զարգացած մտքի տէր և ուսումնասէր, իրբեւ իր երկրին պատմութեանը խորապէս հմուտ և մանաւանդ՝ Եւրոպական քաղաքակրթութեան իրբեւ սիրահար և յառաջգիտասէր վեհապետ:

Երբ 1727ին, Քրանսական զեպան Պ. քր Պօնաֆ, Երուսաղէմի մէջ՝ Քրիստոսի Գերեզմանին վրայ Լատինաց ալ պատարագ մատուցանելու արտօնութիւնը կ'ստանար, Սուլթան Ահմէտ՝ այս առիթէն օգուտ քաղեց և փափաքելով Ֆրանսոյի արքունիքին հետ ծովէն յարաբերութիւն հաստատել, իր սոյն արտօնութիւնը Լուի 16. թագաւորին հաղորդելու համար, Չիչիպի Միհիմիկէ Էֆէնտին Բարիզ զեպան ղրկեց, յանձնարարելով միանգամայն որ Լուիսի և Ֆօնթինըւյոյի պալատներուն և անոնց պարտէզներուն յատակաձեւերը Պոպիս ղրկէ: Պարագայ մը, որ շօշափելի կերպով կ'ապացուցանէ թէ Սուլթան Ահմէտ Գ. ինչ նուրբ ճաշակի տէր ու Եւրոպական քաղաքակրթութեան որքան հետամուտ անձ մը եղած է:

Այս Սուլթանին ժամանակակից էր՝ անուամբ Նէյի-Իւլ-Իսլամ Ֆիզուլլահ Էֆէնտի:



## Մ Ա Ս Ն Գ.

Մուլրան Մահմուտ Ա.էն՝ մինչև Սուլթան Մահմուտ Բ.

(Հինրեքի՝ 1143—1223.— Քու.ի 1730—1808)

## ՍՈՒԼԹԱՆ ՄԱՀՄՈՒՏ Ա.

(Հինրեքի՝ 1143—1168.— Քու.ի 1730—1801)



1. Բաթրոնա-խալիի Տիբուսթօրութիւնն ու մահը.— Դապա-  
Դուլադ Իպրահիմ փաշա.— 2. Պարսկական պատերազմ, Թօփալ Օս-  
ման փաշա.— 3. Ռուսական և Աւստրիական պատերազմ. Եկէն Մէ-  
հմէտ փաշա, Օսմանցւոց յաղթութիւնները.— 4. Պէլլրատի խա-  
ղապութիւնը.— Ֆրանսայի կատարած զերը՝

Սուլթան Ահմէտ Գ.ի յաջորդեց իր մեծաշէն ու ժա-  
ղովրդասէր կըրօրորդին Սուլթան ՄԱՀՄՈՒՏ Ա., որ իր

գահը կը պարտէր Եէնիչէրիներուն, բայց մանաւանդ՝ վերջին ապստամբութեան պարագլուխ Բարոնա-Խալիլ խուլարարին :

Բախդախնդիր այս աւագակը, նոր Սուլթանին ներկայանալով՝ շնորհաւորեց անոր գահակալութիւնն և բնաւ «Գիտեմ, Վեհափառ Տէր, թէ ինչ պիտի ըլլայ իմ վախճանս : Որովհետեւ՝ Սուլթանի մը գահընկէցութեան պատճառ եղող և ո՛չ մէկը կրցած է մահացումէ զերծ մնալ : Բայց ես, ինքզինքս երջանիկ կը սեպեմ Ձեր Վեհափառութիւնը Օսմանի գահուն վրայ բաղմած տեսնելու և Օսմ. պետութիւնը իր հարստահարիչներուն ձեռքէն ազատած ըլլալու համար» : Սուլթան Մահմուտ պատասխանեց. «Կ'երդնում իմ նախնիքներուս անունով, որ քու կեանքիդ պիտի խնայեմ» :

Այս նենգամիտ խաբերան, առանց պաշտօնական տիտղոս մ'ունենալու, ամբողջ երեք ամիս ճշմարիտ Տիկտաթօր մը դարձաւ, իր կամքին ու շահուն համեմատ՝ բարձր պաշտօններ բաշխելով իր կուսակիցներուն և միեւնոյն ատեն բնաջինջ բնելով զանոնք՝ որոնք իրեն կասկածելի դարձած էին Այսպէս, տէրութիւնը կրկին մատնուած էր անխիչսանութեան, նոյն իսկ Սուլթան Մահմուտ և իրեն հետ ժողովուրդին բոլոր լուրջ դասակարգը ա՛լ ևս ձանձրացած էին այս բախդախնդիր սրեկային շահատակութիւններէն, երբ պալատան աւագ սենեկապետ Գապա-Գուլագ Իպրահիմ էֆէնտի, տէրութիւնը փրկեց այս բռնաւորին ձեռքէն : Օր մը, երբ Բախմուտ-Խալիլ, ժողովասրահին մէջ նստած, որոշումներ և հրահանգներ կուտար զինքը շրջապատողներուն, սենեկապան մը՝ իրեն մօտեցաւ և զիր մը ներկայացնելու ձեւին ներքեւ՝ դանի դաշունահար սպաննեց : Այս կղաւ կոտորածի մը նշանը՝ որու զոհուեցան նոյն յարկաբաժնին մէջ գանդուած իր համախոհները : Միեւնոյն ատեն, նախապէս

եղած կարգադրութեան համեմատ, հաւատարիմ մնացած կ'սնոնաւոր զօրքը, դահիճներու ընկերակցութեամբ, Մայրաքաղաքին մէջ գտնուող ապստամբներէն ու բռնաւորին ալ կուսակիցներէն հաղարաւորներ անխնայ ջարդեցին:

Այս առաջին յաջողութենէն անմիջապէս յետոյ՝ Գապագուլագ Իպրահիմ փաշա՝ Մեծ Եպարքոսութեան պաշտօնն ստանձնելով՝ աւելի կատաղութեամբ յառաջ կը տանի իր խտութիւնը և Մայրաքաղաքին ու շրջականերուն մէջ գտնուած և հետզհետէ ձեռք անցած հազարաւոր խռովարարներ անխնայ ջարդելով՝ կը յաջողի ապստամբութիւնը արմատախիլ ընել և վերահաստատել ներքին խաղաղութիւնը:



Գումպարահը եէնիէրիներ

2. ՊԱՐՄԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ. — Սուլթան Մահմուտի գահակալութեան ժամանակ, Պարսից դէմ պատերազմը տակաւին շարունակուելու վրայ էր: Սուլթան Մահմուտ, իր անուանի սպարապետ Թոփալ Օսման փաշան զրկեց Պարսից դէմ, որ նախոր Շահի զօրացն յաղթելով մինչև հարաւ հալածեց և Պաղտատ քաղաքը ևս առաւ: Սակայն երեք տարի յետոյ, Եւրոպայի մէջ Օսմանցիներուն զրաղած վիճակէն օգուտ քաղելով՝ Պարսիկները նորէն արշաւեցին Օսմ. երկիրները և շատ մը տեղեր գրաւելէ յետոյ, Պաղտատն ալ պաշարեցին:

Ուստի, Օսմանն փաշա, երկրորդ անգամ գնաց Պարսից դէմ և իր սակաւաթիւ զօրքով արիարար պատերազմած ատեն, վիրաւորուելով սպաննուեցաւ: Սուլթան Մահմուտ, Պարսից դէմ նոր բանակ մը զրկելու կը պատրաստուէր, երբ՝ Ռուսաց և Աւստրիացիներուն իր դէմ պատերազմը պատրաստութիւններն իմանալով՝ ստիպուեցաւ Պարսից նեա խաղաղութիւն կնքել՝ Վրաստանն ու Հայաստանի մէկ մասը անոնց թողլով, իսկ Պաղատար՝ կրկին Օսմանցիներուն պիտի մնար (1736):

Նստոր Շահ, Պարսիկ այն մկակ զինապետը եղած է, որ քաղաքական նուաստութեամբ՝ փորձած է — թէև ընդունչն — Շիր և Սյունի, Օսմանցի և Պարսիկ, կրօնապէս և քաղաքականապէս միացնելով՝ զիրենք շրջապատող Եւրոպական զօրաւոր աէրութեանց դէմ՝ դաշնակից ամուր պատուար մը կազմել:

3. ՌՌՒՍ. ԵՒ ԱՒՍՏՐ. ՊԱՏԵՐԱԶՄ. — Ռուսաց Աննա-Իվանովնա կայսրուհին, Մեծին Պետրոսի քաղաքական ծրագիրները գործադրելու համար՝ պարագաները շատ նպատաւոր գտնելով՝ 1736ին, գաղտնաբար նիգալակացեցաւ Աւստրիոյ Շարլ Զ. կայսեր նեա, նախ՝ Լէհաստանը նուաճել ու կազոպակու, և ապա՝ թուրքիան բաժան բաժան ընելու նպատակաւ:

Արդէն, Պարսիկան պատերազմին ատեն, Ռուսիա օգուտ քաղելով թուրքիոյ զբաղած վիճակէն, Խրիմու թաթարները նպատակութեան ստիպած և Ազով քաղաքը նուաճած էր: Իսկ յաջորդ տարին (1737), Մոլնիխ Ռուս զօրապետը Խրիմու ամէնէն չէն ու բազմամարդ քաղաքները՝ Կոզլովկ, Սյնվեքոփոյ և Օզգաֆօժն այրելով ու քանդելով՝ բոլոր երկիրը անապատի մը վերածեց և թաթարները նարկազրկեց Ռուսական զերիշխանութեան ներքև մտնել:

Միւս զոգմանէ՝ Աւստրիական երեք բանակներ՝



Պոսնան, Սերպիան և Վալաքիան գրաւելով՝ Վիտինը պաշարած էին : Օսմ. Պետութիւնը այս ապոհարարից վիճակէն ազատելու կարող՝ միակ անձ մը կար, այն էր՝ Եեկեկն Մեհմեհէ փաշա քաջ ազգճագէտ և անվնէր սպարապետը որ, նախ Աւստրիացիներուն դէմ քալելով՝ երկու կասաղի ճակատամարտներու մէջ յաղթեց անոնց, Նիշը գրաւեց և Վիտինը պաշարումէ ազատելով՝ թշնամին Գանուբէն անդին հալածեց : Օսմ. սպարապետը իր յաղթական ընթացքը շարունակելով՝ կայսերականները Վալաքիաէն, Մոլտավիաէն և Օրսովոյէն վանեց : Ապա, Ռուսաց Միլնիս զօրապետին բանակը զարկաւ ցրուեց,



#### Պէլկրաւի առումը

մինչդեռ Թաթարներն ալ՝ Օսմանցիներուն այս յաջողութիւններէն սիրտ առած, Ռուսերուն դէմ քալելով՝ դանոնք Տնիսերէն անդին կը հալածէին : Ապարապետ փաշան կը սրափաստուէր Պէլկրաւի վրայ ալ քալել՝ երբ, պալատական դաւադրութեան մը զոհուելով պաշտանանկ, և իրեն յաջորդ կարգուեցաւ Վիտինի հրամանատար և իր նախորդին չափ արժանաւոր՝ Մէհմեհէ փաշան :

4. Նորընտիր Վէզիրը 1739 Յուլիս 23ին, Հիսարճըզի մէջ կայսերականաց դէմ փայլուն յաղթութիւն մը տանելէ յետոյ, եկաւ Պէլկրաւը պաշարեց, Սակայն

Յրանսական դեպքան Պարուն Տը Վիլնկովի միջնորդութեամբ . նոյն տարւոյ Սեպ . 7ին , Պէլկրատի մէջ կընքուեցաւ խողազութեան դաշնագիր մը , որով Աւստրիա՝ Թուրքիոյ կը վերադարձնէր Պէլկրատը , Վալաքիան , Սերպիան և Օրսովան : Իսկ Ռուսիոյ կայսրուհին , յանձն կ'առնէր Ազովի ամրութիւնները քանդել , Սև Մովու մէջ պատերազմական նաւ չունենալ և միայն առեւտրական քանի մը առաւելութիւններ վայելել : Ասոնցմէ ի դատ , Թուրքիա , Ռուսիոյ վեհապետները՝ կայսր կամ կայսրուհի (Չար , Չարուհի) պիտի յորջորջէր :

5 . Իսկ Յրանսական կառավարութիւնը , Թուրքիոյ հանդէպ իր կատարած բարեկամական սոյն թանկագին ծառայութեան իրր վարձատրութիւն , անտեսական և քաղաքական մեծամեծ առանձնաշնորհումներէ ի դատ , Երուսաղէմի Ս . Գերեզմանի Լատինական եկեղեցիին վերանորոգութեան արտօնութիւնը կ'ստանար , ինչ որ այս տեսակ դարու մը մէջ՝ նմանօրինակ դիւրութիւն մը ամենամեծ նշանակութիւն ունէր :

Սուլթան Մահմուտ Ա . իր իշխանութեան վերջին տարիները նուիրեց տէրութեան ներքին բարեկարգութեան և իր հպատակաց բարօրութեան նպաստաւոր ձեռնարկներու : Այս պատուական Սուլթանին օրով , տեղական արուեստներն ու արտաքին վաճառականութիւնը շատ ծաղկեցան : Արդէն Սուլթան Մահմուտ , ինքն ալ քաջ նկարիչ և վարպետ ոսկերիչ մ'ըլլալով , այս ճիւղերը իր առանձնական կեանքին հաճելի զբաղումներն էին : Ինքը շինել տուած է Պեոյխիմ Տեհեյի ջրարաշխական այն մեծամեծ պեկէտերը՝ որոնցմէ խողովակներու միջոցաւ՝ մինչև Բերա ու Ղալաթիա ջուր կուգար : Նոյնպէս՝ իր յիշատակներէն է Բերայի մէջ՝ Թագսիմի ջրաբաշխական կեղբոնը , որ հիմակուան Տեհեֆուի ջրուղիներէն անհամեմատ աւելի կարեւորութիւն ունէր այդ դարուն համար :

Սուլթան Մահմուտի իշխանութեան վերջին օրերը, Պուսոյ մէջ սաստիկ երկրաշարժ մը պատահելով՝ քաղաքին հին պարիսպներուն ու Եէտի Գուլէի մէկ մասին հետ, Արա-Սօֆիայի և Սուլթան Ահմէտի հոյակապ մըզկիթներն ալ մեծապէս վնասուեցան:

Ազնուասիրտ ու ժողովրդասէր այս Սուլթանին մահը բոլոր Օսմանցի ժողովուրդները սուգով համակեց:

### ՊԱՏՄԱԿԱՆ ԸՆԹԵՐՅՈՒՄ

Սուլթան Մահմուտ Ա. ֆ ազնիւ սրտին և վեհանձն բնասորութեան բազմաթիւ ապացոյցներէն՝ մանաւորապէս հետեւեալը կ'արժէ յիշատակել:

Օր մը, Պոսրաննի Պաշին հետ (որ այն ատեն Ոստիկանութեան նախարար կը նշանակէր), ծպտեալ վիճակի մէջ Պոսֆորի ծովեզերքն ի վեր պտոյտի ելած ատեն, յանկարծ կը տեսնէ զէպի վար՝ Պոլիս իջնող քառաթի շքեղ նաւ մը՝ որու մէջ՝ ծանրագին փեհեղներու և ոսկեթեղ բարձերու մէջ փառաւորապէս թաղուած և ձեռքն ալ մեծագին ծխափող մը բռնած, իշխանափայել երեւոյթով մէկը:

Սուլթանը, հետաքրքրուելով կ'ուզէ այդ անձին ով ըլլալը հասկընալ իր նախարարէն: Այս վերջինը կը պատասխանէ թէ՛ Եէնիչէրիներու շրեայ համբարապետն է: Եւ որովհետեւ անոր ահագին հարստութեանը կը նախանձէր և մանաւանդ զբաժական խնդրոյ մը առթիւ ոսկապի սի պահած էր անոր զէմ, պարագան նպատաւոր զրտնելով, կ'սկսի անոր մասին բուռն շարափօսութիւններ տեղացնել: Սակայն վեհանձն Սուլթանը կուսնելով իր պաշտօնէին ներքին նպատակը, «Տխմար մարգ, կը պատասխանէ, շէս տեսներ որ, իմ թագաւորութեանս օրով, բոլոր աշխարհքէն հալածուած շրեաներն անդամ, իմ տերութեանս մէջ ասանկ ճոխ և իշխանափայել կեանք մը կը վարեն, ինչ որ Պատմութեան մէջ իմ անունս և յիշատակս անմահացնելու արժանի ամենափայլուն մէկ ապացոյցն է:



## ՍՈՒԼԹՈՆ ՕՍՄԱՆ Գ.

(Հինգերթի՝ 1168—1171.— Քս.ի 1754—1757).



1. Սուլթան Օսման Գ ի ամուլ իշխանութիւնը.— 2. ձեռագրի մեծ հրդեհը:

1. Սուլթան Մահմուտ Ա.ի յաջորդեց իր եղբայրը ՕՍՄԱՆ Գ. որու երեք տարուան իշխանութիւնը Օսմ. պետութեան համար ապարդիւն շրջան մը եղած է:


Ինք, բնութեամբ ցասկոտ մտլեւանդ ու չափազանց նախանձոտ լլալով, երբէք համակրութիւն չկրցաւ շահիլ: Ո՛չ միայն իր նախորդին օրով սկսուած բարենորոգումները չհարունակուեցան, այլև՝ բոլոր արժանաւոր սրտատենտներն ալ չէզոքացուց կամ սպաննել տուաւ: Իր երեք տարուան ապարդիւն իշխանութեան միջոցին՝ ութը նախարարապետ փոխեց ու Սուլթան Ահմէտ Գ.ի հինգ զաւակներէն երեքը թունաւորելով սպաննել տուաւ: Ահաւաստիկ իր բոլոր գործունէութիւնը:

2. Այս Սուլթանին իշխանութեան երկրորդ տարին, այսինքն՝ 1756ին պատահած է Ճ՛:ՊԱՂԻ այն ահաւոր հրդեհը որ անընդհատ 36 շարունակուելով՝ քաղաքին երկու երրորդ մասը մոխիր դարձաւ: Բաց ի մարդկային 20,000 զոհերէ, այրեցան 9300 տուն, 2000է աւելի խանութ, 600 ջաղացք, 75 բաղնիք, հարիւրաւոր մրդկիթներ, խաներ, եկեղեցիներ, մէտքէաններ ևն.:

Սուլթան Մահմուտ Ա ի օրով սկսուած և եօթը տարիէ ի վեր շարունակուելու վրայ եղող հոյակապ մրդկիթը, այս Սուլթանին օրով աւարտած բլաւուն պատճառաւ, իր սնունտովը կոչուած է ՆՈՒՐԸ ՕՍՄԱՆԻՅԷ՝ ճամիսի:



Նուր Օսմանիյէի մզկիթը:



## ՍՈՒԼԹԱՆ ՄՈՒՍԹԱՏԱ Գ.

(Հիւրեքի՛ 1171—1187.— Բս.ի 1757.—1774)



1. Ներքին վիճակ.— Գօճա Բաղրայ փաշա.— 2. Կատարինէ Բ. Ռուս. պատերազմ.— 3. Թրքաց պարտութիւնները.— 4. Մովսէին պատերազմներ.— 5. Ռուսաց յաջողութիւնները.— 6. Հաշտութեան առաջարկներ.

Սուլթան Օսման Գ. ի յաջորդեւ, եղբայրը ՄՈՒՍԹԱՆ ՅԱ. Գ. որ թէպէտ արիասիրտ ու ժողովրդասէր վեհապետ մըն էր, սակայն, քաղաքական շատ տաղնապաւլից ժամանակի մը մէջ իշխանութիւն վարելու դժբախդութիւնը պիտի ունենար։ Իր նախորդին, Սուլթան Օսմանի սպաննել տուած կամ աքսորած ութը Եպարքոսներէն միայն մէկը յաջողած էր իր անձը փրկել, այն է, Քէօրիւլլուներու արժանաւոր յաջորդ ու Եւրոպական դաստիարակութիւն աւած՝ առաջնակարգ գիւանազէտ Գօճա Բաղրայ փաշա Եպարքոսը, որու հետ դործակցե-

լով Սուլթան Մուսթաֆա՝ ներքին բարեկարգութեան լուրջ ձեռնարկներ ըրաւ, անտեսական և զինուորական դրութեան մէջ կարեւոր փոփոխութիւններ ի դորձ դրաւ և ժողովուրդին թագուն ցաւերն ու հարստահարիչ պաշտօնեաներու երեսէն կրած զրկանքները դադրեցնելու հոգ տարաւ: Բայց դժբախդաբար, ինչպէս ընդհանրապէս կը պատահէր, Սուլթան Մուսթաֆա ալ, ազգեցիկ պալատականներու ճնշումին տեղի տալով՝ պաշտօնանկ ըրաւ իր միակ արժանաւոր վէզիրը՝ որու տեղը բռնելիք ո՛չ ոք կար՝ մանաւանդ տէրութեան ենթարկուած այս տաղնապալից շրջանին մէջ:

## 2. ՌՈՒՍԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ. — ԿԱՏԱՐԻՆԷ Բ. —

Պատմութեան մէջ մեծ անուն թողած է Ռուսիոյ Կատարինե Բ. անուանի կայսրուհին, իրրեւ նրբամիտ քաղաքագէտ, բայց մանաւաղ իրրեւ անգութ նկարագրի տէր կին, որ իր ամուսինը, Պետրոս Գ.ը սպաննելով զան՝ բարձրանալէ յետոյ, միակ և գլխաւոր նպատակ ունեցաւ՝ ի նպաստ իր կայսրութեան՝ Տաճկաստանը պատառ պատառ ընել<sup>(1)</sup>:



Կատարինե Բ.

Ռուստի, 1763ին, իր մտերիմներէն՝ Բօնիպարովսկի Լէ՛ն իշխանը բռնի կերպով Լէ՛նաստանի թագաւոր կարգեց՝ անոր ձեռքով այս դժբախդ երկրին իւրացուժը դիւրացնելու նպատակաւ: Մինչդեռ Քրիտտօնեայ տէրութիւնները այս անլուր բռնակալութեան անտարրեր հանդիսատեսներ կը մնային, Լէ՛ները կը գիմեն թուրքիոյ պաշտպանութեան, Բայց արդէն, հակառակ պարագայի մէջ ալ՝ Օսմ. պետութիւնը ստիպուած էր նոյն իսկ իր քաղաքական շահերուն տեսակէտովը՝

(1) Տե՛ս, հեղինակին ընդ Ազգաց Պատմութիւնը, էջ 158:

օգնութեան փութալ Լէհաստանի՝ որ պարտուարն էր իր նիւսիսային սահմանին և զոր Ռուսական անյագ փառասիրութիւնը քանդելու ձեռնարկած էր :

3. Ուստի, Սուլթան Մուսթաֆա 1768ին, իր փեսայ ու Մեծ Եպարքոս Մեհեմեդէ Էլին փաշայի յանձնեց 200,000 հոգիէ բաղկացած սաուար բանակ մը որ սակայն, թուական առաւելութենէ ի դատ ուրիշ արժանիք չունէր : Միւս կողմանէ՝ նախասպէս եղած կարգադրութեան համաձայն, Օսմանցիներուն օգնութեան պիտի հասնէր Խրիմու Քերիւ-Կերայի Խանը որ 10,000 զօրքով հար. Ռուսիան աւերած և Տնիեսթէրն անցնելով ռուսական բանակին կռնակէն զարնելու պատրաստուած պահուն, դաւաճանութեան մը զո՛հ, թունաւորուելով մեռաւ : Իր յաջորդը Տկվիք-Կերայ, ոչինչ կ'արժէր՝ բաղդաստելով իր նախորդին հետ :

Օսմ. սպարապետը փոխանակ ուղղակի Լէհաստանի վրայ քալելով՝ Կալիցիին Ռուս զօրապետին հոգիւ 25,000 հոգիէ բաղկացած սակաւաթիւ բանակը զարնելու, ինչպէս որ խորհուրդ կուտային թէ՛ Լէհաց գլխաւորները և թէ՛ իր զօրավարները, սպասողական դիրք մը բռնեց, մինչեւ որ Կալիցին նորանոր ոյժեր ստանալով՝ իրաց վիճակը փոխուեցաւ : Այս դատասպարտելի ընթացքին համար, վէզիրը պաշտօնանկ եղաւ և Պոլիս կանչուելով՝ մահուամբ քաւեց իր ապիկարութիւնը :

Իրեն յաջորդ կարգուած Մոչսովսկնի Ալի փաշա, նախ, Տնիեսթերի վրայ կամուրջ մը ձգելով անցաւ դիմաց և Ռուսական բանակին դէմ յարձակելով՝ քանի մը աննշան յաջողութիւններէ յետոյ, երկրորդ անգամ 12 հազար զօրքով նորէն յարձակեցաւ թէ՛ Խորումը պաշարումէ ազատելու և թէ՛ Ռուսաց դէմ վճռական ճակատամարտ մը մղելու նպատակաւ : Բայց նոյն դիշերը գետին ջուրերը յորդած ըլլալով՝ կամուրջը յանկարծ կոր-



ծանեցաւ, այնպէս որ Օսմ. սպարապետը իր բանակէն անջատուած մնալով՝ պաշարուեցաւ Ռուսերէն և 12,000 զօրք գրեմէ ամբողջովին ընաջինջ եղան: Իսկ Ռօթումի պաշարեալները՝ այս ձախողուածին վրայ, առանց դիմադրութեան, քաղաքը թշնամիին յանձնեցին: Զօրավար Ռօնանցով, այս յաղթութեան հետեւածօք՝ թէ՛ Թաթարական բանակը չէզոքացուց և թէ անարգել յառաջ քաշելով՝ տիրեց Մոլտավիոյ և Վալաքիոյ (1769):

4. ԾՈՎԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐ.— Մինչդեռ ցամաքի վրայ զինուորական այս գործողութիւնները տեղի կ'ունենային, Լէհաստանի անկախութիւնը կործանող Կատարինէ Բ.ի գաղանի գործակալներն ալ՝ Յոյները ապրտամբութեան կը յորդորէին՝ Ռուսական պաշտպանութեան ներքեւ՝ ապագայ քաղաքական անկախութեան խոստումներով: Միւս կողմանէ, Ռուսական տորմիզ մը, Էլֆինսդըն Սկոլտացի ծովակալին հրամանատարութեան ներքեւ, Պելոպոնէսի ծովեզերեայ քանի մը քաղաքներուն կը տիրէր: Սակայն Օսմանցիք, իրենց ցամաքային ոյժով և Ալպանացիներուն օգնութեամբ կը յաջողին Ռուսերը վանել Պելոպոնէսէն և զսպել՝ ծայրտուած Յունաց խլրտումները: Անգլիացի ծովակալը իր այս պարտութեան վրէժը լուծելու համար, կ'երթայ գանել Օսմ. նաւատորմը Քիօսի մօտ՝ ուր չորս ժամուան կատաղի ծովամարտէ մը յետոյ, մեծամեծ կորուստներու հետ, Ճեզայիւրի Հաւան փաշա ծովակալին նաւն ալ օղբ կ'ելլէ և ինք գրեթէ հրաշքով մը կ'ազատի: Օսմանեան այս ցիր ու ցան նաւերը կը յաջողին ապաստանիլ Չեչմէի ծովախորշը՝ ուր վրայ կը հասնին Ռուսք, և անգործութեան դատապարտուած Օսմանեան նաւատորմը ամբողջովին կ'այրեն ու կը փճացնեն և կ'երթան պաշարել Լեւնոս կղզին (1770 Յուլիս 5):

5. Իսկ ցամաքի վրայ, Բոմանցով զօրավար, Մոլ-


տավիոյ մէջ Օսմ. բանակին յաղթած, Ափհրեանն, Պեկ-  
սկր, Իպրայիլ և Իսմայիլ քաղաքներուն տիրելով յառաջ  
կը քալէր: Իրաւ է որ յաջորդ տարին ճէզայիրլի Հասան  
փաշա կրցաւ Լէմնոսը պաշարումէ ազատել, սակայն  
միւս կողմանէ՝ Ռուսք կը պաշարեն Ազովը զոր անգամ  
մը լքանել ստիպուած էին, ուրիշ բանակ մ'ալ կովկաս  
կ'արշաւէ: Իսկ Տօլկուրուֆի զօրապետը կը նուաճէ Խրիմ  
թերակղզին, որ իբրև թէ Ռուսիոյ պաշտպանութեան  
ներքեւ ինքնօրէն իշխանապետութիւն մը կ'ըլլար, մինչ-  
դեռ իրականին մէջ Ռուսական տիրապետութեան ներքեւ  
կը մտնէր: Վերջապէս, 1774ին, Ռուսք կրկին անցնելով  
Դանուբը, կը գրաւեն Բագարճըզ, Հերսովա և Սիլիսրե  
քաղաքները ու մինչև Վառնա կը յառաջանան:

6. Իրաւ է որ, նոր մեծ Եպարքոս Մուսիկզասե և  
Լէմնոսի ազատարար Հասան փաշաները կը յաջողին  
Սիլիսորէն և Վառնան պաշարումէ փրկել և թշնամին  
Դանուբէն անդին հալածելով՝ բանակին նոր ոգեւորու-  
թիւն մը ներշնչել, սակայն նոյն միջոցին՝ Ռուսիոյ դաշ-  
նակից Աւստրիա և Բրուսիա, պատերազմող երկու տէ-  
րութեանց միջև, իբրև թէ բարեկամաբար՝ հաշտու-  
թեան միջնորդ ըլլալու կ'ելլեն: Միայն թէ, Ռուսմանիոյ  
Ֆօլշան քաղաքին մէջ իրենց ներկայացուցիչներուն ա-  
ռաջարկած պայմաններն ա՛յնքան ծանր և աննպաստ  
էին, զոր Սուլթան Մուսթաֆա բացէ իրաց մերժելով՝  
վերստին պատերազմի պատրաստուած ատեն կը մեռնի՝  
իր ապիկար յաջորդին ժառանգութիւն թողլով տազ-  
նապալից վիճակի մատնուած տէրութիւն մը, դատար-  
կացած զանձ մը, քայքայուած բանակ մը, ազստամբ  
կուսակալներ, փճացած նաւատորմ մը և իրարմէ զօ-  
րաւոր թշնամի տէրութիւններ:

## ՊԱՏՄԱԿԱՆ ԸՆԹԵՐՅՈՒՄ

Սուլթան Մուսթաֆա Գ.ի տաղնապալից և կործանարար շրջանի առաջին տարիներուն մէջ փայլած է Գոնա Բաղրայ փաշա հաշակաւոր, Մեծ Եպարքոսը որ, ինչպէս տեսանք, զնահատելի ծառայութիւններ մատուց տէրութեան, և ի վերջոյ, ազդեչիկ պալատականներու նախանձին զոհուելով. ստիպուեցաւ պաշտօնէ հրաժարիլ: Բաղրայ փաշա, լեզուազէտ ու Եւրոպական դաստիարակութիւն ստացած առաջնակարգ զրազէտ և փորձառու զիւանազէտ մըն էր: Իրեն ժամանակակից և Կ. Պոլսոյ Նախնան Յակոբ Պատրիարքի մտերիմ բարեկամն ըլլալով Ազգ. գործերու մասին մեծամեծ զիւրութիւններ ընծայած է:

Բաղրայ փաշա, Պոլսոյ Լալիյի Թաղին մէջ, իր անունով և իր անձնական ծախքով շինել տուած է հայկապ մատենադարան մը՝ որու գաւթին մէջ կը գտնուի իր գերեզմանը, նայեալ՝ ինքը շինել տուած է մէտրէսէ մը և գեղակերտ ազրիւր մը:



Գոնա Բաղրայ փաշայի դամբարանը

Օսմ. պատմագիր Վասրփ էֆ. այս մեծանուն Եպարքոսը իր քաղաքական գործունէութեանն ու տաղանդին համար՝ իրաւամբ կոչած է «Սատր-իւլ-Վիզէրա», իսկ իրրեւ իմաստասէր և բանաստեղծ, զանի անուանած է «Սուլթան-իւլ-Նուարա» այսինքն՝ Իշխան Քերթն-զաջ:



## ՍՈՒԼԹԱՆ ԱՊՏ ԻԼ ՇԱՄՏ Ա.

(Հիմնեթի՝ 1187—1203 .— Քս.ի 1774—1789)



1. Օսմ. պետութեան ներքին վիճակը.— 2. Քիչիւք-Քայնար-  
ճայի գաղնադրութիւնը.— 3. Ռուսք՝ Իրիմու կը տիրեն.— 4. Ռու-  
սիոյ դէմ երկրորդ պատերազմ.— 5. Սուլթան Շամիտ Ա.ի իշխանու-  
թիւնը:

1. Օսմ. պետութեան այս անկերպարան ու կնճա-  
ւից վիճակին մէջ է որ գահը կը աւ Սուլթան Մուսթա-  
ֆայի եղբայրը Սուլթան Ապտուլ Շամիտ Ա. որու օրով  
սկսաւ անկումի և սասիճանական քայքայումի նոր  
չքան մը՝ զոր յաջորդ լուսամիտ և վերանորոգութեան  
նախանձախնդիր քանի մը վեհապետներն ալ անկարող  
եղան դարմանել:

Այս ցաւալի վիճակին ուղղակի պատճառներն էին  
1. Եկնիչերիները, որոնք ո՛չ իրենց առանձնաշնորհում-  
ներէն կ'ուզէին չրաժարիլ և ոչ ալ յանձն կ'առնէի՞


զինուորական կարգապահութեան զլուխ ծուել և մար-  
զուիլ՝ արուեստին ու գիտութեան պահանջած նորանոր  
գէնքերով : 2. Կրօնաւոր դասակարգը (Իւլէմաները), ու-  
րոնք այնպէս կը կարծէին տգիտարար թէ՛ Քրիստոնեայ  
ազգերէ ընդօրինակուելիք որ և է բարենորոգման ծրա-  
դիր՝ Իսլամական կրօնի սգիին հակառակ է : 3. Նոյն  
խոյն Սուլթանները, ճշմարիտ ստրուկներ դարձած էին  
Յէնիչէրիներուն՝ որոնց ամէն տեսակ ծայրայեղութեանց  
ստիպուած էին շատ անգամ աչք դոցել՝ անոնց ձեռքով  
գահընկէց չըլլալու նախատեսութեամբ : 4. Յանցառ  
թիւով վարիչ տաղանդներու սկսած բարենորոգման  
գործը շարունակելու ձեռնհաս՝ կամքի և կարողութեան  
տէր անձերու չդոյութիւնը, և վերջապէս՝ Հարէմական և  
պալատական ազգեցութիւններու հետեւանքով, ամէն  
վերանորոգիչ ոյժերու չէզոքացումը, որով կործանարար  
և անհաշիւ շռայլութեանց, ինչպէս նաև՝ պետական  
զանձին ի վնաս՝ անձնական հարստութիւն զիղելու մի-  
ջոցները լայնօրէն բացուած կը մնային առ յուէս :

Սուլթան Համիտի գահակալութեան միջոցին, բացի  
Ռուսական պատերազմին պատճառած մեծամեծ վնաս-  
ներէն, Օսմանեան պետութեան այլևայլ մասերն ալ,  
էնչպէս Ալպանիա, Պելոպոնէս, Սուրիա, Միջագետք ու  
Եգիպտոս՝ ապստամբական վիճակի մէջ էին :

2. ՔԻԻՉԻԻՔ ՔԱՅՆԱՐՃԱՅԻ ԴԱՇՆԱԴՐ ՈՒԹԻԻ-  
ՆԸ (1774 Յուլիս 21). — Սուլթան Համիտ՝ տեսնելով  
Եւրոպական այս երկարատեւ պատերազմներուն պատ-  
ճառաւ՝ բանակին ոյժասպառ և կազմալուծեալ վիճակը,  
միւս կողմանէ՝ Յէնիչէրիներու ըմբոստութիւնը և Բո-  
մանցով ու Քրաւկեսի Ռուս զօրապետաց Դանուբն  
անցնելով՝ կրկին Շումլա և Վառնա քաղաքաց փրկելը,  
հարկադրուեցաւ Ռուսիոյ հետ կնքել Պուլկարիոյ Քիւ-  
շիւ Դայնարձա քաղաքին մէջ այն նշանաւոր գաշնա-  
գիրը որու տրամադրութեամբ՝

1. Մուլտավիա, Վալաքիա և Պեսարապիա՝ Օսմպետութեան հարկատու ինքնօրէն իշխանութիւններ կ'ըլլային, (Օրթոտոքս Քրիստոնէից պաշտպանութիւնը Ռուսիոյ վերապահուելով) 2. Ռուսիոյ կ'անցնէին Վրաստան, Կէրչ, Ազով, Քուպան, Թականք և վերջապէս՝ Տնիքեր և Պուկ գետերուն շրջակայ գաւառները: 3. Խրիմ թերակղզին անկախ կը հռչակուէր՝ Օսմ. Սուլթանին միմիայն Խալիֆայական գերիշխանութեան ներքեւ: 4. Ռուսերը արտօնութիւն պիտի ունենային՝ Սեւ ծովու մէջ պատերազմական և Օսմ. ջուրերուն մէջ ալ՝ առեւտրական նաւեր ունենալ: 5. Օսմ. պետութիւնը 400,000 ընդհանուր պատերազմական տուգանք պիտի վճարէր (և լուելեայն պիտի համակերպէր Լէհաստանի բաժանման): Այս կործանարար դաշնագրութիւնն ստորագրող Մուհիմզադե Սեպարբուր, շարաթ մը յետոյ, զգացած վիշտէն ու ամօթէն կաթուածահար կը մեռնէր:

3. ՌՈՒՍՔ ԽՐԻՄՈՒ ԿԸ ՏԻՐԵՆ.— Սակայն, հակառակ այսքան մեծամեծ յաղթութիւններու, Կաստրինէ Բ. ի փառասիրութիւնը տակաւին չէր յագեցած: Ուստի, իր քաղաքական ծրագրին հակառակօրէ՛ք՝ Խրիմու Տեմիւք-Կերայ Խանը ձեռքի տակէ գահընկէց ընել տալով՝ Սայիմ-Կերայը նորա յաջորդ կարգեց: Բնական էր որ արտաքին այս միջամտութիւնը՝ Թաթարաց մէջ յառաջ բերէր քաղաքային պատերազմ մը՝ որու հետեւանօք՝ Ռուսիոյ պաշտպանեալ Խանը գահընկէց ըլլալով՝ Պոլիս խոյս տուաւ: Իսկ Կաստրինէ, իր լարած դաւին յաջողութենէն քաջալերուած, յանձնարարեց Բօրհմիմ և Սուլթանօֆ զօրապետաց՝ որոնք 100,000 զօրքով մտան Խրիմ և հին դարերու սադայէլական բարբարոսութիւններն յիշեցնող, նոյն իսկ գերազանցող վայրագութեամբ մը՝ 50,000է աւելի թաթար ջարդեցին և այսպէս մէկ հարուածով տէր եզան Խրիմ թերակղզին, Քուպանի և Թաման կղզին (1784):



Քիւչիւք Քայնարճայի դաւնադրութիւնը

#### 4. ՌՈՒՍԻՈՅ ԴԷՄ ԵՐԿՐՈՐԴ ՊԱՏԵՐԱԶՄ.—

Մարդկային իրաւանց և տակաւին քիչ առաջ կնքուած դաշնակցութեան հակառակ, Ռուսիոյ կայսրուհւոյն ի գործ դրած այս բռնարարութիւնը մեծ յուզում պատճառեց Օսմ. բոլոր շրջանակներուն մէջ, այնպէս որ, Սուլթան Համիտ, Քիւչիւք-Քայնարճայի դաշնադրութեան համաձայն, Խրիմու անկախութիւնը պահանջելու

Ելաւ : Իր այս արդար պահանջումը մերժուելուն վրայ , Սուլթան Համիտ Կ . Պոլսոյ Ռուսական զեապանը Եկտի Գուլէի բերդին մէջ բանտարկել տալով՝ Ռուսիոյ դէմ կրկին պատերազմ հրատարակեց (1787) :

Սակայն միեւնոյն ատեն Աւստրիա , առանց որ և է պատճառի , բայց միմիայն՝ Ռուսիոյ հետ իր դաշնակցութիւնը պատրուակելով՝ ինքն ալ միացաւ Թուրքիոյ դէմ : Օսմանցիք , թէպէտ ամէն կէտի վրայ Աւստրիացիներուն յաղթելով՝ Պէլկրասն ալ պաշարումէ ազատե-



#### ԵԵՅԻՅԵՐԻ ՌՍՐԱՍԻ

ջին և Դանուբն անցնելով մինչեւ Թմշվար յառաջացան , սակայն Բոսանցով , Փօթէմքին և Սուվարօֆ զօրապետաց հրամանատարութեան ներքեւ գանուած Ռուսական հսկայ բանակէն , ինչպէս նաեւ ծովու վրայ ալ կատարեալ պարտութեան մը մատնուելով՝ Խրիմ իսպառ կ'անջատուէր Օսմ . պետութենէն և անոր քաջարի բանակները կը դադրէին Օսմ . Սուլթաններու թեւ թիկունք ըսալէ (1789) :

5 . Այս վերջին դժբախդութիւնով կը փակուի Սուլ-



թան Համրտի աղէտալի իշխանութիւնը՝ որու միջոցին , քաղաքական և նիւթական անդարմանելի կորուստներէ ի դատ , երկրաչարժ , մեծամեծ հրդեհներ , ողորում և ժանտախտի նման բնական սոսկալի պատուհաններ ալ անպակաս եղան :

Միայն սա ճշմարիտ է որ , Սուլթան Համրտ Ա . թէպէտ թոյլ և զուարճասէր , բայց ժողովուրդէն սիրուած վեհապետ մըն էր : Իր ամէնէն աւելի գնահատելի մէկ ազնուութիւնը եղած է , իր եղբորորդին ու յաջորդը եղող Սեյիթ արքայորդին , փոխանակ պալատին մէկ անկիւնը իրրեւ գերի բանտարկելու — ինչպէս սովոր էին ընել մինչեւ այն ատեն — ընդհակառակը՝ ո՛չ միայն կատարելապէս ազատ թողուց , այլ և՛ կանուխէն վարժեցուց զանի պետական ամէն կարգի գործերու : Նոյն իսկ , շատ անգամ ալ զանի իր նեան առնելով՝ յատկապէս Պոլիս հրաւիրուած Յրանսացի Պարոն ջը թօք զօրապետին կատարել տուած մարզանքներուն և զինուորական վարժարաններու մէջ տեղի ունեցած դաստիարակութեանց ներկայ կը գտնուէր :

Սուլթան Համրտ Ա . ի ժամանակ , մեծ յառաջդիմութիւն ըրաւ ոսկերչութեան արհեստը՝ Հայ վարպետներու շնորհիւ , և Տիւզեան Միխայել Չեղկպի , Արքունեաց Ոսկերչապետ կարգուած էր :

Սուլթան Համրտ Ա . ինքն ալ , առաջին կարգի ճարտար գեղադիր (Սաթթաթ) մըն էր :



## ՍՈՒԼԹԱՆ ՍԷԼԻՄ Գ.

(Հիմերքի՝ 1203—1222 .— Քս.ի 1789—1807)



1. Ռուսերուն գործած վայրագութիւնները.— 2. Զիշթօփայի ու  
Նաչի գաշնագրութիւնները.— 3. Ներքին բարեկարգութեան փորձեր.—  
4. Պանարարթ Եգիպտոսի մէջ.— 5. Թուրքիա Ֆրանսայի գաշնակից.—  
6. Անգլիոյ հակառակութիւնը.— 7. Քաղաքային պատերազմ.— 8.  
Սուլթան Սելիմի գահընկէցութիւնն ու մահը.


1. Օսմ. պատմութեան մէջ՝ նոր և յիշատակաց  
արժանի թուական մը կը բանայ՝ ազնուանոգի, լուսա-  
միտ և բարենորոգման նախանձախնդիր համակրելի և-  
բիտասարդ վեհապետ մը, այն է ՍՈՒԼԹԱՆ ՍԷԼԻՄ Գ.  
որու գահակալութեան ժամանակ, Ռուսերն և Աւրս-  
տրիացիք սակաւին կը շարունակէին իրենց յաղթական  
յառաջխաղացումը Օսմ. սահմաններէն ներս։ Արիւն-  
արբուն Սուլթաոֆ, Պէնակեր և Իսմայիլ քաղաքներուն  
ափրելով՝ 40,000է աւելի անգէն ու ինքնապաշտպանու-

թեան անկարող բնակիչ սուրէ անցուց : Նոյնպէս՝ նուա-  
ճեց Մոլտավիան, Վալաքիան և Պեսարապիան՝ ու ամէն  
անդ քանդ ու աւեր սփռեց :

2. ԶԻՇԹՕՎԱՅԻ ՈՒ ԵԱՇԻ ԴԱՇՆԱԴՐՈՒԹԻՒՆ-  
ՆԵՐԸ . — Բարերախղաբար ճիշտ այս միջոցին՝ Յրան-  
սայի մէջ Մեծ Յեղափոխութիւնը իր ծայրագոյն աստի-  
ճանին հասած ըլլալով, Ռուսիա, Բրուսիա և Աւստրիա  
ստիպուած էին իրենց ոյժերը միացնելով՝ կազմել զօ-  
քաւոր նիզակակցութիւն մը՝ իրենց նման բռնապետա-  
կան իշխանութեանց գոյութեանն սպառնացող և յեղա-  
փոխութեան գաղափարին՝ իրենց երկիրներուն մէջ  
ալ մուտքն արգիլելու համար :

Ուստի, նախ Աւստրիոյ Լեոօօրջ Բ. կայսրը 1791ին  
Զիչքովայի հաշտութեան դաշինքը կնքեց և յաջորդ տա-  
րին ալ նոյնն ըրաւ Ռուսիա՝ կնքելով Եաշի դաշնադրու-  
թիւնը՝ որու արամադրութեամբ՝ Տնիերեր՝ գետը Ռու-  
սիոյ հարաւային սահման կ'ըլլար և Խրիմ թերակղզին  
ու Ազախու արևելեան կողմը դանուած Քուսպան գա-  
ւառը վերջնապէս Ռուս կայսրութեան կը կցուէին :  
Հայրենասէրն Սուլթան Սէլիմ, ահամայ ստիպուեցաւ  
համակերպիլ իր նախորդներուն օրով անզի ունեցած ա-  
ղէտարեր պատերազմներու և քաղաքական անհեռատե-  
սութեան աններելի հետեւանք եղող այս ծանր պայման-  
ներուն՝ որոնք եւր. բաժնին մէջ՝ Օսմ. պետութեան  
քաղաքական ու զինուորական ազդեցութիւնը մեծա-  
պէս կը ջլատէին :

3. ՆԵՐՔԻՆ ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԵԱՆ ՓՈՐՁԵՐ . —  
Ինչպէս տեսանք, Սուլթան Սէլիմ իր գահաժառանգու-  
թեան շրջանին մէջ՝ մօտէն հետեւած և ուսումնասիրած  
ըլլալով տէրութեան ներքին և արտաքին քաղաքական  
խնդիրները, հաստատապէս համոզուած էր թէ՛ իր հայ-  
րենիքը հիմնական բարեկարգութեան անհրաժեշտ պէտք



### Եւեի դաճնադուրիւնը

ունէր՝ անկուռէ ու քայքայուռէ ազատելու համար թէպէտ սակաւաթիւ, բայց ամէն զարգացած, հեռատես ու ճշմարիտ հայրենասէրներ՝ համաձայն էին այս կէտին վրայ ե կր փափաքէին զոնէ՝ զինուորական տեսակէտով՝ Օսր պետութիւնը Եւրոպայի քաղաքակրթեալ աէրութեանց

մակարդակին հաւասարեցնել: Ուստի, Սուլթան Սէլիմ հաստատապէս մտադրեց նախ և առաջ սանձ դնել Եէնիչերիներուն ծայրայեղութեանց և կուսակալներն ու Իւլէմա դասակարգը օրէնքի և կարգապահութեան հպատակեցնել: Միայն թէ՛ որքան շինարար և արմատական էին հայրենասէր Սուլթանին բարենորոգութեան ծրագիրները, նոյնքան ալ պարտաւոր էր խոհեմութեամբ շարժիլ, որովհետև ստիպուած էր մաքառիլ՝ անխնայ-



Թնդանօրանից Եէնիչերիներ

նութեան մէջ սնած իրր կէս միլիոն Եէնիչերիներու և անոնցմէ աւելի՝ արմատացած նախապաշարունակներու, հին գլուխներու, առանձնաշնորհեալ Իւլէմա ազդեցիկ դասակարգին և որջօցած զեղծարարներու հսկայ բանակի մը դէմ: Պէտք է աւելցնել նաև որ, Սուլթան Սէլիմ իրեն գաղափարակից ու գործակից մարդ չունէր, որովհետև՝ տակաւին անժամանակ էր Թուրքիոյ մէջ ա՛յս աստիճան արմատական վերանորոգումներ ի գործ դնել՝ փոխանակ նախապէս միտքերը պատրաստելու և այս հիմնական փոփոխութիւն-

ները սիրայօժար ընդգրկելու արամադիր և ընդունակ նոր սերունդ մը պատրաստելու :

Սուլթան Սէլիմ, եթէ երբէք չկարողացաւ հասնիլ իր նպատակին, գոնէ կրցաւ մատը բո՛ւն վէրքին վրայ դնելով՝ ցոյց տալ իր ախտազննութեան արդիւնքը իր յաջորդներուն և միանգամայն անհրաժեշտ այն պայմանը՝ որմէ կախում պիտի ունենար Օսմ. հայրենիքին ճակատագիրը :



Թրեանայու արագ  
ժէ. դարու մէջ

բոսպական կանոնաւոր աէրութեան մը կազմակերպու-

Սուլթան Սէլիմ մասնաւորապէս Գրանտայէն՝ փորձառու զօրապետներ, ծովակալներ, ճարտարագէտներ, երկրաչափներ ու ռազմական արուեստին կարող վարպետներ հրաւիրեց, բանակը և նաւատորմը նոր դրութեամբ կազմակերպելու ձեռք զարկաւ, վառօդարաններ<sup>(1)</sup>, թնդանօթարան, ծովային ու զինուորական վարբաններ, նոր դրութեամբ զօրանոցներ (Սէլիմիյէ) հիմնեց, վարչական ճիւղերու մէջ կանոնաւորութիւն մտցուց և վերջապէս՝ դարուն պահանջումներուն համեմատ, Եւրոպական կանոնաւոր աէրութեան մը կազմակերպու-

(1) Բարեյիշատակ Սուլթան Սէլիմ, Ազատը դի. զին մէջ իր հիմնել տուած ընդարձակ վառօդարանի վերատնույթութիւնը յանձնեց Հաճի Տառ Առասիլ-Աղայի՝ որու համբաւաւոր շատախղները այնքան թանկագին ծառայութիւններ մատուցած են Օսմ. պետութեան և իրենց Ազգին :

Թիւնը տալու ջանքերը բաւ։ Սուլթան Սէլիմ իր սկսած այս կարեւոր ձեռնարկներուն մէջ՝ միակ անկեղծ գործակից ու գաղափարակից մ'ունէր, այն էր՝ Բիւյլիւք Հիւսեյին փաշա իմաստուն Մեծ Եպարքոսը։ Մինչդեռ Իւլէմա դասակարգը, Եէնիչէրիք և վերջապէս ամէն անոնք՝ որոնք զեղծ կառավարութեան մը անկերպարան վիճակին մէջ կը փնտաէին իրենց անձնական շահն ու փառասիրութիւնը, սոսկալի վրէժխնդրութեամբ մը բորբոքեցան վերանորոգիչ Սուլթանին կարծեցեալ այս օտարամտութեան և ձեռնարկած նորութիւններուն դէմ՝ որոնց համար քիչ յետոյ շարաշար պիտի զոհուէր։

4. ՊՕՆԱԲԱՐԹ ԵԳԻՊՏՈՍԻ ՄԷՋ. — Սուլթան Սէլիմ այս ներքին կարեւոր գործերով զբաղած միջոցին, Գանուտի Սուլթան Սիւլէյմանի և Ֆրանսուա Ա. ի օրերէն ի վեր հաստատուած՝ Օսմ. պետութեան և Ֆրանսայի միջեւ գտնուած դարաւոր բարեկամութիւնը պահ մը վտանգուեցաւ։ Որովհետև, Ֆրանսայի տիեզերահրաշակ զօրավար Նաքլիոն Պոնապարթ, 1798ին 40,000 զօրքով Եգիպտոս արշաւեց և բուրգերուն մօտ՝ Մէմլուքներուն դէմ վճռական յաղթութիւն մը տանելով՝ մտաւ Գահիրէ։ Սակայն Պոնապարթ երկար ատեն չմնաց Եգիպտոսի մէջ և իր Բլէպէն զօրապետը հոն թողլով՝ անցաւ Սուրիա և Աքեա (Սէն-ժան-տ'Աքսը) բերդաքաղաքը պաշարեց։



Հրէական տարազ ծէ. դարս

Անգլիական կառավարութիւնը՝ Պօնաբարթի այս-  
արշաւանքին մէջ իր ծովային վաճառականութեան մա-  
հացու հարուած մը տալու նպատակը տեսնելով՝ նախ



Նաբոլէոն Պօնաբարթ

ոխերիմ թշնամի Ռուսիոյ, բայց մանաւանդ Անգլիոյ  
դէմ մաքառիլ էր՝ որոնք իր փառասիրական ծրագիրնե-  
րուն գլխաւոր արգելքներն էին։ Ուստի, 1802 Հոկտմ.  
Ձին, Բարիզի մէջ, Օսմ. պատուիրակ Ալլի Էւաս էֆ. ի և  
Ֆրանսայի միջև կնքուեցաւ մշտնջենական խաղաղու-  
թեան դաշնագիր մը, ոչով Եգիպտոս ու Սուրիա կրկին  
Թուրքիոյ կը մնային։

Միայն թէ, Պօնաբարթի նման՝ Եւրոպան սարսափի  
մասնող ահարկու աշխարհակալի մը հետ՝ Սուլթան Սէ-  
լիմի դաշնակցութիւնը՝ ուղղակի թշնամութիւն կը նշա-  
նակէր Անգլիոյ և Ռուսիոյ դէմ։ Այս պարագան պա-  
տրուակ բռնելով, Ռուսիա, 1806ին պատերազմ հրա-  
տարակեց Ռուսիոյ դէմ և մինչև Բուսուլու գառաջա-

Ալեքսանդրիոյ մօտ՝ Ա-  
պուքիրի խորշին մէջ  
ֆրանս. տորմիզը նէլ-  
սընի ձեռքով բնաջինջ  
ընելէ յետոյ՝ Թուրքիոյ  
հետ միանալով՝ Ֆրան-  
սայի զօրավարը Սու-  
րիաէն մեկնելու ստի-  
պեց(1)։

5. ԹՈՒՐԻԱ

ՖՐԱՆՍԱՍԻ ԴԱՇՆԱ-  
ԿԻՑ. — Սակայն Պօնա-  
բարթի նպատակը ո՛չ  
թէ ուղղակի Թուրքիոյ  
չարիք հասցնել էր,  
ընդհակառակը՝ իրեն

(1) Տես Հեղինակին սփամանակակից Պատմութիւնը



ցաւ : Այս առթիւ , Պօնաբարթ գաղտնապէս , թէ՛ դրամական և թէ՛ զինուորական միջոցներով օժանդակեց իր Օսմանցի դաշնակցին :

6. ԱՆԳԼԻՈՅ ԹՇՆԱՄՈՒԹԻՒՆԸ . — Միւսնոյն տարին , Ֆրանսայի նարդէոն կայսեր բացարձակ պաշտպանութիւնը աւելի փրկարար եղաւ Թուրքիոյ նամար , որովհետեւ՝ Բրիտանական զեաութեան Կ. Պոլսոյ դեսպանը , իր կառավարութիւնէն ստացած նրաննգին համաձայն , և յատկապէս՝ Թուրքիան Պօնաբարթի զինակցութիւնէն բաժնելու նպատակաւ՝ նետեւեալ ծանրակշիռ պայմաններն առաջարկեց .

1. Անգլիոյ և Ռուսիոյ նետ դաշնակցիլ՝ ընդդէմ Ֆրանսայի .

2. Օսմ. նաւատորմն ու Չանաք Քալէի ամրոցներն անմիջապէս Անգլիոյ յանձնել .

3. Մոլտավիան և Վալաքիան Ռուսիոյ թողուլ .

4. Պոլսոյ Ֆրանսական դեսպան Սեպասթիանին արտաքսել և պատերազմ նրատարակել Ֆրանսայի դէմ :

Անգլիոյ դեսպանը սոյն վերջնագիրը Բ. Գրան ներկայացնելէ անմիջապէս յետոյ՝ մեկնեցաւ Պոլսէն , համոզուած ըլլալով որ պիտի մերժուէր : Եւ Իրօք , Անգլիացի դեր ծովակալ Լօրս Տիսփօր , ութը մարտանաւով Տարտանէլէն մտաւ Մարմարա և նախ՝ Հէյպէլի կղզիին առջեւ խարխիս ձգեց ու քանի մը օր յետոյ ալ եկաւ Գուժ Գարուի առջեւ սպառնական դիրք մը բռնեց (1807 Փետր . 8) :



Գեպան Սեպասթիանը Այս անակնկալ վտանգին առջեւ , նախարար ու ժողովուրդ շուարած ու սարսափահար , ամէն զիջողութիւն յանձն առնել կը պատրաստուէին , երբ , Ֆրանսա-

կան դեսպան Սեպուսթիանի զօրավարին հաստատամտութիւնը թէ՛ Մայրաքաղաքը և թէ Օսմ. պետութեան արժանապատուութիւնը փրկեց :

Պօնաբարթի ներկայացուցիչը՝ անձամբ Սուլթանին ներկայանալով՝ համոզեց զանի, որպէս զի սպանոնացող վտանգին առջև առանց ընկրկելու, անմիջապէս քաղաքը պաշտպանողական վիճակի մէջ դնէ : Այս խորհուրդին համաձայն, հինգ օրուան մէջ՝ Պոլսոյ ամէն ազգէ ու դասակարգէ բնակչութիւնը, նախարար, իւլէմա, զինուոր, հասարակ ժողովուրդ, նոյն իսկ Քրիստոնեայ եկեղեցականներ ևն. առաջնորդութեամբ Սեպուսթիանիի, ցորեկ ու գիշեր տենդոտ գործունէութեամբ աշխատելով՝ Մարմարայի ամրոցը ծովեզերեայ մա-



Մէմլէ Ալի փաւա

զին հետ ետանդով աշխատողներէն մէկն է : Ուստի, մեկգի առնելով այդ պատկառելի հոգեւորականը՝ մեծամեծ պատիւներ կ'ընծայէ անոր :

Անգլիացի ծովակալը այս օնսպասելի ընդդիմութիւնը տեսնելով՝ չ'ամարձակեցաւ բուռն միջոցներու դիմել և անմիջապէս դէպի Տարսանէլ ճամբայ ելլելով՝ երկու նաւ և 600 զինուոր զո՛ւ տալով՝ նեղուցէն դուրս ելաւ :

սերը պատնէշներով, մարտկոցներով ու 900ի չափ թընդանօթներով զինեցին : Նոյն իսկ Սուլթան Սէլիմ, աշխատող ժողովուրդը խօսքով և դրամական վարձատրութիւններով քաջալերած միջոցին, զարմանքով և հիացումով կը տեսնէ որ Հայոց Յովհաննէս Բարեբրդի Պատրիարքն ալ իր ժողովուր-

Տիւքթորթ , իր կրած պարտութեան վրէժը լուծելու համար , օգուտ քաղելով Մէմլուքներու ազսամբուլթեանէն՝ դնաց Ալեքսանդրիան գրեթէ առանց ընդդիմութեան գրաւեց : Սակայն Արնապուտ Մեհմէտ Ալի փաշա հաշակաւոր կուսակալը՝ Գահիրէէն վրայ հասնելով՝ Անգլիացիները Ալեքսանդրիոյ մէջ պաշարելու վրայ էր՝ երբ ասոնք՝ իրենց նաւերն ապաստանելով մեկնեցան :

7. ՔԱՂԱՔԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ. — Սակայն տեղի ունեցած վերոյիշեալ դէպքէն անհամեմատ աւելի վտանգաւոր էր՝ Սուլթան Սէլիմի մտադրած զինուորական



Նիզամի ձէսիսի զինուորներ

բարեկարգութեան այն հիմնական ծրագիրը՝ որու համար նախ՝ իր գահը և ապա իր կեանքը վրայ պիտի տար , ժամանակին տիրող նախապաշարումներուն և իր աւագանիին մեծ մասին դաւաճանութեանը երեսէն : Սուլթան Սէլիմ : Ֆրանսացի սպաներու դործակցութեամբ , Եւրոպականին վրայ ձեւուած՝ բոլորովին նոր դրութեամբ , նոր կարգու սարքով և միօրինակ համադրեստով՝ Նիզամը ձէսիս անունը զօրագունդ մը կազմեց՝ որու մէջ պիտի ձուլուէր

Յամ. պետութեան ցամաքային ամրոցը զօրութիւնը :  
 Եւ որպէս զի այս կանոնաւոր բանակն ստուարացնէ,  
 հրաման զրկեց Սեւ ծովու բերդապահ՝ Եէնիչէրի-  
 ներուն — Գալի Աղասը — որպէս զի Նիզամը ճէտիտի  
 համազգեստ կրեն և անոր մարզանքներուն մասնակցին :  
 Սակայն ասոնք, ո՛չ մրայն սոսկալի նախատինքներով  
 ընդունեցին Սուլթանին պատգամաւորներն ու զանոնք  
 չարաչար սպաննեցին, այլ և, իրենց պարագլուխ ունե-  
 նենալով Գազագար Մուսրաֆա անուն արիւնկղակ ան-



Ձիւնուորական բարձրասիեան հրամանատար

ձը, Կ. Պոլսոյ վրայ կը քալեն և էթ Մէյտանիի մէջ միա-  
 նալով իրենց կատալի ընկերներուն, կը յարձակին Նի-  
 զամը ճէտիտի սակաւաթիւ զօրաց վրայ՝ որոնցմէ հազա-  
 բաւորներ անխնայ կ'սպաննեն, նոյնպէս՝ տասնը եօթը  
 նախարար և անոնց համախոհ ընկերներուն զխակները  
 փողոցէ փողոց քաշկրտելով՝ կերթան պաշարել արքայա-  
 կան պալատը և Սուլթանէն կը պահանջեն որ, իրեն  
 գլխաւոր խորհրդական Պօսրաննի Պաշին խկոյն իրենց  
 ձեռքը յանձնէ :

Այս վերջինը՝ Կատաղի խուժանին վրէժխնդրութեանէն իր վեհապետին կեանքը փրկելու վեհանձնութեամբ, ինքնակամ անձնատուր կ'ըլլայ և վայրկենապէս կը յօշոտուի մարդագատկեր գաղաններուն ձեռքով:

8. ՍՈՒԼԹԱՆ ՍԷԼԻՄԻ ԳԱԶԸՆԿԷՑՈՒԹԻՒՆՆ ՈՒ ՄԱՀԸ. — Եէնիչերիները ամբողջ Մայրաքաղաքը և մօտակայ դաւառները արձաւիրքի մասնելէ, զինուորական բարեկարգութեան կուսակից ազդեցիկ անձերը մէջտեղէն վերցնելէ և անհամար անմեղներու արիւնը քամելէ յետոյ, տակաւին չէին կրցած իրենց վրէժխնդրու-



Թէֆէլի եւ Ֆալագա Աղասը

Թիւնը յազեցնել: Գապագճը օղլու Մուսթաֆա ապրատամբապետին ձեռքը մնացած էր երկրին բախդը: Ուստի, Շէյխ-իւլ-Իսլամ Աքա Ուլլահ էֆէնտի, ինչպէս նաեւ՝ Մեծ Եպարքոսին Փոխանօրդը՝ Բհօսէ Մուսա փաշա — երկու յետադիմական և Սուլթանին անձնական կատաղի հակառակորդներ — կը թելադրեն Գապագճը Մուսթաֆան՝ ըսելով թէ՛ ձեռք բերուած այս յաջողութիւնները բաւական չեն, և որչափ ատեն որ Սուլթան Սէլիմ

իր գահուն վրայ գանուի, իրեն գաղափարակից և անձնուէր Բուսնէլի փաշաները կրնան իրենց կանոնաւոր զօրքով օգնութեան հասնիլ իրենց վեհապետին: Ուստի, ապստամբապետը, իրրեւ թէ ինքնարեքարար, կը դիմէ Միւֆթիին հարցնելու թէ, «նուիրական Ղուրանին օրէնքներուն դէմ մեղանշող, կեաւուսներու օրէնքին հետեւող, Նէնիչէրիներուն բռնի կերպով կեաւուսի զինուորական համազգեստ հագցնել ուզող և կեաւուս սպաներ ուսուցիչ կարգող Սուլթան մը, ըստ օրինի կրնա՞յ Խալիֆայական գահուն վրայ մնալ»: Ժխտական պատասխանը արդէն առաջուց պատրաստուած ըլլալով՝ Շէյխ-իւլ-Իսլամը՝ զայն անձամբ կրնե՞րկայացնէ Սուլթանին, որ ձակատագրին համակերպելով՝ կը հրաժարի գահէն և իրեն կը յաջորդէ Սուլթան Համիտ Ա. ի որդին Սուլթան Մոհամմէտ Ա. (1807):

## ՍՈՒԼԹԱՆ ՄՈՒՍԹԱՏԱ Դ.

(1807 Մայիս—1808 Յուլիս)

Սուլթան Մուսթաֆա Դ. բնութեամբ անձնասէր, հպարտ, զուարճամոլ և ամէն ինչ իր ցանկութիւններուն զոհելու պատրաստակամ, մէկ խօսքով, իր լուսամիտ նախորդին բոլորովին անարժան մէկն էր:

Սուլթան Սէլիմի գահընկէցութեան առթիւ՝ տեղի ունեցած քաղաքային արիւնալի դէպքերուն պատճառաւ, կառավարութիւնը (Տիվան) առժամապէս փոխադրուած էր Էտիրնէ՝ հոն. դէպքերու ելքին համեմատ ընթացք մը բռնելու համար: Սակայն, Մեծ Սպարքոսին փոխանորդը (Գայմազամ), Շէյխ-իւլ-Իսլամը և տիրա-

հրոչակ ապստամբապետ Գապագճը Մուսթաֆա, թէ՛ Տիվանին բացակայութենէն և թէ՛ մանաւանդ՝ Սուլթանին ապիկարութենէն օգուտ քաղելով՝ կառավարութեան սանձը իրենց ձեռքը կ'առնեն և տեսակ մը Յուպետութիւն կազմելով՝ կը պարտադրեն նոր Սուլթանը որ իր նախորդին սկսած ֆրէնկի նորութիւնները ջնջելու և Նիզամը ճէտիտի զօրագունդը բոլորովին ցրուելու հաստատ խոստում տայ: Միւս կողմանէ, Բուժէլի մէջ գտնուած Եէնիչէրիներն ալ, Մայրաքաղաքին իրենց ընկերներուն տարած յաղթանակէն քաջալերուած, մահուամբ կը պատժէին իրենց այն պետերը որոնք տարակարծիք գտնուած էին Սուլթան Սէլիմի գահընկէցութեան:

Սակայն, ինչպէս որ Պատմութեան մէջ շատ անգամ տեսնուած է, տեղի ունեցած յետադիմական այս յեղափոխութեան պիտի յաջորդէր՝ հակընդդէմ ու փրկարար նոր յեղափոխութիւն մը՝ որ քիչ ատենէն տեղի ունեցաւ:

Այս ազատական շարժումին հեղինակը, ճգնաժամային այս կացութենէն Օսմ. Սլէմար Մուսթաֆա փաշա պետութիւնը փրկողը եղաւ տիպար զինուորական մը, այն էր՝ Դանուբեան բանակին հրամանատար՝ Ալիմսար Մուսթաֆա փաշա, որ հաստատապէս մտադրեց, եթէ ո՛չ իր սիրական վեհապետ Սուլթան Սէլիմը, գո՛նէ անոր սկսած վերանորոգութեան գործը փրկել:

Այս նապատակաւ՝ իր ծրագիրը բոլորովին գաղտնի պահելով, և սպարուակելով թէ՛ Ռուսական պատե-



բազմին պատճառաւ Եւրոպա փոխադրուած Նուիրական Գրօշը կայսերական պալատ պիտի վերադարձնէ, իր հաւատարիմ և հիանալի կերպով մարզուած 16,000 զօրքով ճամբայ ելաւ Էտիրնէէն և առանց կասկած ներշնչելու՝ մտաւ Պոլիս ու բանակեցաւ Տափուս փաշայի գաշտին մէջ, Ալէմտար, տեղեկացած ըլլալով որ, ապրստամբապետ Գապագճը՝ նոյն միջոցին Պոսֆօրի բերդին մէջ առանձնացած կը մնայ (և Սուլթան Մուսթաֆա Կոօֆ-Սուլլի գացած է զբօսնելու), իր հաւատարիմ զինակիցներէն Հաճի Ալիի պաշտօն յանձնեց որ շատ վարպետ ձեւով մը գնաց այս վայրագ Եէնիչէրին իր հարէմին մէջ դաշուհանար սատկեցուց և գլուխը Ալէմտարի զրկելէ յետոյ, իր 100ի շափ կտրիճ զինուորներուն օգնութեամբ՝ կատաղի Եւսուզներուն հետապնդումներէն ազատելով՝ վերադարձաւ այս մեծ յաջողութիւնը իր հրամանատարին աւետելու:

Ուրեմն՝ գլխաւոր պատնէշը քանդուած էր:

Այն ատեն Ալէմտար փաշա, լուր կը զրկէ Սուլթան Մուսթաֆայի թէ՛ իր Պոլիս գալուն նպատակն է՝ Նուիրական դրօշը իր տեղը յանձնել և իր բանակին գլուխն անցած՝ ճամբայ կ'ելլէ դէպի պալատ: Փողովուրդ, Եէնիչէրի և խուժան, զինաթափ կ'ըլլան ի տես Մանճագը Շէրիֆին և Նիզամը ձէտիտի այս հիանալի բանակին, որ կ'երթայ կը պաշարէ պալատը: «Բացէ՛ք» կը գոռայ Ալէմտար, «բացէ՛ք դուռները Նուիրական Գրօշին առջեւ»: Լուսթիւն: «Բացէ՛ք դուռները կը կրկնէ, Ալէմտար, բացէ՛ք, որպէս զի իմ սիրական Տէքս, Սուլթան Սէլիմը՝ կրկին Օսմանի գահուն վրայ բարձրացնեմ»:

Ալէմտարի այս վերջին անխոհեմ սպառնալիքն իմանալով, Սուլթան Մուսթաֆա իսկոյն հրաման կուտայ խեղդամահ ընել տարաբախդ Սէլիմը՝ երբ իր յարկարածնին մէջ ցորեկուան նաւագը կը կատարէր: Անողորմ



Մուսթաֆա, իր գահն ապահովելու համար՝ ուղեց Բիակ ժառանգորդ իր Մահմուտ եզրայրն ալ մահացնել, բայց պալատական իր հուատարիմ ծառաները անմատչելի տեղ մը պահած էին զանի: Ալէմտար փաշա, իր պահանջումին անպատասխանի մնալէն բարկացայտ, և կասկածելով թէ մի՛ գուցէ իր Տէրը դաւաճանութեան մը զոհուի, թէպէտ շատ ուշ, խորտակել կուտայ պալատան դուռները և ներս խուժելով Սուլթան Սէլիմը կը պահանջէ: Բայց փոխանակ իր սիրելի Սուլթանին, ներքինիները՝ զորգի մը մէջ ծրարուած անոր արիւնաթաթախ մարմինը բերելով՝ Ալէմտարի ռաքերուն առջեւ կը դնեն: Այս անակնկալ ու քստմնելի տեսարանին հանդէպ, Ալէմտար փաշա աննկարագրելի վիշտով մը համակուած, կ'իյնայ իր ազնիւ Տիրոջ անհնջացած մարմնոյն վրայ, իր արցունքներովը կը թրջէ անոր ձեռքերը՝ հառաջելով, «Վա՛խ իմ սիրական Սուլթանս, միթէ քու անկենդան մարմինդ գրկելու համար իմ կտրիճներովս փութացի Պոլիս»: Սակայն զինքը չըջապատող ընկերները, մասնակցելով հանդերձ իրենց գլխաւորին արդարացի վիշտին, խորհուրդ կուտան՝ վերջի թողուլ իր ողբն ու կոծը, և փութալ ազատելու կեանքը միակ գահաժառանգ Մահմուտին, որ արիւնարբու զահճներու սպառնալիքին ներքեւ կը գանուէր: Մուսթաֆա փաշա երկար պըրպըտումներէ յետոյ՝ դժուարաւ կը դանէ՝ զորգերու դէզի մը մէջ դողահար ու կծկուած՝ 23 տարեկան երի-



Գահաժառանգ իշխանի  
մը արագը

տասարդ արքայորդին Մանուէլ, զոր նոյն պահուն իսկ հանդիսաւորապէս կ'ողջունէ իբրեւ ՍՈՒԼԹԱՆ՝ ՕՍՄԱՆ-ԵԱՆ ՊԵՏՈՒԹԵԱՆ (28 Յուլիս 1808)։ Իսկ Սուլթան Մուսթաֆա գահընկէց ըլլալով՝ կը բանտարկուի պալատան մէկ յարկարաժնին մէջ։



Գափսան փառս եւ Զրպլագ անուն իր սպայակոյսը

Այս եղերական վախճանն ունեցաւ լուսամբա ու վերանորոգիչ Մեծ հայրենաւէրն Սուլթան Սէլիմ Գ. որու մահը դառնապէս ողբաց իսլամ եւ Քրիստոնեայ աւմէն ճշմարիտ Օսմանցի։



## Մ Ա Ս Ն Դ.

Սուլթան Մահմուտ Բ.էն՝ մինչև մեր օրերը

## ՍՈՒԼԹԱՆ ՄԱՀՄՈՒՏ Բ.

(Հիմերքի՝ 1223—1255 .— Քս.ի 1808—1839)



1. Ներքին խռովութիւններ. — 2. Այլմասարի մահը. — 3. Պաշտօնի  
 դաշնագրութիւնը. — 4. Ներքին ապստամբութիւններ. — 5. Մէհմեթ-  
 մէա Այի փաշա. — 6. Տէփէզէնլի Այի փաշա. — 7. Յունաստանի ա-  
 պրտամբութիւնը. — 8. Պատերազմին առաջին շրջանը. — 9. Միս-  
 լանկիի առումը. — 10. Ենեիշերիներուն Ջընուկը. — 11. Նափարինի  
 Մովամարտը. — 12. Ռուսիոյ դէմ պատերազմ. — 13. Էտիքնէի Դաշնա-  
 գրութիւնը. — 14. Ֆրանսա ձեղայիբի կը տիրէ. — 15. Մէհմեթա  
 Այիի ապստամբութիւնը. — 16. Հիւնքեար Իսկէղէսիի Դաշնագրու-  
 թիւնը. — 17. Պէզճեան Ամիրայի կատարած զերը. — 18. Սուլթան  
 Մահմուտի բարեկարգութիւնները. — 19. Պէզճեանի մահը. — 20. Նի-  
 փիպի ճակատամարտը և Սուլթան Մահմուտի մահը:

Օսմանեան պատմութեան անմոռանալի փառքերէն մէկը եղած է՝ Սուլթան Համիտ Ա. ի կրասեր որդին՝ Սուլթան ՄԱՀՄՈՒՏ Բ. ԽԱՆ որ իրաւամբ կոչուած է ԱՏԼԻ (Արդար) ու ԵՐԿՐՈՐԴ ՀԻՄՆԱԴԻՐ Օսմ. պետութեան :

1. ՆԵՐՔԻՆ ԽՈՒՈՎՈՒԹԻՒՆՆԵՐ. — Սուլթան Մահմուտի առաջին պարտականութիւնը եղաւ՝ Եպարքոս



Թոսկարաւի Քէշէյի եեցիչիներ  
(Իլլիմէնի)

արդարացնել ի գատ՝ իր յախուռն ընթացքով թէ՛ նորանոր արիւնահեղութեանց պատճառ եղաւ և թէ իր կեանքը վրայ տուաւ :

Ալէմտար, Սուլթան Սէլիմի մահուան մեղսակիցները չարաչար տանջանքներով սպաննելէ յետոյ, անոնց գլուխները պալատան դուռներուն վրայ կախել տուաւ և ապա քաղաքին մէջ շարաթներով ցուցադրեց զանոնք : Նոյնպէս՝ իր մտերիմներէն՝ Րամիզ փաշան ծովակալ, Գաաթ փաշան՝ Փոքր Ասիոյ բանակին սպարապետ և Պէյլիքճիէֆէնտին՝ Տիվանի անգամ կարգելէ յետոյ, Սուլթանին

անուանել իր ազատարարը եղող Ալէմտար Մուսթաֆա փաշան որդերախղարար՝ տէրութեան ենթարկուած տագնապալից մէկ շրջանին մէջ՝ իր զինուորական կորովին հետ, շունէր միանգամայն անհրաժեշտ եղած դիւանագիտական հեռատես ողին ու խոհեմութիւնը : Այս պատճառաւ՝ իր վրայ դրուած յոյսերը չկրնալ

Խաթթը Շէրիֆովը՝ կայսրութեան մէջ գտնուած քաղաքական ու զինուորական բարձրաստիճան պաշտօնատարները Մայրաքաղաք հրաւիրելով՝ ժողով գումարեց և ի գործ դնել մտադրած զինուորական վերակազմութեան իր ծրագիրը պարզեց անոնց առջեւ : «Տէրութեան դէպ ի կործանում դիմելու դժբախդութիւնը, մեր կրած այս մեծամեծ կորուստներուն պատճառը, ըսաւ Ալէմտար, մեր բանակին և զինուորական կազմակերպութեան՝ Քրիստոնէիցմէ անբաղդատեցի կերպով ետ մնացած ըլլալն է : Կարելի՞ է այս վիճակը շարունակել այսպէս : Մենք չենք ուզեր Եէնիչերիները ջնջել, ընդհակառակը՝ կը փափաքինք այդ ոյժը՝ օրէնքի և յառաջդիմութեան ճամբուն մէջ տեսնել» :



Բոլոր ներկաները առանց բացառութեան համամիտ գտնուեցան Եէնիչերիներուն նստակցական կարգանքի և Ասնը պաշին առաջարկութեամբ, ստորագրեցին յանձնառագիր մը՝ որով կը խոստանային այս նպատակին իրագործման համար, եթէ երբէք պէտք ըլլար, նոյն խակ կեանքերնին զօնել : Եպարքոսը, աւագանիին այս հանդիսաւոր համամտութենէն քաջալերուած և իր նպատակին գործադրութեան ի նպաստ՝ Շէյխ-իւլ-Իսլամէն Ֆէթվա մը ստանալով՝ գործի ձեռնարկեց : Մուսթաֆա փաշա, եթէ իր այս արմատական վերանորոգութեան գործին մէջ ալ ցոյց տուած ըլլար այն խոհականութիւնը զոր ի գործ դրաւ Պոլսոյ օգնութեան փութացած ատեն, եթէ պա-

բազանները նկատողութեան առնելով՝ իր ծրագրին մէկ կարեւոր մասն ալ յարմար ժամանակի մը վերապահէր՝ իր յաջողութիւնը կատարեալ պիտի ըլլար ։

Ալէմտար, Նիզամը ձէտիտի տեղ, Սեյմեկն անուն նոր զօրագունդ մը կազմեց, որ իրր տիպար — օրինակ պիտի ծառայէր Եէնիչէրիներուն<sup>(1)</sup> ։ Իր այս նախափորձն քաւական էր Եէնիչէրիներն ու Իւլէմա դասակարգը վերջապէս գրգռելու՝ որոնք նմանօրինակ պարագաներու մէջ իրարմէ անբաժան էին ։ Սակայն Ալէմտար, իր 16 հազար արի զինուորներուն և Փոքր Ասիաէն քանի մը հազար զօրքով օգնութեան հասնող Գատը փաշային վստահացած, յառաջ տանիլ սկսաւ իր ձեռնարկը ։ Միայն թէ՛ ա՛յնքան գահավէժ ընթացք մը բռնեց և ա՛յնքան ծայրայեղութիւններ ի գործ դրաւ, որ նոյն իսկ Սուլթան Մահմուտ և իր համակիրները սկսան անտանելի գտնել անոր չափազանց դիկտատորական ընթացքը ։

2. Գործերն այս վիճակին մէջ էին, երբ Մայրաքաղաքին մէջ կազմուած դաւադիր մարմնոյ մը հրահանգով, ապստամբութեան առաջին նշանը տուաւ Բումէլի ։ Եպարքոսը իր տրամադրութեան ներքեւ գտնուած 16,000 կիրթ ու քաջամարդ զօրաց 10,000ը ստիպուեցաւ ապրա-

(1) Սեյմեկն աղուադեալն է Պարսկերէն Սեզպան բառին, որ կը նշանակէ շուն ։ Էին Սուլթանները որսորդութեան յատուկ բազմաթիւ շուներ կը պահէին՝ զորս խնամելու պաշտօն ունեցողները կը կոչուէին Սէյմէն ։ Եսփուզ Սուլթան Ալիթ 10,000 Սէյմէն (օգնական հետեւորդ) ուներ, տեսակ մը կիրթ ու մարդուած զօրարանակ, որ Սուլթաններու այս հանգիստաւոր զրօսանքին ընկերակիցներն էին ։ Ժամանակ անցնելով ասոնք բացառիկ զիբքի և առանձնաշնորհաւթներու ալ տիրացան, բայց միշտ պահելով իրենց հաւատարիմ ծառայի և օրինապահ պաշտօնէի համբաւը ։ Նոյն իսկ, գժուարին պարագաներու մէջ ասոնցմէ կ'ընտրուէին ոստիկան և ապահովութեան պաշտօնեաներ ։ Ահաւասիկ, պալատական այս մարդուած մարդոցմէ կազմել ուզեց Ալէմտար՝ իրր տիպար ծառայելիք իր անդրանիկ զօրագունդը ։

տամբնրեուն դէմ դրկել և ասով ջլատեց իր կենսական ոյժը՝ որու ամէն ժամանակէ աւելի պէտք ունէր։ Եէնիչէրիք, Իւլէմաները և ասոնց համախոհ խուժանը՝ Ալէմտարի այս անխոհեմութենէն քաջալերուած, քաղաքին այլեւայլ կողմերը կը ցրուին և անոր զօրքերուն վրայ յարձակելով սոսկալի ջարդ մը տալէ յետոյ, կը խուժեն Եպարքոսին ապարանքը և զայն կրակի կուտան։ Ալէմտար, կը յաջողի իր վայրագ թշնամիներուն ձեռքէն ազատիլ և քանի մը հաւատարիմ ծառաներով կ'ապաստանի՝ պարտէզին ծայրը գտնուած ամուր աշտարակին մէջ։ Սակայն Եէնիչէրիք՝ հետեւեալ օրը տե-



Ալճը պար

դեկանաչով որ Ալէմտար ողջ է, վերստին կը խուժեն և աշտարակը թնդանօթներով պաշարելով՝ կ'ստիպեն Եպարքոսը որ իր ապաստանարանէն դուրս ելլէ։ Յուսահատական այս ճգնաժամին մէջ, արիասիրտ Եպարքոսը՝ չուզելով իր արիւնարբու դահիճներուն ձեռքովը յօշոտուիլ, կրակ կուտայ աշտարակին մէջ գտնուած վառօղի տակառներուն և 3000ի չափ կատաղի խուժանին հետ օդը կ'ելլէ (10 նոյ. 1808)։

Եէնիշէրիք՝ Ալէմտարի մահովն ալ շահնդարտեցան և Մայրաքաղաքին կարեւոր թաղերը կրակի տալով՝ սկսան թալլել, ջարդել և վերջապէս՝ արքայական պալատ խուժեւելով՝ Սուլթան Մուսթաֆայի վերստին դահակալութիւնը պահանջեցին: Բարեբախդաբար՝ ճիշտ այս միջոցին վրայ կը հասնի Գատը փաշա և խուժանը ցրուելով կը մտնէ պալատ և Սուլթան Մահմուտէն իր Մուսթաֆա դաւաճան եղբոր մահուան վճիռն ստանալով՝ իսկոյն կը գործադրէ և այսպէս կ'ապահովէ երիտասարդ Սուլթանին դահը: Միւս կողմանէ Գատը փաշա իր կանոնաւոր զօրքով կը շարունակէ հայաձանքը խռովարարներուն դէմ, մինչդեռ ծովակալ Ռամիզ փաշա ալ՝ ծովու կողմէն Եէնիշէրիներուն զօրանոցները կը սմբակոծէր: Զեռք առնուած այս ազդու միջոցներուն շնորհիւ՝ Եէնիշէրիք կ'ստիպուին հանդարտիլ և Սուլթանին հնազանդութիւն յայանել:

3. ՊՈՒՔՐԷՇԻ ԴԱՇՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ .— Քաղաքային այս արիւնալի խռովութիւններուն և անիշխանութեան մասնուած բանակի մը անկերպարան ու քայքայուն վիճակին դժբախդութեանց վրայ եկաւ աւելցաւ՝ Ռուսական նոր արշաւանքի մը սպառնալիքը: Ֆրանսայի կայսրը, Թիւրիթի մէջ Ռուսիոյ կայսեր հետ համաձայնելով՝ և զանի ազատ ձգելով Արեւելքի մէջ ուզածն ընելու, այս վերջինը վերստին ձեռք կ'առնէ թուրքիոյ հանդէպ իր աւանդական քաղաքականութիւնը շարունակելու: Ուստի, Ռուսական ստուար բանակ մը, Բագրատիոն Հայ զօրավարին հրամանատարութեամբ, 1809, Ապրիլ ամսոյ մէջ՝ դէպ ի Դանուբ յառաջ քալելով՝ Սիւլիսդէ բերդաքաղաքը գրաւեց: Միեւնոյն ատեն Գարաձօրճի Սերպ իշխանն ալ Պօսնան կ'ասպատակէր: Մեծ Եպարքոս Զիա-Նուսուֆ փաշա, հակառակ իր բուն ընդդիմութեան, անկարող եղաւ կասեցնել Ռուսերը՝ ու



ոնք յաջորդաբար տիրեցին Շուճն, Զիթովա և Բուս-  
ճուզ ամուր քաղաքներուն: Վերջապէս՝ Բագրատիոնի  
յաջորդ Քութուզօֆ զօրավարը, 1811ին կրկին յաղթելով  
Մեծ Եպարքոսին, Օսմ. բանակը Դանուբէն դէպ ի  
հարաւ հալածեց: Սակայն Ռուսիոյ Ալեքսանդր Ա.  
կայսրը տեղեկանալով՝ Պոնաբարթի դէպ ի Ռուսաստան  
արշաւելու պատրաստութիւնները, ետ կանչեց իր բա-  
նակը և 1812 Մայիս 28ին, Պուքրէշի մէջ Թուրքիոյ  
հետ կնքեց խաղաղութեան այն դաշնագիրը, որով իր



Եպարքոսական Տեղակալ և Պառքերիմասնք

գրաւած վերոյիշեալ քաղաքները կը վերադարձնէր Թուր-  
քիոյ, իրեն վերապահելով Դանուբի գետաբերնին հետ,  
Մոլտավիոյ ու Պեսարապիոյ մէկ մէկ մասերը:

4. ՆԵՐՔԻՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՆՆԵՐ. — Իրաւ է որ  
Պոլսոյ Ֆրանսական դեսպան՝ Զօրավար Անտոնուի Պո-  
նաբարթէն ստացած իր հրահանգին համաձայն՝ խոր-  
հուրդ տուաւ Սուլթան Մահմուտի որպէս զի Ռուսիոյ  
դէմ պատերազմը վերականգնով՝ թշնամին երկու սուրի  
մէջ մնայ, սակայն Սուլթան Մահմուտ՝ Նարոլէոնի  
նկատմամբ իր նախորդին համակրանքը չէր տածեր, ընդ-

հակառակը՝ ա՛յն համոզումն ունէր որ, դժբախդ Սուլ-  
Սէլիմ, պարզապէս՝ Յրանսացի աշխարհակալին՝ Թուր-  
քիոյ հանդէպ դասալքութեան ու երկդիմի ընթացքին  
զո՞ գացած էր։ Ասկից ի դատ, պարտութեան մատնուած  
քայքայուն բանակի մը վիճակը չէր ներեր յախուռն սպ-  
տերազմի մը ձեռնարկելու, երբ մանաւանդ՝ տէրութեան  
այլեւայլ մասերուն մէջ ալ՝ ապստամբութիւններ սկսած  
էին ծայր տալ։

Արդէն տեսանք որ, վերջին Թուրքո-Ռուսական  
պատերազմէն օգուտ քաղելով՝ Սերպիա գլուխ քաշած  
էր։ Սուլթան Մահմուտ, նախ այս երկիրը զրկեց Եգիպ-  
տոսի նախկին կուսակալ և Մեծ Եպարքոս Խուրչիտ  
փաշան որ ապստամբապետ Գարա-Ճօրճիի յաջորդ Միջո  
Օպրենովիչ, շարունակեց պատերազմը և 1813ին յաջո-  
ղեցաւ ձեռք բերել իր երկրին ինքնօրինութիւնը՝ Սուլ-  
թանին տարեկան հարկ մը վճարելու և Պելկրատի մէջ  
փաշա մը և զօրագունդ մը գտնուելու պայմանաւ։

Սուլթան Մահմուտ, Փոքր Ասիոյ պատուհանները  
դարձած՝ Չախան Օղլու, Փազվան Օղլու և Գարա Օսման  
անուն կատաղի Տերեպոյիներն ալ բնաջինջ ընելէ յետոյ,  
ձեռք դարկաւ Վեհնապիներու ապստամբութիւնը զրս-  
պելու<sup>(1)</sup>։

Վէհնապիները ո՛չ միայն Մէքքէ ու Մէտինէ քա-  
ղաքներուն տիրած էին, այլեւ՝ ուխտաւորները կը կո-  
ղոպտէին և բնիկ ժողովուրդը սոսկալի կերպով կը հա-  
րըստահարէին՝ արհամարհելով Օսմ. Սուլթանին Խալի-  
ֆայական գերիշխանութիւնը։

5. Սուլթան Մահմուտ այս ապստամբները պատժե-

(1) Վէհնապիները՝ Նեճիտիցի Մուհամմեհ-Պիեի-Ապս-խչ-Վեհնապ  
անուն իւրեմային հաստատած աղանդին հետեւող Արաբներ էին, ո-  
րոնք թէ՛ Իսլամ և թէ՛ Բրիտանեայ ժողովրդոց իրաւունքն ու  
ստացուածքը կողոպտելը իրենց համար հեղալ կը սեպէին։

լու գործը յանձնեց Եգիպտոսի կուսակալ Մէհէմմէտ Ալի-  
 փաշայի, որ իր Թօսուն, Իպրահիմ և Իսմայիլ անուն որ-  
 դիքը զրկեց այս կատաղի ապստամբներուն դէմ: Երկար  
 ու արիւնալի պայքարներէ յետոյ, Մէհէմմէտ Ալիի կոր-  
 իւնները յաջողեցան Մէքքէ ու Մէտինէ նուիրական քա-  
 ղաքները հտ առնելով՝ բանալիները զրկել Սուլթանին: Իսկ  
 հինգ տարի յետոյ, Իպրահիմ փաշա՝ վճռական յաղ-  
 թութեամբ մը բոլորովին ջախջախեց այս ապստամբները  
 և անոնց Շեյխ Ապտուլլահ-Սեուս զլխաւորն ալ գերի  
 բռնելով՝ զրկեց իր հօրը, որ ան ալ Սուլթան Մահմու-  
 տին նուէր զրկելով՝ Այա-Սօֆիայի հրապարակին մէջ  
 կախել տուաւ:

6. Տէֆէլէնլի Ալի ՓԱՇԱ.— Օսմ. պետութեան



Արնալուս Ալի փաշա

դէմ ապստամբողներէն մէկն էր նաեւ, Եանեսայի կու-  
 սակալ և Տեփեղեկի աւանին մէջ ծնած Արնալուս Ալի  
 փաշան, որ իր Գափլան փաշա աները իրրեւ ապստամբ  
 ամբաստանելով սպաննել տալէ յետոյ, իր կարծեցեալ  
 հաւատարմութեան իրր վարձաարութիւն, Սուլթանին  
 կողմանէ ինքը կարգուած էր տեղւոյն կուսակալ:

Նենգամիտ և արիւնկղակ այս ծերունին, որ Տիրե-

րիոսի չափ անբարոյական և Կալիգուլայի հաւասար կատաղի բռնաւոր մըն էր, միտքը դրաւ ամբողջ Ալպանիան Օսմ. պետութեանէն անկախ նահանգ մը կազմելով ինքն ըլլալ անոր բացարձակ տէր և իշխան:

Այս նպատակաւ, Ալի փաշա իր շուրջն հաւաքեց բազմաթիւ աւազակներ, բախդալանդիւր սրիկաներ և նոյն իսկ, 1788ին իր հալածած Քրիստոնեայ ապստամբ Ալպանացի լեռնական Սուլիօղները, և աւազակութեամբ ու աւարառութեամբ ահագին հարստութիւն գիլգեց: Տէփէլէնլի, իր այս նպատակին հասնելու համար, ո՛չ միայն Եւրոպայէն մեծաքանակ ռազմամթերք հայթայթեց, այլ և օգտուեցաւ Անգլիոյ բացարձակ ձեռնառութեան:

Տէփէլէնլի, իր ծրագրին գործադրութիւնը դիւրացրնելու նպատակաւ, բոլոր Բուսէլին և մասնաւորապէս Յոյներն ալ ապստամբութեան գրգռեց և Եանեայի մէջ ամուր բերդ մը շինել տալով՝ հոն ապաստանեցաւ և բացէ ի բաց ապստամբութեան դրօշ պարզեց իր Վեհապետին դէմ:

Սուլթան Մահմուտ, այս յամառ ապստամբը քանիցս ընդունայն հնազանդութեան յորդորելէ յետոյ, անոր դէմ զրկեց սպարապետ Սուրշիտ փաշան, որ գնաց պաշարեց Եանեայի ամուր բերդը՝ ուր ապաստանած էր Ալի փաշա: Ապստամբ Ալպանացին երեք ամիս կատաղորէն դիմադրելէ յետոյ, համօգուելով որ փրկութեան ճար չկայ, թողուց իր ապաստանարանը և քաշուեցաւ մօտակայ կղզեակ մը՝ ուր պատրաստականութիւն յայտնեց Սուլթանին հնազանդելու:

Սակայն երբ իմացաւ որ, Սուլթան Մահմուտ փոխանակ ներման հրովարակի, իր մահավճիւրը զրկած է, սուրբ քաշեց և շուրջը գտնուողներէն շատերը սպաննելէ յետոյ, ինքն ալ՝ Սուլթանին վրէժխնդրութենէն վախնալով անձնասպան եղաւ (5 Փետր. 1822):

## ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ԱՊՍՏՈՄԲՈՒԹԻՒՆԸ

Սուլթան Մահմուտի իշխանութեան ժԳ. տարին, այսինքն՝ 1812ին տեղի ունեցաւ Մորայի Յունաց ապստամբութիւնը, որ արդէն, ինչպէս տեսանք, կատարինէ Բ.ի օրէն ի վեր ու Եւրոպական համալսարաններու մէջ բարձր կրթութիւն առած նոր ու զարգացած սերունդի մը ձեռքով պատրաստուելու վրայ էր: Նոյնպէս, Պօնաօրթի անկումէն յետոյ, Յոյները 1815ին, Վիէննայի մէջ գումարուած Վեհաժողովին դիմելով՝ խնդրած էին որ, Եւրոպայի քաղաքական քարտէսը վերակազմուելուն առթիւ՝ Յունաստանի ճակատագիրն ալ ճշգույն Սակայն Մրքագան Նիզակալցուքիւնը արհամարհնօք մերժած էր Յոյն պատգամաւորութեան այս դիմումը, որով Յոյները այդ օրէն սկսեայ՝ վերջնապէս համոզուեցան թէ՛ իրենց խնդիրը միմիայն իրենց արեանը գինով պիտի կարենային լուծել, կրք հետեւեալ դէպքը պատճառ տուաւ փոթորիկը պայթելուն:

Սուլթան Մահմուտ, 1821ին, Տէփէլէնլիի գէմ կը զրկէր Եէնիչէրիներէ բազկացած բանակ մը՝ որոնք Բաթրասի մէջ տեղացիները կողոպտելով ու ջարդելով՝ սուկայի վայրագութիւններ գործեցին: Յոյները, որոնք արդէն կայծի մը կ'ապասէին, Տէփէլէնլիի թելադրութեամբ 10,000 հոգի գինուելով՝ կ'սկսին վանել այս հրոսակները՝ առաջնորդութեամբ իրենց Երմանոս Մէտրապոլիտին (12 Փետր. 1821):

Ահա այսպէս սկսաւ Յունական ապստամբութիւնը, որ Բաթրասէն ծաւալեցաւ ամբողջ թերակղզիին մէջ և արձագանք տուաւ մինչեւ Մոլտավիա և Վալաքիա՝ ուր կը գտնուէին ապստամբութիւնը կազմակերպող յեղափոխական ժարմիրները: Նոյնպէս, Աթէնքի մէջ կը գտնուէր

Ֆիլոսուս, իսկ Թեսալիոյ մէջ՝ Հերաիտի անուն յեղսփոխական մարմինները :

Յունաց ապստամբութեան լուրը ա՛յնքան զէշ ազդեց թէ՛ Մայրաքաղաքին և թէ՛ գաւառներու բնակչութեան վրայ, որ աշխարհական ու եկեղեցական բազմաթիւ Յոյներ՝ Թուրք մոլեռանդ խուժանին վրէժխնդրութեանը զո՛ւուեցան : Իսկ նոյն տարւոյ Չառկին առաջին օրը, Յունաց Կ. Պոլսոյ Ղրիղորիոս Պատրիարքը :



Երմանոս Արեւայիսկոպոս՝ Յեղափոխութեան դօշը կը նուիրագործէ իրբև Մայր Հայրենիքի ապստամբաց համախոն, Յէնէրի Պատրիարքարանի դուռնէն կախուցաւ, թէպէտ յետոյ ստուգուեցաւ որ բոլորովին անմեղ էր այս մասին : Միեւնոյն նախատական վախճանին ենթարկուեցան՝ Եփեսոսի ու Թեսաղոնիկէի մէտրապօլիտները, որոնց առաջինը Պալրղ Փագարի, իսկ վերջինը՝ Բարմող Փափույի դուռնէն կախաղան հանուեցան :

Յունական ապստամբութեան երեւելի պեանքն էին՝ ծովակալ Քանարիս և Միսուլիս, Բողոքորոնի, Ալեխ-

սանդր Իփսիլանդի, Ողիսեւ, Մալրօ-Քօրսարօ, Մալրօ-Միխաշիս, Մալրօ-Պօծարիս, Կանդակուզեկոս, Նիփիքաս ևն . . որոնք իրենց հայրենիքին անկախութեան համար մղուած այս անհաւասար պայքարին մէջ՝ իրենց ցոյց տուած դիւցազնական արիութիւնով, պահ մը նախկին Յունաստանի ամենափայլուն օրերը յիշեցուցին : Նոյն իսկ



Իփսիլանդի, «Էքերիս» անուն Յեղափոխական ընկերութեան  
դօժը կը պարզէ

կիներ, ծերունիներ ու պատանիք, իրենց հիանալի արիութեամբ՝ քաջալերութիւն կ'ընծայէին երիտասարդ պատերազմիկներուն :

Յեղափոխութեան ամէնէն տաք շրջանին մէջ, Եւ-

բոպացի կամաւոր մը այցելուէն հան կ'երթայ ծովակալ Քանարիսի կնոջ, որ նոյն միջոցին փամփուշտ պատ-  
րաստելու զբաղած էր: Եւ բոպացին, խօսքը կնոջ ուղ-  
ղելով կ'ըսէ. «Տիկի՛ն, կարիճ ամուսին մը ունեցած ըլ-  
լալնուդ համար, ձեզի կը շնորհաւորեմ»: Առ որ կը պա-  
տասխանէ կինը, բսելով.

«Եթէ Քանարիս կարիճ մը եղած չըլար, կը կար-  
ձե՞ս որ նետը ամուսնանալ յանձն տանէի»:




Մարթո-Պոմարիսի մահը

8. ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆԸ. — Մինչդեռ Յոյները 150ի չափ թեթեւաչարժ հրձիգ նաւերով Արշի-  
պեղազոսի և Միջերկրականի մէջ Օսմանեան նաւեր  
կ'այրէին ու նաւաստին կ'սպաննէին, մինչդեռ Եպի-




բոսի, Պառնասի ու Տայդէտի լեռնադնակ և աւազակաբարոյ Բլիճքիները՝ Յոյն կղերին գործնական քաջաւերանքով, ցամաքի վրայ Թուրքերը կը հալածէին, միւս կողմանէ՝ Մուտավիա և Վալաքիա, Ռուսիոյ Նիֆոլա Ա. կայսեր թիւրքութեամբ և իր անձնական թիկնապաններէն Ալեքսանդր Իփսիլանդի իշխանին ձեռքով՝ ապրտամբութեան դրօշ կը սփարդէին :



Օսմանեան նաւատորմին նրկիզումը

Սուլթան Մահմուտ, նախ՝ յեղափոխութեան բոյն դարձած վերոյիշեալ երկիրները բանակ մը զրկեց որ ապստամբները զարկաւ ջրուեց և անոնց պարազլուխներէն շատերն ալ Պոլիս բերուելով զլիսատուեցան : Իսկ երբ Տէփէլէնլին բոլորովին մէջտեղէն վերցաւ, Ալպա-

նիոյ բանակին հրամանատար ու երկուելի ռազմագէտ  
 Խուրչիտ փաշա՝ իր ըստը ոյժովը մտաւ Յունաստան,  
 Եւլադան նուաճեց և հասաւ մինչեւ Կորնթոս՝ ուր կը  
 գտնուէր Յունաց առժամեայ կառավարութեան կեդրոնը։  
 Միեւնոյն ժամանակ, Օսմանցիք Քիոս կղզին պա-  
 շարելով՝ 50,000 բնակիչ ջարդեցին։ Բայց երբ Յոյները



### Ծովակալ Միաուլիս

Կրեաէի մօտ Գարա Մէ՛նէմէա փաշա ծովակալին տոր-  
 միզն այրեցին, Սուլթան Մահմուտ սաստիկ զայրացած,  
 ահագին բանակ մը յանձնեց Բէշիա փաշայի որ Եւլա-  
 դան կրակի և սուրի մասանկէ յետոյ, տիրեց նաեւ Մօ-  
 ռայի կարեւոր քաղաքներուն, որով Յոյները իրենց կրած  
 այս ջախջախիչ պարտութենէն յուսահատ, դիմեցին Եւ-

բողական տէրութեանց օժանդակութիւնը խնդրելու :  
 Իրաւ է որ Եւրոպայի հասարակաց կարծիքը ջերմապէս  
 համակիր էր Հոմերի և Պերիկլէսի հայրենեաց դատին ,  
 թէպէտ Հելլէն գրականութեան և անոր փառաւոր անց-  
 եալին և անդուն սիրահար Եւրոպացի կամաւորներ՝  
 Յոյներուն հետ ուս ուսի կը պատերազմէին , սակայն Եւ-  
 րոպական դիւանագիտութիւնը՝ սպագայ անկախ Յու-  
 նաստանի մը գոյութեան մասին՝ իր նիւթական շահե-  
 բուն տեսակէտով՝ տակաւին ինքն իր մէջ չէր կրցած  
 համաձայնիլ : Հետեւապէս՝ Յոյներուն կը մնար տակա-  
 ւին սպասել և յուսալ , և տակաւին անհամար կեանքեր  
 դռնել՝ իրենց նպատակին իրագործմանը համար :

## ՄԻՍՈՒՆԿԻԻ ԱՌՈՒՄԸ

Յունական ապստամբու-  
 թեան միջոցին , Օսմ. Սուլ-  
 թանին ամէնէն մեծ զօրա-  
 վիզն եղաւ՝ Եգիպտոսի կու-  
 սակալին Իպրահիմ փաշա  
 որդին , որ 15,000 քաջա-  
 մարդ զօրքով՝ վերջին հար-  
 ուածը առաւ Յունաց ապրս-  
 տամբութեան : Արդէն Տրամ-  
 Ալի , Սիւսրէվ և Բէշիա փա-  
 շաները՝ Մօրայի ու Ելլադա-  
 յի մէջ , ծովու ու ցամաքի  
 վրայ ապ ստամբները նուա-  
 ճելու զրադած էին , երբ Իպ-  
 րահիմ փաշա զնաց իր բանակով միացաւ անոնց և Մի-  
 սոլունիի բերդաքաղաքը ծովէն ու ցամաքէն պաշարեց :  
 Վամանակակից պատմութեան մէջ այնքան նշանաւոր



Իպրահիմ փաշա

եղող այս պաշարումը տեւեց ամբողջ հինգ ամիս՝ որու յաջորդեց սոսկալի սով մը։ Սակայն պաշարեալներուն մտքէն իսկ չէր անցնէր անձնատուր ըլլալ, ընդհակառակը, այր, կին, ծեր, մանուկ և վիրաւորեալներ, իրենց նախնեաց համբաւին արժանի ճշմարիտ դիւցապնութեամբ մը դիմադրելով՝ միայն մարդկորէն անկարելիին առջեւ տեղի տուին։ Արդէն 1800 Սուլթաններ՝ գիշերանց խոյս տուած էին, այնպէս որ, երբ Օսմանցիք քաղաք մտնելու



Լօրս Պայրնի հանդիսաւոր ուխտը Մաբօ-Պօժարիսի գերեզմանին վրայ վրայ էին, 15,000 բնակիչէն հազիւ մէկ քառորդը մնացած էր։ Ասոնք ալ, փոխանակ անձնատուր ըլլալու և կամ շնորհ խնդրելու, հաւաքուեցան իրենց Խրիստոս-Քալիսալիս Մետրապօլիտին շուրջը որ, «Յիշեալ՝ զմեզ, Տէ՛ր» գոչելով՝ կրակ տուաւ վառօղի տակաւններուն և իր հայրենասէր կտրիճներուն հետ թաղուեցաւ քաղաքին աւերակներուն ներքեւ (19 Ապրիլ 1826)։ Իսկ 1800 փախըստական քաղաքացի, 900 կիներու և սղոց հետ, 15 հազար բնակիչ պարունակող նշանաւոր բերդաքաղաքի

մը իրր վերջին մնացորդներ, գերի ինկան պաշարողներուն ձեռքը :

Յունական ապստամբութեան մասնակցող Եւրոպացի բազմաթիւ կամաւորներուն մէջ կը գտնուէր նաեւ Անգլիացի հռչակաւոր բանաստեղծ Լորտ Պայրըն, որ Միսոլոնկիի առումն իմանալով՝ սրտին ցաւէն մեռաւ :

Այս նշանաւոր դէպքէն քանի մը օր յետոյ, Աթէնք ալ Օսմանցիներուն ձեռքն անցաւ, հակառակ Յապփիէ ֆրանսացի գնդապետին արի դիմադրութեան : Նոյնպէս, Իպրահիմ փաշա, իր յաղթական բանակը դէպ ի Պելոպոնէս յառաջ վարելով՝ Նաւարինի, Քալամատայի և Քրիփոլիցայի տիրեց, և այսպէս Յունական ապստամբութեան ճիշտ վերջին հարուածը արուած միջոցին : Եւրոպական երեք մեծ տէրութիւններ՝ Անգլիա, Ֆրանսա և Ռուսիա միջնորդելով՝ պահանջեցին երկուստեք վերջ տալ թշնամութեանց և Յունական խնդրոյն կարգադրութիւնը իրենց յանձնել : Իսկ 1827 Յուլիս ճին, Լոնտոնի մէջ կնքուած դաշնադրութեամբ, մասնաւորապէս Անգլիա և Ռուսիա՝ իրենց մէջ կը համաձայնէին այս կարեւոր խնդրոյն լուծումը փութացնելու համար :

## Ե Լ Ե Ն Ի Չ Է Ր Ի Ն Ե Ր Ո Ի Ն Ջ Ն Ջ Ո Ի Ի Լ Ը

Ինչպէս տեսանք, տակաւին շատ երիտասարդ էր Սուլթան Մահմուտ, երբ 1808ին ականատես եղած էր՝ եղբերական մահուանը տարաբախդ Սուլթան Սէլիմ Գ. ի, որ փորձած էր՝ տէրութիւնը անխուսափելի կործանումէ ազատելու համար, զինուորական և վարչական վերանորոգումներ ի գործ դնել :

Սուլթան Մահմուտ՝ սրտի մորմոքով կը յիշէր Ալէմտար Մուսթաֆա փաշան — որու պարտական էր իր կեանքն ու զահը — և որ ա՛ն ալ զո՛հ գացած էր արիւն-

աուշա Ենիշէրիններուն վրէժխնդրութեան՝ իր զինուորական վերանորոգութեան ձեռնարկին համար :

Սուլթան Մահմուտ՝ գործնական դասն փորձերով համոզում գոյացուցած էր թէ՛ իր իշխանութեան օրով տեղի ունեցած ներքին և արտաքին պատերազմներու մէջ՝ Օսմ. զինուց անյաջողութեան միակ և զխաւոր պատճառները՝ Եէնիշէրի անունը կրող վայրենի խուժանը և զինուորական կորգապահութիւնը մահու չափ ատող այս պատուհաս Օճախը եղած էր :

Սուլթան Մահմուտ՝ ճշմարիտ հայրենասէր և ժամանակին ոգին ու անհրաժեշտ պէտքերը խորապէս ուսումնասիրող Սուլթան Սէլիմ Գ.ի արտաական զաղափարներուն հաւատարիմ ժառանգորդ և կերպով մը, անոր երկրաչէն գաղափարները իրագործելու մասին ինքզինքը կտակակատար զգալով՝ ուխտած էր՝ կա՛մ Եէնիշէրինները սանձի և օրէնքի հարտակեցնել և կամ իսպա՛ռ ազատել Օսմ. Պետութիւնը՝ որջացած այդ բմբոստ և անիշխան խուժանին ձեռքէն :

Սուլթան Մահմուտ՝ մասնաւորապէս վէհապահներու և Յունական ազատամբութեան շրջաններուն մէջ՝ խորին հիացումով տեսած էր թէ՛ Եւրոպական նոր դրութեամբ կազմակերպուած այի մը Եգիպտական զինուորներ՝ Մեհեմեմէս Ալիի օրդի Բպրանիլի փաշայի ձեռքին տակ ի՛նչ հրաշքներ գործեր և անյուսալի ի՛նչ յաջողութիւններ կրցեր էին ձեռք բերել . բաղդատմամբ՝ Նաղարեան զինուորական կորգ ու սարքով իր խուռներամ Եէնիշէրիներուն :

Այս ամէն բանաւոր պատճառներով, Սուլթան Մահմուտ վճռապէս որոշած էր զերազանցապէս զինուորական իր տէրութիւնը կա՛մ ժամանակին պահանջումներուն համաձայն կանոնաւոր բանակով մը օժտել և կա՛մ Ենիշէրի անունը աշխարհէ վերցնել :

Որքան հսկայ և դժուարին էր այս ծրագիրը, նոյնքան ալ անպարտելի էր կամքը և պողպատէ էր հաստատամտութիւնը առիւծասիրտ այս Սուլթանին՝ որու վիճակուած էր՝ դարերէ ի վեր Օսմ. պետութեան փորձանք եղող՝ Հոսովմայեցոց Պրեսորեանին և Ռուսական Սիբիրիցիներուն նմանող կիսավայրենի այս անիշխան բանակը միանգամ ընդ միշտ բնաջինջ ընելու ամենամեծ փառքը ։

Հետեւապէս՝ անհիմն և անիրաւ է օտար պատմագիրներէ ոմանց այն առարկութիւնը թէ՛ Սուլթան Մահմուտ մեծ սխալ մը գործեց՝ գէշ աղէկ՝ տէրութեան միակ զինուորական ոյժը եղող Եէնիչէրիները բնաջինջ վերցնելով, առանց անոնց տեղը նոր ոյժ մը գնելու ։ Բայց արդէն, երկրի մը զինուորութիւնը երբ վերին իշխանութիւն չի ճանչնար, երբ ըստ կամս ութը Սուլթաններ գահընկէց կամ խեղդամահ ընելով իր ուզած անձը գահ կը բարձրացնէ, երբ ամէն տեսակ ոճիր անպատիժ գործելու առանձնաչնորումն ունենալ կը յաւակնի, երբ ժողովուրդին կեանքն ու ստացուածքը իր քմահաճոյքին խաղալիկ կը դառնայ, երբ պետութեան համար՝ զինուորական անհրաժեշտ նորութիւնները իբր կեալուրի գործ արձամարելով՝ անոր հեղինակներուն մահ կ'սպառնայ, այդ տեսակ բանակ մը — ինչպէս էին Եէնիչէրիք — տէրութեան համար ո՛չ թէ զինուորական ոյժ՝ այլ՝ մեայուն վտանգ և տեւական անիշխանութեան բոյն մ'ըլլալէ տարբեր բանի չպիտի ծառայէր և հետեւապէս՝ ԳՈՅՈՒԹԵԱՆ ԻՐԱՒԻՍԻՆԻՔ ՉՈՒՆԷՐ ։

Ինչպէս տեսանք, Միսուրնիկի առումով, Յունաստանի ապստամբութեան գործը, գոնէ՛ երեւութապէս վերջացած կը նկատուէր ։ Ուստի, Սուլթան Մահմուտ, արտաքին զբաղումներէ և կնճիւններէ ինքզինքը ազատ տեսնելով՝ իր գահակալութեան առաջին օրէն խկ մտա-

գրած ու տարիներու և յաջորդական դէպքերու մէջ՝ փորձով համոզում գոյացուցած զինուորական վերակազմութեան իր ծրագիրը գործադրելու ժամանակը հասած նկատեց :

Ուստի, տէրութեան բարձրաստիճան իւլէմաները, քաղաքային ու զինուորական աւագ պաշտօնեաները ի ժողով գումարելով՝ Սուլթան Մահմուտ անոնց ներկայութեանը պարզեց երկրին ամենացաւալի վիճակը, Եէնիչէրիներուն անհանդուրժելի ըմբոստութիւնը, կանաւոր բանակի մը չգոյութեան պատճառաւ՝ տէրութեան կրած և տակաւին կրելիք նիւթական անդարմամանելի կորուստները, և հանդիսաւոր կերպով յայտարարեց թէ՛ իր բացարձակ կամքն էր՝ հայրենիքին փրկութեանը սիրոյն, կա՛մ Եէնիչէրիները կանոնաւոր բանակի վերածել և կամ ի սպառ քնաջինջ ընել զանոնք, ներկայ ժողովականք՝ միաձայնութեամբ համամիտ կը գտնուին շատատամիտ Սուլթանին այս փրկարար առաջադրութեան և հայրենասիրական գաղափարներուն : Բայց դրժբախւարար, արմատական այս խնդիրը միմիայն համամտութեամբ կարելի չէր լուծել :

Ահաւասիկ, մահու և կենաց այս դժուարին վայրկեանին է որ Սուլթան Մահմուտի օգնութեան կը հասնի իր ամէնէն անձնուէր պաշտօնեան և ամէնէն անշահախնդիր ու սիրական խորհրդականը եղող Մեմ ՋԱՅԸ — Պէղճեան Յարութիւն Ամիրան — որ խորհուրդ կուտայ իր Վեհ. Տիրոջ, որպէս զի փոխանակ գահավէժ միջոցներով գործին յաջողութիւնը վտանգելու, բերդը ներսէն գրաւէ, այսինքն՝ Եէնիչէրիներու ամէնէն ազդեցիկ պարագլուխներէն մէկ քանին իր կողմը շահի՛ զանոնք իր նպատակին իրագործման իրր ապահով միջոցներ ծառայեցնելու համար : Եւ այս փափուկ ու վտանգաւոր պաշտօնը Պէղճեանն ինքն ստանձնելով՝ կ'երթայ անձամբ



կը տեսնուի Տօբուզումնու Ուսա՝ Հիւսէյին Աղա անուն՝ աղուէսին մատ խածցնել տուող խորամանկ Եէնիչէրիին հետ, որու պարզելէ յետոյ Սուլթանին և բոլոր աւագանիին զինուորական վերակազմութեան ծրագիրը և զայն ամէն զինով գործադրելու հաստատ որոշումը, մեծամեծ պարգեւներով և ապագայ բարձր պաշտօններու շլացուցիչ խոստումներով՝ կը յաջողի Սուլթանին հաւատարմաբար ծառայելու և անոր նպատակին իրագործման բոլոր հողիով աշխատելու մասին՝ հաստատ խոստում և երդում առնել, Եւ որպէս զի ստանձնած կարեւոր պաշտօնը աւելի դիւրաւ կարենայ ի գլուխ հանել, Սուլթան Մահմուտ հեղձեալէ աստիճանի բարձրացում կը շնորհէ այս համբաւաւոր Եէնիչէրիին, որ քիչ ատենի մէջ կ'ըլլայ Պէօլիս Աղասը, Գուշ Քէսիլուսասը, Եկնիչէրի Աղասը և վերջապէս փաշա, Աղա փաշա անունով:

Թորապէտ Եէնիչէրիին անմիջապէս գործի կը ձեռնարկէ, Մէկ կողմանէ՝ Մայրաքաղաքին մէջ գտնուած խռովարար Ուսաներու կատաղի պարագլուխները Ասիոյ հեռաւոր վայրերը կ'աքսորէ, իր անձին և ստանձնած սպառնալից պաշտօնին հակառակորդները՝ իր բազմաթիւ լրտեսներուն շնորհիւ ձերբակալելով խեղդամահ կ'ըսպաննէ, վայրագ խռովարարներու գաղտնի բոյները բնաջինջ կը քանդէ, և միւս կողմանէ՝ իրեն վաղածանօթ և ազգեցիկ պետերը այլ եւ այլ վարպետ միջոցներով կը յաջողի իր կողմը շահիլ, Այս վերջիններուն մէջ, իրենց վարած պաշտօնին կարեւորութեամբ, իրենց թիւով և համբաւեալ ազգեցութեամբը ամէնէն նշանաւորներն էին Սեւ Մովու Նեղուցին բերդապահ Եէնիչէրիները, որոնք կը կոչուէին Գաշէ Աղասը կամ Պողագ Մուհամբըրը:

Թորամանկն Աղա փաշա, այս դժուարութեան ալ յաղթելու և այս վերջին պատնէշն ալ քանդել կարենալու համար, Պէզճեանի միջոցաւ կը դիմէ Սուլթանին:

ինդրելով որ, իրմէ առէ Եէնիչէրի Աղասիութեան պաշտօնը և զինքը Վասիսրի ամբողջներուն հրամանատար կարգէ :

Ահաւասիկ, իր վարած այս վերջին պաշտօնի պահուն է որ, Աղա Հիւսէյին փաշա՝ դրամական մեծամեծ նուէրներով և ապագայի շողջողուն խոստումներով կը յաջողի խոստում առնել իր զինակից վաղեմի ընկերներէն, որպէս զի մինչեւ ի մահ հաւատարմարար ծառային իրենց



Աղա փաշա

վեհապետին և անոր նպատակին իրագործման համար արիւննին չխնային : Վարպետորդի Եէնիչէրին չի մոռնար աւելցնել նաեւ որ, նոյն իսկ Եէնիչէրիները բնաջինջ ընել հարկ եղած պարագային ալ, Սուլթան Մահմուտ այժմէն խոստացած է իր հաւատարիմ զօրականները բարձր պաշտօններով և նիւթական պարգեւներով վար-

ձատրել . . . :

Այս ամէն կանխահոգ միջոցներն ապահովելէ յետոյ, Սուլթան Մահմուտ իսկոյն գործի կը ձեռնարկէ : Իրաւէ կ'ընէ որ, ամէն Եէնիչէրի, Էջիինճի անունով կազմուած նոր զորադուռնիին հետ՝ պարաւուր պիտի ըլլայ զինուորական նոր օրէնքին հպատակելով՝ իր հրամանատարին առաջնորդութեամբ և նոր զէնքերով մարդանքներ կատարել : Եէնիչէրիները որոնք շատ մօտէն տեղեակ էին իրենց նախկին ընկեր ու գործակից Աղա Հիւսէյին փաշայի գիւսային խորամանկութեանը, թէպէտ իրենց աչքովը տեսած էին իրենց հարիւրաւոր ընկերներուն անոր ձեռքով չարաչար սատակումը, սակայն յուսահատական վերջին փորձի մըն ալ զիմելով՝ բացէ ի բաց կը մերժեն Սուլթանին հրամանը կատարել և Եկմիշճի

Մուսրափա, Մուսա Ռուսա և Տեղի Մեհեմեդէս անուն-  
 արիւնարբու չարագործներուն առաջնորդութեամբը  
 զինուելով՝ զիշերանց խուռներամ կը յարձակին ապա-  
 րանքին վրայ Մեծ Եպարքոս Մէհէմեդէտ Սէլիմ փաշայի  
 — որ բարեբախդարար բացակայ կը գտնուէր նոյն զի-  
 շերը — և բոլոր տնեցիքը անխնայ սուրէ անդընելէ և  
 արժէքաւոր ամէն առարկայ կողոպտելէ յետոյ՝ անուլի  
 լուտանքներ տեղացնելով կը մեկնին : Իսկ նետուեալ ա-  
 ռաւօտուն, աւելի խուռն բաղմութեամբ կը խուժեն Աղա  
 Գարուսին, այսինքն՝ իրենց պետին պաշտօնատունը,  
 պահանջելով Գուլ Քէտիսիւտասը Ճեմալէսին Աղայէն,  
 որպէս զի իրենց ընկերանայ դէպի կայսերական պալատ,  
 ստիպելու համար Սուլթանը որ, կեալառական այս  
 նորութեանց թելադրիչ ու նեղինակները իրենց ձեռքը  
 յանձնէ : Սակայն Գուլ Քէտիսիւտասին, արդէն նախա-  
 պէս Աղա Հիւսէյին փաշայի հետ ամէն ինչ ծրագրած  
 ըլլալով՝ խորհուրդ կուտայ արեան ծարաւի այս ճիւղ-  
 ներուն որպէսզի Մայրաքաղաքին մէջ գտնուած իրենց  
 բոլոր ընկերներով համախմբուին իրենց էթ Մէյտանիի  
 զօրանոցները՝ ուր կը խոստանայ ինքն ալ անձամբ եր-  
 թալ հոն և զիրենք պալատ տաջնորդել :

Սուլթան Մամուտ այս ամէն անցած դարձածն ի-  
 մանալով, անմիջապէս Պէշիքթաշէն նաւ կը նստի և կը  
 փութայ Թօփղարուի պալատը՝ ուր օրդէն հաւաքուած  
 էին Մեծ Եպարքոս Մէհէմեդէտ Սէլիմ, Աղա Հիւսէյին և  
 Սկիւտարի կառավարիչ Իզզէթ Մէհէմեդէտ փաշաներէն  
 ի գատ, Շէյխ իւլ Իսլամը, Նագիպ-իւլ-Էշրաֆը, զաղաս-  
 քէրներ, իւլէմաներ ու պետական բարձրաստիճան պաշ-  
 տօնատարներ՝ որոնց ներկայութեանը անդամ մըն ալ  
 պարզելով զինուորական կարգի և օրինաց հնազանդե-  
 լու մասին՝ Եէնիչերեաց մինչեւ վերջի պահուն ցոյց  
 տուած անհանդուրժելի ըմբոստութիւնը, ստքի կրկանգ-

նի յանկարծ և տիրական ձայնով ժը կը հարցնէ թէ՛ «Ըստ օրինի ինչ պատիժ կը վայլէ այս ճիւղահերուն» :

Ներկաները միաբերան և վրէժխնդիր ոգւով մը կը գոչեն . ՄԱՂ : Այն տանն կը հրամայէ Սուլթան Մահմուտ որպէս զի Սանճագը Շերիֆը պարզուի և անոր նկրքեւ հաւաքունն բոլոր հաւատարիմ Իսլամները , իսկ ո՛չ Մահմէտական հասարակութիւններուն ալ զէնք կը բաժնուի՝ որպէս զի աջակցին կանոնաւոր բանակին և իրենց կուտակուած վրէժները իրենց ձեռքովը լուծեն Յէնիչէրի գազաններէն :

Երբ մէկ կողմէ՛ Սուլթան Ահմէտի մզկիթին մէջ , Շէյխ-իւլ-Իսլամը , իւլէմայք և աւագանին ջերմնտանդութեամբ աղօթքի կեցած էին՝ տեղի ունենալիք այս վճռական պայքարին յաջողութեան համար , երբ հաղութէ գերագոյն ճիգերով կրցած էին համոզել կրակ ու բոց Սուլթանը որպէս զի ինքը չըմանակցի այս արիւնալի բաղխումին , անդին , Ազա Հիւսէյին և Իզզէթ Մէհմէտ փաշաները՝ իրենց Թօփճը , Գոււպարաճը և Պօսքանճը անուն զօրագունդերով — որոնց եկած միացած էին զինուորական վարժարանի աշակերտները — էթ Մէյտանիի զօրանոցները պաշարելով , փախուստի ամէն միջոց կը փակեն : Թնդանօթածիգ զօրաց հարիւրապետ Գարսանկհէնկեւ Մուսրափա աղա , վճռական գործողութեան ձեռնարկելէ առաջ , ի դիմաց Սուլթանին , վերջին փորձ մըն ալ կ'ընէ , յորդորելով Յէնիչէրիները , որպէս զի հպատակին Սուլթանին կամաց և անվրիպելի սատակումէ մը ազատին : Սակայն երբ իր յորդորներուն ստակալի յիշոցներով և մահուան սպառնալիքներով կը պատասխանեն , այն տանն , Գարաճէհէննէմ իր ստացած հրահանգին համաձայն , կ'սկսի ուժբարկոծել անոնց զօրանոցները , որոնք իսկոյն կրակ կ'առնեն : Յէնիչէրիք , իրենց զինուորական կօշտ միջոցներով անկարող էին

կազմակերպեալ զօրութեան մը դիմակալել, ուստի սար-  
սափահար և միահամուռ կ'սկսին դէպի դուրս խուժելով՝  
փախուսափ և փրկութեան միջոց մը փնտռել: Սակայն,  
ինչպէս տեսանք, ամէն անցք և ազատութեան ամէն  
ճամբայ խնամով փակուած ըլլալով՝ նրեղէն շղթայի մը  
մէջ կը պրկուին, այնպէս որ, ներսէն՝ հուր, դուրսէն՝  
սուր, զարհուրելի ջարդ մը կուսան դարձաւ որ պատուհաս  
այս ճիւղահերուն՝ որոնցմէ միւսնոյն օրուան մէջ 30,000է  
աւելին բնաջինջ կ'ըլլայ: Իսկ թէ՛ Մայրաքաղաքին և  
թէ՛ գաւառներու մէջ ծակամուտ կզած փախստական  
Եէնիշէրիներէն ալ 80,000ի շափ հետզհետէ ձերբակալ-  
ուելով՝ նրապարակաւ գլխատուեցան:

Պատմական այս նշանաւոր դէպքը, որ տեղի ունեցաւ Քրիս-  
տոսի 1826 Յունիս 16 թուականին, Թուրք պատմագիրները կոչած են  
ԿԱԶԱՅԻ ԷՔՊԷՄ, այսինքն՝ Ամենամեծ Մարտ Գրայ Կրայ և որո իւրա-  
քանչիւր տասին թուական արժէքը գումարելով կ'ուենանք Հիճրէթի  
1241 ճիշտ այն նշանաւոր թուականը՝ երբ տեղի ունեցաւ Եէնիշէրի-  
ներուն ջնջումը Այսպէս՝

غزای اکبر

|                                           |                                           |
|-------------------------------------------|-------------------------------------------|
| ۱ = ا                                     | ۱۰۰۰ = غ                                  |
| ۲۰ = ك                                    | ۷ = ز                                     |
| ۲ = ب                                     | ۱ = ا                                     |
| ۲۰۰ = ر                                   | ۱۰ = ی                                    |
| <hr style="width: 50%; margin: 0 auto;"/> | <hr style="width: 50%; margin: 0 auto;"/> |
| ۲۲۳ اکبر                                  | ۱۰۱۸ غزای                                 |
| ۱۰۱۸                                      |                                           |
| ۲۲۳                                       |                                           |
| <hr style="width: 50%; margin: 0 auto;"/> |                                           |
| ۱۲۴۱                                      |                                           |

Դարձեալ, պատմական այս կարևոր դէպքին առթիւ՝  
ժամանակակից հաշակաւոր բանաստեղծ Քէյհան Չաշե Իզ-  
զէք Մօլլա՝ — ապագայ նշանաւոր դիւանապէտ Ֆուատ  
փաշայի հայրը — հետեւեալ շատ զեղեցիկ և իմաստալից

տողերը գրած է՝ ի պատիւ մեծանուն Սուլթան Մահ-  
մուտ Բ. ի կատարած յիշատակաց արժանի աշխատանք  
յազմանակին ։



Քէչէնի Զատ Իզդէր Մօլլա

Թախքը շնորհակցեմ սէրիդ շահր հիմանը խա՛լ իսուպ,  
Գրքը սէվլա սայիրինէ պուղղ իսէն զայիմլերի:  
Կիքսի նէվր ու կասր իլէ իւշ սանէ Սուլթան Մուարաֆա,  
Շերպէրը համի շէնաշէր իլէ զանցը լէպլերի:  
Անմէ, Իպրանիմ, Մուհամմէ, նէ՛մ սէ Օսման ու Սէլիմ,  
Խալ օլուհնուլար՝ հիման օրնուշ իէն Քերման պերի:  
Շանի սէվրանէ սէմլ՞զ մի բունի Օսմանը շէնի,  
«Պիր կազա էքսին էի՛ խոսն՛ւտ էլլէսին Փէլզամպերի»:  
Խան Մուրաւ, օլ զանհամանա պէտլլէ էրմլ՞զ մի խիբապ,  
«Ամէրի՛ն, է՛յ բուզիկեարքն շէն սիւվարի սամէրի»:  
Հազ թէ՛ալա շանի սէվրանէ միւվէմմազ էլլէլ,  
Յարզ իսի լանէր օնալա՛ իֆի եիւզ երլսան պերի:  
Զօրպա զալգ՛ա, Զօրսլա զալգ՛ա, զալգսլար սիպը պիւրիւն,  
Հանս իւլիլլան, սէլլիլէ շէմ էլլէսի շուրու շերի:

Սուլթան Մահմուտ իր տարած այս վճռական յաղթանակէն չափազանց գոհ՝ մեծամեծ պարգեւներով և աստիճաններով վարձատրեց իր հաւատարիմ զօրականներն ու աւագանին, և ձեռնարկեց իր սելեուուն գազափարը եղող զինուորական վերակազմութեան: Այսպէս, զինուորական հին կարգ ու սարքը բոլորովին ջնջուելով, նորաձեւ համազգեստներով, նոր զէնքերով ու Եւրոպական դրութեամբ նոր զօրախումբներ կազմուեցան «Ասաքիրի Մանսուրէյի Մուհամմէտիյէ» անունով: Առաջին Սէրասքէր (Սպայապետ, Պատերազմական գործոց նախարար) եղաւ Հիւսէյին Աղա փաշան և էսկի Սարայը վերածուեցաւ Պապը Սերասքէրի: Իսկ Աղա Գափուսին՝ որ պաշտօնատեղին էր Եէնիչէրի Աղասին, եղաւ Եէյի-իւլ-Իսլամ Գափուսի:

Սուլթան Մահմուտ, Տափուտ փաշայի, Իւսկիւտարի և Բամիզ Չիֆթլիկի մէջ՝ նորանոր և հոյակապ զօրանոցներէ հ զատ, զինուց գործարաններ և վառօդարաններ ալ կառուցանել տուաւ, Եւրոպայէն ռազմագէտներ հրաւիրեց և անոնց ձեռքով սկսաւ մարզել տալ իր նորակազմ բանակը՝ որու փորձերուն ինքն ալ շատ անգամ ներկայ կը գտնուէր:

Սակայն ցաւալի պարագայ մը՝ Սուլթանին այս ուրախութիւնը դառնութեան վերածեց, նոյն տարւոյ Օգոստոս 18ին պատահեցաւ Հօճա Փաշայի ահաւոր հրդեհը որ, չարունակ 36 ժամ տեւելով՝ քաղաքին մէկ ութերորդ մասը մոխիր դարձուց՝ որու մէջ կը գտնուէին նաև, Գուլմ Գափուսի Մայր Եկեղեցին և Ազգ. Պատրիարքարանը: Գթառատ ու ժողովրդասէր Սուլթան Մահմուտ, այս աղէտէն խորապէս զգածուած, իր պետական հաստատութեանց դուռները և արքունի գանձը բանալով՝ ամէն տեսակ նպաստ և մխիթարութիւն չխնայեց տարաբախդ հրկիզեալներուն:

## Ն Ա Վ Ա Ր Ի Ն Ի Ծ Ո Վ Ա Մ Ա Ր Տ Ը

Մինչդեռ Սուլթան Մահմուտ այս երկրաչէն վերանորոգումներով զբաղած էր, մոխիրի տակ ծածկուած Յունական ապստամբութեան կրակը նորէն արծարծեցաւ : Այս անգամ, Անգլիա՝ խորհելով որ, Ռուսիա Յունական ապստամբութիւնը և Յունագաւան ժողովուրդի մը իրաւանց պաշտպանութիւնը պատրուակ բռնելով մի՛ գուցէ Թուրքիոյ ներքին գործերուն միջամտէ, միացաւ Փրանսայի հետ և 1827 Յուլիս 6ին, Լոնտոնի մէջ կնքեց դաշնագիր մը՝ որու ապա հաւանեցաւ նաեւ՝ Ալեքսանդր Ա ի յաջորդ Նիկողայոս Ա. Ռուսիոյ կայսրը և այսպէս՝ երեք մեծ տէրութիւններ հաւաքաբար դիմեցին Բ. Դրան, որպէս զի Յունական խնդրոյն կարգադրութիւնն իրենց յանձնէ : Սուլթան Մահմուտ մերժեց դաշնակից տէրութեանց այս պահանջումը՝ իրրեւ ոտնձգութիւն իր հպատակաց հետ վարուելու իր վեհապետական բացարձակ անկախութեան : Երեք դաշնակիցները վերջնադրով մը նորէն կրկնեցին իրենց պահանջումը զոր Սուլթան Մահմուտ դարձեալ մերժեց :

Այն ատեն, երեք դաշնակից տէրութեանց նաւատորմը, հրամանատարութեամբ Անգլիացի ծովակալ Բորնիկըրնի, գնաց պաշարեց Թրքո-Եգիպտական հսկայ տորմիլը որ Մորայի արեւմտեան կողմը՝ Նափաւիկի ծոցին մէջ խորոխած կը գտնուէր : Սակայն դաշնակիցները իրենց այս ցոյցով վերջին փորձ մ'ընել կ'ուզէին իրենց առաջարկն ընդունել տալու և այս նպատակաւ պատգամաւորներ զրկեցին Օսմանցի ծովակալին՝ որ մօտեցող նաւակը թշնամական նպատակի մը վերագրելով՝ հրացանի բռնել տուաւ : Դալմեալ կ'ըսուի թէ՛ Իպրահիմ փաշա բանակցելու դացող պատգամաւորները՝ կայմերէն կախել տուաւ, թէ՛ երկու տորմիլներու նաւերուն մէկէն



առանց հրամանի արձակուած թնդանօթի մը հարուածը կ'ըլլայ՝ պատմական այս ծովամարտին պատճառ : Դաշնակից նաւատորմը անմիջապէս սկսաւ անուելի և միօրինակ սմբակոծութեան մը որ երեք ժամուան մէջ Օսմանեան նաւերէն 60էն աւելին հրդեհեց, ընկղմեց և 6000 զինուորներու հետ փճացուց : Հազիւ երկու նաւ յաջողեցան ճողոպրիլ հրեղէն շղթային մէջէն, այս սոսկալի աղէտին գոյժը Պոլիս բերելու համար (20 Հոկտ. 1827) :

Մինչդեռ Ֆրանսայի կարոյրս ժ. արմար թագաւորը, ջերմագին շնորհաւորութիւններ կ'ընդունէր այս մեծ յաջողութեան համար, ընդհակառակը՝ Անգլիոյ Գեորգ Դ. թագաւորը «Աղէտալի Դիպուած, Untoward event» անունով կ'որակէր Օսմ. նաւատորմին կրած այս ջախջախիչ հարուածը որ Ռուսիոյ հացին իւղ պիտի քսէր :

## Ռ Ո Ւ Ս Ա Կ Ա Ն Պ Ա Տ Ե Ր Ա Չ Մ

Սուլթան Մահմուտ իր նաւատորմին կործանման գոյժն առնելով թէպէտ անհնարին վիշտ զգաց, սակայն ո՛չ միայն յանձն չառաւ Յունաց անկախութիւն ապշ, ինչպէս կը պահանջէին դաշնակիցները, այլ և անոնց դէմ պատերազմի պատրաստուեցաւ :

Ուստի, երբ մէկ կողմանէ՝ Անգլիական և Ֆրանսական տորմիդները Յունաստանի ջուրերուն մէջ Օսմանցիներուն դէմ կը պատերազմէին, մինչդեռ 14,000 կամաւոր ու կանոնաւոր զինուորներէ բաղկացած Ֆրանսական բանակ մը Մեզոսի զօրապետին հրամանատարութեամբ Պէլոպոնէս ելլելով՝ Նափարինի և ուրիշ քաղաքներու կը տիրէր, 100,000է բաղկացած Ռուսական վիթխարի բանակ մըն ալ՝ Մեկնիսով և Վորննցով զօրապետներուն առաջնորդութեամբ Փրոսթ գետն անցնելով՝ մինչեւ Վառնա կը յառաջանար : Իսկ Տիպիլի՝ Շումլա և Սիլիսդրէ

բերդաքաղաքները գրաւելով՝ անարգել կը մանէր Ադրբայձանու գոյնը: Ասիոյ կողմն ալ, Փասքվիլիզ զօրավար մտաւ Հայաստան և Կարինն ու Բարերդն առնելով յառաջացաւ Տրապիզոն: Այս բաւական չէր, Անգլիական տորմիդ մըն ալ կուգայ կը պաշարէ Չանաք Քալէի նեղուցը՝ որով Մայրաքաղաքը արտաքին ամէն հաղորդակցութենէ զրկուելով՝ ահռելի սովի մը կ'ենթարկուի:

Մինչդեռ տէրութեան աւագանին շուարած և յուսահատ, ի զուր՝ միջոց ու դարման մը կը փնտռէր՝ Մայրաքաղաքին բնակչութիւնը սովամահ կորուստէ փրկելու համար, հնարամիտն Պէզճեան, կը ներկայանայ իր սիրելի Սուլթանին և խորհուրդ կուտայ հրամայել անմիջապէս՝ որպէս զի մօտակայ դաւաւաններէն ցամաքի ճամբով և առանց որ և է մաքսատուրքի՝ արմաթ և այլ նպարեղէններ փոխադրուին Պոլիս: Այս հրամանը գործադրուելով, քիչ օրէն Մայրաքաղաքը մահացու պատուհասէ մը կը փրկուի: Սուլթան Մահմուտ անհունապէս գոհ մնալով իր անձնուէր պաշտօնէին մատուցած այս թանկագին ծառայութենէն, կը շնորհէ անոր ականակուռ պատուանշան՝ որու կ'արժանան նաեւ՝ Վառօդապետ՝ Տատեան Գրիգոր և Սիմօն ամիրաները:

### ԷՏԻՐՆԷԻ ԴԱՇՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ (1829 Սեպտ 14)

Սակայն Օսմանեան նորավարժ ու սակաւաթիւ զօրքը, հակառակ իր ջոյց սուած արխական ընթացքին և տարած քանի մը նշանակելի յաղթութիւններուն, անկարող էր Եւրոպական ստուարաթիւ ու կանոնաւոր բանակներու դիմադրել: Ուստի Սուլթան Մահմուտ, 1829, Սեպտ. 14ին, հարկադրուեցաւ վերջ տալ թշնամութեանց և Ռուսիոյ հետ կնքել Էտրնէի դաշնադրութիւնը՝ որու զօրութեամբ՝

1. Մուսավրա, Վալաքիա և Սերպիա՝ Թուրքիոյ հարկատու և Ռուսաց պաշտպանութեան՝ ներքեւ ինքնօրէն իշխանութիւններ կ'ըլլային :

2. Գանուբի գետաբերանը, և Ասիոյ կողմն ալ Ախոյցխա, Անախա, Փօթի և Ախալսիկիք քաղաքները Ռուսիոյ պիտի մնային :

4. Չանաք-Քալէյի և Պոսփորի նեղուցները բաց պիտի ըլլային բոլոր աէրութեանց առեւտրական նաւերուն առջեւ, և վերջապէս՝

4. Յունաստան անկախ պիտի հռչակուէր Օսմ. պետութենէն :

Այսպէս, Յունաստան ինը տարի իր անկախութեանն համար՝ անհաւասար զօրութեամբ պայքարելէ յետոյ, Եւրոպական երեք մեծ տէրութեանց ուղղակի պաշտպանութեան եւ զինեալ միջամտութեանը շնորհիւ՝ 1830ին եղաւ Մանամադրական Միտպետութիւն, և առջին թագաւոր ունեցաւ Պաւերայի արքայազուն մը, Ռոբն Ա. որ 32 տարի իշխանութիւն վայելէ յետոյ հրաժարեցաւ և իրեն յաջորդեց՝ Տանրմարքայի արքայական ընտանիքէն Գեորգ Ա. որ 1866էն ի վեր կր թագաւորէ :

14. ՖՐԱՆՍԱ ԾԷՉԱՅԻՐԻ ԿԸ ՏԻՐԷ — Միեւնոյն տարին (1830), Օսմանցիք կորուսին նաեւ Ճէզայիրը՝ հետեւեալ պարագաներու մէջ :

Ինչպէս տեսանք, այս երկիրը դարերէ ի վեր ծովածէններու բոյն մը դարձած ըլլալով՝ ա՛ն ու սարսափ կ'ազդէր Միջերկրականի մէջ երթեւեկող վաճառական նաւերու՝ որոնք շատ անգամ կը կողոպտուէին և հարուստ ուղևորներն ալ առեւանգուելով՝ հազիւ կարող կ'ըլլային գրամական մեծամեծ փրկանքներով իրենց կեանքն ազատել :

Այս կարգի բարբարոսական ղէպքի մը առթիւ, Ֆրանսական հիւպատոսը կը ներկայանայ Ճէզայիրի Հիւ-

սէյին իշխանին (Տայ) . և իր կտաւարութեան անունով քիչ մը խիստ լեզուաւ կը բողոքէ տեղի սենեցած աւազակային դէպքերու համար : Տայը . իր արժանապատուութիւնը վիրաւորուած զգալով՝ սաստիկ կը զայրանայ և ռաքի ելլելով՝ փառաւոր ազատիկ մը կը փակցնէ Հիւ-



Յունաստանի առաջին քաղաք ՌթՈՆ Ա.

պատասխին (բոս սմանց , հովանագով գլխուն կ'իջեցնէ) ։ Այս վերջինը , հնարձակաւութիւն յայտնելով , գլխարկը կը դնէ ու կը մեկնի ։

Սակայն քիչ յետոյ , Ֆրանսական ասրմիզ մը կուգայ Ափրիկէ , կը սմբակոծէ ճեղայիւ քաղաքը և վեր-

Չապէս՝ 18 տարուան երկարատեւ պատերազմներէ յետոյ, Ֆրանսացիք ամբողջովին կը տիրանան այս ընդարձակ և հարուստ երկրին՝ որ արդէն միայն անունով Օսմ. պետութեան մաս կը կազմէր։ Այս երկարատեւ պայքարին մէջ, իր դիւցազնական մաքառումներով մեծ անուն կը շահի Ապս-իւլ-Փասեր՝ Ճէզայիլի հայրենասէր էմիրը, որ ի վերջոյ՝ նոյնքան ալ անկեղծ Ֆրանսասէր մը կը դառնայ։

Սուլթան Մահմուտ, այս դէպքերու միջոցին, 1835ին, Ախրիկեան Թարաղուս գրկեց Մուսրաֆա Նեհիպ փա-



Ապս-իւլ-Փասեր

շան որ գրեթէ առանց ընդդիմութեան՝ վերջնապէս տիրեց այս երկրին որ երկու դարէ ի վեր հան տիրող ցեղին, վերջին Պէյլ Ապսի-Ալին ալ իր ամբողջ ընտանիքովը գերի բերաւ Պոլիս։

## ԵԳԻՊՏՈՒ ԿՈՒՍԱԿԱՆ և ՊՍՏՄԵՌԻԹԻՆԸ

Պատմութեան մէջ տեսնուած կզական դէմքերէն-

մէկն է՝ Եգիպտոսի կուսակալ Ալպանացի Մեհմեմէկ Ալի փաշա, որ ինչպէս ակտանք, թէ՛ Վէհնապիներու և թէ՛ Յուճական ապստամբութեան ժամանակ, թանկագին ծառայութիւններ մատուցած էր Սուլթան Մահմուտի:

Մէհմեմէտ Ալի ծնած էր 1769ին Քալպալայի մէջ և ծանօթ էր Մեհմեմէկ Փեհլիվան անունով, նախ՝ մաքսախոյզ, ապա՝ իրրու կամաւոր եկած էր Եգիպտոս: Պոնափրթի արշաւանքին ժամանակ Պրանսա կրթալով՝ Լիօնի մէջ Պրանսացի վաճառականի մը քով ծառայած և այս առթիւ՝ թէ՛ երկրին լեզուն սորված և թէ՛ մօտէն ծանօթացած էր այս մեծ ու համակրելի ազգին՝ որու նկատմամբ խորին և անասնման պաշտում մ'ունէր:

Պրանսական արշաւանքէն յետոյ՝ Մէհմեմէտ Ալի կրկին կր վերադառնայ Եգիպտոս և կր մանէ զինուորական ծառայութեան մէջ: Իր բնական ուշիմութեան և գործունէութեանը շնորհիւ՝ Մէհմեմէտ Ալի զինուորական աստիճանի արագ բարձրացումներու կ'արժանանայ: Սակայն իր նենգամիտ ոգին և փառասիրական ծրագիրները չպիտի գոհանային այս համեստ փոխարինութիւններով: Ուստի ձեռքի տակէ կ'սկսի Մէմլուքները ապստամբութեան գրգռել Եգիպտոսի կուսակալներուն դէմ՝ որոնք անկարող էին այս վայրագ ժողովուրդը զսպելու: Վերջապէս՝ սեղացի բնիկ Շէյխերու և ազգեցիկ Իւլէմաներու բարեկամութիւնը շահելով՝ անոնց միջնորդութեանը շնորհիւ՝ 1805ին, Սուլթան Ալիմ Գէն փաշայութեան աստիճանով՝ կ'անուանուի կուսակալ Եգիպտոսի:

Մէհմեմէտ Ալի, թէպէտ բարձր կրթութիւնով մը չէր օժտուած, սակայն ունէր հեռատես միտք, գործնական ոգի, նպաստաւոր ստիճանիէ օգտուելու հնարագիտութիւն և իր փառասիրական խորհուրդներուն համեմու համար ամէն ծայրայեղ միջոց ի գործ դնելու:

յանդուզն նկարագիր և հաստատամտութիւն : Մէհէմէտ Ալի երբ կուսակալի պաշտօնն ստանձնեց , առաջին դործը եղաւ Եւրոպական դրութեամբ նոր բանակ մը կազմել ու Եգիպտոսն օժանդ Արեւմտեան քաղաքակրթութեան բարիքներով : Այս նպատակաւ , իր մտատիպար հայրենիքը եղող Ֆրանսայէն Եգիպտոս հրաւիրեց՝ փորձ ռազմադէտներ , երկրաչափներ , ճարտարագէտներ , ծովային սպաներ գիտուններ ևն . , որոնց ձեռքով պատրաստեց կանոնաւոր բանակ և նաւատորմ , նոյնպէս՝ Ալեքսանդրիան ջրանցքով մը Գահիրէի միացուց . ձիթենիի , թիթենիի և մանուսանդ՝ բամպակի մշակութիւնը ներմուծեց Եգիպտոսի մէջ , անսանձ Մէմլուքներու 500է աւելի պարագլուխները խարէութեամբ մը սպաննելէ յետոյ՝ մնացածները իր երկաթէ կամքին հպատակեցուց և վերջապէս՝ Սուլթան Սէլիմ Գ.ի և Սուլթան Մահմուտի նման երկուք մեծ վեհապետներու գերագոյն խաչալը եղող վարչական ու զինուորական վերակազմութեան կենսական յեղաշրջումը այս ունուանի Ալպանացին իրագործեց Օսմ. պետութեան մէկ նահանգին և Ափրիկէի գոհար երկրին մէջ :

15 . Մէհէմէտ Ալի իր նորակազմ ու կանոնաւոր բանակէն շնորհիւն էր որ կարողացաւ բնաջինջ բնել Վէհհապիները , արբել Արարիոյ , Նուպիոյ , Սենաարի , և ի վերջոյ հզօրապէս օգնել Սուլթան Մահմուտի՝ Յունական ապստամբութեան շրջանին մէջ , Իրա՛ւ է որ այս վերջին պարագային իր նաւատորմը և բանակին կարեւոր մէկ մասը վրայ սոււած էր , իրա՛ւ է որ իր այս մեծ ծառայութեան փոխարէն Սուլթան Մահմուտ խոստացած էր Մօրան նուէր տալ . սակայն կրեաէն միայն կրցաւ ստանալ : Միայն թէ խորամանկ Ալպանացին , Սուլթանին մղած այս պատերազմներուն մէջ՝ շօշափելի կերպով տեսած և համոզուած էր թէ՛ զինուորական

անասկէտով որքա՞ն տկար էր Օսմ. պետութիւնը՝ կարենալ ընդարձակ կայսրութեան մը ներքին և արտաքին թշնամիներուն դէմ իր գոյութիւնը պաշտպանելու համար: Ահաւասիկ այս պարագան մեծ քաջալերութիւն մը եղաւ փառասէր Մէհէմմէտ Ալի փաշայի համար. որ առիթը սքանչելի գտաւ՝ տարիներէ ի վեր մտադրած իր նպատակն իրագործելու. այսինքն՝ Եգիպտոսն ընել Օսմ. պետութենէն բոլորովին անկախ նահանգ մը և ինքն ըլլալ անոր բացարձակ տէր և ժառանգական Վեհապետ: Բայց որովհետեւ ժամանակին զիւանազրտութիւնը վրձնած էր թէ «Առանց Սուրիոյ կարելի չէ Եգիպտոսի տէր ըլլալ», քաղաքական այս սկզբունքին նեանեւելով՝ որոշեց Սուրիոյ տիրել, ինչ որ յայտնի ապստամբութիւն կը նշանակէր Օսմ. Տէրութեան դէմ: Մէհէմմէտ Ալի փաշա՝ Եգիպտոսէն դասալիք Մէմլուքներու՝ Աքքայի կառավարիչ Ապտուլլահ փաշայի կողմանէ ապստամն արուիլը պատրուակ բռնելով՝ 30,000 հոգիէ բաղկացած բանակ մը կը յանձնէ իր Իպրահիմ փոշա որդիին, որ Սուրիա անցնելով՝ Եափա ու Գազա քաղաքները պաշարմամբ առնելէ յետոյ, Ալլա բերդաքաղաքն ալ կը պաշարէ: Սուրիան Մահմուտ ապստամբ Մէհէմմէտ Ալիին դէմ զրկեց սպարապետ Ադրա Հիւսէյին փաշան, որ հակառակ իր ունեցած թուական առաւելութեան, շտապար յաղթուեցաւ Եգիպտական կիրթ ու քաջամարդ բանակէն՝ որ յաջորդարար Հալէպի, Դամասկոսի տիրելէ և վերջին անգամ ալ Սուրիանին կողմանէ զրկուած Մեհմեմէտ Բաշիս փաշայի ստուար բանակն ալ ջախջախելէ յետոյ, յաղթանակաւ կը մանէ Գոնեա (21 Դեկտ. 1832):

16. ՀԻԻՆՔԵՍԸ ԻՍԿԷԼԷՍԻԻ ԳԱՇՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ. — Օսմ. պետութիւնը ամենամեծ վտանգի մէջ կը գտնուէր: Անգլիա և Աւստրիա կ'ուզէին և պէտք ունէին անոր գոյութիւնը պահպանել, մինչդեռ Ռուսական



փառասիրութիւնը առիթէն օգուտ քաղելով՝ Սեւասթափոլէն արքայ մը ճամբայ կը հանէ դէպ ի Պոսֆոր : Սակայն Ֆրանսական զեւսպան՝ ծովակալ Ռուսկենի ազդու բողոքներուն վրայ՝ Ռուսական նաւատորմը ետ կը դառնայ : Այն ատեն Ֆրանսա ամէն ճիգ կը թափէ որպէս զի Մէհէմէտ Ալին համաձայնութեան մը բերէ : Իսկ այս վերջինը ո՛չ միայն յանձն չառներ որ և է զիջում, այլ և իր առած Նրահանգին համաձայն, Իպրահիմ փաշա կը շարունակէ իր յաղթական յառաջխաղացքը դէպ ի Փոքր Ասիոյ արեւմտեան սահմանները և Պոլսոյ կ'սպառնայ :

Ահա այս դժուարին կացութեան մէջ, Սուլթան Մահմուտ զինու զօրութեամբ իր սպասամբ կուսակալին յաղթելէ յուսահատ, երկրորդ անգամ Ռուսիոյ Նիքօլա Ա. կայսեր օգնութիւնը կը խնդրէ որ Մուրադիեվ զօրապետին հրամանատարութեամբ նաւարածին մը և 5000 զօրք, Օտէսայէն կուգայ Պոսֆոր և Պէյքողի ձօռ, Հիւնէսար Իսկիլեսիի դաշտին մէջ կը բանակի (1833) :

Մինչդեռ Պոլսոյ մէջ այս դէպքերը տեղի կունենային, Իպրահիմ փաշա իր յաղթական ընթացքով կը յառաջանար և տիրելով Բեօքաիւնա, Պարթիս, Մանիսա, Պիլիսիկ և Այսըն քաղաքներուն, կը հասնէր Չմիւռնիս : Ահա այն ատեն, Անդլիա և Ֆրանսա, Ռուսիոյ զինեալ միջամտութենէն վախնալով՝ ստիպեցին Մէհէմէտ Ալին որպէս զի իր վեհապետին հետ համաձայնութեան գայ : Ուստի, Սուլթանին կողմանէ բանապնաց կը դրկուի մեծ հայրենասէր ու երեւելի քաղաքապետ Մուսրաֆա Բեշիս էֆէնսի (որ Սուլթան Մէհմետի օրով Եւրոպական համբաւ մը վայելած է) որ Իպրահիմ փաշայի հետ կը կնքէ Բեօքաիւնայի հաւանաձայնութիւնը՝ որով Սուրբան և Ատանայի կուսակալութիւնը Մէհէմէտ Ալիի կը արուէր :

Այս կարգադրութենէն յետոյ, Մայրաքաղաքին մէջ Ռուսական զօրաց ներկայութիւնը աւելորդ կը դառ-

նար ալ եւս : Սակայն Ռուսիա առիթէն օգուտ քաղել  
 ուզելով՝ Կ. Պոլիս պատուիրակ կը զրկէ Օրլոֆ կոմսը և  
 Բ. Գրան հետ կը կնքէ Հիւնիսար Իսկիւրկսի գաշնադրու-  
 թիւնը . որով երկու աւերութեանց մէջ կը հաստատուէր  
 պաշտպանողական և յարձակողական եօթնամեայ համա-  
 ձայնութիւն մը : Ռուսիա յանձն կ'առնէր՝ պէտք եղած  
 ատեն , իր նաւատորմով օգնութեան փութալ Սուլթա-  
 նին , իսկ այս վերջինն ալ , ծովու կողմէն Ռուսիոյ դէմ



Մուսրամա Բեօիս փաշա

յարձակում մը եղած պահուն , Տարտանէլի և Պոսֆորի  
 նեղուցները սլափ փակէր՝ թշնամի տորմիզներուն դէմ  
 (12 Յուլիս , 1833) :

17. Միայն թէ՛ Ռուսական բանակը Պոլսէն մեկնելու  
 համար , պատերազմական ծախք կը պահանջէր՝ մինչդեռ  
 պետական գանձը դրամ չկար : Ահա ասիկ այս առթիւ է  
 որ , Օսմ . պետութեան և անոր պատուախնդիր Վեհապետը  
 այսքան ճգնաժամային կացութենէ մը ազատողը կ'ըլլայ՝  
 դարձեալ Պէդճեան Ամիրա , որ բովանդակ նախարարու-

թեան մը անկարող եղածը ինքն առանձին կը յաջողի ի գլուխ Նանեյ՝ շնորհիւ իր հիանալի հարամութեան և վայելած համազգային համբաւին ու վստահութեան :

Պէզնեան, անմիջապէս Պոլսոյ մէջ գտնուած Եւրոպացի ու տեղացի առաջնակարգ սեղանաւորներէ մեծաքանակ փոխառութիւն մը կը կնքէ, ինչպէս նաև Քրիստոնեայ հասարակութեանց եկեղեցիներուն մէջ անգործածելի մնացած արծաթեղէնները հաւաքել տալով՝ մինչև այսօր շրջաբերութեան մէջ գտնուած արծաթագօծ և մէքալիք անուն գրամը կոխելով՝ իսկոյն կը վճարէ պահանջուած պատերազմական ամբողջ ծախքը, այնպէս որ, Պոսֆորի գիւթական արհեստի շախմատի հմայուելով փառաւորապէս տեղաւորուած Ռուսերուն ուրիշ բան չէր մնար, բայց եթէ, առագաստները պարզելով դէպի Սև Մով անմիջապէս ճամբայ ելլել :

Սուլթան Մահմուտ, անուն Երախտագիտութեամբ լցուած, իր ձեռքովը կը կախէ «Թասլիքը Հիւժայուն» ամենարարժք պատուանշանը՝ անձնուիրութեան տիպար անմահ Պէզնեանի կուրծքէն :

18. Այսպէս, տեսակ մը զինադադար կը կնքուէր Մէհէմէտ Ալիի և Սուլթանին միջև որ, այս վերջին դէպքերուն մէջ ալ հիացումով տեսած էր իր ապստամբ մէկ կուսակալին՝ Եւրոպական կատարելութեամբ օժտուած բանակներուն անբաղդատելի ասուելութիւնը՝ ի վնաս իր բնդարձակ կայսրութեան քաղաքական ու զինուորական համբաւին : Ուտար, օգուտ քաղերով այս առերեւոյթ խաղաղութիւնէն, պարագաներու բերմամբ կիսատ թողած իր բարենորոգութեան գործը կը վերսկսի շարունակել : Սուլթան Մահմուտ նոր զարկ մը առաւ բանակին վերակազմութեան գործին՝ Եւրոպացի կարող սպաներ գրկելով գաւառները որպէս զի միօրինակ կերպով կրթեն զինուորը : Եւ որպէս զի իր մտադրած նպա-

տակը հաստատուն և տեւական հիմերու վրայ դնէ , Սուլթան Մահմուտ ո՛չ միայն ջանաց Եւրոպական կարգու սարքը ներմուծել երկրին վարչական ու զինուորական ճիւղերուն մէջ , այլ և , նախնական , մասնագիտական , ծովային , զինուորական , բժշկական ու երկրաչափական վարժարաններ ալ բացաւ :

«Թագլիմը Վէզայէ» պաշտօնաթերթէն ի դատ , իր օրով և առաջին անգամ սկսաւ հրատարակուիլ «Moniteur Ottoman» անուն Թրքօ-ֆրանսերէն լրագիրը : Նոյնպէս՝ Եւրոպական այլեւայլ լիզուներով՝ լրագիր , զիտական ու բանասիրական հանդէսներ և հեղինակութիւններ սկսան մուտ գանել Կ . Պոլիս : Քաղաքակրթութեան ծարաւի այս Մեծանուն Սուլթանը՝ խորապէս համոզուած էր որ , Իսլամական կրօնը և անոր նախնական մատենանր՝ Եւրոպական քաղաքակրթութեան գաղափարին և անոր սկզբունքներուն հետ բնաւ երբէք անհամաձայն չեն Սուտի . պահելով հանդերձ Շէրին , ժամանակին պահանջումներուն գոհացում տալու նպատակաւ , 1838ին , դատական վերակազմութեան ձեռնարկեց և այս իմաստով նոր օրինագրքի մը պատրաստութեան համար Իրատէ բրաւ : Սուլթան Մահմուտ իր այս երկրաչէն խորնորդներն իրազորձող զինուորական ու քաղաքական արժանաւոր պաշտօնեաները , ինչպէս նաեւ՝ հզատակ ազգութեանց պետերը վարձատրեց Իֆրիկաաի պատուանշանով : Եւրոպական մայրաքաղաքներու մէջ մնայուն դեսպանութիւններ հաստատեց , այսպէս՝ Մուսթաֆա-Բէշիւ Էֆէնտի , Բարիզի , Անձէտ-Յէթի փաշա՝ Վիէնայի , Մէնէմէտ-Քեհամիլ փաշա՝ Պէրլինի , և ուրիշներ ալ Բեթերպուրկի և Լոնտոնի դեսպան կարգուեցան :

Սուլթան Մահմուտի իշխանութեան շրջանի բազմաթիւ նախարարներուն մէջ արեւնայի գեր մը կատարած է՝ Լաիք Էֆենտի անուն գահիկ ծագումով անձը , որ թէպէտ զարգացած մարտի տէր և Նարպէտնի օրով միջոց մըն ալ Բարիզի Սա՛ . դեսպանութեան պաշ-

տօնը վարած էր, սակայն իր ծայրայեղ փառամոլ, վրէժխնդիր և արիւնւաքամ նկարագրովը՝ բազմաթիւ պատուաւոր Իսլամ և Քրիստոնէայ ընտանիքներու կործանման և անհամար անմեղներու մահուանը պատճառ եղած է: Հալէթ, նախապէս մեծ համարում կը վայելէր Սուլթան Սահմուտի քով, որ ինքն ալ Եւրոպականամոլ մը ըլլալով՝ յափշտակուած էր այս նենգամիտ անձին արտայայտած Եւրոպական զաղափարներուն և բարենորոգութեան կեղծ ու պատիր ծրագիրներուն և խորհուրդներուն հանդէպ: Հալէթ, իր վայելած այս անսահման ազգեցութեանը շնորհիւ՝ իր դիւային ծրագիրները անձարձակ կերպով ի գործ կը դնէր՝ զործակցութեամբ իր մեղսակից և իրեն չափ անողորմ, Իսխիկ անուն շքեայ հատափաճառին մահաբոյր խորհուրդներով: Բարձրաստիճան նախարարներն ու պալատական աւագանին՝ միջոց մը կը փնտռէին՝ անհանդուրժելի զարձած այս ճիւղին ձեռքէն ազատելու համար, երբ վրայ կը հասնի Վէհհայկներու ապստամբութիւնը՝ որու զրգոխչն էր Պաղտատի կուսակալ Սիւլէյման փաշա, որ ինքն ալ զուսի քաշած էր Սուլթանէն: Միայն թէ, ներքին քաղաքական տաղանապալից վիճակի մը մէջ, Սուլթան Մահմուտ չէր կրնար իր զինուորական ոյժը կիսելով այնքան հեռաւոր տեղ մը զրկելու անխոհեմութիւնը զործել: Ահաւասիկ այս առիթէն կ'օգտուի աւագանին և Սուլթան Մահմուտի խորհուրդ կուտայ Հալէթը զրկել Պաղտատ՝ որու ապստամբ կուսակալը՝ իրեն յատուկ եղած նենգութեամբը մը պիտի յաջողէր սպաննել: Մինչդեռ աւագանիին բո՛ւն նպատակն էր Հալէթը այս վտանգաւոր զործին մէջ նետելով անոր մահացումն ապահովել: Սակայն խորամանկ Հալէթ, իրեն հետ առնելով իր ճիւղ մեղսակից Իսխիլը, կը մեկնի Պաղտատ և իր սաղայեղական խորամանկութեամբը կ'սկսի շքեային միջոցաւ յարարելութիւն և մտերմութիւն մշակել ապստամբ փաշային հետ, ինքզինքը Սուլթան Մահմուտի հալածանքներուն իրը զո՛հ մը կ'ընցնել սալով: Վերջապէս՝ օրին մէկն ալ յարմար առթիւ մը, ապստամբ փաշան Պաղտատէն դէպ ի հանդերձեալ կենք ճամբայ զննիէ յետոյ, ինքն ալ իր զոհին զուսին առած, առօք փառօք կը վերադառնայ Պոլիս՝ ուր Սուլթանին մեծամեծ պարգեւներուն և զնահապտութեան արժանանալով կ'սկսի աւելի համարձակ և անպատիժ կերպով ի գործ դնել իր վայրագութիւնները: Հալէթի շարանախանութեան և անշէջ ատելութեան բազմաթիւ զոհերէն մէկը եղած է Նաե: Արքունի Փոզերանոցի Վերատեսչութեան պաշտօնը վարող Տիւղան համբաւաւոր գերդաստանը զոր Սուլթանին մօտ իրբեւ զեղծարար զրպարտելով յիշեալ գերդաստանի անգամներէն՝ Գրիգոր, Սարգիս և Միքայել Ալէկիներուն գիտամանը պատճառ կ'ըլլայ՝ Իսկ կարագետ

Յակոբ և Պօղոս հարազատներն այ՛ ֆոքր Ասիոյ այլ և այլ քաղաքներն աքսորուելով իրենց կայուածներն ու ինչքերն այ յարքունիս կը գրուուին (1 Հոկտ. 1819)։ Սակայն 4 տարի յետոյ թէ՛ Հայէթ և թէ՛ Իսխէլը Հրեան այ չկրցան արդարութեան ձեռքէն ազատիլ, զի Սուլթան Մահմուտ տեղեկանալով այս հրէշներուն գործած անթիւ ոճիրներն ու թափած անմեղ արիւններն, Հայէթը Գոնեա, իսկ Իսխէլը թէքէ աքսորելէ յետոյ, քիչ վերջը երկուքն այ շարաշար խեղղամահ ընել տալով անոնց ոճրալից գլուխներն Պոլիս բերել տուաւ։

Բարեյիշատակ Պէզճեան Ամիրա, ո՛չ այնքան Սուլթան Մահմուտի քով իր վայելած սզդեցիկ դիրքին, որքան իր չքնաց հեռատեսութեան և նրամիտ վարուելակերպին շնորհիւ կարողացած է գերծ մնալ վերսիշեալ ճիւղներուն հրէշային մեքենայութիւններէն և իր նախկին վարպետներն եղող Տիւղեան ընտանիքին զժրախոյ օրերուն մէջ այ՛ մեծամեծ օժանդակութիւններ ընծայած և ճշմարիտ բարեբարի մը դերը կատարած է։

Իսկ, Տիւղեան գերդաստանին պատահած այս աղէտալի զժրախոյութեան գործին համար՝ ոմանց կողմանէ եղած այն ենթադրութիւնը թէ՛ Պէզճեան այ անուղղակի կերպով պատճառ եղած է, աւելորդ է ըսել որ ծաղրելի և անպատկառ զրպարտութիւն մ'է, որովհետեւ ո՛չ միայն այդ ենթադրութիւնը կամ սխալ համոզումը պատճառական շօշափելի որ և է փաստով մը չէ՛ ապացուցուած, ո՛չ միայն բացարձակ ուրացում մըն է Պէզճեանի վեհ հոգիին, անոր անշահախնդրութեանը և անփառասէր նկարագրին, այլ եւ, նոյն ինքն Պէզճեան, իրերու և անկերու իր խորին փորձառութեամբ և իր եղական հեռատեսութեամբ քանի՛ քանի՛ անգամներ՝ խոհեմութեան և չափաօրութեան յորդորած է իր նախկին վարպետները՝ իրենց դիրքին և կենաց սպառնացող ահարկու վտանգը նախազուշակելով։

Սուլթան Մահմուտ մեծ փափաք ունէր իր ընդարձակ կայսրութեան բոլոր գաւառները անձամբ պտրտելով՝ մօտէն տեսնել անոնց վիճակը, պէտքերը, ժողովուրդին կարօտութիւնները ևն. . . և ըստ այնմ դարման տանիլ։ Սակայն իր այս փափաքին մտտամբ միայն կրցաւ գոհացում տալ և 1837ին վերջերը, այցելեց Նիկոմիդիա, Վաննա, Շուսլու, Սիլիսդրէ և Բուսճրգ՝ ուր գտնուած նորակազմ բանակները աչքէ անցուց՝ և առաջին անգամ ըրալով, աւստրիական շոգնատու մը վերադարձաւ Պո-

լիս : Սուլթան Մանուէլ լուսամբտ նկարագրին և անկեղծ ժողովրդասիրութեան ամենափայլուն ապացոյցներէն մէկը եղած է՝ հետեւեալ կարևոր պարագան :

1835ին , ահաւոր ժանտախտ մը դարձեալ սոսկալի կոտորած կ'ընէր Մայրաքաղաքին ու շրջակայ գաւառներուն մէջ : Այս առթիւ՝ Սուլթան Մանուէլ բաւական շեւեղաց առողջապահիկ սովորական միջոցներ միայն գործադրելով , այլեւ , հակառակ սիրող թանձրացեալ նախապաշարումներու , մուսուանդութեան և կրօնական դասակարգին լռին դժգոհութեան , այս պարբերական ու մահացու պատուհասին աւերումները սահմանափակելու նպատակաւ , Չեկեղ զիւղի , Պօքրանճի Պաշի և Քիւյիւֆ Չեֆեհճի մէջ՝ Եւրոպական դրութեամբ մաքրանոցներ ու արգելարաններ հաստատեց և ասով՝ իր բոլոր հպատակաց երախտագիտութեանը վրայ անսահման իրաւունք մը շահեցաւ :



Արժունի մանկալիկ,  
գանձան եւ համբ սենեկապետ

19. ՊէՉՃԵԱՆԻ ՄԱՀԸ .— Սուլթան Մանուէլ իշխանութեան 26րդ տարին , այսինքն՝ 1834ին մեռաւ Տաճկահայոց անդուգական բարերար ՊէՉՃԵԱՆ Եարութիւն Ամիրա , որուն մահուան գոյժն առնելով Սուլթան Մանուէլ , հրամայեց որ իր սիրելիին դազազը պալատան առջեւէն անցնեն՝ որպէս զի վերջին անգամ մըն ալ տեսնէ անոր երեսը : Սուլթան Մանուէլ , երեք անգամ

«Վախ Արթինիմ» սրտարուխ հառաչանքով իր դառն կակիծը յայտնեց իր անձնուէր բարեկամին և իմաստուն ու հաւատարիմ խորհրդակիանին անդարձանելի կորուստին առթիւ և հրաման րրաւ որ, հանգուցեալին փափաքին համաձայն, մարմինը Մայր Եկեղեցւոյ գութին մէջ ամփոխուի :



Պէզնեան Յարութիւն Ամիրա

Սուլթան Մահմուտի օրով, բացի Պէզնեանէ, Հայ ազգէն նշանաւոր էին՝ Մահմետի Առաքել Տաա Ամիրա, Տիւղեանց ազգատոհմէն՝ Գրիգոր, Սարգիս, Միքայէլ, Մկրտիչ և Յակոբ Չէլչեզիները. Պալեան գերդաստան, Եուսուֆեան Պօղոս պէյ ևն. . որոնք Վառօդապետութեան, Արքունի ճարտարապետութեան և Փողերանոցի Վերատեսչութեան պէս կարեւոր ու փափուկ պաշտօններու մէջ՝ տէրութեան հաւատարմապէս ծառայելով՝ մեծանուն Սուլթանին բարձր գնահատութեանն արժանացան :



## ՍՈՒԼԹԱՆ ՄԱՀՄԱԴՏԻ ՄԱՀԸ

Հոգեկան ու մտաւոր յուզումնալից երկարատեւ աազնապնդէ յետոյ, Սուլթան Մահմուտ իր իշխանութեան գոնէ՛ վերջին տարիները չկրցաւ նանգիստ կեանք մը վարել, որովհետեւ՝ Եղիպտոսի փառասէր կուսակալը՝ օգուտ քաղելով Սուրիոյ ու Պաղեստինի մէջ տիրող չփոթուիւններէն, ո՛չ միայն մնրժեց սահմանուած տարեկան նարկը վճարել իր Վենապետին, այլ եւ պահանջեց որ, Սուրիոյ ու Եգիպտոսի վրայ իր ունեցած իշխանութիւնը ժառանգական ըլլայ:

Սուլթան Մահմուտ, այս անհեթեթ պահանջումը մերժելով՝ ապստամբ կուսակալին դէմ զրկեց սպարապետ Հափըզ փաշան: Ճակատամարտը տեղի ունեցաւ Միջագետաց Նիզիպ քաղաքին մօտ՝ ուր Օսմ. բանակը կրկին մատնուեցաւ շարաչար պարտութեան՝ իշխամիին ձեռքը թողլով բազմաթիւ զերի և ռաղմական մեծաքանակ պաշար (24 Յունիս 1839):

Բարերախղարար, այս վերջին ձախողումին գոյժը տակաւին Պոլիս չհասած, Սուլթան Մահմուտ, կարճատեւ հիւանդութիւնով մը կնքեց իր յուզումնալից կեանքը 1 Յուլիս 1839, ի Չանլընա՝ ուր օդափոխութեան գացած էր իր քրոջ ապարանքը:

Բովանդակ Օսմ. աշխարհը ողբող այս մեծաշէն, առաքինի ու ժողովրդասէր վեհապետին մահը՝ որու 31 տարուան իշխանութիւնը, նակտուակ ներքին և արտաքին մեծամեծ պատահարներու, ժողովրդային բարօրութեան և Օսմ. նայրենիքին վերածնութեանը տեսակէտով ա՛յնքան բեղմնաւոր և արդիւնալից եղած էր:

## ՊԱՏՄԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄ

Սուլթան Մահմուտ Բ.ի 31 տարուան իշխանութիւնը, իրարու յաջորդող ներքին խռովութեանց, արտաքին պատերազմներու, զազափարային պայքարներու, ներքին ապստամբութեանց և բարեկարգութեան տեսակետով տեղի ունեցած մաքառումներու ա՛յնպիսի յուզումնալից շրջան մըն է որու նմանը չենք տեսներ Օսմ. տարեգրութեանց մէջ:

Սուլթան Մահմուտ, տակաւին 23 տարեկան երիտասարդ, քաղաքային ապստամբութեան մը զո՛հ դացած զժբաղդ Սուլթան Սէլիմի անշնչացած մարմնոյն առջեւ: Սուլթան կը հաշտուի Ալեմտար փաշա՝ իր սերելի վեհապետին մահուան վրէժը կը լուծէ Եէնիշէրփներէն և զինուորական բարեկարգութիւն ի գործ դնելու իր ձեռնարկը՝ տեղի կուտայ նոր ապստամբութեան մը՝ որու ինքը կ'ըլլայ առաջին զոհը: Անմիջապէս վրայ կը հասնին Ռուսական պատերազմին աղէտները որոնք կը վերջանան Պուքրէշի դաշնադրութեամբ: Սուլթան Մահմուտ ձեռք կը զարնէ Փոքր Ասիոյ ապստամբ Տէրէպէլիներն ու Սուրիոյ Վէհհապիները զսպելու: Ասոր կը յաջորդէ Տէփէլէնլիի ապստամբութիւնը՝ որու կը մասնակցին Յոյները և շարունակ ութը տարի կ'զբաղեցնեն Օսմ պետութիւնը: Դարձեալ քաղաքային խռովութիւններ, Եէնիշէրփներուն ընաջնջումը, Օսմ. նաւատորմին՝ Նավարփնի մէջ կործանումը, կրկին Ռուսական պատերազմ, Էտիքնէի դաշնադրութիւնը, Յունաստանի անկախութիւնը, Ֆրանսացիներուն կողմանէ՝ ձէզալիբի դրաւումը, Եգիպտոսի կուսակալին ապստամբութիւնը, Օսմ. թերափարժ ու նորակազմ բանակներուն կրած յաջորդական պարտութիւնները, Եւրոպական տէրութեանց նպատակաւոր միջամտութիւնը, Հինգերոր Իսկէլէսի աննպաստ դաշնադրութիւնը, վարչական ու զինուորական վերակազմութեան ձեռնարկներ, բնական պատուհասներ՝ հրդեհ, քոլէրա, ժանտախտ, զարձեալ Մէհէմէտ Ալիի ապրտամբութիւն, զարձեալ Օսմ. զինուց պարտութիւն և վերջապէս՝ տակաւին 54 տարեկան, սակայն մաքով ու մարմնով պարտասած ու ամնջուած այս մեծ ու կորովալի ինքնակալին վախճանը՝ որ իր բոլոր իղձերուն պսակումը տեսնելու և վայելիլու բախդը չունեցաւ զժբախդարար:

Իրարմէ աւելի ցնցող, իրարմէ անակնկալ ու ծանրակշիռ դէպքերու ապշեցուցիչ այս շարքը երբ ուշադրութեան առնենք, պիտի տեսնենք որ այս ամէնը՝ հազիւ մէկ դարու շրջանի մէջ տեղի ունենալիք դէպքեր էին, մինչդեռ կատարուեցան 31 տարուան մէջ:

Ի՛նչ եզական կորովի և ի՛նչ աննկուն նկարագրի և հաստա-

ամամտութեան տէր էր Սուլթան Մահմուտ Բ. որ ամբողջ 31 տարի, և Սամ. պետութեան ամէնէն ապշնապալից շրջանին մէջ կարողացաւ արհարար կուրծք տալ՝ ներքին և արտաքին ծանրակէիռ զէպքերու — պատերազմ, ապստամբութիւններ, քաղաքային խռովութիւններ, մոլեռանդութիւն, արժատացած նախապաշարութեան, արտաքին թեւազրութիւն ևն. ևն. — Ինքը միշտ նախանձախնդիր իր երկրին արժանապատուութեան և իր Վեհապետական իրաւանց, ոգւով շափ մաքառեցաւ որ և է օտար միջամտութեան ու ռանձգութեան զէմ և իր կրթած պարտութիւններուն մէջ անգամ, հիացում և պատկառանք ազգեց իր թշնամիներուն:

Մասնաւորապէս՝ տէրութեան մէջ ներձուծել մտադրած իր բարենորոգութեան գործին համար՝ ո՛չ մէկ զժուարութեան առջեւ ընկրկեցաւ, ո՛չ մէկ արգելքի առջեւ վհատութեան ամենադոյզն նշան մը ցոյց տուաւ, ընդհակառակը՝ միշտ միեւնոյն կորոճով և միեւնոյն հաստատամտութեամբ մաքառեցաւ՝ յայտնի և թագուն ամէն հակառակութիւններու զէմ: Եզրիպտական խնդրոյն համար, որ մը Անգլիոյ դեսպանին հետ տեսնուած միջոցին — որ խորհուրդ կուտար համաձայնութեան մը զայլ Մէհէմէտ Ալի փաշայի հետ — հետեւեալ պատասխանը տուաւ «Զպիտի կրնամ հանգիստ սիրտով մեռնիլ, մինչեւ որ միեւնոյն զէնքերով չջտիջուիմ այդ Ալպանացի ապստամբը: Մէկ խօսքով, Սուլթան Մահմուտի իշխանութեան բովանդակ շրջանը հինին զէմ՝ նորին, նախապաշարութեան և մոլեռանդութեան զէմ՝ քաղաքակրթութեան բարիքներուն յաղթանակին ի նպատակ՝ շարունակական պայքար մը եղաւ: Եւ այսպէս, Սուլթան Մահմուտ ինքը եղաւ գծող և յարգարող՝ յառաջգիւմութեան ու իրական վերանորոգման այն գետինը, թուրքիոյ ապագայ վերածնութեան համար անխուսափելի եղող ճշմարիտ Ազատութեան, Արդարութեան և Հաւասարութեան վրայ հիմնուած այն փրկարար ծրագիրը զոր կտակեց իր յաջորդներուն:



## ԱՌՒԼԹԱՆ ԱՊՏ-ԻՒԼ-ՄԷՃԻՏ

(Հիմնեքի՛ 1255—1277 .— Քս.ի 1839—186)



1. Առլթանն Մէճիտի գահակալութիւնը.— 2. Եգիպտական ինդրոյն վերջնական կալ գաղթութիւնը.— 3. Թանգիմաթ.— 4. Լիբանանի շփոթութիւնները.— 5. Սերպիա, Մոլտավիա և Վալաքիա.— 6. Սեւաստափոլի պատերազմին պատճառները, Ռուսիոյ բուն նպատակը.— 7. Պատերազմին յայտարարութիւնը. Թրքաց առաջին յաջողութիւնները.— 8. Անգլիոյ և Ֆրանսոյի գաղնակցութիւնը.— 9. Դաշնակից ըսնակին և նաւաստրմին կատարած զինուորական շարժումները, Սեւաստափոլի առումը.— 10. Բարիզի գաղնագրութիւնը.— 11. Ճիտտէի և Լիբանանու ջարդերը.— 12. Առլթանն Մէճիտի մահը:

1. Յիշատակաց արժանի Առլթանն Մահմուտ Բ. ի բարեկարգութեան ծրագիրներուն կարեւոր մէկ մասին գործադրողը եղաւ 16 տարեկան իր անդրանիկ և ազնուահոգի որդին ՍՈՒԼԹԱՆ ԱՊՏ-ԻՒԼ-ՄԷՃԻՏ, որու առաջին պարտքը եղաւ՝ մեծանուն հօրը փառաւոր յուզարկաւորութիւն մը կատարելով՝ մարմինն ամփոփեց Յազըր Փաշա թագին մէջ՝ ուր ապա հոյակապ գամբարան մը կառոյց, որ մինչեւ այսօր համբաւաւոր է Առլթանն Մահմուտ Թիւրքիսի անունով:

2. Ինչպէս տեսանք, Սուլթան Մահմուտի մահը տեղի կ'ունենար ճիշտ այն միջոցին, երբ Օսմ. բանակը նիզիպի մէջ Եգիպտացի Իպրահիմ փաշայի ձեռքով վերջին անգամ մըն ալ կը ջախջախուէր, և հետեւապէս՝ Եգիպտական խնդիրը աւելի կը կնճառտէր՝ ի վնաս Օսմ. պետեան շահերուն: Այս բաւական չէր, ծովակալ Անձէա փաշա, Եգիպտոսի կուսակալ ծերունի աղուէսին թելադրութեամբ, և իբր թէ՛ Եպարքոս Աիւսրէզի փաշայի հետ ունեցած թշնամութեանը հետեւանօք, Օսմ. նաւատորմը վատարար կը տանի կը յանձնէ ապստամբ կուսակալին և այս պատճառաւ կը կոչուի Փախստական (Ֆիրարի):

Եգիպտական խնդրոյն մէջ, Արեւմտեան երկու մեծ տէրութիւններէն Ֆրանսա, աեղի տալով շասարակաց կարծիքին, ուղղակի պաշտպան կանգնած էր իրեն սրբտովին համակիր Մէհէմէտ Ալիի դասին, իսկ Անգլիա, որ բոլորովին հակառակ ուղղութեան մը կը հետեւէր, իր քաղաքական ապագայ ծրագիրներուն և Թուրքիոյ գոյութիւնը պահպանելու նպատակաւ, կը փափաքէր ապստամբ կուսակալին տարապայման փառասիրութեանը սանձ մը դնել: Ուստի միացաւ Ռուսիոյ, Աւստրիոյ և Բրուսիոյ հետ և կերպով մը ինքն ստանձնեց նորապի Սուլթանին խնամակալութեան և անոր արդար իրաւանց պաշտպանի դերը: Մեծին Բրիտանիոյ անուանի նախարարապետ Լօրս Բալմեռտըն, վերոյիշեալ տէրութեանց հետ, 1840 Յուլիս 15ին, Լոնտոնի մէջ կնքեց համաձայնութիւն մը՝ որով Մէհէմէտ Ալի պարտաւոր պիտի ըլլար:

1. Օսմ. նաւատորմը Սուլթանին վերադարձնել,

2. Իր զօրքը Կրետէէն, Արարիաէն և Սուրիաէն հետ կանչել:

3. Բաւականանալ՝ մինչեւ իր մահը Ա.քեայի տէր-

մնալով, և իր Վեհապետին գերիշխանութեանը ներքեւ՝  
Եգիպտոսի ժառանգական Փոխարքայութիւնը վարելով:

Դաշնակիցները 10 օր պայմանաժամ կուտային Մէ-  
նէմէտ Ալիի, որ սակայն, մի՛շտ Ֆրանսայի աջակցու-  
թեանը վստահ, յանձն չառաւ առաջարկուած պայման-  
ներն ընդունիլ: Այն ատեն Անգլիացի ծովակալ Նարիե,  
Աքեան ու Քայֆան ռմբակոծելէ յետոյ, գնաց Ալեք-  
սանդրիա ու վերջնագիր մը դրկեց: Ծերունի ազատամ-  
բը, փոխանակ զինուորական օգնութեան, հրահանգ  
կ'ատանար Ֆրանսայի նախարարապետ Կիզոյէ՝ համակեր-  
պիլ տէրութեանց պահանջումներուն: Եւ արդէն ինքն  
ալ վախնալով որ, մի՛ գուցէ վայելած առաւելութիւն-  
ներէն բոլորովին դրկուի, հարկադրուեցաւ տեղի տալ և  
ընդունիլ 1841 Յուլիս 13ին Լոնտոնի մէջ կնքուած  
պայմանները, որոնց վրայ կ'աւելնար նաեւ՝ Չանաք  
Քալէի և Սեւ Ծովու նեղուցներուն՝ բոլոր տէրութեանց  
պատերազմական նաւերուն առջեւ փակուած մնալու  
պայմանը:

Այսպէս, Անգլիական դիւանագիտութիւնը կը յա-  
ջողէր բաւնալ Ռուսական ազդեցութիւնը Օսմ. Սուլ-  
թանին վրայէն, և միեւնոյն ժամանակ, լուելեայն ջնջել՝  
Հիւնկեսար Իսկիլեւի դաշնադրութեամբ յառաջ գալիք  
քաղաքական աննպաստ հետեւանքները: Սակայն, ինչ-  
պէս որ դէպքերու շարունակութեան մէջ պիտի տես-  
նենք, Ռուսիա իր կրած քաղաքական այս սրբտու-  
թեան վրէժը լուծելու համար, յարմար առիթը չպիտի  
փախցնէր՝ Արեւելեան խնդիրը վերստին յուզելու համար:

3. ԹԱՆԶԻՄԱԹ. — Սուլթան Մէճիտի իշխանութեան  
ամէնէն փառաւոր գործը և Օսմ. Պատմութեան ամէնէն  
յիշատակելի դէպքերէն մէկը եղած է Թանզիմատ անուն  
այն նշանաւոր Օրէնադրութիւնը՝ զոր արդարասէրն Սուլ-  
թան Մէճիտ, 1839 Նոյ. 3ին հրատարակեց՝ իր անուանի

նախարարացեալս և նոր թուրքիոյ Աղատական կուսակցու-  
թեան պարագլուխ՝ Մուսրաֆա-Րեշիս փաշայի խորհրդով և  
թուրքիոյ վերանորոգութեան անխուսափելի պայման-  
ները պարունակող այս նշանաւոր օրէնքները, Կիւլինսկի  
մէջ մեծ հանդիսաւորութեամբ կարդաց նոյն լինքն Մեծ  
Նպարքոս Մուսթաֆա Րէշիտ փաշա՝ ի ներկայութեան  
Սերոպական տէրութեանց դեսպաններու, քաղաքային  
ու զինուորական բարձրաստիճան նախարարաց, Իւլէ-  
մաներու և Քրիստոնեայ հասարակութեանց հոգեւոր  
պետերու, Սուլթան Մէճիտ, այս թանգրմաթով, առանց  
ազգի և կրօնի խտրու-  
թեան, իր ամէն կար-  
գի հպատակներուն կը  
խոստանար՝ կենաց,  
պատուոյ և ստացուած-  
քի բացարձակ ապահո-  
վութիւն, օրէնքի առ-  
ջեւ հաւասարութիւն և  
ազատ կիրառութիւն՝  
կրօնի, լեզու և ազգ.  
նուիրագործուած ա-  
ռանձնաշնորհումներու և  
Սերոպական ազատ կա-  
ռավարութեանց սահ-  
մանադրական սկըղ-  
բունքներէն քաղուած  
հիանալի փունջ մը.



Ալի փաշա

որ դժբախդարար՝ հակառակ Մուսրաֆա-Րեշիս, Ալի,  
Տոււս և Գրպրըզը Մեհմեմէս փաշաներու նման լուսա-  
միտ նախարարներու ջանից, թանգրմաթի փրկարար  
սկզբունքներու մեծ մասը երկար տարիներ և դանաղան  
խոշնդոտներու պատճառաւ մնակալ տառ մնացին և Ի-

բաւ է որ Կեդրոնի իշխանութիւնը զօրացաւ, աւատական իշխանութեան ձեւն առած կուսակալութիւնները հակակշռի ենթարկուեցան, դատական և օրէնսդրական դրութիւնները քիչ շատ բարեկարգուեցան, զինուորական կազմակերպութիւնը իր վերջնական ձեւն ստացաւ, նախնական ու բարձրագոյն կրթութեան կենսական գործը նոր քայլ մը առաւ, սակայն ասոնց ամէնքը արտա-



Յոնաս փաշա

քին չպարներ էին մինչդեռ տէրութեան կենսական հիւթն սպառող արմատացած զեղծումները, հիմնական դարմանի կարօտ անհաւասարութիւնները, հպատակի և արող տարրի խտրական սկզբունքները շատ դիւրաւ չպիտի կրնային վերջ գտնել տարբեր ծագումով, տարբեր լեզուաւ, կրօնքով, հակումներով, կրթութեամբ ու քաղաքական արտաքին ազդեցութեանց ենթա-

կայ և տպագայի յայտերով օրորուն բազմատարր ազգութիւններէ բազկադած Օսմ. ընդարձակածաւալ կայսրութեան մէջ:

Ասոնց վրայ պէտք է աւելցնել որ. Մահմէտական թուրք տարրը տակուին բաւական պատրաստուած և ընդունակ չէր՝ մինչև այն ատեն Բանա քանուներ կրող Քրիստոնեայ հպատակներուն՝ Իսլամին հետ հաւասար արդարութիւն և հաւասար օրէնքներ վայելելու զաղա-



փարին չեա, այնպէս որ, կառավարութիւնը երբ թան-  
զիմաթի տրամագրութիւնները գաւաաներու մէջ ալ  
գործադրելու փորձ բրաւ, մեծամեծ դժուարութիւններու  
բաղխեցաւ՝ մասնաւորապէս Արլոանիոյ, Պոսնայի և Սու-  
րիոյ մէջ՝ ուր ապստամբութիւններ ծագեցան: Սակայն,  
ժամանակին ամէնէն նշանաւոր զինուորականը եղող  
սպարապետ Էօմէր փաշա, խեղդեց այս խռովութիւն-  
ները և յաջողեցաւ կառավարութեան կամքը բռնի ոյժով  
գործադրել:

4. Միեւնոյն ժամանակ, Լիրանանի կաթողիկ Մա-  
րօնիներու և Մահմէտական Տիւրքիւններու միջեւ ծագած  
խռովութիւն մը բաւական կ'զբաւեցնէր Բ. Դուռը:

Շեապ անուն Իսլամ բնաանիք մը, դարէ մը ի վեր  
Լիրանանի մէջ տեսակ մը աւատական իշխանութիւն կը  
վարէր՝ իր իրաւասութեան ներքեւ ունենալով Մարօնի-  
ներն ու Տիւրքիւնները: 1841ին, Տիւրքիւններն ապստամ-  
բելով՝ Մարօնիներու գիւղերը չորհնեցին, բնակիչները  
ջարդեցին և կառավարութեան կեդրոնը եղող Տէյր-իւլ-  
Գամեր քաղաքը գրաւելով՝ Շէապիներու գերդաստանէն  
էմիր Պէշիրը վանեցին անկից: Բ. Դուռը այս առիթէն  
օգտուիլ ուզելով՝ Պէշիրին տեղ փաշա մը զրկեց կառա-  
վարիչ ի Լիրանան: Սակայն Յրանսա և Անգլիա Բ. Դրան  
այս կարգադրութեան դէմ բողոքեցին: Առաջինը՝ կա-  
թողիկ Մարօնիները կը պաշտպանէր, իսկ Անգլիա՝ Ե-  
գիպտական խնդրոյն մէջ Մարօնիներու իրեն մատուցած  
ծառայութիւնները մոռնալով՝ բնդհակառակը՝ Տիւրքիւ-  
ներուն թեր կ'ելլէր:

Վերջապէս, 1842ին որոշուեցաւ որ, Բ. Դրան վերին  
գերիշխանութեան ներքեւ ու տեղական քանի մը ա-  
ռանձնաշնորհօ մներով, երկու ցեղերը իրենց յատուկ  
ինքնավարութիւնն ունենան: Սակայն, ինչպէս յետոյ  
պիտի տեսնենք, այս առերեւոյթ կարգադրութիւնն ալ

չպիտի զօրէր մտրելու՝ մահացու թշնամութեամբ վառ-  
ուած երկու ցեղերու բուռն ասեղութիւնը որ 20 տարի  
յետոյ աճեցի ջարդի մը պիտի յանգէր :

5. ՍԵՐՊԻՍ. ՄՈՒՏԱՎԻՍ. ԵՒ ՎԱԼԱՔԻՍ. — Պալ-  
քանեան այս երկիրներն ալ՝ Թուրքիոյ համար մտահո-  
գութիւն պատճառող չփոթ վիճակի մը մէջ կը գտնուէին :

Սերպիս. Միջեան գերդաստանին օրով, գրեթէ  
անկախ դիրք մ'ունէր, երբ 1830ին, Սուլթանական  
Խարքը Հիւմայունով՝ հարկատու ինքնօրէն իշխանու-  
թեան կը վերածուէր : Երկրին իշխանը, Միշեյ Օպրեկովիչ,  
Թուրքիոյ քաղաքական ներքին տազնապններէն օգ-  
տուելով, երկրին Սահմանադրութիւնը բռնաբարեց և  
տեղի տուաւ ներքին յեղափոխութեան մը՝ որու հետե-  
ւանօք գահընկէց եղաւ (1838) : Իրեն յաջորդեց կրտսեր  
որդին Միշեյ որ ինքն ալ իր հօրը բռնապետական ըն-  
թացքին հետեւելով՝ քաղաքային պատերազմի մը մէջ  
յաջորդաբար երկու անգամ չարաչար յաղթուելով՝ խոյս  
տուաւ Սերպիայէն : Առժամեայ կառավարութիւնը,  
1843ին, վեհապետ ընտրեց Ալեքսանդր Բեքրովիչ իշխանը  
զոր Բ. Գուռը՝ վաւերացուց, Իսկ Ռուսիա, իրեն յա-  
տուկ նկատումներով նախ բողոքեց այս ընտրութեան  
դէմ, բայց ի վերջոյ հաւանեցաւ կատարուած իրողու-  
թեան առջեւ համակերպիլ :

Քաղաքային նմանօրինակ չփոթութեան մէջ կը  
գտնուէր նաեւ Վալաքիա՝ ուր Ալեքսանդր Կիլիա իշխա-  
նին յաջորդ Պիպկուսօ, Ազգ. խորհրդարանին ստիպում-  
ներուն առջեւ տեղի տալով, 14,000 սարուկ ընտանիք  
ազատագրած էր : Սակայն Պիպէսքօ, զիւղական դա-  
սակարգին հանդէպ իր ցոյց տուած արհամարհական ըն-  
թացքին և բարբարոս արարքներուն պատճառաւ ընդ-  
հանուրին ատելութեան առարկայ եղաւ, մանաւանդ,  
երբ Ռուսիոյ թելադրութեամբ՝ իրեն ընդդիմադիր Ազգ.

Խորհրդարանը փակեց: Սակայն 1848ի Ֆրանսական և Մաճառական յեղափոխութեանց ոգին՝ Դանուբեան երկիրներուն մէջ ալ արձագանք տուած ըլլալով, քաղաքային պատերազմ ծագեցաւ. այնպէս որ, Պիպէսքօ և իր համախոհները ստիպուեցան խոյս տալ: Իսկ առժամեայ կառավարութիւնը, բովանդակ Պեսարապիան, Թրանսիլվանիան և չըջալայ երկիրները ի դէն հրաւիրելով՝ բացարձակ անկախութեան և Ռուսմանական ընդարձակ կայսրութեան մը յանդուգն ծրագիրը գործադրելու ելաւ:

Այս պարագային, Սուլթան Մէճիտ ապստամբաց դէմ դրկեց Սեքսարը Էֆրեմ Էօմեք փաշան, երբ միեւնոյն ատեն, Ռուսիոյ Նիքոլա Ա. Չարը իբր թէ յեղափոխութեան գաղափարին դէմ իր զգացած արհամարհանքը գործքով ալ արտայայտելու նպատակաւ, 12,000 զօրքով Մոլտավիան գրաւեց: Բ. Դուռը խստիւ բողոքեց Ռուսիոյ այս ոտնձգութեան դէմ ու երկու կառավարութեանց դաշլիճները դիւանագիտական բուռն պայքար մը սկսան մղել: Օսմանցիք Պուքրէչը գրաւեցին, իսկ Ռուսերն ալ 60,000 զօրքով արշաւեցին Վալաքիա: Երկու դրացի տէրութեանց այս աստիճան ձրգտեալ վիճակը կ'սպառնար դարձեալ վտանգել Եւրոպայի խաղաղութիւնը, երբ, Պալքա-Լիւնանիի դաշնադրութեամբ՝ սպառնացող փոթորիկը ժամանակի մը համար հեռացաւ: Այս դաշնադրութեամբ, Մոլտավիոյ և Վալաքիոյ Հոպիտսարները<sup>(1)</sup> 7 տարուան պայմանաժամով պիտի ընտրուէին Սուլթանին կողմանէ: Երկու տէրութիւնք, Թուրքիա և Ռուսիա, 30,000ական զօրքով պիտի գրաւէին Դանուբեան երկիրները՝ շինչեւ որ խաղաղութիւնը վերջնապէս վերահաստատուէր: Նոյնպէս՝ երկու տէրու-

(1) Հոսփոստ Սլաւերէճ է և կը նշանակէ իշխան, զինուորական հրամանատար:

Թեանց մասնաւոր պաշտօնեաներ՝ հակակշիւ պիտի կատարէին սիրող իշխաններու քաղաքական գործառնութեանց վրայ:

Միւսնոյն ժամանակ, իրաւ է թէ Ռուսիա և Աւրստրիա պահանջեցին որ, Թուրքիա ազատանաձ Ռուսէն և Մաճառ յեղատիտականները իրենց յանձնէ, սակայն մեծահոգին Սուլթան Մէճիտ՝ բացարձակապէս մերժեց այս անիրաւ պահանջումը, որով Մաճառ դիւցազն Քոչուք և իր ազատասէր ընկերները լաւագոյն օրեր վայելեցին Օսմանեան ասպնջական հայրենիքին մէջ:

## ԻՐԻՄՈՒԻ ԿԱՄ ՍԵՎՍՏՍԱՓՈԼԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Ներկայ Պատմութեան ընթացքին մէջ որոշակի կերպով տեսանք որ, Ժէ. դարէն սկսեալ, Օսմ. պետութեան մասնաւորապէս Եւր. երկիրները, Նիւթական շահու և քաղաքական ազդեցութեան տեսակէտով տեսակ մը պատերազմի դաշա դարձած էին Եւրոպական կարգ մը մեծ տէրութեանց առջեւ: Ասոնց մէջ ամենէն աւելի Ռուսական կայսրութիւնն էր որ իր փառասիրական նպատակը մերկապարանոց և գահավեժ կերպով կը ճգնէր իրագործել, Ռուսիա առիթ չէր կորնցնէր Թուրքիոյ քաղաքական ամբողջութեան հարուած մը տալու, նոր կնճիւղ մը մէջտեղ նետելու, անոր քաղաքական ազդեցութիւնը տկարացնելու, անոր զարգացման և յառաջդիմութեան որ և է նախաքայլին առջեւ թուժը մը կանգնելու և և ի հարկին այ՛ իր կոչմանէ խնդիրներ ստեղծելու, որպէս զի կարենար անոնց հետեւանքով քայլ մը աւելի դէպ ի հարաւ տարածել իր երկրակալութեան անյազ տէնջը և Թուրքիան տեսակ մը հարկատու իշխանութեան աստիճանին իջեցնելու իր դարուոր ծրագիրը: Արդէն տեսանք թէ՛ Ռուսիա ձեռքի տակ էին խաղեր խաղաց Սուլթան Մահմուտի օրով, թէ՛ Նիւթապէս որքան օգտուեցաւ Թուրքիոյ մէջ իրարու յաջորդող ներքին յեղափոխութիւններէն. թէ՛ ինչ նախանձու ոգիով դիտեց Սուլթան Սէլիմի և Սուլթան Մահմուտի սկսած և մասամբ այ ի դորձ զրուած զինուորական և վարչական վերանորոգումները ա՛յն երկրին մէջ որ իր ապագայ սեփականութիւնն ըլլալ կը յաւանկէր և ուր սկսուած յառաջդիմական որ և է քայլ՝ յապագում մը կը նկատէր իր բացորոշ նպատակին իրագործման տեսակէտով:

Հաղիւ թէ Դանուբեան պետութիւններու խնդիրը փոխադարձ հաւանութեամբ կարգադրուած էր, և ա՛նա Ռուսիա, բոլորովին նոր խնդիր մը ստեղծեց:

Երուսաղէմի Ս. Տեղեաց մէջ, մասնաւորապէս Հայերէն և Յոյներէն ի դատ, Լատիններն ալ դարերէ ի վեր իրենց յատուկ սեփականութիւններն ունէին՝ որոնց վերին պաշտպանութիւնը, 1740ին կնքուած դաշնագրութեամբ, Ֆրանսայի կը պատկանէր: Սակայն Յոյները, Ռուսիոյ Չարին թեւադրութեամբ, հետզհետէ Լատինաց ձեռքէն խլած և իւրացուցած էին անոնց կրօնական Ս. տեղերն և իրաւունքները: Ուստի, Ֆրանսական կառավարութիւնը դիմեց Սուլթան Մէճիտի և պահանջեց որ 1740ի դաշնագրութեան պայմաններն յարգուին՝ որոնց զո՛նացում տուաւ Սուլթանը՝ յատուկ յանձնաժողովի մը կատարած քննութեան և այդ առթիւ մատուցած տեղեկագրին համաձայն: Չարին համար մեծ պարտութիւն մըն էր այս խնդրոյն խաղաղ կարգադրութիւնը որ իր թագուն նպատակը կը չէզոքացնէր: Ուստի, Օրթոտոքսութեան հանդէպ իրրեւ թէ ի գործ դրուած այս անիրաւութեան դէմ բողոքեց թէ՛ Սուլթան Մէճիտի, և թէ Անգլիոյ: Այս վերջինը յանձն առաւ՝ Ֆրանսայի հետ համաձայնելով խնդիրը կարգադրել, երբ յանկարծ, 1853 Փետր. 28ին, իշխան Մեկնիֆօզ, բազմաթիւ հետեւորդներով կուգայ Պոլիս և ուղղակի Սուլթան Մէճիտի ներկայանալով, խրոխտաբար կը պահանջէ.

1. Ռուսիոյ հետ գաղանի դաշնագիր մը կնքել՝ ընդ դէմ Անգլիոյ և Ֆրանսայի:

2. Տաճկաստանի Յունադաւան ժողովրդոց ու Երուսաղէմի մէջ անոնց սեփական սրբաձայներուն պաշտպանութիւնը ուղղակի Ռուսիոյ Չարին յանձնել, Մէկխօսքով, կը պահանջէր որ, Թուրքիոյ մէջ գտնուած 12,000,000ի չափ Օրթոտոքս հպատակներու կրօնական ու քաղաքական վերին իշխանութիւնը Ռուսիոյ յանձնուի:

Աւելորդ է բնէ թէ, Սուլթան Մէճիա և օրուան նւաստես կառավարութիւնը, Ռուսիոյ այս արատառոց պահանջումը, իրրեւ գերիշխան Վեհապետի մը արժանապատուութեան անհամաձայն և Յամ. պետութեան քաղաքական շահերուն անասկէտով վասնզատ որ, բացարձակապէս մերժեցին: Իսկ Մէնչիքօֆ, հինգ օրուան պայմանաժամը լրանալէ յետոյ, յօխորտանօք մեկնեցաւ Բէթէրպարկ, Նիքօլա Ա. արդէն զսաս՝ իր այլանդակ պահանջումին մերժուելուն և անկասկած ըլլալով իրենց քրայի Բրուսիոյ և Աւստրիոյ աջակցութեան, քանի որ մէկ կողմանէ քեռայրն էր Ֆրեաներիկ Վիլհէլմ թագաւորին և միւս կողմանէ՝ 1849ի Մաճառական յեղափոխութիւնը ինչք ջախջախած ըլլալուն համար, իրաւունքուն էր Աւստրիոյ երախտագրատութեան վրայ, կր յուսար որ իր արեւմտեան գրայցիներուն ըսին համակերպութեանը հետքի՝ դիւրաւ պիտի կարողանար «Հիւանդ Մարդ»ը — Թուրքիան — բոլորովին մահացնել:

Սակայն Ռուսիոյ այս յոյն ի գերեւ ելաւ, որովհետեւ՝ Բրուսիա և Աւստրիա այս պարագային մէջ չէլոք բնթայք մը բանեցին: Իսկ Վիքթորիա թագուհին և Նափալէան Գ. կայսրը՝ անձնական նամակներով ընդունայն յորդորեցին Ռուսիոյ վեհապետը, որպէս զի անիրաւ պահանջումի մը համար արիւնահեղութեան պատճառ չըլլայ և խնդիրը զի անողբաական ճամբով կորցազրուի: Ռուսիոյ կայսրը դարձեալ անհամազելի Միայ և Մէնչիքօֆ զօրապետը 150,000 զօրքով՝ Մոլտավիան և Վալաքիան գրուեց: Այս անօրինակ բանարարութեան վրայ, Սուլթան Մէճիա պատերազմ հրատարակեց Ռուսիոյ դէմ, 1853 Հոկտ. 4ին:

Պաշտօնական երեկոյթի մը մեջ, Նիքօլա Ա. կայսրը, Թուրքիոյ մասին իր ունեցած քաղաքական ծրագիրը բացէ ի բաց կը պարզէ Բեթերպարկի Անգլիական դեսպան Սըր Համիլթըն Սեյմլըրի՝ հետեւեալ բառերով.

« Nous avons sur les bras un homme malade, très malade; ce serait un grand malheur si un de ces jours il devait nous échapper, avant que toutes les dispositions nécessaires fussent prises ».

Աս որ կը պատասխանէ դեսպանը՝ բռնով.

« C'est à l'homme généreux et fort de ménager l'homme malade ».

7. Ռուսաց նպատակն էր՝ Վիտինի վրայ յարձակելով՝ անկից Նիշի և Սօֆիայի սեղդութեամբ՝ Պալքաններէն դէպի հարաւ արշաւել։ Սակայն Օսմանեան սպարապետ և անուանի սպամալար Սէրսարը կֆրեմ կօմեր փաշա, կանխեց թշնամին և ի դերեւ հանեց անոր յատակադիծը։ Նախ, Վիտինի դիմացն անցնելով՝ Քալաֆաթը գրաւեց, յետոյ՝ Օլթէնիցայի քով Ռուսաց հեաշարունակ երեք օր զարնուելով՝ սուկալի ջարդ մը տուաւ։ Իսկ երբ Նախիլօֆ Ռուս ծովակալը, մշուշապատ օդէ մը օգտուելով՝ Սինոպի առջև խարսխած Օսմ. նաւատորմը գնաց յանկարծակիի բերելով զարկաւու ջախջախեց (30 Նոյ.), այն ատեն Անգլիա և Ֆրանսա 1854ին Ապրիլ 10ին, յարձակողական և պաշտպանողական դաշնակցութիւն մը կնքեցին՝ Քուրքիոյ քաղաքական ամբողջութեան հետ՝ Արեւելքի մէջ իրենց անտեսական ու քաղաքական շահերը՝ Ռուսիոյ փառասիրական ծայրայեղութիւններուն դէմ պաշտպանելու նպատակաւ։ Արեւմտեան երկու



Սէրսար կֆրեմ կօմեր փաշա

ի վերջոյ միացաւ նաև՝ Սարսենիոյ Քազալորուքիւնը 6000 զօրքով, սակայն ո՛չ թէ Ռուսիոյ հետ հին կամ նոր հաշիւ մը ունենալուն, այլ աւելի, Արեւմտեան երկու հզօր պետութեանց համակրութիւնը շահելու և անոնց պաշտպանութեանը շնորհիւ՝ իր քաղաքական տպագայ ծրագիրներուն յաջողութիւնը երաշխաւորելու նպատակաւ, ինչ որ միակ և գերադոյն իտէալն էր՝ Իտալացի մեծ հայրենասէր և անուանի քաղաքագէտ Բափուռ կոմսին։

8. Ֆրանսական 50,000 զօրաց բանակ մը՝ մարաջախա Սենդ-Առնոյի, իսկ Անգլիական 25,000 զօրք՝ Լոս Բալիլանի հրամանատարութեամբ, կ'անցնին Տարսանէլէն և ցամաքի ճամբով կը յառաջանան դէպ ի հիւսիս, իսկ դաշնակից նաւատորմը կը մտնէ Պոսֆոր: Սիլիսդքէի, Ճուրճոլայի, Օլիթէնիցայի և Քալաֆաթի նշանակելի պատերազմներուն մէջ՝ Թուրքերը իրենց ցոյց տուած ռազմագիտական ճարտարութեան և չքնազ արիւթեանն համար՝ նաւատարազէս իրենց բարեկամներուն և միանգամայն թշնամիներուն հրացում կ'ազդեն:

Սակայն Ռուսերը յաջողած էին Բուսճուքի մէջ քանիցս վանել Թրքաց բուն յարձակումները, երբ դաշնակից զօրաց Վառնա ցամաք ելլելն իմանալով՝ կը մեկնին Մոլտավիաէն ու Վալաքիաէն՝ զօրս Աւստրիա առժամապէս կը գրաւէ:


Միայն թէ, մարաջախտ Քանուպէն, տակաւին թշնամիին դէմ գնդակ մը չարձակած, Տօպուճայի ճախճախուտներուն մէջ՝ իր արի զինուորներէն 6000ը ժանտախտի զոհ կուտար:

9. Հոս կ'ամփոփենք, իբր երկու տարի շարունակող և ժամանակակից պատմութեան մէջ ա'յնքան նշանաւոր եղած այս պատերազմին զինուորական կարեւոր գործողութեանց մէկ համառօտ պատկերը՝ ժամանակագրական հետեւեալ կարգով.

1. Անկլո-Ֆրանսական տորմիզ մը, Նաքիկ ծովակալին հրամանատարութեամբ, կը մտնէ Պալթիկ և Ռուսական նաւահանգիստներն ու Ալանս կղզին կը պաշարէ (1854 Օգոստ. 8—16):

2. Դաշնակիցք, ճամբայ կ'ելլեն դէպ ի Խրիմ՝ Սեւաստափոլը պաշարելու համար: Սեպտ. 20ին տեղի կ'ունենայ Արմայի ճակատամարտը՝ ուր Մէնչիքով 40,000 զօրքով կատաղի ընդդիմութիւն մը կ'ընէ: Զօրավար Պոսկե, իր կտրիճ Զուալիներուն շնորհիւ՝ Պաշախալայի տի-





րելով՝ կը հասնի Սեւաստափոլի առջև։ Այս պատե-  
րազմին մէջ հիւանդանալով կը մեռնի Սէնդ-Ասնօ և ի-  
րեն կը յաջորդէ մարաջախտ Քանուպեռ (Սեպտ. 22)։

3. Ռուսք, իրենց տորմիղը Սեւաստափոլի առջև  
կը խրեցնեն՝ թշնամի տորմիղին մուտքն արգիլելու հա-

մար, Թօրիպակն և Քօռնիլօֆ, Սեւաստափօլի վահանը կողմ Մարաֆօֆի համբաւաւոր ամբողջ կը պաշտպանեն :

4. Դաշնակիցք՝ Պալախալայի ճակատամարտը կը շահին՝ Լիբրանդի ուս զօրապետին դէմ, 25 Հոկտ.) :

5. 1855 Փետր. 17ին, դաշնակիցք յաջորդարար Եւրաթօրիայի և Էնֆերմանի յաղթանակները կը սանին :

6. Իտալացի Լա-Մաւնօրա զօրապետ 6000 զօրքով Պոլիս կուգայ նեկրօ ծովակալին հետ (Ապրիլ 1) :

7. Քանթօլէօի կը յաջորդէ զօրավար Բեյլիսիէ (16 Մայիս) :

8. Դաշնակից նաւատորմին մէկ մասը դէպ ի Ազախ ճամբայ կ'ելլէ (24 Մայիս) :

9. Դաշնակիցները կանաչ Ամրոցին (Mamelon Vert) կը տիրեն (17 Յունիս) :

10. Անկիօ-Յրանս. բանակը Մալաքօֆի բերդը գիշերային յարձակումով մը գրաւելու փորձին մէջ կը ձախողի, ահագին զոհեր տալով (18 Յունիս) :

11. Վերջապէս, 1855 Օգոստ. 16 կ'սկսի ընդհանուր և կատաղի յարձակում մը որ կը տեւէ մինչև Սեպտ. 8. և Մալաքօֆ կ'անցնի դաշնակիցներուն ձեռքը : Իրենց կորուսած այս ամենակարեւոր դիրքին վերստին տիրանալու համար՝ Ռուսաց ի գործ գրած գերմարդկային բոլոր ճիգերը ի դերև և կ'ստիպուին՝ բերդաքաղաքին մէջ գտնուած զօրանոցներն ու վառոցարանները օդը հանելէ յետոյ հեռանալ՝ կատարինէ Բ. ի տարած յաղթանակներուն իրրև կոթող՝ Փօքեմիլին զօրապետին կանգնած Սեւաստափօլ հաշակաւոր բերդաքաղաքէն և ապաստանիլ շրջակայ ամրոցները :

Տասնը մէկ ամիս տեւող այս նշանաւոր պաշարումին և տարուած վճռական յաղթանակի գործին մէջ՝ փառքի ամենամեծ բաժինը կը վիճակէր Յրանսական զինուոյց, և ի մասնաւորի Պօսիէի, Մալ-Մաննիի, և մանա-



Հայաստանի քարտեզը

11



12



13



10

14



15



16



- 1 Սարգսի Կարապետ Մեծիկ... 2 Վերջինիս Բարսեղ... 3 Սարգսի Գ... 4 Սիպուս Ա... 5 Արտաշես Ա... 6 Մարտի  
 7 Մարտի Մեծիկ... 7 Մարտի Բարսեղ... 8 Լյուս-Քաղաք... 9 Մարտի Արտա... 10 Մարտի Բարսեղ... 11 Մարտի Գրա...  
 12 Մարտի Գրա... 13 Մարտի Բարսեղ... 14 Մարտի Բարսեղ... 15 Մարտի Բարսեղ... 16 Մարտի Բարսեղ...

ւանդ Բեղիսիկի, որ այս ստիւ կոչուեցաւ «Մարաջախա Ֆրանսայի և Դուքս Մալաքոֆի» :

10. ԲԱՐԻՉԻ ԴԱՇՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ (30 Մարտ 1856) . — Պատերազմին ամէնէն տագնաոյալի մէկ շրջանին — Եւրոպոսիոյ ճակատամարտէն յետոյ (2 Մարտ 1855) — նիքօլա կայսրը՝ զգացած բուռն յուզումէն մեռած ըլլալով, իր որդին ու յաջորդը Ալեքսանդր Բ. ստիւգուած էր, Ռուսիոյ զինուորական պատուոյն համար պատերազմը շարունակել : Սակայն Սուստափոլի անկումէն յետոյ, որ Ռուսիոյ վերջնական պարտութիւնը կը նշանակէր, Աւստրիոյ Ֆրանուա-ժոզեֆ կայսրը միջնորդի դեր ստանձնելով՝ կը գիտէ նարոյէոն Գ. Ի և խաղաղութիւն կ'առաջարկէ : Նարոյէոն կ'ընդունի, նկատելով որ «Ալեքսանդր Բ. լոկ ժառանգորդ մըն էր այն վիճակին զոր ինք չէր սակզած» : Ինչպէս ինքը կ'ըսէր, և հաշտութեան նախաշախիղ պայմանները Վիեննայի մէջ ստորագրուելէ յետոյ, Ֆրանսայի, Անգլիոյ, Քուրքիոյ, Աւստրիոյ, Բրուսիոյ և Սարաւենիոյ ներկայացուցչուներուն միջև, 1856 Մարտ 30ին, Բարիզի մէջ կը կնքուի այն նշանաւոր դաշնագրութիւնը՝ որու զլիսուոր արամագրութեանց համեմատ :

1. Դեսպանախորհուրդը կը ճանչնար ու կ'երաշխաւորէր Օսմ. պետութեան անկախութիւնն ու քաղաքական անբողոքիւնը :

2. Տարսակէլի և Պոսֆորի նեղուցները փակուած պիտի ըլլային բոլոր տերութեանց պատերազմական և անտնուտոյն :

3. Ռուսիա և Թուրքիա՝ Սև Ծովու վրայ զինուորական և անարական չպիտի ունենային :

4. Ռուսիա՝ Պեսարապիոյ մեկ մասին հետ՝ Դանուբի գետաբերանը Թուրքիոյ պիտի բողոք :

5. Վալաքիա, Մոլդաւիա և Աերալիա՝ ուղղակի Օսմ. :

գերիշխանութեան ներքեւ՝ ինկնօրեկ հարկասու իշխանութիւններ կ'ըրչային .

6 . Սեւ Ծովը ազատ պիտի ըլլար անկէն տրուեալն վաճառական նաւերուն առջեւ .

7 . Ասիական բաժնիկն մեզ՝ Ռուսիոյ գրաւած քաղաքները Թուրքիոյ պիտի վերադարձուէին .

8 . Դաւանք գնաի նաւարկութիւնը ազատ կը հռչակուէր եւ Միջագոյսին Յանձնաժողով մը հակակշիռ պիտի կատարէր՝ նաւարկութեան կանոնաւորութեանը համար ի գործ դրուելիք գործառնութեանց վրայ :

Այսպէս . Ռուսիա՝ հակառակ իր ծայրայեղ յոյսութեանքին . հակառակ իր ձեռնարկած այս անիրաւ պատերազմին կրօնական հանգամանք մը տալով՝ Թուրքիոյ Օրթոքսոքս իշխանութիւններն և հպատակ ժողովուրդները ձեռքի տակէ ապստամբութեան յորդորած ըլլալուն . հակառակ «Հիւանդ Մարգար» վերջնապէս մահացնելու համար ի գործ դրած իր բուռն և սրտակարգ ճիգերուն . այս անգամ ալ չէր յաջողած իր վառասիրական նպատակին համար . շնորհիւ Արեւմտեան երկու մեծ և ազատական պետութեանց կարիճ զաւակներուն թափած արեանը . որով Օսմ . պետութիւնը այս անգամ ալ կրցած էր իր գոյութիւնը պահպանել՝ Եւրոպական տէրութեանց շարքին մէջ :

Սուլթան Մէճիտ և իր լուսամիտ նախարարութիւնը շատ լաւ կ'զգային այս կարեւոր պարագան և իրենց երախտագիտութիւնը գործով ալ ապացուցանելու ու Եւրոպայի ամէնէն արդար և անխուսափելի պահանջումին գոհացում տալու համար . Սուլթան Մէճիտ . նորեւաբար Հիւանդունով մը՝ կրկին անգամ կ'երաշխատորէր Օսմ . պետութեան Քրիստոնեայ հպատակաց կեանքի . ինչքի և պատուոյ տապանութեան հետ՝ օրինաց սուջե հաւատարմութիւնը և ազատ կիրառութիւնը անոնց ազ-

գային և կրօնական առանձնաշնորհմանց : Բայց դժբախ-  
դարար՝ այս ամէն իղձերն ու գրաւոր խոստումները  
դարձեալ մնացին մեռեալ տառ և դարձեալ մնացին ան-  
հետեւանք խոստումներ :

Բարիզի դաշնագրութենէն ասորի մը յետոյ կը մեռ-  
նէր՝ ժամանակակից Թուրքիոյ մեծագոյն անձնաւորու-  
թիւններէ մէկը եզոզ անուանի Մուսթաֆա Բէչիա փա-  
շա՝ — Երիտասարդ Թուրքիոյ բո՛ւն հիմնադիրը — որու  
կը յաջորդէին իր ձեռնառուն երկու արժանաւոր աշա-  
կերաները, Ալի և Յուսուֆ փաշաները, որոնք Մէծիտեան  
(Վերջին) և Ազիզեան շրջաններուն մէջ Եւրոպական համ-  
բաւ մը վայելեցին՝ փոփոխակի իրրեւ Մեծ Եպարքոս և  
Արաաքին գործոց նախարար, իրենց վարած կարեւոր  
պաշտօններով :

Այս երկու լուսամիտ պետական անձերն ալ, թէ-  
պէտ լուրջ ջանքեր բրին Օսմ. պետութիւնը քաղաքա-  
կան արտաքին միջամտութենէ զերծ պահելով՝ Եւրո-  
պայի համակրութիւնը վայելելու համար, սակայն տիրող  
տարրին մտնեանդութիւնն ու ցեղային հակառակու-  
թիւնները՝ տակուին բաւական պիտի գրազեցնէին Օսմ.  
պետութիւնը և յուսաջ պիտի բերէին արտաքին միջա-  
մտութիւններ :

11. ԱՐԱՅԻՈՅ և ԼԻԲԱՆԱՆԻ ՋԱՐԴԵՐԸ . — Այս-  
պէս, Հիճազ գաւառի Ճիսսէ նաւահանգստին մէջ, Իս-  
լամ ուխտաւորներու և տեղացի Տերվիշներու միջեւ  
1857ին տեղի ունեցած խռովութեան մը հետեւանքով,  
բազմաթիւ Քրիստոնէից հեա՝ կը ջարդուէին նաեւ Յրան-  
սայի և Անգլիոյ Նիւպատոսները : Ուստի, երկու տէրու-  
թեանց միացեալ սորմիզ մը կը սմբակոծէ ճիտտէն և  
ջարդին հեղինակները տեղւոյն վրայ կախաղան հանուե-  
ով, խնդիրը կը փակուի :

Ասոր կը յաջորդէ Լիբանանու կատարածը : Ինչպէս

տեսանք, 1841էն ի վեր, Լիբանանի Քրիստոնեայ Մարօնիներու և Իսլամ Տիւրքիւններու միջեւ գոյութիւն ունեցող մահացու ստեղծութիւնը, երթալով սաստկանալու վրայ էր, երբ, քաղաքական պարագաներու բերմամբ և Խաթիթը Հիւժայուններով՝ Քրիստոնէից խոտոացուած ազատութիւնները մէկ կողմէն, իբրեւ Կաթոլիկ՝ Ֆրանսայի կողմանէ Մարօնիներու վայելած պաշտպանութիւնը միւս կողմանէ, աւելի գրգռեցին Տիւրքիւններու մոլեռանդութիւնը, որ 1860ին յանգեցաւ աճուելի կոտորածի մը և ծանր համեմատութիւններ ստանալով՝ տարածուեցաւ նաեւ մօտակայ բազմամարդ քաղաքներուն մէջ: Տակաւին չորս տարի առաջ և յանուն Թուրքիոյ Քրիստոնեայ տարրին պաշտպանութեան՝ Արեւմտեան երկու մեծ աէրութիւններուն թափած արիւնը՝ ազիւ թէ ցամքած, և Թուրքիոյ կողմանէ տրուած հանդիսաւոր խոստումներուն՝ աճուելի հակասութիւն մը կը դառնային այս քստմնելի ոճիրները, որոնց համար իրաւամբ յուզուեցաւ համօրէն Եւրոպա և զօնացում պահանջեց: Ուստի, Բարիզի մէջ զուեմարուած գեազանախորհուրդին տուած որոշմանն համեմատ, Նաբոլէօն Գ. ի կառավարութիւնը 6000 զինուոր ցամաք հանեց գէսի Լիբանան, Սակայն Սուլթան Մէճիտ, փութաց անմիջապէս զօնացում տալ Եւրոպայի իրաւացի պահանջումին և Ֆուատ փաշայի նախադատութեան Նիքքեւ Բննիչ Յանձնաժողով մը զրկեց Լիբանան՝ ուր աեզոյն վրայ կատարուած անաչառ քննութեամբ երեւան ելաւ որ, այս բարբարոսական եղեանին թեւադրիչ և լոին հանդիսատեսները եղած էին՝ Պէյրութի կուսակալ Խուրչիտ և մանաւանդ՝ զինուորական հրամանատար մարտջախա Ահմէտ փաշաները: Ուստի, առաջինը մշանջնական բերդարգելութեան մէջ, իսկ վերջինը՝ իր բազմաթիւ մեղսակիցներուն հետ կախազանի վրայ քաւեցին իրենց քաջալերած այս քստմնելի ոճիրը:

Այս կտորածին առթիւ է որ, Ճէզայիրի նախկին համբաւաւոր էմիր Ապս-իւշ-Գասեր, բազմաթիւ Քրիստոնէից կեանքն ու ստացուածքն ազատեց՝ և որու համար Ֆրանսայի կայսեր կողմանէ արժանացաւ Պատուոյ Լեգիոնի Մեծ պատուանշանին :

Իսկ Լիրանան, մասնաւորապէս Նարոլէանի ի դորձ գրած ազդեցութեամբ, Բ. Դրան կողմանէ ներկայացուելիք ու Եւրոպայի հաւանութեամբ վաւերացուելիք Քրիստոնեայ կուսակալի մը ներքեւ՝ կ'ըլլար Արսօնացեալ Կուսակալութիւն (Վիլայէթը Միւսթազի) :

12. Այս ցաւալի դէպքէն քիչ յետոյ, 1861 Յունիս 25ին մեռաւ Սուլթան Ապտ-իւլ-Մէճիտ՝ որու 22 տարուան իշխանութիւնը՝ ներքին բարեկարգութեանց սկզբնաւորութիւններու, Քրիստոնեայ տարրին ի նպաստ և չգործադրուած հանդիսաւոր խոստումներու, Եւրոպայի դորձօն միջամտութեան, և Հին ու Երիտասարդ Թուրքիոյ փոխանցման շրջանը եղած էր :





## ՍՈՒԼԹԱՆ ԱՊՏ-ԻՒԼ-ԱԶԻԶ

(Հիւրերի՝ 1277—1293. — Քս.ի 1861—1876)



1. Սուլթան Ազիզի իշխանութեան առաջին տարիները. — 2. Կերպրի խոստովութիւններ. Սերպիա, Ռումանիա և Յունաստան. — 3. Ալի և Ֆուատ փաշաներու կատարած կարեւոր դերը. — 4. Ֆրանքո-Ռուսիական պատերազմէն յետոյ՝ Թուրքիոյ մէջ Ռուսիոյ ձեռք բերած ազդեցութիւնը. — 5. Զորավար Իկնաթիկ և Մահմուտ Կէտիմ փաշա. — 6. Բանակին և Նաւատորմին վերակազմութիւնը, Սուլթան Ազիզի շուսլուութիւնները. — 7. Հերսէք Պոսնայի և Պուլկարիոյ արտամարտութիւնը. — 8. Երիտասարդ Թուրքերու գործունէութիւնը և Սուլթան Ազիզի գահընկէցութիւնը:

1. Սուլթան Ապտ-իւլ-Մէճիտի յաջորդեց իր կրտսեր եղբայրը ՍՈՒԼԹԱՆ ԱՊՏ-ԻՒԼ-ԱԶԻԶ, որ 32 տարեկան էր երբ գահ բարձրացաւ:

Սուլթան Ազիզ, իր գահաժառանգութեան շրջանին մէջ՝ տէրութեան քաղաքական գործերէն բոլորովին ձեռնպահ մնացած ըլլալով՝ Իսլամ յետադէմ դասակարգին այն յոյսը ներշնչած էր թէ, նոր Սուլթանը՝ Հին Թուրքիոյ պահպանողական գաղափարներուն հաւատարիմ աւանդապահ մը պիտի ըլլար, տարածերժելով Եւ-

բոսպոլան ան նորութիւնները որոնք — իրենց կարծիքով — նախատինք էին թրքական բարուց և վաղնջական աւանդութեանց : Հին Թուրքիոյ պատկառող կուսակցութիւնը հաշտ աչօք չէր դիտած Թանգիւսթի հաստատութիւնը . Բրիտանոնէից արուած առանձնաշնորհումները , (Սուլթան Մէծիաի՝ Սան-Սիէֆանոյի մէջ Տատեաններու բնակարանը օրերով չիւր մնալը) , իր իւզաներկ կենդանագիրը նկարել տալը , Հայու մը — Տիվիթճեան Յակօր էֆ . — իրեն Ծրանսերէնի ուսուցիչ ունենալը ևն . : Մէկ խօսքով , և մի՛շտ յետադէմ տարբին համոզմամբ , Մահիկին խնամարձումը՝ Սաչին տարած յաջորդական յաղթանակներուն նեանւանքով :

Սակայն բարեբախդարար . Հին գրուիւններու այս ամէն ակնկալութիւններն՝ ի դերու ելան , որովհետև Ապտ-իւլ-Ազիզ ո՛չ միայն իր նախորդին ձեռնարկած բարենորոգութեան գործին հաւատարիմ աւանդապահ մը եղաւ , այլ և՛ անոր երկրաչէն խորճուրդներուն գործակից լուսամբիս նախարարները իրենց կարեւոր պաշտօններուն մէջ վերահաստատաց և իր իշխանութեան առաջին տարիները եռանդուն պաշտպանութիւն մը բնծայեց՝ Օսմ . հայրենիքին վերածնութեան գործին :

Սուլթան Ազիզ , հաւատարմարար յարգեց Եւրոպայի նկատմամբ . պետութեան ունեցած յանձնառութիւնները և Իտալիոյ , Անգլիոյ ու Պելճիզայի նկատմամբ ազատական սկզբունքներու վրայ չիմուած առեւտրական դաշնագիրներ կնքեց : 1862ին . Յուստ փաշա Մեծ Սպարքասութեան պաշտօնն ստանձնելով՝ Օսմ . պետութեան համար և առաջին անգամն ըլլալով Պիւտճէի գրութիւնը սահմանեց , որ սակայն տեսականութիւն չունեցաւ : Նոյնպէս՝ փորձ մը չբաւ վագրճը ֆնջելու , բայց Իսլամ մուսուսնդ դատակօրդին յայտնի խլրատմաներուն պատճառաւ՝ չկրցաւ այս կարեւոր ծրագիրը գործադրել :

2. **ՆԵՐՔԻՆ ԽՌՈՎՈՒԹԻՒՆՆԵՐ**.—Ռուսիա, Խրի-  
սու պատերազմին պարսութեան արատը մաքրելու և  
իր կորուսած ազգեցութեան վերստին տիրանալու նպա-  
տակաւ, սկսած էր իր աւանդական քաղաքականու-  
թիւնը նորէն ձեռք աւնել, այսինքն՝ իր քաղաքական  
ծրագիրներուն յաջողութեան յառաջապահները եղող  
Պալքանեան պետութիւնները ձեռքի սակէ գրգռելով՝  
Թուրքիոյ խաղաղ զարգացման առջեւ խոչնդոտներ յա-  
րուցանել։ Այսպէս, 1861ին, ՄՕՆԹԷՆԷԿԻՐՕ և Հերսէ-  
քովին կ'սպստամբին, սակայն էօմէր և Հիւսէյին Ալիի  
փաշաները Չէթինէ մանելով՝ ազգու դաս մը կուտան  
Ռուսիոյ այս շփացած սրղեգրին։

**ՍԵՐՊԻԱ**, որ Բարիզի Դաշնագրութեամբ ինքնօ-  
րէն իշխանութիւն մը եղած էր, 1862ին Եւրոպական  
նոր միջամտութեան մը տեղի տուաւ։ Նոյն տարին,  
Սերպերը կը յարձակին բերդաքաղաքներու մէջ բնակող  
Թրքաց վրայ և կոտորած կ'ընեն։ Ասոր վրայ, Պէլ-  
կրատի միջնաբերդին Օսմ, պահակազօրքը կ'սկսի քա-  
ղաքը սմբակոծել։ Այս դէպքը մեծ յուզում կը պատճա-  
ռէ Եւրոպայի մէջ ու կ. Պոլիս զուժարուած Դեսպանա-  
խորհուրդը կ'արգիլէ բերդաքաղաքներու մէջ Թրքաց  
բնակութիւնը և բաց ի Պէլկրատէն, Ֆնայեալ բերդերը  
կը յանձնուին Սերպիոյ, Նոյնպէս՝ 1867ին, Թուր-  
քիա իր զօրքը բոլորովին ետ կանչեց Սերպիաէն, որ այդ  
թուականէն սկսեալ՝ եղաւ հարկատու ինքնօրէն իշխա-  
նութիւն։

Միեւնոյն ատեն՝ ՄՈՒՏՍՍՎԻԱ և ՎԱՂԱՔԻԱ ևւս  
քաղաքական նոր կազմակերպութիւն մը կ'ստանային։  
Ծագումով Լատինական ցեղէ, իսկ կրօնքով Յունա-  
դաւան այս երկու իշխանապետութիւնները՝ փոխադարձ  
հաւանութեամբ Հոսփոսար բնարած էին Քուճա գնդա-  
պետը զօր Բ. Դուռը վաւերացուցած էր։ Այս թուակա-

նէն սկսեալ՝ երկու երկիրները առին ՌՌԻՄԱՆԻԱ անունը  
և Պոլքեշ եղաւ իրենց Մայրաքաղաք :

Իշխան Քուձա՝ իր հայրենիքին տնտեսական , կրթա-  
կան ու գինուորական մակարդակը բարձրացնելու համար  
գնահատելի ջանքեր բրաւ և 1865ին՝ Ռուսէն եկեղեցին  
կ . Պոլսոյ Տիեզերական Պատրիարքին հոգեւոր իրաւա-  
սութենէն անջատելով ազգայնացուց և առանձին Սիւն-  
հոգ մը կազմեց :

ՅՈՒՆԱԿԱՆ նորածին թագաւորութիւնն ալ շիտ-  
թութիւններէ զերծ չէր : Խրիմու պատերազմին ժամա-  
նակ , Յոյները , Ռուսիոյ թեւադրութեամբ՝ փորձեր մը  
ընել ուզեցին՝ թուրքիոյ տազնտալի վիճակէն նիւ-  
թաղէս օգտուելու համար , բայց զաշնակից աէրու-  
թեանց կողմանէ արգիլուեցան : Միւս կողմանէ , Ռիսն ,  
չուզեց Ռուսիոյ նենգամիտ խորհուրդներուն խաղալիկ  
դառնալ և այս պատճառաւ իր ժողովրդականութիւնը  
կորսնցնելով՝ 1862ին հրաժարեցաւ և իրեն յաջորդեց  
Տանրմարքայի Քրիստիան թագաւորին որդին ժօրժ Ա :

Նորնաիր թագաւորը իր ժողովուրդին ազգայնա-  
մոլութիւնը գգուելու նպատակաւ և զարձեւալ Սու-  
սիոյ թեւադրութեամբ՝ Կրետէն Յունաստանի կցելու  
խնդիրը արժարձեց : 1866ին սկսաւ Կրետէի ապստամ-  
բութիւնը որ շարունակ երկու տարի տեւեց և Օսման-  
ցիք , անմատոյց կիրճերու ու երկնաբերձ լեռներու ծալ-  
քերուն մէջ կուռզ ապստամբները դժուարաւ կրցան  
զսպել : Վերջապէս , Մեծ Եպարքոս Ալի փաշա , սպարա-  
պետ Հիւսէյին Ալթի փաշայի հետ անձամբ գնաց Կրետէ՝  
ուր իր խոհական ընթացքով և անմիջապէս ի գործ  
դրուելիք բարենորոգմանց խոստումներով , յաջողեցաւ  
ապստամբութեան հեղինակները սիրաշահիլ և գոնէ ժա-  
մանակի մը համար խաղաղութիւնը վերահաստատել ,  
Ինքնօրէն Կուսակալութեան մը սկզբունքներուն վրայ

հիմնուած ամէն առաւելութիւններով օժտելով Կրետացի ժողովուրդը :

1868ին, Բարիզի մէջ գումարուած դեսպանախորհուրդը պարտադրեց Յունաստանը որ վերջ տայ Կրետէի մասին իր ունեցած յաւակնութեանց և զինուորական առաքումները դադրեցնէ :

Յ. Տէրութիւնն զբաղեցնող ներքին այս տագնապներէն պահ մը ազատելէ յետոյ, Ալի և Յուստ հայրենասէր նախարարները ձեռնարկեցին ներքին կենսական բարենորոգումներու : Մասնաւորապէս մեծ մղում տուին դատախարակութեան գործին, տէրութեան կարեւոր կեդրոններուն մէջ բանալով նախնական, մասնագիտական ու բարձրագոյն վարժարաններ :

Այս թուականին է որ (1868) բացուեցաւ նաեւ Կալաթա Սէրայի Լիսէն (Մէքթէպը Սուլթանի), որ Իսլամ և Քրիստոնեայ բազմաթիւ զարգացած սերունդներ նուիրած է պետութեան, որու մէջ կարեւոր պաշտօններ վարած են և ցարդ կը վարեն<sup>(1)</sup> :

Նոյնպէս, Ալի և Յուստ փաշաներու նախաձեռնութեամբ է որ այս շրջանին կազմուեցաւ Պեսալան Խորհուրդ (Շուրայի Տէլլէթ) անուն Իսլամ և Քրիստոնեայ անդամներէ բաղկացած Բարձրագոյն ժողով մը՝ որու նախագահ կարգուեցաւ Օսմ. Սահմանադրութեան ապագայ հիմնադիր մեծանուն Միհաթ փաշա : Տէրութեան ցամաքային ամբողջութեանը իր վարչական կազմակերպութիւնն ստացաւ Կուսակալութիւններն ունեցան իրենց ստորաբաժանումները (Սանճագ, Գազա, Նահիյէ, Միւսիրիյէթ), իւրաքանչիւրը իր դատական և

(1) Կրթական այս բարձրագոյն հաստատութեան հիմնարկութեանը բարոյապէս մեծ ստատր եղած են՝ նոյն թուականին Յրանասայի կրթական նախարար և մեծանուն պատմագիր Վիզթո Տիւրի, ինչպէս նաեւ՝ Պ. Պ. Պուրհ և ջը Սալի :

գինուորական ուրոյն իշխանութիւններով : Օսմ. բանակը նորահասար հրացաններով ու թնդանօթներով օժտուեցաւ . իսկ նոր թուրքիոյ ծովային զօրութեան հիմնադիրը եղած է Սուլթան Ազիզ՝ իր կազմած նոր դրութեամբ գրահաւորներու պատկառելի տորմիզովը :

Օսմ. վեհապետաց մէջ առաջինը եղած է Սուլթան Ազիզ , որ 1868ին Եւրոպա ճամբորդելով՝ ամենուրեք համակիր ընդունելութեան առարկայ եղաւ և անձամբ տեսաւ քաղաքակրթութեան հրաշալիքներուն հետ , տիպար կառավարութեանց էական պայմանները :

4 . Ֆրանքո-Ռուսիական պատերազմէն յետոյ (1870 —1871) , երբ մէկ կողմանէ Արևելքի մէջ Ֆրանսայի ունեցած դարաւոր ազդեցութիւնը կը ջախջախուէր , միւս կողմանէ Ռուսիա , աւիթէն օգուտ քաղելով , իր նախարարապետ իշխան Կորչաֆոֆի միջոցաւ՝ Բարիդի դաշնագրութեան մէջ իրեն նպաստաւոր փոփոխութիւններ պահանջելով՝ թուրքիոյ հետ նորէն խաղի կ'ելլէր : Այլ և Ֆուատ փաշաները , որոնցմէ կ'ականածէր Սուլթան Ազիզ , մնած էին նոյն տարին , այնպէս որ , Ռուսիոյ դեսպանը , Չորավար Իկնարիեվ , ազատ ստպարէզ գտնելով՝ յաջողած էր Սուլթան Յ. Ազիզի մտերմութիւնն ու անսահման վստահութիւնը շահելով՝ տեսակ մը պաշտական խորհրդականի դերն ստանձնել՝ զրեթէ ուղղակի ինքը վարելով Տաճկաստանի ճակատադիրը՝ ի նպատտ Ռուսիոյ շահերուն : Բնական էր որ Սուլթան Ազիզ յանձն չպիտի առնէր կառավարութեան ղէկը յանձնել այնպիսի նախարարութեան մը , որ հակառակ ընթացք մը բռնէր՝ հանդէպ Ռուսական քաղաքականութեան և անոր ներկայացուցչին , որ ամենակարող էր թուրքիոյ մէջ : Այս պատճառաւ՝ նախարարական յաճախակի փոփոխութիւններ տեղի կ'ունենային և Մանմուս Նեքիմ փաշա , իրրեւ Ռուսիոյ մարդը , Սուլթանին համար ամէնէն վստահելի

անձր և Ռուսիոյ դեսպանին ձեռքը զործիք դարձած նախարարապետն էր :

5. Սուլթան Ազիզ , իր իշխանութեան վերջի տարիները բոլորովին անձնատուր եղած էր Հարէմական կեանքի զուարճութեանց , անձնական հաճոյքներու , ծիծաղելի գրասանքներու , շապլ և անխորհուրդ ծախքերու՝ զորս ի կնաթիւէ վ անուղղակի կերպով կը քաջալերէր՝ աւելի փութացնելու համար Թուրքիոյ դահալէժ անկուսը :

Բաց ի Խրիմու պատերազմին ատեն Սուլթան Մէճիափ Եւրոպայէ կնքած 200 միլիոն ֆր . ի փոխառութենէն , Սուլթան Ազիզ , իր իշխանութեան 16 տարիներու շրջանին մէջ Եւրոպայէ յաջորդաբար փոխառութիւն ըրած է վեց միլիառ ֆրանք՝ որու մէկ մասը յատկացուց Բանակին և նաւատորմին վերակազմութեան , մէկ մասը՝ քէօշկերու , պալատներու Մահմուտ Նէսիմ փաշա և ճամբաներու շինութեան , իսկ մնացեալը՝ իր անձնական հաճոյից և անվերջ ու կործանարար շապլութիւններու :



6. Այսպէս , տէրութիւնը կը հեծէր ամենաժանր պարտքերու ներքեւ , պետական վարկը կորսուած էր , պաշտօնեայք ամսական չէին կարող ստանալ և կեդրոնի կառավարութեան ապիկարութենէն օգուտ քաղելով՝ դաւառաց կուսակալները տեղացի Քրիստոնեայ ժողովուրդները ծանր տուրքերու և զուլումներու կ'ենթարկէին : Մէկ խօսքով՝ անհանդուրժելի դարձած ձած էր Թուրքիոյ այս վիճակը , երբ 1875ին ապստամտամբութիւնը ծայր տուաւ նախ Հէրսէք Պոսնաէն : Կառավարութիւնը չկրցաւ զսպել այս ապստամբութիւնը

և Սուլթան Ազիզ նոր ֆէրմանով մը բարենորոգումներ խոստացաւ : Սակայն ապստամբները ասով չգոհացան , որով Աւստրիոյ նախարարապետ Կոնս Անտրասի , Ռուսիոյ և Գերմանիոյ հետ ամախորհուրդ , 1875 Գեկտ. 30ին Բ . Դրան կը ներկայացնէր հիմնական բարենորոգմանց ծրագիր մը՝ Եւրոպական տէրութեանց հակակշռին ներքեւ գործադրելի : Թուրքիա մերժեց այս պահանջումը՝ որու յաջորդեց Պուլկարիոյ ապստամբութիւնը 1876ի Ապրիլին : Այս շարժումը սոսկալի կերպով գրգռեց Եւր . Թուրքիոյ Իսլամ տարրին մոլեռանդութիւնը՝ որու զոհուեցան , բաց ի հազարաւոր Քրիստոնեաներէ , նաեւ՝ Սէլանիկի մէջ՝ Գերմանիոյ և Ֆրանսայի հիւպատոսները : Այս ծանրակշիռ դէպքերուն հանդէպ , Եւրոպական վեց Մեծ տէրութեանց դաշնակից նաւատորմիւղները կուգան Պէշիքա՝ իրենց հայրենակիցները պաշտպանելու համար : Այս դէպքերը իրենց հակահարուածը կ'ունենան նաեւ Մայրաքաղաքին մէջ՝ ուր կը գանուէին երկու հակընդդէմ կուսակցութիւններ , Ապտ-իւլ-Ազիզ , որ կը նկատուէր իրրեւ գլխաւոր խոչընդոտ ամէն բարենորոգման , իսկ միւսը՝ Երխսասարդ Թուրքու (ժէօն Թիւրք) կուսակցութիւնը՝ որու պետն էր Միահաթ փաշա :

7. Եպարքոս Մահմուտ Նէտիմ փաշա , կէս մը տիրող տազնապալի վիճակին — որու մէջ պատասխանատուութեան մեծ բաժին մ'ունէր — և կէս մըն ալ՝ Երխասարդ Թուրքերու կողմէն Սուլթանին վրայ ի գործ դրուած ճնշումներուն հետեւանքով , կ'ստիպուի հրաժարիլ և իրեն կը յաջորդէ Մէհմէմէտ-Րիւշտի փաշա (1876 Մայիս 17) : Սակայն Եպարքոսական այս փոփոխութիւնը չգորեց կասեցնելու Եւրոպական տէրութեանց ծանր սպառնալիքները՝ որոնց հանդէպ՝ օրուան գլխաւոր նախարարները — Մէհմէմէտ Րիւշտի , Միահաթ , Հիւսէյին Ալի և Տամատ Մահմուտ փաշաները — սպառ-



նացող անխուսափելի վտանգէն Օսմ. հայրենիքը փրկելու համար, կ'որոշեն գահընկէց ընել զՍուլթան Ազիզ և այս իմաստով, Շէյխ-իւլ-Իսլամ Հասան Խայրուղլան էֆէնտիէ Ֆէթվա մը ստանալով՝ կը գործադրեն իրենց ծրագիրը (1876 Մայիս 30) և ի գահ կը բարձրացնեն Սուլթան Ապա-իւլ-Մէճիտի անդրանիկ որդին ՍՈՒԼ-ԹԱՆ ՄՈՒՐԱՏ Ե .ը :

Ահաւասիկ, Մէհէմէտ Բիւշտի և Միտհաթ փաշաներուն՝ կողմանէ Սուլթան Ազիզի գահընկէցութեան



Մէհէմէտ Քիւսի փաշա



Հիւսէյին Ալնի փաշա

համար, Շէյխ-իւլ-Իսլամին մատուցուած Հարցարանին և տրուած Ֆէթվային պատճէնը .


**ՀԱՐՑՈՒՄ .**— Եթէ, Հաւասացեալներու Առաջնորդը (Սուլթան-ի-Քէն) անխորհուրդ ընթացքի մը հետեւի, եթէ, կառավարելու համար անհրաժեշտ եղած քաղաքային ծանօթութիւններէ զուրկ ըլլայ. եթէ, տէրութեան գանձուն ի ֆուս կործանարար անձնական շոսյութիւններ ընէ, եթէ, իր իշխանութեան շարունակութիւնը աղէտալի հետեւանքներու պատճառ ըլլայ, պէ՞տք է գահընկէց ընել, ԱՅՈ՞. կամ ՈՉ՞ :

**ՊԱՏԱՍԻԱՆ .**— Ըստ Շէրիի օրինաց, ԱՅՈ՞ :

**ՀԱՍԱՆ ԽԱՅՐՈՒԼԼԱՆ**

Սուլթան Ազիզ, որ իր գահընկէցութենէն յետոյ նախ Թօփ Գափուշի պալատը և ապա Չրաղան փոխադրուած էր, 12 օր յետոյ, մկրատով մը իր բազկերակը բանալով անձնասպան եղաւ :

Սուլթան Ապտ-իւլ-Ազիզ, Թէպէտ տարապայման կերպով հաճոյստեր և զուրկ էր քաղաքական հեռատեսութենէ՝ որով ենթակայ եղաւ արտաքին թելադրանաց և տէրութիւնը ենթարկեց անտեսական ու քաղաքական տագնապներու, սակայն, իր բնածին ազնուարարութեամբ, իր երջանկայիշատակ հօր և մեծ հօրը նման անկեղծ հայտարարութեամբ, ազատական գաղափարներով և մանաւանդ վեհապետի մը արժանափայլ իր անսահման վեհանձնութեամբը՝ ամէնէն աւելի սիրուած, պատկառազգու և համակրելի Սուլթաններէն մէկը եղած է :



## ՍՈՒԼՔԱՆ ՄՈՒՐԱՏ Ե.

(30 Մայիս—31 Օգոստոս 1876)



Սուլթան Ազիզի յաջորդեց՝ Ադամ-խել-Մէճիաի ան-  
դրանիկ որդին ՍՈՒԼՔԱՆ ՄՈՒՐԱՏ Ե. որ 36 տարեկան  
էր երբ գահը եկաւ :

Իր գահաժառանգութեան շրջանին մէջ իսկ, Եւրո-  
պայի համակրութիւնը վայելող և իր խնամեալ դաստի-  
արակութեամբ, լեզուագիտութեամբն ու լուսամիտ  
գաղափարներով՝ ժողովուրդին մեծամեծ յոյսեր ներշնչ-  
ող այս պատուական Սուլթանը, դժբախդարար ի բնէ  
մեկամաղձոտ, ջղազրգիտ և տարապայման երկշտու-  
թեան մը ենթակայ էր արդէն, երբ իր հօրեղբոր գա-  
հընկէցութեան և անձնասպանութեան անակնկալ պա-  
րագաներուն՝ յ2 որ յետոյ եկաւ աւելցաւ՝ Սուլթան  
Ազիզի աներորդի և անոր թիկնապահներէն Չերքեզ Հասանի  
վրէժխնդրական գիշերային աճուկի եղեւնագործութիւնը  
Փարսքոս Միտհաթ փաշայի սպարանքին մէջ՝ ուր ան-  
խնայ խողխողուեցան՝ սպարապետ Հիւսէյին Ալիի, Ար-

տաքին գործոց նախարար Բէշիա փաշաները, քանի մը սենեկապաններ և զինուորներ: Միտհաթ, և նոյն պահուն նախարարական խորհուրդին մասնակցող միւս փաշաները Հարէմ ապաստանելով՝ կրցան կեանքերնին ազատել: Իսկ ոճրագործը, գրեթէ մահամերձ էր արդէն, երբ յաջորդ օրը, Սուլթան Պայազիտի հրապարակին մէջ կախազան հանուեցաւ: Միայն թէ, իրարու յաջորդող և մանաւանդ այս վերջին արիւնալի դէպքը խորապէս ազդեցին Սուլթան Մուրաթի արդէն իսկ վատառողջ կազմութեան վրայ ու ենթարկուեցաւ մտային խանգարմանն ողորք հիւանդութեան մը որ, հակառակ բժշկական ամէն կարելի խնամքներու, գէթ երեք ամսուան այդ շրջանին մէջ անբուժելի նկատուելով՝ հարկ եղաւ հրաժարեցնել գահէն՝ այս ազնուամիտ ու տարարախոյ Սուլթանը որ, անտարակոյս, Յամանեան հայրենիքին համար՝ փառքի ու երջանկութեան նոր ու ցանկալի թուական մը պիտի բանար:



## ՍՈՒԼԹԱՆ ԱՊՏ-ԻԻԼ-ՀԱՄԻՏ Բ.

(Հիմնեթի՝ 1293—1327.— Քս.ի 1876—1909).



Միտհաթ փաշայի նախարարութիւնը, ժառանգութեան օրինական կարգը յարգելու համար, դժբախդ Սուլթան Մուրատի տեղ գահը բարձրացուց անոր եղբայրը ԱՊՏ-ԻԻԼ-ՀԱՄԻՏ Բ. որու գահակալութեան ժամանակ տակաւին ապստամբութեան մէջ էին Հերսէֆ, Գարուսաղ ու Սերպիսա՝ որոնց յայտնապէս կ'օժանդակէր Ռուսիա. և ամբողջ Բուսէլիի ժողովուրդները ապրատամբութեան գրգռելով՝ մտաւոր ապագայի մը մէջ իր մտադրած նպատակին իրագործմանը կը հետապնդէր։ Սակայն, Չերնայեճ Ռուս զօրավարին հրամանատարութեան ներքեւ՝ Սերպիական բանակին Ապտ-իւլ-Քէրիմ փաշայի կողմանէ կրած յաջորդական պարտութիւններուն հետեւանքով, Սերպիա կը հարկադրուի մեծ տէրութեանց միջնորդութեամբ հաշտութիւն խնդրել, Բ. Դուռը կ'ընդունի, պայմանաւ որ, Սերպիա իր բերդաքաղաքները յանձնէ Թուրքիոյ և իր զօրաց թիւը 10,000ի զեղջէ։ Բարիզի դաշնագիրն ստորագրող տէրութիւնք կը մերժեն այս պայմանը և Ռուսիա կ'սպառնայ իր դեսպանը ետ կանչել, Վերջապէս՝ Անգլիոյ առաջարկութեամբ

կ. Պոլսոյ մէջ, 1876 Դեկտ. 23ին կը գումարուի վեց Մեծ տէրութեանց ներկայացուցիչներէ կազմուած Դեսպանախորհուրդ մը, երբ միեւնոյն աստիճանով թնդանօթի 101 հարուածներ Սաննանստորութեան հաստատումը կ'աւելտէին Օսմանցի ժողովրդոց: Պէտք չէ մոռնալ որ, ազատական նախարարացեալ անուանի Միտհաթ փաշայի մտերիմ խորհրդականը և հզօր աջակիցն եղած է՝ պետական Հայազգի երեւելի անձ մը, այն է՝ Գրիգոր Էփենի Օսեան, որ այս պատճառաւ՝ երկար տարիներ ինքն ալ վտարանդի կեանք մը վարեց Ֆրանսայի մէջ և 1886ին մեռաւ Բարիզ և թաղուեցաւ Բեռ-Լաշեզի գերեզմանատունը:



Միսնաթ փաշա

Սուլթան Համիտ, որու համար լախախ 101 հարուածներէին թնդանօթի որոտումները, իր

հօրեղբորը տխուր վտիմանին բաղդակից չլլալու վախով էր որ համակերպութիւն կեղծած էր Միտհաթ փաշայի ի գործ դրած քաղաքական այս արմատական փոփոխութեան՝ որով կը ջլատէր բացարձակ միապետութեան քմահաճոյքները և միանգամայն կը յուսար՝ Եւրոպայի վստահութիւն ներշնչելով՝ անոր պահանջումները չափաւորել: Սակայն Դեսպանախորհուրդը անողոքելի մնաց և առական գործադրութիւնը պահանջեց Եւրոպական թուրքիոյ մէջ գործադրուելու համար իր ներկայացուցած բարենորոգմանց ծրագրին: Միտհաթ փաշա, 1877 Յուն-

հօրեղբորը տխուր վտիմանին բաղդակից չլլալու վախով էր որ համակերպութիւն կեղծած էր Միտհաթ փաշայի ի գործ դրած քաղաքական այս արմատական փոփոխութեան՝ որով կը ջլատէր բացարձակ միապետութեան քմահաճոյքները և միանգամայն կը յուսար՝ Եւրոպայի վստահութիւն ներշնչելով՝ անոր պահանջումները չափաւորել: Սակայն Դեսպանախորհուրդը անողոքելի մնաց և առական գործադրութիւնը պահանջեց Եւրոպական թուրքիոյ մէջ գործադրուելու համար իր ներկայացուցած բարենորոգմանց ծրագրին: Միտհաթ փաշա, 1877 Յուն-

ուար 20ին, մերժողական պատասխան տուաւ Դեպա-  
նախորհուրդին պահանջումներուն, իբրև թուրքիոյ ան-  
կախութեան անհամապատասխան և անպատուարեր  
պայման:

Անգլիա, առանձինն՝ նորէն ջանաց համոզել Բ. Դու-  
ռը որ դարձեալ մերժեց:

Ռուսիա այս վերջին պարագան յարմար առիթ սե-  
պելով պատերազմ հրատարակեց թուրքիոյ դէմ, 1877  
Ապրիլ 23:

Միտնաթ փաշա՝  
իր վարած յայտարարու-  
թիւնով իշխանութեան համար  
թէ՛ Ապտ-իւլ-Համիտի  
և թէ՛ նախարարաց  
մեծ մասին արհամար-  
հելի դարձած էր ար-  
դէն, երբ քաղաքական  
տագնապալից պարտ-  
գաները աւելի խախ-  
տեցին իր դիրքը, որով  
նոյն տարւոյ Փետրուա-  
րին՝ Եպարքոսութենէ  
հրաժարելով՝ քաշուե-  
ցաւ Եւրոպա, իրեն  
յաջորդ էտէմ փաշայի  
թողովով անխուսափելի դարձած պատերազմին և անոր  
հետեւանքներուն ծանր հոգերը:



Քրիզոս էմ. Օսեան

ԹՐԹՕ-ՌՈՒՍԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ.— Նիքոլա Մեծ  
գուքսին հրամանատարութեամբ Ռուսական հսկայ բա-  
նակ մը՝ անմիջապէս Բրուսթ և Դանուբ գետերն անց-  
նելով՝ կը մտնէ Ջիչքովս (22 Յունիս 1877), նիկոպոլիսն  
ու թռնովսն անձնատուութեան կը պարտաւորէ (Յուլիս

16) և կը մխրճի Շիխիսայի կիրճերուն մէջ, Ասիոյ կողմը .  
 Ռուսք՝ Պայրազիսը կը գրաւեն և Կարսը կը պաշարեն .  
 Սակայն Անակես Մուխրատ փաշա, Կարսի առջեւ կը զար-  
 նէ Ռուսական բանակը և կ'ստիպէ քաղաքին պաշարու-  
 մը վերցընել : Պուլկարիոյ մէջ, Օսման փաշա Յուլիս  
 19, 30ին և Սեպտ. 14ին Բիշկվնայի մէջ յաջորդաբար  
 կը յաղթէ Նիքօլա դուքսին և անոր տեղակալներուն .  
 մինչդեռ Սիւլէյման փաշա՝ Շիփքայի անցքը կը պաշտ-  
 պանէր :

Սակայն Թրքաց այս յաջողութիւնները վեր ի վայր  
 ձախողեցան, երբ Ռուսիա իր զինուոց բախդն յանձնեց  
 Սեւաստափոլի յանդուգն պաշտպան Թօրիկպէն զօրապե-  
 տին որ եկաւ Բլէշլան պաշարեց : Միեւնոյն ատեն, Ասիա-  
 կան բաժնին մէջ, Մուխրատ փաշա Կարսի առջեւ յաղ-  
 թուելով՝ քաղաքը կ'անցնէր Ռուսաց ձեռքը (15 Հոկտ.)  
 և Մէլիքօֆ, Լազարէֆ և Տէր Ղուկասօֆ զօրապետները  
 յաղթանակաւ կը մտնէին Հայաստան : Դեկտ. 10ին Բլէվ-  
 նա անձնատուր կ'ըլլայ Ռուսաց՝ Ղազի Օսման փաշայի  
 և իր 40,000 արի զինուորներուն հետ : Իսկ Շիփքայի  
 Թրքական բանակը իր նահանջին մէջ պաշարուելով  
 կ'ստիպուի տեղի տալ թշնամիին ահեղ զօրութեան առ-  
 ջեւ, որ (9 Յունուար 1878) անարգել կը յառաջանայ  
 դէպի Էտիրնէ և կը հասնի Կ. Պոլսոյ դուռները :

Ռուսիոյ տարած այս վճռական յաղթութիւններուն  
 վրայ, Բ. Դուռը յանձն կ'առնէ կնքել Սան-Սթեֆանօյի  
 դաշնագիրը (3 Մարտ) որ, ինչպէս Թուրքիոյ, նմանապէս  
 Եւրոպական տէրութեանց շահերուն տեսակէտով շատ  
 աննպաստ հանգամանք մ'ունէր : Ահա այն ատեն, Վիֆ-  
 քօրիա թագուհւոյն կառավարութիւնը (որ Կիպրոս  
 կղզին փոխարինութիւն ստանալու պայմանաւ՝ Թուր-  
 քիոյ հետ զաղանի դաշնագիր մը կնքած էր), նաւա-  
 բաժին մը կը զրկէ դէպի Մարմարա, և արգիլելով



Ռուսաց Պոլիս մանեւր , շեղեալ կը հռչակէ Սան-Սթէ-  
ֆանօյի դաշնագիրը և Ռուսիան կը հրաւիրէ ի Պէրլին ,  
հոն , Մեծ տէրութեանց ներկայացուցիչներուն հետ հա-  
մախորհուրդ՝ նոր դաշնագիր մը խմբագրելու համար :

Անգլիա , իր քաղաքական այս փայլուն յաջողու-  
թիւնը կը պարտէր , ժամանակին Նախարարապետ՝ Լորա  
Պիֆրնսֆիլդի (տ'Իզրաէլի) .

Պէրլինի դաշնագրին զվսաւոր արամազրութիւններն  
էին .

1 . Ռուսմանիա և Սերպիա կ'ըլլային անկախ թա-  
գաւորութիւններ .

2 . Ռուսիա՝ իրեն կը վերապահէր Պետարսպիան ,  
փոխարէն Ռուսմանիոյ տալով՝ Տօպրուճա գաւառը .

3 . Գարատաղ , Թուրքիոյ հարկատուութենէ ելլե-  
լով՝ անկախ իշխանութիւն մը կ'ըլլար :

4 . Իանուրի հարաւակողմը կը կազմուէր , Թուր-  
քիոյ գերիշխանութեան ներքեւ , Պուլխարսկան հարկա-  
տու իշխանապետութիւնը .

5 . Իսկ Պալքաններու հարաւակողմը կը կազմուէր  
Արեւելեան Րուսիոյ անունով ինքնօրէն կուսակալութիւն  
մը՝ Բրիտանիայ կառավարիչով .


6 . Աւստրիա , Առժամանակեայ անունով , Հէրսեֆն  
ու Պոսնան կը գրաւէր .

7 . Գարատաղ կ'ստանար՝ Տուրքիո և Անթիպարի  
նաւահանգիստները .

8 . Յունաստանի կը արուէր Թէսալիա գաւառին  
մէկ մասը .

9 . Ասիոյ կողմէն ալ՝ Ռուսիա կը գրաւէր Արսահան ,  
Կարս , Պարում և Փօքի քաղաքները .

10 . Իսկ մեզ , Հայերուս կը շնորհուէր՝ ճերգ անունով  
յօդուած մը , որով « Հայաքնակ գաւառներու բնակիչ-  
ները պիտի պաշտպանուէին Բիւրտերու և Չէրքէզներու



Թանգիմարի բուականէն մինչեւ Լամիս, եւր. Թուրքիոյ կրամ փոփոխութիւնները  
 հարստահարութեանց դէմ ու Եւրոպական տէրութիւն-  
 ներն ալ Թուրքիայէ պարբերաբար հաշիւ պիտի պահանջ-  
 ջէին այս մասին 1)

## (Ամփոփում)

Ինչպէս կ'երեւի, Ապա-իւլ-Համիտի իշխանութեան առաջին տարիէն իսկ կ'սկսի Օսմ. պետութեան համար ձախողուածի և քաղաքական փտախտի ազէտալի շրջան մը, որ հետզհետէ մեծամեծ շամեմատութիւններ կը ստանայ :

Իր բարեմոյն հօրը, հօրեղբօրը և դժբախդ եղբօրը բոլորովին անարժան և անոնց յիշատակին նոյն իսկ նախատինք եղող այս բռնաւորին առաջին գործը եղաւ, երկու տարի յետոյ, պետական հարուածով մը ջնջել Սամանաղբութիւնը և անոր հիմնադիրները եղող Միտ-հաթ փաշան ու գործակից նախարարները դատաւարաւելով՝ աքտրական տանջալից կեանքի մը մէջ մահացնել :

Ապա-իւլ-Համիտի 33 տարուան թագաւորութիւնը՝ Օսմ. պատմութեան ամէնէն սեւ ու ամօթալի շրջանը կը կազմէ՝ իր անորակելի և աննախընթաց վայրագութիւններով, հրէշային ոճիրներով, հարիւր հազարաւոր անմեղներու նահատակութեամբ և իր անբարոյացուցիչ, քանդող ու աւերող քաղաքականութիւնով : Ներոն, Կաւրախալա, Կալիգուլա, Ասսիրաւ, Ճիւնիզ Խան, Լեւկրիստուր, և ասոնց նման արիւնհարբու բռնակալներու թողած սև յիշատակը նսեմացաւ ու ոչնչացաւ : Համիտի կատարելագործեալ խժոժութիւններուն հետ բաղդասելով :

Համիտի անգթութեան ամէնէն առաջին զոհը եղաւ իր գահընկէց հօրազատ, տարաբախտ Սուլթան Մուրատը, զոր ամբողջ 30 տարիներ բանտարկեց և արտաքին ամէն հաղորդակցութենէ և ընտանեկան որևէ միտքարութենէ հսպառ զրկելով, արդէն իսկ ցաւագին անոր կեանքը բոլորովին դառնացուց : Համիտ իր արիւնհարբու բռնակալութիւնը ծայրագոյն աստիճանի մը հասուց ու երկրին բոլոր իշխանութիւնը իր ձեռքին մէջ կեդրոնացնելով՝ սկսաւ քսմել ժողովուրդին արեան

հետ՝ երկրին հարստութեան աղբիւրները : Այսպէս՝ նախարար ու նախարարութիւն , պաշտօնեայ կամ պաշտօնէութիւն՝ լոկ անուններ էին , քանի որ ամէն օրէնք և իշխանութիւն Երլարդի դժոխքին մէջ կեդրոնացած և մամլոյ ու գրականութեան ազատութիւնը՝ ծաղրելի ըլլալու աստիճան սեղմուած ու կաշկանդուած էին :

Համիտ , իր իշխանութեան բովանդակ շրջանին մէջ միակ նպատակ և միակ քաղաքականութիւն մ'ունեցաւ , այսինքն՝ երեւակայելի ու աներեւակայելի ամէն միջոցներով՝ ապահովել իր կեանքն ու գահը և անոնց սիրոյն զոհել՝ մարդկային բիւրաւոր կեանքեր , տէրութեան արժանապատուութիւն , երկիրներ ու միլիոններ : Համիտ , ճիշտ այս նպատակաւ կազմակերպեց և իր դիւլային նրբամտութեանը շնորհիւ՝ Պատմութեան մէջ նմանը չտեսնուած կատարելութեան մը հասուց լրտեսութիւնը , որ Թուրքիոյ մէջ առանձին արհեստապետութեան մը ձեւն առաւ , Համիտ ինքն ըլլալով այդ արիւնաքամ մարմնոյն Ռուսա Նալին :

Զինուորական ու , զաքային ամէն դասակարգի պաշտօնեայ , որպէս զի կարենար ձեռք ձգել պատուանշան , աստիճանի բարձրացում և կամ շահաւէտ պաշտօններ , որպէս զի իր առջեւ բացուած գանէր Ոճրալից Երլարդի դուռները , պարտաւոր էր անխուսափելի կերպով Ժուռնալի , Մաֆիյե , լրտես ըլլալ :


Աւելորդ է ըսել թէ՛ Համիտ ինչ տեսակ ճիւղեր կ'ընտրէր իր դժոխային ծրագիրներուն իբր խորհրդատու և գործադիր՝ որոնց ձեռքով , անթիւ անհամար անմեղներ , — մեծ մասամբ ծաղիկ երիտասարդներ — զընտաններու , աքսորաւայրերու , Երլարդի կազմակերպեալ տանջարաններուն և Մարմարայի անդունդներուն խորերը նահատակուեցան . որպէս չի Արիւնարբու ծիւղը ապահով զգար ինքզինք և որ և է ենթադրական վտանգէ զերծ մնար :

Ընդհանուր Տաճկաստանի, բայց մասնաւորապէս Մայրաքաղաքին մէջ անտանելի դարձած էր կեանքը: Ամենուրեք դժոխագէմ լրտեսներու վոճմակներ, ձերբակալութիւն, կասկած, զրպարտութիւն, բանտ, խոչտանգում և յանկարծական անհետացումներ՝ ճշմարիտ տանջարանի մը վերածած էին այս գեղեցիկ երկիրը, ուր սակայն, զլիաւորապէս Հայ և Թուրք ամէն ընտանիք — քիչ բացառութեամբ — իր մէկ սիրականին բանտարկութիւնը կամ անյայտացումը կ'ողորար և ամէն պարկեշտ քաղաքացի՝ մօտալուտ և անակնկալ պատուհասի մը արհաւիրքովը կը տօջորուէր:

Համիտ, իր վրէժխնդրութեան թոյնը ամէնէն աւելի թափեց, մարդկային ամէնէն արդար և բնական իրաւունքները եղող և քանի՛ քանի՛ անգամներ Թանգիրխաներով և Դաշնագրութիւններով հանդիսաւորապէս խոստացուած և մի՛շտ խոստում մնացած Կեանքի, Պատիւի և Ստացումի ապահովութիւն, պահանջող Հայերուն վրայ, և կազմակերպուած ջարդեր, 300,000է աւելի կեանքեր բնաջինջ նահատակեց Հայաստանի մէջ, ամբողջ գիւղեր ու քաղաքներ աւերակոյտի վերածելով:

Երեսուն երեք տարուան արիւնկզակ բռնաւորի մը այս ընթացքը ա՛լ եւս անտանելի՛, անհանդուրժելի դարձած էր, երբ Յաւիտենականը զթաց Թուրքիոյ տառապեալ ժողովուրդին վրայ ու աղատանուէր երկու դիւցազուններու միջոցաւ վճռեց Բաճակալին ջախջախումը, ինչպէս 25 դարեր առաջ մի և նոյնն ըրած էր Պաղտատարի՝ Դանիէլի միջոցաւ յայտարարելով

Մանկ, Թեկեղ, Փարկա:



## ՕՍՄԱՆԵԱՆ ՅԵՂԱՓՈՒՈՒԹԻՒՆ

1908ի գարնան մէջ, Մակեդոնիոյ ազատամբական շփոթութիւնները սպառնալից հանգամանք մ'առած ըլլալով՝ Անգլիոյ Նիդաւրդ թագաւորին և Ռուսիոյ կայսեր միջեւ տեղի կ'ունենար Ռեվալի տեսակցութիւնը, որու հետեւանքը՝ Օսմ. պետութեան քաղաքական ամբողջութեանն համար՝ կրնար շատ աննպաստ ըլլալ և մինչև իսկ անդամաձառութիւն մը յառաջ բերել:



Նիազի պէլ



Էնվեր պէլ

Ահա այն ատեն, Երիտասարդ Թուրքերու Միութեան և Յառաջդիմութեան Բոմիդէն (Իթթիհատ վէ Թէրազզը ձէմիյէթի), հայրենասիրական ոգիով վառուած, այս վերահաս վտանգին առաջքն առնելու միակ միջոց նկատեց՝ Բաճաւոր Սուլթանին ձեռքէն խլել բացարձակ

չխանութիւնը և Սահմանադրութիւնն հռչակել տալ :  
 Էյս միջոցին է որ Մակեդոնիոյ Բ. և Գ. զօրաբանակ-  
 ները՝ Քովթիէին հետ համախորհուրդ , նոյնքան հայրե-  
 ասիրութեամբ հետապնդեցին միեւնոյն նպատակին ,  
 պատնալով Մայրաքաղաքին վրայ քալել . եթէ Սուլ-  
 Յանը յանձն չառնէր Սահմանադրութիւնն հրատակել ,  
 էյս սպառնալիքին առջեւ , 33 տարուան որջացած Գա-  
 թճը ստիպուեցաւ տեղի տալ և 1908 Յուլիս 11ին  
 ստորագրել Սահմանադրութեան հռչակման Իրատէն ,  
 որը արդէն նախորդ օրն իսկ Բ. և Գ. զօրաբանակները  
 Բանասգրքի մէջ հանդիսաւորապէս հռչակած էին զայն ,  
 ամակրելի երկու հայրենասէր գինուորականներու , Նիսա-  
 ի և Էնվիէր պէյերու նախաձեռնութեամբ :

Նոյնպէս , արիւնարբու Սուլթանին կործանման և  
 խմանեան հայրենիքին համար մղուած այս նշանաւոր  
 շարժումին մէջ՝ փառքի ու երախտագիտութեան կարե-  
 սոր բաժին մը ունեցած են նաեւ , մեր — ՀՆԶԱԿԵՎԵՆ  
 և ԴԱՇՆԱԿՅԱԿԱՆ — Հայ Յեղափոխական երկու մար-  
 թիները իրենց անձնագոհ և ճշմարիտ ներոսներով , ո-  
 տնք երիտասարդ Թուրքերէն շատ առաջ կազմակեր-  
 վուած և բռնակալութեան երեսէն ամէնէն աւելի տա-  
 ռապող Հայ ազգին անուշով՝ անոր տապալումին հա-  
 նար , գրով , խօսքով և զէն ի ձեռքին արիարար պայքա-  
 ւեցան , արձամարնելով Գանդր Փասիչանին և անոր դա-  
 փճներուն կողմանէ ի գործ դրուած ամէնէն զարնուրեւի  
 ռանջանքները , աքտորը , զնաանը , կախազանն ու մա-  
 ր , մինչեւ որ ծագեցաւ Ազատութեան փառայեղ ար-  
 ալոյսը :

Ազատ-իւլ-Համիտ Ծ ամիս , ինքզինքը իրրեւ Սահ-  
 մանադրութեան համակիր ու հաւատարիմ կեղծեց , եր-  
 բում ըրաւ անոր վրայ , Թորնդարան այցելեց , իր բնա-  
 ծին սաղայելական խորամանկութեամբ՝ անոր Գործա-

գիր ազգեցիկ անձերը փայփայեց . Երլտրզի մէջ փառաւոր հացկերոյթ մը սարքեց Օսմ . Երեսփոխաններու մեծ մասին ևն . .

Սակայն այս ամէն խարէական ձեւերը գործադրելով հանդերձ , ձեռքի տակէ , իր միլիոններուն և իր ուճիրներուն մեղսակից վաղեմի գործակալներուն միջոցաւ լարեց և պատրաստեց զինուորական ու խուժանային ընդարձակ դատադրութիւն մը , որ պռոթկաց 1909



### Ապս-իւլ-Համիտ Բ. Խորհրդարան կ'երթայ

Մարտ 31ին , Զատիկի երրորդ Գշ . օրը և մազ մնաց որ բռնապետութիւնը իր նախկին ձեւով վերահաստատուէր : Բայց բարեբախտաբար՝ Ազատութեան հերոսները , Բ . և Գ . բռնակներով և մեծանուն զինուորական Մանուտ Շեվիթի փաշայի նրամանատարութեան ներքեւ կայծակի արագութեամբ Պոլսոյ վրայ քալեցին , Ապս-իւլ-Համիտի սոկիներով կաշառուած Ա . զօրաբանակին յաղթեցին ու գրաւեցին անոնց որջաղած զօրանոցները , ինչպէս նաեւ Բաճակալութեան արիւնտա րոյնը եղող Երլտրզը պաշարմամբ գրաւելով , Խորհրդարանին վճռով



և Շէյխ-իւլ-Իսլամին փերվանով գահընկէց ըրին զՍուլթանն Համիտ, և անմիջ ապէս աքսորեցին Սէլանիկ (1909, Ապրիլ 14) :

Ազատական բանակը Օսմ. Գահը բարձրացուց՝ 30 տարիէ ի վեր Համիտին չալածանացը զո՛ն եզող իր հրտսեր եղբայր՝ ազնիւ ու ժողովրդասէր իշխանը :



Վեհափառ Սուլթան Մեհեմէտ Բեաս Ե.

որ եղաւ Սահմանադրական Թուրքիոյ Անդրանիկ Սուլթանը :

Եթէ 1909, Ապրիլ 14 Գ. օր, Յարին Սուլթան Մեհեմէմէտ այցելէր իր անարժան և արևնարբու յաջորդ Ապտ-իւլ-Համիտին Երջըզի պալատը, նոյն խորին յուզումը պիտի կրէր՝ զոր կրեց աչքէ անցնելով Կոստանդին Պալատիկոս վերջին Կայսեր Պալատը, 1453 Մայիս 30 Գ. Կ. Պոլսոյ առժան նետուեալ օրը, և պիտի

կրկնէր Պարսիկ բանաստեղծին հետեւեալ մեղամաղձիկ  
տողերը, զոր յիշեր է՝ Բիւզանդեան Կայսերաց Թափուր  
Դահլիճը մտնելու պահուն,

«Պու՛ւն նկովպեք մի գե՛նէս քարեմի  
էֆրազիսայ,  
«Փե՛րսեարի մի ֆի՛նէս՝ տե՛ր Գաւրի Գայսար  
ան՛հպուք»

Այսինքն՝

«Հի՛նս քո՛ւն ե՛ որ պսնակի կոչը կ'արձակե  
էֆրազիսայի պարսիկ գլբեքիկ վրայ,  
«Եւ սա՛րդն ե՛ որ քարապսնութիւն կ'ընէ  
Կեսարներու դղեակիկ մեջ»:



## ԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ

Թուրք Գրականութիւնը, Սուլթան Մահմուտէն մինչեւ Համիտեան շրջան, նոր փայլ ու կազմակերպութիւն մը ստացաւ՝ շնորհիւ այս մասին գոյութիւն ունեցող անկաշկանդ և լիակատար պատմական:

Հաս կը գետեղենք ամփոփ մէկ պատկերը այն մեծ տաղանդներուն՝ որոնք փայլեցան գրականութեան այլ և այլ ճիւղերուն մէջ:

Սուլթան Մահմուտ Բ.ի թագաւորութեան 22րդ տարին սկսեալ՝ (Հիճրէթի 1345), մինչեւ մեր օրերը, Օսմ. լեզուի և Գրականութեան բարեշրջման թուականը կը կազմէ և զոյ կարեւի է երեք որոշ շրջաններու բաժնել:

Ա. ՇՐՋԱՆ (1345—1378), երբ պարզ ու ժողովրդական լեզուազրեւու ձևում մը կ'սկսի և զէպի Արեւմտեան (իսն Յրանասկան) գրականութիւն նախնական քայլերը կ'առնուին և արժանի գրականութիւնը կը փերածուի բոլորովին նոր պարզութեան մը:

Նշանաւոր գիւանազէտ Մեծ Ալի փաշա, այս մասին առաջին փորձերը կուտայ Նոյնպէս՝ այն առաջին շրջանին մէջ կը փայլին Մուսրափա-Միշիս փաշա, որ գիւանազիտական լեզուն բարեփոխեց և պաշտօնական արդի բարբառին հիմը դրաւ: Նաեւ ինքը կրած է հիմնող «Թագվիմը Վէզայի» և «Մէճմուտի Ֆիհուն» թերթերը և Պետական Սալնամին:

Բերքիվ փաշա, որ Ժ. Ժ. Ռուսոյի և Վ. Հիկոյի գործերէն թարգմանութիւններ կատարեց:

Ճիվսիք փաշա, քաջահմուտ մտանկազիր և պատմագէտ, որ ի մէջ այլոց, առաջինը եղած է Թուրքերէնի Քերականութեան մեթոտիկ դասագիրք մը պատրաստողը:

Նոյնպէս, անուանի գիւանազէտ Ֆուսս փաշա, «Գափախար Օսմանի» անուն Քերականութիւն մը գրած է:

Եուսուփ Քեամիլ փաշա, որ գրական հին, բայց ընտրելի գոյն ոճով մը՝ «Տէլէմաք»ը թուրքերէնի թարգմանեց:

Սա'սուլլան փաշա, որ Լամարթիլնէ թարգմանութիւններ ունի:



Ճէվ-էք փաշա  
(իւլէմալի սարագով)

Բ. ՇՐՋԱՆ (1410—1378), [որ] Դասեն Յրանասկան գրականութիւնը մեծապէս կ'ազդէ Թուրքականին վրայ:

Թուրք գրականութեան մէջ՝ Եւրոպական գարոյին հիմնադիրը եղած է Իպրահիմ Շիմաւի, իսկ իրեն հետեւողներ եղած են՝ Ջիա փաշա և մանաւանդ՝ Նամրզ Քեմալ պէյ: Այս վերջինը անմասն յիշատակ մը թողած է՝ ո՛չ միայն իրրեւ ազգայնական մեծ գործիչ և մեծ հայրենասէր, այլ և՛ իրրեւ անուանի գրագէտ, բանաստեղծ, թատերագիր և քննադատ՝ որ հին գարոյի հետեւողները շարաշար քննադատած է: Իր բանաստեղծական գրուածքներն ընդհանրապէս՝ հայրենասիրութեան և ազատասիրութեան գրոյմը կը կրեն:

Յ Ահմէտ Միսնաթ կփ. բուսական համբաւ մը կը վայելէ իրրեւ վիպագիր, օրագրող, թատերագիր և թարգմանիչ, թէպէտ ո՞նի ազնութեան տեսակէտով առաջիններուն չի հասարարի:

Մահմուտ էփեմ պէյ, համբաւաւոր գրագէտ և բանաստեղծ:



Ջիա փաշա



Իպրահիմ Շիմաւի



Նամրզ Քեմալ պէյ

Ապս-իւշ-շազ Նամիս պէյ, նոյնպէս առաջնակարգ բանաստեղծ և նոյնաւոր թատերագիր:

Մուալլիմ Նամի կփ. քաջահմուտ գրագէտ, ուսուցիչ և թատերագիր:

Յիշատակութեան արժանի են նաեւ՝

Ահմէտ Բաւիմ պէյ, ներհուն գրագէտ ու երգիծարան, որ արձակ բանաստեղծութիւններ ալ ունի: Վերջերս է ստուար հաստրէ բողկացած՝ շատ հմտալից Օսմ. պատմութիւն մըն ալ հրատարակեց:

Ունի նաեւ մէթոտիկ բազմաթիւ գառագիրքեր:


1845—1878ի այս շրջանին է որ կ'սկսի՝ Եւրոպական ոճով Թուրք վիպագրութիւնը և Թուրք թատրոնին հաստատութիւնը: Այս վերջինին հիմնադիրները, եղած են առաջնակարգ երկու Հայագրի Դերասանապետներ — Վարգովեան և Մնակեան — որոնց շատ բան կը պարտի Թուրք թատրոնը:

Նոր շրջանի Թուրք բանաստեղծներու շարքին մէջ առաջնակարգ տեղ մը կը գրաւեն՝ Իսմայիլ Սաֆա, Կապի Զասե Կամրոզ և Միհեմէտի Թանիր պէյերը եւ։

Մէկ խոսքով, արդի գրողներու նոր սերունդը պատրաստող, Թուրք Գրականութիւնը Եւրոպականացնող և Պարսկերէնի տիրապետող ազդեցութիւնը գտարողները եղած են՝ Շինասի, Կամրոզ Քիմալ, Մահմուտ Էֆեմ և Ապտ-իւլ-Հազ Համիտ պէյերը, որոնք Թուրք գրականութեան ամենափայլուն ներկայացուցիչներն յարկադրուելու փառքին արժանի են։ Արդի գրական սերունդը այս մեծ վարպետներուն մտքի ծնունդն է։

Շինասիի շրջանին պատկանող կին գրողներէն և բանաստեղծներէն յիշատակութեան արժանի են՝ ձեգուէթ փաշայի աղջիկը Ծաքրլէ Ալիյէ հանրմ, Ապտ-իւլ-Հազ Համիտի բոլբոլ՝ Միհրուս Նիսա հանրմ և Հարպիյէի Գերմաներէն լեզուի նախկին ուսուցիչ Օսման փաշայի աղջիկը՝ Նիկետար հանրմ։

(Հին ու նոր Թուրք գրականութեան պատմութեանը մասին տակից աւելի մանրամասնութիւններ տալը՝ կը թողու՛մ Օսմ. լեզուի Յարգոյ ուսուցիչ Էֆէնտիներուն։)




1872

# ՅԱՆԿ ՆԻՒԹՈՑ

Մրհս

|                                     |     |
|-------------------------------------|-----|
| Թուրքերուն Մազուսը                  | 3   |
| Սուլթան Օսման Ա. (Ղազի)             | 7   |
| Սուլթան Օրխան (Ղազի)                | 14  |
| Սուլթան Մուրատ Ա. (Խիտապղենտիկեար)  | 15  |
| Սուլթան Պալատիս Ա. (Երլարքըմ)       | 19  |
| Սուլթան Մեհմեդ Ա. (Չելեպի)          | 23  |
| Սուլթան Մուրատ Բ. (Ղազի)            | 29  |
| Սուլթան Մեհմեդ Բ. (էլ Ֆաթիհ)        | 35  |
| Սուլթան Պալատիս Բ.                  | 50  |
| Սուլթան Ալիսի Ա. (Եսփուզ)           | 54  |
| Սուլթան Սիւլեյման Ա. (Գանունի)      | 62  |
| Սուլթան Ալիսի Բ.                    | 78  |
| Սուլթան Մուրատ Գ.                   | 86  |
| Սուլթան Մեհմեդ Գ. (Ֆաթիհի էլբի)     | 91  |
| Սուլթան Ահմեդ Ա.                    | 95  |
| Սուլթան Օսման Բ.                    | 100 |
| Սուլթան Մուսթաֆա Ա.                 | 102 |
| Սուլթան Մուրատ Գ. (Ֆաթիհի Պալատ)    | 104 |
| Սուլթան Իպրահիմ                     |     |
| Պատմական անուններու բացատրութիւններ |     |
| Սուլթան Մեհմեդ Գ. (Ալթը)            |     |
| Սուլթան Սիւլեյման Բ.                | 1-  |
| Սուլթան Ահմեդ Բ.                    | 131 |
| Սուլթան Մուսթաֆա Բ.                 | 132 |
| Սուլթան Ահմեդ Բ.                    | 138 |
| Սուլթան Մահմուտ Ա.                  | 145 |
| Սուլթան Օսման Գ.                    | 152 |
| Սուլթան Մուսթաֆա Գ.                 | 154 |
| Սուլթան Ապտ-իւլ-Համիտ Ա.            | 160 |
| Սուլթան Ալիսի Գ.                    | 166 |
| Սուլթան Մուսթաֆա Գ.                 | 178 |
| Սուլթան Մահմուտ Բ.                  | 183 |
| Սուլթան Ապտ-իւլ-Մեհիտ               | 232 |
| Սուլթան Ապտ-իւլ-Աղիզ                | 253 |
| Սուլթան Մուրատ Ե.                   | 263 |
| Սուլթան Ապտ-իւլ-Համիտ Բ.            | 265 |
| Օսմանեան Յեղափոխութիւն              | 274 |
| Սուլթան Մեհմեդ Կ. Քեչուք            | 277 |
| Դրական Ետքեր                        | 279 |







ԿԸ ԽՆԴՐՈՒԻ ՈՒՂՂԵԼ ՀԵՏԵԻԵԱԼ ՎՐԻՊԱԿՆԵՐԸ

|     | Սխալ                                     | Ուղիղ                                  |
|-----|------------------------------------------|----------------------------------------|
| Կ.  | տող                                      |                                        |
| 6   | 6 հանսատէսը                              | հանդիսատեսը                            |
| 11  | 2 եղածեն պէս                             | եղածին պէս                             |
| 17  | 25 Իս                                    | Իսկ                                    |
| 49  | 32 մեկենասութիւնը                        | մեկենասութեանը                         |
| 61  | 17 դէպ ի հանդերձեայ ան-<br>միջապէս կեանք | դէպ ի հանդերձեայ կեանք՝ անմի-<br>ջապէս |
| 62  | 3 1386—1402                              | 1520—1566                              |
| 74  | 1 1860                                   | 1866                                   |
| 82  | 25 միւոյ                                 | մնալով                                 |
| 95  | 1 1627                                   | 1617                                   |
| 123 | 9 1004ին                                 | 1604ին                                 |
| 170 | 20 վարբաններ                             | վարժարաններ                            |
| 177 | 4 կը յօշոտուի                            | կը յօշոտուի                            |
| 179 | 4 եռապետութիւն                           | եռապետութիւն                           |
| 179 | 29 եթէ ո՛ր                               | եթէ ո՛չ                                |
| 186 | 23 Սիկպան, շուն                          | շունի պահապան                          |
| 193 | 18 1821                                  | 1812                                   |
| 232 | 1 186                                    | 1866                                   |
| 233 | 6 պետուեան                               | Պետութեան                              |
| 236 | 19 տարբեր                                | տարբեր                                 |
| 237 | 31 գաղափարին հետ                         | գաղափարին                              |
| 246 | 13 Կանայ Ամբոց                           | Կանայ Բլուր                            |





